









ԵՐԻ ԾՐՑՈՒՆ

VI ՏԱՐԻ

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Օ Ա Գ Ի Ր

№ I

ՅՈՒՆՈՒԱՐ

1906

ՀՅՎՀ

Թ Ի Ֆ Լ Ի Ւ

Տպարան „ՀԵՐՄԵՆ“ Մատաք. փող. № 15.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## № 1

ԵՐԵՎԱՆ

1. ԵՐԿՐՈՒ ՊԱՏԿԵՐ պատմուածք Առանձարի . . . . . 5
2. ՈՒՐԻՇԵ ՀԱՄԱՐ, զրամա Լեռն Շանթի . . . . . 14
3. ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՄԻ ԶՄԸԸ, Յ. Խշանեանի . . 25
4. ԻՐԱՆԵԱՆ ԹՈՒՐԹԵՐ, Ա. Վամբերյ-ի . . . . . 43
5. ԶՐՀԱՆԿԻՐԸ, Լեռն Փոարիէլի Փրանկ. թարգմ. Ա. Շահնէն 57
6. ՄԻՐԱՅՑԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, Կարապետ Կուսիկեանցի . . 61
8. ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿՈՒԻ, Արթուր Փիթղերի, թարգմ. Ե. Հ. 87
7. ՕԲԵՐԼԵՆԵՐԸ, վեպ Բընէ Բազինի . . . . . 89
8. \* \* Ա. Խամակեանի . . . . . 130
9. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՈՒՆԸ ԵՒ ՅԵ-  
ՂԱՓՈԽԱԿԱՆ ՐՈՄԱՆՏԻՉՄ, Հ. Բերնշտայնի 131
10. ՔԱԶԵՐԻՆ, ոտան. Ա. Խամակեանի . . . . . 144
11. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. —  
Առանձար «Վշտի ծիծաղը» Նա. 2) Les Oberlé.  
pièce en cinq actes, par. M. Edmond «Harau-  
court», D'après le roman de M. René Bazin, de  
l' Académie française. \* . . . . 146
12. Գհուահատներն ինչ կարդան Յով. Տէր.-Միրաքեանի . . 149
13. ՆՈՐ ՍՍԱՅՈՒԱԾ ԳՐԹԵՐ . . . . . 148
14. ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Քաշըշուլի քաղաքականութիւն  
եւ զինուած ապատամբութիւն. — Պլիսամովի սոցիալ-վե-  
ճոկրատների տակտիկայի մասին. — Ապատամբութիւնը  
Մոսկուայում. — Ամբարդակ թէ հուն. — Զախակոդմանե-  
րի բլոկ. — Պետական գումայում մասնակցելու հարցը.  
— Աւղան ախոռներ. — Պ. Պ. ընտ. Կովկ.: Լ. Ս.-ի 165
15. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Անոեի դրամա. — Արձագանգ-  
ներ. — Պարսկական եւ օսմանեան «ասհմանադրութիւն-  
ները». — Դեմոկրատիա եւ արեւելեան հարցը. — Դեմո-  
կրատիական հոսանքի յաղթանակը Անդիայում. — Համե-

Նոր շրջան VI տարի

Հրատ. XVIII տարի

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀՅՈՒՐՎԵՆԱԿ ԵԽ ՔԵՎԵՔԱԿՆԵՐ

Ա. Մ Ս Ա Գ Ի Ռ

№ 1

ՅՈՒՆՈՒԱՐ

1906



ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀՅՈՒՐՎԵՆԱԿ“ Ընկ. Մադար. փող., 15.  
1905

ԱՅՀՈՒԵԺ Ե ԲԵԺԵՆՈՐԴԵԳՐՈՒԹԻՒՆ

1906 թ.

# ՄՈՒԲՃ“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա Գ Բ Ի

(Նոր արձան ՎI տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Հ

Առողջական տարեկան 10 ր. Առաստանան՝ 12 ր. (32 դ.)

Պարզաբան կէս տարին 6 » » 7 » (18 դ.)

## Հայով համարը 1 ռուբի

Ծանօթութիւն, Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս. բարձրութ 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ սկզբուն 5 ր. և յունիսի 1-ին 5 րուբին չայց զպր, վարժուհիների և ուսուցիչների, դիւցական քահանաների, միջն. ուս. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագինն է 8 բարձրի Ռուսաստանում: Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրանց յարմար է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀՆԴՈՒՆՆՈՒՄ է:

Թիֆլիսուն խմբագրութանը (հայովախմելան փողոց, տ. № 12) Կայութիւնն այլ սեղերից պէտք է դիմել՝ Տիֆլիս, վեց րедакցիոն աշխատանքութիւնում: Հայովախմելանը աշխատանքութիւնում:

Առաստանանից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

## «Մուրճ»-ի գործարակութեար.

Աստախան—դ. թ. Մկրտչամենի:

Բազու—բժ. թ. Մարգարեան, (Ե. Մօրոք. ձ. № 26) և պ. Յ. Քոչարեան:

Բիբի-Ելբար—պ. թ. Տ.-Դանիէլիան:

Երեւան—«Երարտուա» դրախտանոթի:

Խորո—պ. Համալասոյ Տ.-Դաշտարեան:

Մուկուտա—պ. Ստ. Թումենի:

Սոչի—պ. Արամ Յակոբեան (Սեծովիկերեայ շրջան):

Սամարկան—թ. ք. Բէկկիլիսոն (Անդրկասպեան երկիր):

Սիմեվոլոպու—պ. Ն. Հայրապետեան:

Թիֆլիզ—«Գուտաներերդ» և «Անտորդնական» դրավաճառ:

Վլադիկավազ—թ. թ. Սասիկեան:

Թաւրիզ—բժ. պ. Ցէր-Ստեփանեան և Հ. Պանիլիսեան:

Եղիպտու—զոկուր և. Փաշացեան-Խան (Ալէքսանդրիա):

Լենին—պ. թ. Մելիք-Արքահամեան:

Նոր-Զուլու—պ. Տիգրան Արզարիան:

Թէհրան—պ. պ. Ալեքսան Թումենից և Ա. Բարակեան:

ՕՍՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ընդունում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են, — 1 երես բանոտ յայտարարութեան համար 15 ր., 1/2 եր. 8., 1/4 եր.—4 ր., տողատեղ (կորպ.)—40 կ.:

Խմբագիր լեհով ՍԱՐԳՍԵԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### №

*b*

1.	ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ պատմուածք Առանձարի . . . . .	5
2.	ՈՒՐԻՇԻ ՀԱՄԱՐ, գրամա Լեւոն Շանթի . . . . .	14
3.	ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ եհ ՄԱՐՔՍԻ ԶՄԸ, Բ. հշխանեանի . .	25
4.	ԻՐԱՆԵԱՆ ԹՈՒՐՔԵՐ, Խ. Վամբերի . . . . .	43
5.	ԶՐԱՆԿԻՐԸ, Լեւոն Փոարիէի Փրանս. թարգմ. Ա. Շահէն	57
6.	ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, Կարապետ Կուսիկեանցի . .	61
8.	ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿՌԻՒ, Արթուր Փիթզերի, թարգմ. Ե. Հ. 87	
7.	ՕԲԵՐԼԵՆԵՐԸ, վէպ Ռնէ Բազէնի . . . . .	89
8.	* * Աւ. Խաճակեանի . . . . .	130
9.	ԷՆԴՅԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ եհ ՑԵ-	
	ՂԱՓՈԽԱԿԱՆ ՐՈՍՊԱՆՑԻ ԶՄ, Է. Բերնշտայնի	131
10.	ՔԱԶԵՐԻՆ, ստան. Աւ. Խաճակեանի. . . . .	144
11.	ՔՆՍԴԱՏՈՒԹԻՒՆ եհ ՄԱՏԵԱԼԻՈՍՈՒԹԻՒՆ. —	
	Առանձար՝ «Վշտի ծիծաղը» Նա. 2) Les Oberlé. pièce en cinq actes, par. M. Edmond «Harau- court», D'après le roman de M. René Bazin, de l' Académie française. *. . . . .	146
12.	ԳԵՂԱՆԱՍՆԵՐՆ ինչ կարդան Ցով. Տէր.-Միրաքեանի . .	149
13.	ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ . . . . .	148
14.	ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Քաշշուկի քաղաքականութիւն եւ զինուած ապստամբութիւն.—Պէխանովը սոցիալ-դե- մոկրատների տակութիւնի մասին.—Ապստամբութիւնը Մոսկուայում.—Ամբարդակ Թէ հուն.—Զախարկողմեանե- րի բլոկ.—Պետական գումայում մասնակցելու հարցը. —Աւգիան ախտոնիք.—Պ. Դ. ընտ. Կովկ.: Լ. Ս.-ի	165
15.	ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Անելի դրամա.—Արծագանդ- ներ.—Պարսկական եւ օսմանեան «սահմանադրութիւն- ները».—Գետոկրատիա եւ արեւելեան հարցը.—Գևոն- կրատիական հոսանքի յաղթանակը Անդիայում.—Համե-	

բաշխ գործունէութիւն տղամական ուղղութեան տար-	
թիր կուսակցութիւնների մէջ, — Թրամախական կառ,	
տակտիկան եկեղ. կայքերը ցուցակագրելիս, — Համբաս,	
նոր նախապահի ընտրութիւնը: Լ. Ս.-ի . . . . .	182
<b>16. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ</b> . . . . .	189
<b>17. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ</b> . . . . .	
<b>18. ՊՈՍՏԱՐԿԴ</b> . . . . .	
<b>19. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ</b> . . . . .	276
<b>20. ՅԱԽԵՂՈՒԱԾ. ՁԵՅՄԱ Մ'որիէլ՝ «ՀԱՅԻ ԲԱԲԱՆ ԱՆԴ-</b>	
<b>ԼԻԱՅՈՒՄ»:</b> վէպ պարսկ. կեանքից, թարգմ.	
ամոգլ. Մ. Կարապետեան . . . . .	159—174

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ զրել պարզ, մանաւանդ բաւեր, յատուկ անուններն ու օսար բաւերը, եւ թերփի միայն մի երեսի վրայ. առանձնապիշտ ու ուղարձնել կէտարութեան, ուղագրութեան եւ նոր պարերութիւնները սրուակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը:

2. Զընդունուած միջ յօդուածները պահուում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուում են: Զենուագիրը յիշ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախուը: Փոքը յօդուածներն ու ստանալուները չեն վերադարձնուում:

3. Գրուածքների գարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարում են անվճարելի:

4. Խմբագրութիւնն իրան է վերապահուում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրինի» համարը չափացուելու զէպքում՝ պէտք է խմբագրութեանը աեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելու:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով գիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակագրոշմ կամ պոստային ըլանկ:

7. Հասցէ վորիկու համար պէտք է ուղարկել 40 կոտէկ: Հասցէի վորիկուումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզ կի առաջիկայ. համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է այտնել նաև հին հասցէն:

## ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ

Մարզար Թամբարեանի յիշատակին

I

Գեավուր-Բօղան:

Անունը վրան:

Ոչ մէկ հայ կը յանդդնի երբեք թափանցել այդ գուժան գուեններուն մէջ, ուր քաղքին թրքութեան էն հարագատ մասը խռացած է:

Հսկայական տղբակոյա մը, որու մէջ հիւղակները — աւելի որջերու քան մտրպային բնակարաններու նման — այնպիսի ծամածուռ ու անկարելի դիրքերով խրուած են, որ կարծես անձանօթ տիսան մը ժամանակին ամըսպջ քաղաքը աւլած և աղբիւսը իր վիթխարի թիովը միջնաբերդի բարձունքէն վար նետելով ակամայ հիմնազիրը եղած է այս թաղին:

Իրիկուն է:

Գեավուր-Բօղանի համբաւաւոր մեգերաներէն պառաւ ֆաթման ըստ սովորականին նստած է իր խրճիթին շէմին վրայ, ոչ թէ վերջալսյար վայելելու, այլ անցորդները դիտելու և մանսաւանդ պաշապանելու համար իր հաւերը, որոնք օրուան այս պահուն մասնաւ որապէս ենթակայ են փողոցի լակուտներու քարկոծումին: Գրկին մէջ հանգստաւէտ դիրքով մը բազմած է իր սիրատուն թոռնիկը, մերկ, ցեխոստ սրունքները մամիկին ծունկերուն վրայ կախած և ծուածե ճղճիմ զլուխը անոր կուրծքին հանգչեցուցած: Մորթը աղտի ստուար խռւի մը տակ կորսուած, եռանկիւնի լայնանիստ քթով, մանրիկ Յունուար, 1906.

ճպուռա աչքերով երեխայ մը, որուն մերկութիւնը աղ-  
ասա շապիկ մը միայն կը ծածկէ, իսկ դլուխը նոյն-  
չափ աղաստ գլակ մը, որու վրայ սակայն ինաւուա  
ձեռքեր մեսաղէ կիսալուսին մը և բազմաթիւ ուկունք-  
ներ ու յուռութմներ կարսծ են չար աչքէ գերծ պա-  
հելու համար:

Ու պառաւը գյուտարին կացութեան մէջ է:

Կը ջանայ մէկ կողմէ հայնոյսնքի ոյժով իր հաւերը  
պաշտպանել փողոցի քարագին որսորդներուն դէմ, միւս  
կողմէ անոյշ լեզուով սովորել իր թոռնիկը, որ նորաբող-  
բոջ ցուցամասովը միջնաբերդի զոյզ աշտարակներուն  
միջն փայլող արևուն շվիզակարմիր սկաւուակը կը ցուց-  
նէ շեշտակի և կը պահանջէ փայրկենարար իրեն բերել  
այդ խոշոր աղւոր սեխը:

Իսկ արեր՝ այդ փոքրիկ որկրամոլ բռնաւորին վտան-  
գաւոր ախորժակէն սարսափահար՝ արագ քայլով դէ-  
մի մարը կը փախչի:

Փոքրիկ Դուքսունը թէհ գեռ հազիւ երեք առարե-  
կան, բայց արդէն բէկ ախազուը ստացած է իր մամիշ-  
կէն: Ոչ միայն սրովինեան ամէն թիւրք աւելի կամ պա-  
կաս բէկ կը ծնի արդէն, այլ և ֆաթման իր փորձառու  
աչքերով այժմէն իսկ գտած է այն բնորոշ նշանները,  
որոնք կը խոստանան առանձնապէս արժանի համապիսա-  
ցնել իր թոռնիկը այս ախազունին:

Ահա այդ կարդի խոսմալից նշաններու ճոխ հաւա-  
քածոյին վրայ կուգար աւելնալ նաև Դուքսուն բէկին  
այս իրիկուսն խորախորհուրդ պահանջը և այս տաթիւ-  
զգացած ներքին հրճուսնքն է պատճառը, որ պառաւը  
վոլսանակ սրտնեղելու և յանոգիմանելու, ընդհակառակը  
ջերմ համբոյրներով կը լուայ իր թոռնիկին սմնուայ  
դէմքը և հետեւալ բացատրութեամբ կը զսոյէ սմնոր հո-  
յակապ ախորժակը:

Երկու մինարէներուն միջն փայլող այն կլորակ  
բանը սովորական սեխ մը չէ, այլ համտկ ոսկիէ վիթ-  
խորի սեխ մը, որ հետեւն շատ հետեւն շղթայով մը

կտխուած է երկինքն և որուն ան միայն կրնայ տիւ-  
բանալ, ով որ իր ձին մինչև հոն քշելու և իր սուրբն  
մէկ հարուածովը այն շղթան կարելու արիութիւնն ու  
ոյժը ունենայ:

Սյս խորիմաստ բացատրութեան վրայ լակոտը թա-  
թիկներովը աչքերը կը սրբէ և արել պահ մը առշու-  
թեամբ դիտելէ հարք.

— Անա, ագ ըստածդ ես չեմ կրնար լնել, երբ որ  
քիչ մը մեծնամ բարայիս դահդահին վրայ կը հեծնիմ,  
բարայիս մեծ սուրբ կ'առնեմ կ'երթամ շղթան կը կորեմ,  
կրնամ չէ անա:

— Հարկաւ կրնաս, հողիս, հարկաւ կրնաս, միայն  
թէ առաջ լաւ ձի հեծնել և լաւ սուր խաղցնել պէտքէ  
սորվիս:

Խոկ այս հաւասարիքին վրայ Դուրսուն բէկ արդէն  
յափշտակուած՝ խնոս շրթունքները կը լգէ, որովհե-  
տե անմիջապէս աչքին առջե կը պատկերանայ այն  
ցանկալի օրը, երբ ինք ձիուն վրայէն սուրի ուժգին  
հարուածով մը շղթան կը կորէ և... սակեղէն սեխը  
փաթ վար կ'իյնայ մէջէն չորս կոռոր եղած, կը ծուելու  
պատրաստ:

Բայց ապագայ հերոսը յանկարծ կը սթափի իր ան-  
ոյշ երազանքէն սուր ձիչ մը արձակելով:

Խոշոր սև շուն մը, որ փողոցին վերի ծայրը գիղ-  
ուած մեծ ազբակոյտը մութը կոխելէ առաջ վերջին  
անգամ մըն ալ քրիզելու զբաղած էր, իր բարերարունին  
նկատելուն պէս գործը ընդհատած և պոչը փարտելով  
վաղած ու մէկ ստումով անոր զիրկը նետած էր իր  
առջեի թաթերը:

Պառաւը, որ այս անգամ նոյնպէս յանկարծակիի ե-  
կած է այդ սովորական ողջոյնէն, կոռուփի հարուածով  
մը շունը կը վաճէ և կը ջանայ սրտապնդել իր թունի-  
կը, որ կոկորդակիր կը հեկեկար, աչքերէն ու քթէն  
առուակ մը հոսեցնելով դէպի բերանը:

— Մի վախնար, ձագս, մի վախնար, փափազն է,  
շուն փափազը:

Շունը, որ քանի մը քայլ հեռանալով պոչը ոտքե-  
րուն մէջ առած ապշութեամբ կը նայէր, չկրնալով  
մեկնութիւն մը տալ իրեն եղած այս կոպիտ ընդունե-  
լութեան, իր անունը լսելուն պէս կտմաց կրոկը-  
սի նորէն մօտենալ:

— Ծո փափազ, մունդառ փափազ եկներ:

Պատաւին այս անակնկալ հրաւերին վրայ շունը  
վերստին պոչը կը անկէ և մօտենալով իր կողը կրոկսի  
քերել անոր սրունքներուն վրայ:

Թաթման մէկ ձեռքով փափազին զլուխը կը բռնէ,  
իսկ միւս ձեռքով իր սարսափահար թոռնիկին աջ դառ-  
տակը անսերով անոր թաթիկովը կրոկսի շան կռնակը  
հարուածել:

— Զարկ մի վախնար, զարկ սա շան դեավուրին:

Դուրսուն բէկ սկիզբը գեռ կը վախնայ ու կը շա-  
լունակէ լալ, ջանալով ետ քաշել ձեռքը: Բայց տեսնե-  
լով որ անասունը ձայն ձպոտն չի հաներ, հետզինետէ  
կը սրտապնդի և վերջապէս տղատ ձեռքով կրոկսի իշ-  
եցնել իր հարուածները: Թաթման իր դաստանդու-  
թիւնը կտարեալ ընկերու համար զետնէն ճպոտ մը կը  
գտնէ և թոռնիկին ափին մէջ կը գնէ, իսկ լակոտը  
այս զէնքով աւելի խրախուսուած, իր անզօր բազուկ-  
ներուն ամբողջ ոյժը կը թափէ տքալով ու քիթը վեր  
քաշելով: Եւ իվերջոյ կտարդութիւնը այն սատիճանի  
կը համնի, որ ճպոտը մէկիդի նետելով շանը մէկ ական-  
չը կը բռնէ և բոլոր ոյժովը կրոկսի քաշել: Խեղճ փա-  
փազը ալ չկրնալով գիտմանալ կաղկանձելով կը փախչի,  
իսկ յախթական Դուրսուն բէկը հրճուանքի բացազան-  
չութիւններ կ'արձակէ անոր ետեէն և թերը շարժելով  
մամիկէն կը պահանջէ ետ բերել զայն:

Թաթման իր աննման թոռնիկին քաջապատութեան  
այս նոր սպացոյցէն զզլսած, պինդ մը կուրծքին կը

ահղմէ զանի և անոր թեկին ու ձեռքերը կը համբուրէ  
բացադանչելով՝

—Թեկերդ զօրանան կտրիճ ձագս, թեկերդ զօրանան:

Այդ միջոցին փողոցին ծայրէն աղմուկ մը կը բար-  
ձրանայ:

Ճերմակ փաթթոցաւոր երկու լակոտներ վաղելով  
ու ոլուալով կը մօտենան և պատաւին առջեր կը նետեն  
չոր խոսի ու փայտի կտորուանքներու խոշոր արր-  
ցակ մը:

—Ծօ առ լինչ է, ուրկէ կուգաք այսպէս հասլով.  
կը հարցնէ ֆաթման զարմացած:

—Անա գեավուրի լակու մը ծեծեցինք, քթէն  
բերնէն արիւն բերինք շան ձագին և առ ձեռքէն խլե-  
ցինք:

Կը պատասխանեն թզուկ հօճաները մէկ բերան,  
բերած արցակնին ցոյց տալով:

Ֆաթման ոտքի կ'ենէ և մէկ ձեռքով արցակը  
կշռելէ ետքը.

—Ապրիք տղաքս, շատ ապրիք, ահսէք եթէ ամէն  
օր այսպէս լեցուն ձեռքով զաք՝ շատ աչքս կը մանէք  
համ: Բայց հայրերնիդ ուր է:

—Բարաս այսօր քիչ մը ուշ տուն պիտի զոյ,  
տեղ մը զնաց, բայց մենք մնօթի ենք անա, կը պատաս-  
խանէ մեծ տղան:

—Ե՛ լսւ, եկէք ներս քիչ մը հաց տամ. կ'ըսէ ոլա-  
ռաւը և աւարը առնելով տղոց հետ տուն կը մտնի:

Ներսը մինչդեռ տղաքը հացի մէյմէկ շերտ խած-  
նելով իրենց շահատակութեան մաներամասնութիւնները  
կը պատմէն, ֆաթման և իր մանկամարդ հարսը հիա-  
ցումէ հիացում զլատորելով վերջապէս այն աստիճան  
կ'ոգեսրուին որ մէյմէկ կտոր ալ պանիր կը նետեն ան-  
ոնց առջեր:

Զէթի ճրապը արդէն սկսած է նշուլել և հարսը օ-  
ջալսին մէջ աղոց բերած փայտին կը ակովը բնթրիքի  
ոլուուկը կ'եռացնէ, երբ դռնէն ներս կը մտնէ երիտա-

սարդ հօճաւ մը. ֆաթմայի որդին, հարսին ամուսինը և  
տղոց հայրը:

Ֆաթման ամոր ընդառաջ փութալով.

—Հօճաւ ուր մնացիր, եկուր տես տղաքդ ի՞նչ են  
բերեր—և տղոց դառնալով—ծօ մէյմըն ալ պատմեցէք  
հայրերնիդ լսէ:

Ու տղաքը հոգիւ աւարտած իրենց գիւցազներգու-  
թիւնը, պառաւը, որ դիտմամբ էն վերջուան պահած էր  
ամենամիծ անակնկալը, յաղթութեան նշանի մը պէտ  
Գուրսուն լէկը զլխուն վրայ բարձրացնելով կը բացա-  
գանչէ.

—Հազար աս պղափիկս, չէք հարցներ թէ ինչեր բ-  
րու, ինչեր, ինչեր:

Եւ հէքեաթի մը ճոխութեամբ կը պատմէ բէկին  
թարմ սիրազործութիւնները, արեւուն փախուստէն ըս-  
կըսած մինչև փափազին պարտութիւնը, հետեւալ վեր-  
ջարանով:

—Միշտ ըսեր եմ և նորէն կը կրկնեմ որ նմանը  
չտեսնուած կարիճ մը պիտի բլայ առ ձագուկս:

Հօճան իր երեք գտւակներուն ևս իրենց արժանի-  
քաջալերանքը տալէ յետոյ, ինք ալ իր կողմէն կ'աւե-  
տէ թէ կոտորածին աւարը այս իրիկուն բաժնուած և  
քսան հատ կարմիր սոկի բաժին ինկած է իրեն:

Այս աւետիսին վրայ քիչ մնայ ուշաթափ ըլլան կի-  
ները, որոնք աչքերնին կը փակեն ու չեն կրնար քսան-  
հատ սոկին մէկաեղ երեակայել և անպատճառ տեսնել  
կ'ուզեն: Բայց հօճան խոհեմութիւն կը համարէ առայ-  
ժըմ հինգ հատէն աւելի մէջահեղ չհանել խոստանալով  
մնացածն ալ մաս առ մաս ցուցնել:

Ընթրիքի դգալներուն աղմուկը հազիւ դադրած  
փոքրիկները արդէն անմեղութեան քունը կը խոկան,  
հարսը քովի խցիկին մէջ հեշտանքի անկողինը կը փոէ,  
ֆաթման ամանները կը լուայ:

Իսկ հօճան չիբուխ մը քաշելէ յետոյ զուրանը ձեռք  
կ'առնէ և ձէթի ճրազին աղօտ լոյսին տակ—թէկ ճրա-

գի ամենակին պէտք չունի, որովհետեւ զոց զիտէ արդէն  
—յուղուած ու գեղեցկաձայն կ'եղանակէ.

«Փառաբանէ անոննը քու Ցիրոջն՝ Բարձրելոյն,

«Որ ստեղծած է ամեն ինչ եւ հաւատարակշռու-  
թիւն հաստատած ամեն ըանի մէջ,

«Որ որոշած է ամենըին ճակատազիրը եւ Որ ա-  
մենը դէպի նպատակ մը կը վարէ...»

Դուբաը մութ գիշերին մէջ շներու ամբողջ փոհմա-  
կը կատաղօրէն կը հաջէ, հեռաւոր խուլ ու չարաշուք  
ոռնումի մը գիմելով:

## II

Մարթան դրան առջև անհանդարու շարժումներով  
փողոցին երկու ծայրերը կը դիտէ:

Շաբաթ մը կայ որ ամբողջ ընտանիքով տաք կե-  
րակուր չեն դրած բերաննին: Փայտը արդէն ամեն տա-  
րի սուզ, այս աշնան աղքատին համար անմատչելինիւթ  
մը եղած է: Եկեղեցիէն քիչ մը բրինձ բաժներ էին և  
թշուառ կինը այս երեկոյ տաք տպուր մը կ'ուզէր կեր-  
ցնել իր սիրելիներուն, այդ պատճառով մեծ որդին՝  
տանիերկու տարեկան Արամը՝ զրկած էր փողոցներէն  
քիչ մը վառելիք հաւաքելու:

Բայց օրը արդէն իրիկուն եղած է և տղան գեռ  
մէջտեղ չկայ:

Ակ յուսահատ՝ չարշաֆր վրան կ'առնէ տղուն ե-  
տիէն երթալու համար, երբ ան վերջապէս կը յայսնուի:

Հագուստները բգկատած, դէմքը արիւնկուայ և խո-  
շոր գեղեցիկ սկ աչքերէն մէկը ուռած՝ ներս կը մտնէ  
դոնէն:

Մայրը գարհուրած վրան կը վազէ.

— Տղայ ատ ի՞նչ է, ի՞նչ ես եղեր:

Փոքրիկը ձեռքերովը դէմքը կը ծածկէ: Այտերուն վը-  
րայ ալցունքները դեռ չեն չորցած, բայց մօրը ներ-

կայութեան աւելի կը փղձկի և բուռն հեկեկանքով հազ-  
զիւ կը թոթտիւ.

— Մայրիկ... թուրք աղաքը ըրին... շատ փայտ հա-  
ւաքեր էի... մէյգանէն... կուգայի... երկու... թուրքի  
աղայ... դէմս ելան... փայտը ուզեցին... չտուի... ու-  
զեցին խլել... փախայ... եանէս վազեցին... չկրցան  
հասնիլ... վերջէն... վերջէն... մեծ բեխտոր թուրք մը  
դէմս ելու... բոնեց ինծի... աղոցը ձեռքի տուաւ...  
փայտա խլեցին... ինծի ալ... ձեծեցին:

— Ա՛խ հողիս, Աստուծմէ զանան, ի՞նչ կրնանք ը-  
ներ, Աստուծմէ զանան, կը հասաչէ Մարթան տչքերը  
լեցուած և ձեռքը ծունկին զարնելով. խոկ պզտիկ տը-  
զան երկասմեայ Տիզրանը՝ մօրը փէշին փակած ահոելի  
լաց մը կը փրցին:

Ու մինչդեռ խեղճ կինը բակին մէջ մեծին վէրքե-  
րը լուալու և փոքրիկին ձայնը կարելու տագնապին  
մէջ է, գուշտէն կուզայ ամուսինը, որ այս տեսարա-  
նին տոջի աւելի զայրացած քան յուզուած՝ կը պուայ.

— Աս ի՞նչ է կնիկ ի՞նչ կըլանք նորէն:

— Բան չկայ ոտքդ ուազնեմ, զնա ներո նստէ, կը  
պատասխանէ, կինը վախի և աղերսանքի շեշտով մը:

— Ի՞նչ ըսեր է բան չկայ, կը գուայ մարդը ձայ-  
նը աւելի բարձրացնելով, աս ի՞նչ արիւն է, աս ի՞նչ  
լացուկոծ է նորէն:

— Սիրտդ թունդ մի հաներ, մեծ բան մը չէ եղա-  
ծը — կը ջանայ հանդարտեցնել Մարթան — Արամը թուր-  
քի աղոցմէ ծեծ է կերեր, քիթը արիւներ է քիչ մը:

— Թուրքի լաճերու նուր է հանդիպեր, ի՞նչ զործ  
ունի գուշտերը, չի՞ կրնար շնթոկիլ տունը նստիլ, ին-  
չու կը թողուս որ գուշտ ելլայ:

— Կ'աղաչեմ հելիք է ալ մի պուար, մենք ի՞նչ  
յանցանք ունինք, աղան դուրս զրկեր էի որ փողոցնե-  
րէն քիչ մը ցախ ժողուէ աէ ապուր մը եփեմ իրիկու-  
նը, տուն գալու տաեն թուրքի լաճեր ծեծեր ժողվածը  
ձեռքէն ասեր են:

— Օ՞խ, շատ աղէկ են րըհը, ապուր չէ չօսին մեծը ուստէինք ուէ օր մը առաջ ստալէինք ազատէինք:

Այս խօսքերով դառնացած սրտին ժահըր քիչ մը թափելէ յետոյ, մարդը ներս կ'երթայ, պատուհանին տոշն կը նստի և զլուխը կախ կը ծխէ ու կը հազայ: Արհեստով ոսկերիչ է ինք, վարպետ արհեստաւոր և ընտանիքի գորովագութ հայր, բայց ահա ամիս մը առաջ Զարին ձեռքերը յանկարծ երկնցան և մէկ հարուածով իստութէն իր հարստութիւնը և առնէն իր երջանկութիւնը յափշտակեցին...

Մարթան իր տղուն վերքերը լուալէ ու փաթաթելէ ետքը քովի սենետակը անկողին կը դնէ զանի փոքրիկին հետ:

Վկիշոր խեղդած է ամէնքին ալ ստամոքսի պահանչը: Տղաքը հոս խոր քունի մէջ կը հանգչին, մարդը անդին նստած տեղը վշտակոծ զլուխը կուրծքին վրայ կը հակէ: Եւ ամէն ինչ կը լոէ:

Ու խորին լսութեան մէջ յանկարծ ձայն մը կը բարձրանայ մերմ ու տիրանոյշ.

Թամին ելաւ էրան էրան,

Մշոյ մայրեր սևաւորան

Մարթան՝ տղոց սնարին քով իր վշտին մէջ ընդարմացած մէկէն կը սթափի: Պահ մը ուշագիր մտիկ կ'ընէ, Մշեցի գաղթական կիներն են որ կ'երգեն քովի անէն.

Հազարապետ լնկաւ թաղեր

Ծառեր կտրեց, տարտւ ճղեր,

Մայրիկ, մայրիկ,

Մայրկայ դարդեր սարերովին

Անուշ, անուշ.

Ու կրկին փղձկելով կը սկսի արաստուել, ձեռքերը իբար միացուցած և աչքերը յառած առաստաղին, ուր մրու գերաններու միջն սարդերը հազճեալ իրենց ստայնները կը հիւսեն վաղուան որսին համար:

Առանձար

# ՈՒՐԻՃԻ ՀԱՄԱՐ

(Դրամն 3 արարտ<sup>1)</sup>)

## ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Ա. ՏԵՍԱՐԱԿ

**Միքան.** (կը համբէ շապիկները սեղանին վրայ ու կուտայ Արթինին, որ Թեթեւ մը կը նայի բանուացքին ու կը դնէ իրար վրայ:) Երեք, չնրա, հինգ, վեց, առ ալ եօթը. երեք հատը անցած անգամ տարիը, եղաւ տասը. մնաց երկուքը: Մնանէն ևս քաշուելով ևս խոր շունչ առնելով՝ տեսակ մը զրդուած) Ան ալ ետքը. չկրցայ հասցընեմ. այս քանի մը օրը... այնպէս գործերս... դլուխս խանն էր շատ:

**Արթին.** (փաթթելով շապիկները իր սիւ կապոցին մէջ) Աղէկ. ուրեմն մնաց երկուքը: Որ իզոր խօսք չըլլա, կ'ըսեմ հիւանդէր: Միքան. Ըսէ: (Զարդացած) Գուցէ ըստածդ ոուտ ալ չըլլար:

**Միքան.** (Վածձկոտ) Է՛ ամենէն ճիշտը ատիկա է: (Զարդացած ու չըլլա) Թէ չէ՞ ինչու համար հիմա համ (կուրծքին զարնելով) այսպէս անհանդիստ է ըլլալու ու այսպէս սեղմուած: Այս, կարծիս ճանկ մըն են խրեր նիրս ու կը քաշեն, ինչու, ի՞նչ է եղեր, ի՞նչ եմ ըրեր, եթէ հիւանդ չեմ:

**Արթին.** Պարապ խօսրիք: Մի վախնար. քեզի պէս աղջիկը Աստուած կը պահէ. ամրող տան մը նեցուեն ես զուն, պառաւ հայրիկիդ, աղքար-քուրիկիդ: Աստուած է օրհներ քուծնողնպէտ:

**Միքան.** (Զարդացած) Հապն, օրհներ է:

\* \*

**Մարիամ.** (Կողմանի դռան մէջ) Դեղս դեռ չեկամ: Բարի, Արթին աղա:

**Արթին.** Բարե՛ւ, նորէն դեղ:

**Միքան.** Տուսը տուի հայրիկին, որ գեղատուն տանի:

**Մարիամ.** (Նիրս զալով) Օ՛ֆ, ինչու ես թողեր անոնց վրայ. անոնց որ մնայ՝ տասը տարի սպասէ. հոգերնին է: (Նիրս տելով, հիւանդ) վմայ:

**Արթին.** Գիտեմ, այդչափ գեղը աղէկ չէ:

**Սիրան.** (Նեղսիրտ) Հազար անգամ ըսեր եմ՝ գեղ ու բժիշկ փոխելով բան չի գառնար:

**Մարիամ.** (Գրգոռած) Ե՞, ան մէկալ բժիշկը ոչինչ ալ չէր հասկընար. աս մէկը նորէն բանի մը նուան է, կարծես: Տեսնենք: Ե՞, ճակտիս ու են զրեր, Արթին աղա:

**Արթին.** Բան չի կայ, կ'անցնի: Շուտով կը հաշտեցընենք քեզի մարգուց հետ, կը հանգստանաս, կու զան ուրախ օրեր:

**Մարիամ.** Խնձի համար ուրախ օրեր չկան: Ուրախ օրերը Աստուած տուեր է ուրիշնելուն, տուեր է ասոնց, տուեր է ամենքին, մոսցեր է միայն ինձի: Դուն իմ մարգս չես ճանչնար, անիկա մարդ չէ, դի է անիկա, սաստանան հաշտուի անոր հետ: Ախ, Աստծու կրակին գայ, որ ինձի աս օրը հոսցուց:

**Արթին.** Մի ըսեր, մի ըսեր:

**Մարիամ.** (Լացիոս) Ե՞, երբ պիտի Աստուած մահ ինձի, որ ազատուիմ: Ե՛ս ալ, ասնենք ալ, աս աղջիկն ալ:

**Սիրան.** Մարիամ.

**Մարիամ.** Գիտեմ, գիտեմ, ես բեռ եմ ամենքի վրայ, բեռ և քեզի համար: Եւ վերջապէս ով կ'ուզէ մինչեւ վերջը իր գլխուն ինձի նման անպէտք, արանջով ու ցաւագար կնիկ մը ունենայ: Կը մեռնիմ, կը մեռնիմ, կ'ալզատուիք ամենքդ ալ, կ'աղատուիս զուն ալ: Բայց քանի գեռ կամ, քու բարի ձրոքդ վրայէս անպակաս ըրէ, Սիրան: Ա՛յ, այս երկու օրը ալ ձանձրացեր ես, ինչ է, քիչ մը որ ուշ չես գարձներ, ոչ գեղս կայ, ոչ ժամանակս կը նային, ոչ հոգ ընող կայ. բոլորովին ծովը նետելու բան եմ գարձեր:

**Սիրան.** (Շփոթ) Ես... Ես...

**Մարիամ.** Հազուդ վարձ է, Սիրան:

**Սիրան.** (Անշարժ, գլուխը կախ, աչքիր կետի մը:)

**Արթին.** (Ուտի ենելով ու պատրաստելով իր կապոցը վերցրնեու) Աստուած իր ստեղծածը երբէք չի մոռնար, Մարիամ: Ատանկ սկ մի նայիր աշխարհին, ատիկա մեղք է, մեծ մեղք:

\* \*

**Սուսպիր.** (Արագ կը նետուի ներս՝ կուրծքն ու մարմինը մեծ զանցի մը մէջ, ձեռքին աման մը: Մտերիմ ժպիտով դլխով կ'ընէ: Արթինին) Բարեւ: (Վոտենառվ Արանին) Այսչափ հերիք է, բրէնձը:

**Սիրան.** (Ցնցուելով) Ի՞նչ...: Տեսնեմ: Կուզես՝ քիչ մըն ալ աւելցներ: բայց շատ քիչ:

**Արթին.** (Որ հայեացրով կը դիտէր այցիկը) Տեսէք, տեսէք, ա՛յ,

իս անուշիկ սիրունիկս, այս ի՞նչ հիմնալի տաճառիկին ևս դարձեր: Տեսնեմ, տեսնեմ (տեսակ մը շուրջը դառնալով:)

*Մարիամ:* (Ժպտուն) Հա, աս երկու օրը հավէսի է եկեր, ինկեր է Միքանի ետևէն, թէ ձգէ ևս եմ եփելու, թող սորւմ:

*Արթին:* (Քնիշանքով կր շոյէ աղջկան մազերը) Սորվէ, աղջիկս, սորվէ, ոսկի մազերդ սիրեմ: (Նրավկոտ, հատչանքով) Իսկը, իսկը, բու մայրդ, Աստուած ողորմի հոգուն: Դէ, մնաք բարով:

*Մարիամ:* Ինձի նայէ, Արթին աղա, չէր կրնար անգամ մը գեղարանը հանդպիս:

*Արթին:* Հանդպիմ:

*Մարիամ:* Հոգիդ սիրես, կ'ըսես որ... (Վիասին դուրս:)

\* \*

*Մուարդ:* (Ակցած է լարուած, մէկ ձևոքի ամանին, մէկ քրօջը նայելով, բան մը բակ կռւպէ, որ կը դժուարանայ: ) Միքան... Արթին աղջինը ըսէիր, որ ինձի համար ալ բերէ աստնցմէ, գժուար բան մը չէ. գուն ալ որ բէչ մը օգնես, կարգին կը բանիմ:

*Միքան:* (Կ'ուղղուի, շնչառ կը նայի քրօջը, որ վլուխը կը կախէ ու կը խաղա բրինձին հետո: Քիչ ուռու քայլ մը անոր մօտենալով: ) Բոէ, նայիմ, քեզի ի՞նչ է պատահեր: Այդ փոքրիկ դլխուզ մէջ բաներ մը կը գաւնան:

*Մուարդ:* Ոչինչ, ի՞նչ պիտի ըլլա, կ'ուզեմ բանիմ:

*Միքան:* Եւ ինչո՞ւ:

*Մուարդ:* Դուն ինչո՞ւ կը բանիս:

*Միքան:* Ես... ևս ուրիշ: Հապա նկարելով:

*Մուարդ:* (Ոնհանդիսաց) Ան... ան գեռ երկար ժամանակի բան է, ան... գեռ... առայժմ, չգիտեմ, տեսնենք, (Յանկարձ կտրուկ) է, ձգէ, ձգէ: Մէկ կողմ զիր հիմա ինձի, հիմա իմ մասին խօսելու ժամանակ չէ, հիմա...

*Միքան:* (Թիսա) Հապա՞:

*Մուարդ:* Ոչ, Միքան, ոչ. չեմ ուզեր, կը լսես, չեմ ուզեր. ալ մի մտածեր իմ մասին, հոգ մի ընկեր, մի մտածիր մեր մասին: Որքան մեղի համար չարշարուեր ես՝ հերիք է: Կ'ըսէիր, որ քեզի համար չես ապրած, որ քեզի ոշինչ չի յաջողիր, որ անբախա ես: Մուտ է, գնա, տես: (Ովերուած) Գնա, Միքան, գնա, ոչինչ հոգի չընես, ես կ'ընեմ բոլոր ձեռքէս եկածը: Գնա այդ քու սիրած լեռներդ, հնա դիմացը, որ Օհաննէսն ալ այնչափ կը սիրէ: Այս, ի՞նչ լաւ, անմտան աղայ է Օհաննէսը: Ես կ'ու-

զեմ, որ դուն երթաս, կուղեմ, որ դուն գոհ ըլլաս, բազգաւոր ըլլաս ուրախ, երջանիկ: Գնան, Սիրան, գնան:

Սիրան. (Որ կը լսէր լուռ ու աչքերը լայն բացած, յանկարծ կ'ըստ սկսի բուռն ու անգուստ ծիծաղ մը: Աւ ծիծաղին մէջէն) Գնանմ... ըլլմմ երջանիկ, բազգաւոր... Գէշ... չէ... Գէշ... չէ... Բազգաւոր, երջանիկ...

Նուարդ (Ապշած) Ի՞նչ կայ հոսանդ խնդալու:

Սիրան. (Յանկարծ խնդուքը կտրելով ու հրամայական) Գնան, գնան դուն ինքդ, գնան ու բրինձդ լուն:

Նուարդ. Բայց... հո...

\* \*

Սահակ. (Կերս մտնելով) Կարելի՞ է:

Սիրան. (Պառն) Վայ: Խնդրեմ: (Ճիկնոտ) Այս անդամ արդէն ճիշտ ժամանակին եկար:

Սահակ, ինչպէս թէ: Մի վախենար՝ ևս քեզի չեմ անհանգստացընելու. վայրկեան մը միայն, Այնպէս, փոքրիկ հաշիւմը, որ պէտքէ կարգադրէի:

Նուարդ. (Յանկարծ բուռն շարժումով մը կը դառնայ ինքն իր առանձին վրայ ու զուրս):

\* \*

Սիրան. Հաշիւմ:

Սահակ. (Վեղանի վրայ բանի մը ոսկի գնելով) Ասիկա առեր եմ քեզմէ զանազան ժամանակ: Ուղեցի երեկ բերեմ, բայց որչափ այս ու այն կողմ ինկայ չկրցայ ամբողջացընեմ: Շնորհակալեմ:

Սիրան. (Պառն ժպիսով) Նա, իհարկէ, կը հասկընամ: Փոքրիկ հաշիւները պէտք է մաքրուին: Աղեկ: Ուրեմն... Ուրեմն վճռեր ևս մաքրես ինծի հետ քու բոլոր հաշիւներդ:

Սահակ. (Աւանը ցնցելով) Վճռողը ևս չէի, դուն վճռեցիր:

Սիրան. Բայց խօսացար՝ որ բարեկամ ենք միալու:

Սահակ. Վրաս կը ինդաս, Սիրան: (Լուրջ) Ես այս տան մէջ այլ ևս կործ չունիմ: Ես... ես... է... (Դէպի դուռը):

Սիրան. (Ճրամայական) Սահակ:

Սահակ. (Կանգ առնելով) Ի՞նչ է:

Սիրան. Մօտ եկուր:

Սահակ. Է՛, լ՞նչ հարկ կայ: Թող ինծի, Սիրան, թող ինծի երթամ:

**Սիրան.** Ո՞չ, չես երթար:

**Սահակ.** Կը տեսնեմ, ինչպէս քու ձեռքիդ մէջն եմ զես: Ես վճռեր էի գամ, յանձնիմ ու հեռանամ: Այս վայրկեանիս ալ չեմ ուզեր մասմ, աւելորդ տեղը իբրու սիրտ պիտի ծակինք: Բայց... բայց գուն կը սեռ՝ ոչ, և ահա գամուեր եմ, չեմ կընար երթար, չեմ կընար իմ բոլոր կամքիս հակառակ: Ախ, Սիրան, զուն հետո շատ գէշ խաղ խաղացիր, շատ:

**Սիրան.** Խտղ:

**Սահակ.** Բայց ոչ, ոչ, ես քեզի չեմ մեղաղըրեր, ոչ: Քեզի իսելքէ հանեցին:

**Սիրան.** Ինձի:

**Սահակ.** Կը կարծես ես աչք չունիմ: Ես տուաջուց ալ այլպէս բան մը զզացեր էի կարծես: Անիկա առաջին օրէն իր օղերը փաթթեց քու շուրջդղի բայց ես վստահ էի քու վրալ, վստահ, ինչպէս Աստծու վրայ: Բայց ոչ, ոչ, ես քեզի չեմ մեղաղըրեր, երբէք: Մեղաւորը ես եմ, ես գիտեմ: ես մւը, ան ուր մասնագէտ մարդ, ձեսներէց, բաց ապագայ, իսկ ի՞ս, խեղճ-ուղորմելի սրբազրիչ մը, ես ինչ:

**Սիրան.** Ամօթ է:

**Սահակ.** Է՛, ես գիտեմ: Ես գիտեմ որ քեզի արժանի չեմ. բայց ինչու ինձի յոյս տուիր, Սիրան, ինչու ինձի քեզի կապեցիր. ինչու թողաւցիր, որ ես քու մէջդ մարմնացընեմ իմ ամրողջ կեանքս. ինչնու, եթէ այսպէս մէկ հարուծավ խորտակելու էիր բոլոր յոյսերս, մխիթարանքս, կեանքս, բազզս: Ոչ, զուն միայն իմ սէրս չէ, որ տաքի տակ տոնիր, այլ և ամրողջ հաւատս. ալ ոչ մէկ մարդու չեմ հաւատար ես, ալ ոչ մէկ բարութեան չեմ հաւատար ես, ալ չեմ հաւատար ոչ մէկ վեհութեան, ոչ մէկ անձնուիրութեան: բոլոր մարգիկը նոյն են, միայն իրենց հաճոյքը, բացառութիւն չի կայ, տուրեոյթս է միայն:

**Սիրան.** (Չօր) Բոչ, բոչ, իրաւուք ունիս: Վերջը:

**Սահակ.** Ո՞չ, Սիրան, ես քեզի չէ, որ կը մեղաղըրեմ: Ո՞չ: Երեկ կեանքն է այգալէս. բայց եթէ հիմա սիրտս տեսնել կարողանայիր: Ալ իշու եմ ապրելու, եմ կեանքս արդէն երբէք ոչ-մի խորհուրդ չէ ունեցեր, չէ հետաքրքրեր ոչ-ոքի, իմ սառն, իմ միայնակ կեանքս: Դուն էիր միայն, որ ձեռք գացուցիր, դուն էիր միայն որ ջերմութիւն ու յոյս թափեցիր մէջս, որ թափ տուիր հողիս, հաւատ ներշլաչեցիր: (Յուսանատ) Ինչու: Ես թոյլ տղայ եմ, գիտեմ, կեանքի համար անպէտք, գիտեմ. բայց ինչու ալապէս երեսիս զարկիր իմ ջնջին ու անպէտք ըլլալս. ես գոնէ պատրանքի մէջ էի, ես գոնէ կարեւորութիւն էի տուեր ինձի, չը որ դուն, քու հողիդ ունեցող կին մըն էր

ինձի կապուած։ Եթէ գիտնաս՝ ինչպէս հպարտ էի ես... (Որտասուրից խեղուելով) Ես քեզի կը պաշտէի, ևս քեզի ասուուած էի շիներ... (Յանկարծ բնդատելով) Ե՞, չզիտեմ, ինչու այս բոլորի մասին քեզի կը խօսեմ հիմա. ինչու ստիպեցիր, որ խօսիմ. հաճոյք կ'զգաս միթէ, որ ինձի տւելորդ անգամ մը. կը նւաստացընեմ առջեգ։ Թող, թող երթամ։ Երջանիկ եզիր, եթէ կը ընաս. կը ցանկամ որ երջանիկ ըլլաս. բայց պարզ ըսկմ քեզի չեմ հաւտար, որ երջանիկ ըլլաս։ Ան... այն միւսը քեզի հաւտար չէ։ Իսկ եթէ պատահի... որ քեզի օր մը թշուաս զգաս, եթէ պատահի, որ վշտակից մարդու մը սիրու բանալու պէտքը ունենաս, յիշէ այն առեն ինձի, յիշէ, որ կայ մէկը, որ միայն քու յիշատակովդ կ'ապրի, քու անունովդ...։ Մի վախնար, ես անհանգիստ չեմ ըներ քեզի. ալ աչքիդ անգամ չեմ երեար. հեռու, որքան կտրելի է հեռու։

Սիրան, (Որ մինչեւ հիմա կը լուր խոժոս ու անշարժ, յանկարծ զայրացիստ, հասու չարժումով մը կինէ ուորի) Աչ, ասիկա վեր է իմ ուժերէս, վեր է, վեր... (Ու կանգ կանցէ բռունցըները սեղմած, աչքիրը անթարթի)։

Սահնակ. (Վախյած) Ներէ, Սիրան, եթէ քեզի վշտացուցի։ Դուն Եր ինձի խօսել տուովը։ (Ու ինքն ալ կը կինա անոր դէմը շուար ու անշարժ, չիմանալով ինչ ընէ։ Փիչ լուս)։

### Բ. Տ Ե Ս Ա Ր Ա Ն

(Կը մանէ Յակոբ, ետեւէն հայրը)։

Յակոբ, (Գլխարկը հանկույ) Ես մարդու վրայ մէկ անգամ որ նայիմ։ հերիբ է։ Հը հիմա կը տեսնէք. որ կ'ըսէի՞։

Հայրը. Դէ, ըսէ, հոգի հանեցիր. ի՞նչ է որտ

Յակոբ. Ոչինչ, ի՞նչ պիտի ըլլայ։ Տեսուծ օրէս չսիրեցի ես այդ մարդը. այդպէս եսական, ինքնավատնէ, քիթը վեր։ Եւ վերջն ալ այսպէս խայտառակ կերպով ինքը զիրը ծախէ, այսպէս ափաշկարա միշերկու հաղարի համար։

Սահնակ. Աս ով, է։

Յակոբ. Ով պիտի ըլլայ։ Այ, ասոնց յարդած ու ուստած պարսն Օհաննէսը. Դուք դեռ ձեր դլսուն դրէք ու անոր տափակ ֆրազներովը հիացէք։

Հայրը. Ի՞նչ է հզեր որ Օհաննէսը։

Յակոբ. Յովսէփիհանին աղջիկը զիտեմ, չչ, ոս մեծ քիթով նմ, աչունիդ լոյս. շուտով հարսնեոր ենք դաննալու։ Ե՞, ի՞նչ կ'ըսիս, Սիրան։

Սիլան. (Համզիստ) Աղբէկ. դիցուք թէ. չգիտեմ ի՞նչ կայ գարմանալու:

Հայրը. Շխանկ կ'ըսէ, ի՞նչ ես իրար անցեր. շնորհքով աղջիկ, վրան ալ հարստութիւն:

Յակոբ. Շնորհքով, այս. մինչև անգամ չափազմանց շնորհքով. այնքան շնորհքով, որ իր շնորհները... Բայց, է, ի՞նչ վընաս. թիջ կան կոտոշաւոր ամուսիններ. զոնէ ասոր կոտոշները ոսկիէ պիտի ըլլան:

Սիլան. (Զգուանքով) Ամօթ է: Զէ որ զուն էիր շարունակ Յովսէփեանի աղջիկը գտվողը. հիմն եղաւ գէշ: Ասոր կ'ըսէն՝ աղտոտ բամբառանք:

\* \*

Յակոբ. Բամբառանք: Հա, ատիկա էր պակաս, պիտի բամբառէի որեէ բարբիէրիս պարոն Օհաննէս մը:

Հայրը. Գնա, գնա բանիդ: Ծանօթ տղայ է. ի՞նչ հարկ կայ գէշ-մարդ ըլլալու:

\* \*

Յակոբ. Տեսմբ զուն ձարսիկ մարդը: Գործերը շտկեց, քաշուեցաւ մէկդի: Ասկէ ետքը պատրաստ զրամ. կ'ը, խմէ ու բէֆդ նայէ:

Սահակ. (Տեսակ մը սթափելով) Կեցիր. ուրիմն սա հառամատ վերջացած բան է:

Յակոբ. Հատա ի՞նչ: Թէ կը կարծես պիտի սալասէր, մինչեւ երթայինք ու մեր ըարեհաճութիւնը յայտնէինք:

Սահակ. Խելքս ոչինչ... ոչինչ չի կտրեր: Եթէ այդպէս է, ևս... (յանկարծ կ'ընդհանէ):

Յակոբ. Դուն ի՞նչ:

Սահակ. Ես այս վայրկեանիս մեծ սխալ մը ըրի, միծ, ապուշ սխալ մը:

Յակոբ. Ի՞նչ սխալ: (Անփայթ) Է, ի՞նչ որ ալ ըլլա. հոգդ մի ընիր. քու ամբողջ կեանքդ մեծ ապուշութիւն մըն է արդէն ինքնին. քնւ ու իմ, ու մեր նմաներուն: ձարպիկ պէտք է ըլլաս, ձարպիկ, այս աշխարհիս երեսին, ու միայն քու մասին պէտք է մտածես: Ինչացնէ է խելքը, տաղանդը, հասարակութեան ցաւերուն համար չարշառութիւլը, ուրիշներու մասին մտածելը. ինչացնէ է հոգեկան բարձրութիւնը, նուրբ զգացումներ ունենալը: Ահա, այ, գրապաննիս ծակ կը պտըտինը քեզի հետ:

**Սահակ.** (Յրիւ) Այն, այս: Բայց... ուրեմն կ'ըսես.  
ուրեմն...: (Յանկարծակի բաւոն ուրախութեամբ) Վահան, ան ատեն ըսել  
է ամէն բան կորած չէ գեռ, կորած չէ գեռ:

Յակոր. Այս յիմար, ինչեր կը խօսես: Ինչո՞ւ չէ կորած.  
իսէ՞լրդ: (Յանկարծ ականջ զնելով) Լոէ, լոէ. ոս անոր ձայնո՞ւ չէ՞:  
(Քարկացած) Ֆու: Ոչ, աս այսպէս չի վերջանար: Ես քու ոտքով  
այս տունէն կը կտրեմ: (Գուրս կողմնակի աշէն:)

\* \*

(Ճակտի դոնէն կը մտնէն Նուարդ ու Օ՛աննելսու.)  
Նուարդ. (Խնդումիք! ս) Խնզրեմ, խնզրեմ: Այն, ի՞նչպէս  
չէ: Այս վայրկեանիս իմաց տամ: (Աշխուժ) Իսկոյն, իսկոյն  
(Գուրս կողմնակի ձափէն:)

\* \*

**Սահակ.** (Արախ դէմր կ'երթայ, հանդիսաւոր ու ջերմ) Բարեւ  
ձեզի, պարճն ծալեան: Սա ի՞նչ նորութիւններ, ի՞նչ անակըն-  
կալ: Կը չնորհաւորեմ բոլոր սրտովս, կը չնորհաւորեմ:

Օ՛աննելսու. (Զարմաներով) Ի՞նչ բան:

Սահակ. Ազէկ, աղէկ, ալ ի՞նչ հարկ կայ ծածկելու, ձեր  
գաղտնիքը խել ենք արդէն: Արդէն զիտենք որ նշանուած էք:  
Օ՛աննելսու. (Ապշած) Ո՞վ ըստ ձեզի:

Սահակ. «Հաստատ աղբիւրէ», «հաստատ աղբիւրէ», ի՞նչ-  
պէս որ կ'ըսենք մենք մեր լրագրական ոճով:

Օ՛աննելսու. Երեկ, օրիսրդ Սիրանը...

Սահակ. (Երծաղելով) Դիցնաք. դիցնաք և օրիսրդ Սիրանը:  
Է՛, հիմա ի՞նչ կ'ըսէք. հիմա ալ կը ժխտէք:

Օ՛անն. (Վարան, տհանկ մը դժգու) Քանի որ ձեզի յայտնողը  
ի՞նքը օրիսրդն է:

Սահակ. Ուրախ եմ, հաւտացէք, բոլոր որտովս ուրախ:  
(Խելով անոր ձեռք) Կը ցանկամ ձեզի բաղդաւոր կիանք, յաջո-  
ղութիւն, երջանկութիւն:

Օ՛անն. (Խնդամիքով) Շնորհակալ եմ:

Սահակ. Իսկ առայժմ ցտհութիւն: Մնաք-բարով: (Աշ-  
խուժով դուրս:)

\* \*

Օ՛աննելսու. (Կախ զարմաներով կը նայի անոր հանէն, վերջը կը  
Յունոսար, 1906.)

ցրնցէ ուսերբ, զիխարելիք կը նետէ սնդանին ու տեսակ մը աշնանքեր կը դառնայ միւս զուանը:

*Սիրան.* (Կը մտնէ, ծանր, գունաս ու գուսագ ու ձեռք կու տայ Օնանիսին, մնար եղածին չափ հեռու մեկնելով ձեռքը:)

*Օնանինչս.* (Ատրապիած) *Սա ի՞նչպէս փոխուեր էք, օրինրու ի՞նչ ունիք:*

*Սիրան.* Ոչինչ, ոչինչ: Շատ ուրախ եմ, որ եկար այսօր Շատ ջնորհակալ եմ. թէ չէ այս հոգեկան զրութիւնը ալ անտանելի է ինծի: Սա չարչարանք է. վերջը որչափ շուտ, այն քանի աղեկ:

*Օնանինչս.* Բայց ի՞նչ է պատահեր:

*Սիրան.* Անցած օր... անցած օր զուք ինծի ինչ որ ըսկը ինչ որ յայսնեցիք, այդ լուրի համար ես ձեզի ջնորհակալ եմ իմ րոլոր որտովս. զուք ինծի մեծ, շատ մեծ պատիւ ըսկը տուզ, ես հպարտ եմ ուղղակի, որ շահեր են ձեր համակրանքը: Միայն... միայն չեմ կը ընար... ձեր... ձեր...: Ես վճռեր եմ երբէք, երբէք չտմունանամ:

*Օնան.* (Ապշած) Ի՞նչո՞ւ:

*Սիրան.* Է՛, թողէք այդ միենոյնն է: Ամէն մարդ իր ճամբան ունի զնալիք, իր ճամբան, իր խաչն ու իր ճակատագիրը եւ վերջապէս, իսկապէս ի՞նչ եմ տալու ես ձեզի. միայն խանգարեմ պիտի ձեր առաջպիմութիւնը. զուք ունիք անազին ծրագիրներ, ձեզի պէտք է դրամ, պէտք է հող. ուրիշները ձեզի բերեն կուցէ, ես իզուք արգելը իմ ձեր ճամբին: Ո՞չ.

*Օնան.* Բայց իմ փընտրած ձեր փոխուկարձ զգացումն է, ձեր ընկերակցութիւնը, ձեր ոէրը:

*Սիրան.* (Գլուխը հակած, յուսանատ) Կան մարդիկ, որոնք սիրելու ու իրաւունք չունին:

*Օնան.* Սյօմինքն ձեզի ի՞նչպէս հասկընամ: (Գլուխը թափ տալով) Է՛, այդ տեսակ հանելուկներէն ես բան չեմ հասկընար: Ըսէ պարզապէս, ուղղակի երեսիս, ըսէ որ չես սիրեր. և ես խոյն կարեմ յոյսու, կարեմ ու գիտնամ ընկելիքս:

*Սիրան* (լուռ ու յուղուած կը սեղմըւի սեղանին:)

*Օնան.* (Աշխուժ) Կը լուս, կը լուս: (Կը բռնէ: ձեռքէն:)

*Սիրան.* (Աղաջանքով) Թողէք ձեռքս, հեռացէք:

*Օնան.* (Յաղթական) Թողնեմ, ոչ, երբէք, եթէ կ'ուզես որ թողնեմ, ըսէ, ըսէ պարզ:

*Սիրան.* (Գլուխով, վշտանար) Ա՛...

*Օնան.* Ըսէ, կը սիրեն ինծի, թէ հչ: (Վիճակիով) Հատա, չըսես: Ռւրիշ ոչ մէկ պայմանով ես հոսկէ հեռացողը չեմ:

**Սիրան.** (Չեռքը ազատելու թոյլ միղով մր) Քանի որ կը պահանջեք... քանի որ ուրիշ ելք չունիմ... քանի որ...

**Օնան.** (Նիխտալիս, վասա՞ն) Իէ, թողէք այդ քանի-որ-երը:  
Կարճ, շնոր, այն, թէ ոչ:

**Սիրան.** (Աերջին մարտում մր. շունչը բռնած. ակունեցն ու քունցքները սկզբ)

**Օնան.** Էէ:

**Սիրան.** (Դժուար, բայց հաստատ) Ո՞չ:

**Օնան.** (Խակոյն բաց կը թողնէ աքջկայ ձեռքը, բոլորովին փոխուելով) Ա՛խ: (Քայլ մը ես, քիչ լուս) Դա արդէն ուրիշ բան է, կը ներէք, ես, երկի, աւելի իմ գգացունաքնելովս կը տեսնէի, քան աշքերովս: Ինչեէ: Ներեցէք, որ ձեզի աշ ինծի ալ այս յիմար զբութեան մէջ դրի: Իմ միակ արդարացումս այն է, որ իմ գգացունակը դէպի ձեզի, երկի, շատ խոր են եղած, խոր ու կոյր:

**Սիրան.** (Ընդուատ, բուռն) Ո՞չ, չեմ կրնար, չեմ ուզեր,  
չեմ ուզեր կեղծեմ: Սուտ է, ես ձեզի սիրեր եմ, սիրեր եմ  
սրանց, ես կը սիրեմ ձեզի: Ես..., ես աշխարհիս ամենաերջան-  
նիկ կիսը կը դառնայի, եթէ կարող ըլլայի կեանքս ձեզի կա-  
պելու: Դա կը լլալար իմ ձշմարիս կեանքս:

**Օնան.** Ուրեմն..., ուրեմն...

**Սիրան.** Երնէկ անոնց, որոնք շատ աջ ու ձախ չեն  
նայիր, երբ ապրիլ կ'ուղին. ատոնք առողջ մարդիքն են: Ա՛յ,  
զուք ալ ատոնցմէ էք, պարան Օնանէս, զուք ալ ուժի մարդ  
էք. գնացէք ձեր ճամփան վստահ ու հպարտ: Դուք պարտական  
չը իմնայելու, զուք պարտական էք միայն ապրելու, զուք  
պարտական էք միայն գործելու: Գնացէք, աշխատեցէք, ապրե-  
ցէք, ապրեցէք: Երանի ձեզի:

**Օնան.** Աղէկ՝ եկանը աշխատինք, ապրինք միասին:

**Սիրան.** Ա՛, ոչ, ես չեմ կրնար ձեր ճամբովը: Իմ ամբողջ  
կեանքս անցեր է ուրիշներու համար, ուրիշներու հոգերով. Երկի,  
արդէն դա ինծի բնութիւն է գարձեր: Ես չեմ կրնար չի իմնայ-  
ել: Ինծի ճամփայ բանալու համար պէտք է հրեմ ուրիշները,  
պէտք է հրեմ անոնք, որոնց համար ապրեր եմ մինչև հրմա:  
Ո՞չ, ամէն մարդ իր ճամբով. զուք ձերը, ես ալ իմու-  
նը ցանկայի միայն, որ մեր ճամփաներու վրայ ալ իրարու  
չհանդիպէինք մինք:

**Օնան.** Սիրան, կը հասկընամս, ինչ կը խօսիս: Հիմա,  
բաժնուինք հիմա, երբ քու այդ գեղեցիկ գթոս հոգիդ այդպէս  
անքող գրւած է առջևս, ու սիրոտք այդպէս մերկ: Զէ, Սիրան

(վրայ զալով) ալ բայ չեմ թողներ քեզի թերէու Այս վայրը կեանէս՝ գուն իւ կինս ես:

Սիրան. (Տեսակ մը վախցած, ես քաշուելով) Ուրեմն... ուրեմն ինձի չէք հասկնար, ուրեմն... Եւ փոխանակ ինձի օգնելու, ինձի ձեռք տալու... (Զարացած) Եւ կ'ըսէք թէ ինձի կը սիրէք:

Օնան. Ամէն, ամէն բան ընեմ, Սիրան, բայց այս բոլորէ վերջը՝ թողնեմ ու Իստ քաշւիմ: Գիտի՞ս, թէ ինչ կը պահանջնես:

Սիրան (Յան ու կարծես ինքնիրեն) Ես ձեզմէ ոչինչ չեմ պահանջներ: Սխալ է մեր հոգիները օտար են իրար:

Օնան. Բայց մտածէ, Սիրան, մտածէ: Ինձմէ անկարելին կը պահանջնես:

Սիրան. (Քիչ կը նայի անոր. դիրքն ու կեցուածքը՝ կը թունավ- կոտրուած նայնով) Անկարելին... Ներէ, այս, անկարելին: Զէ, ալ չեմ պահանջներ, (աւելի խոր ու սրտառուչ) բայց կը խնդրեմ, կը պաղատիմ քեզի, Օհաննէս. կ'աղաչեմ քեզմէ այդ անկարե- լին: Կարէ, կարէ մեր մէջ ամէն կապ. ալ մի գար, մի խօսիր մի՛ տեսնուիր ինձի հետ: Ես ալ ես ուժ չունիմ քեզի զիմա- գրելու. ես բու ձեռքդ եմ. բայց պէտք չէ, լաւ չէ. կ'աղաչեմ քեզի: Ի՞մ սիրուս համար: Եթէ կաթիլ մը յարգանը ունիս դէպի ինձի: Խօ՛սք տուր, խօ՛սք տուր:

Օնան. (Խոժոս, ունքերը կիտած: Աւսիրը թափ կու տայ:)

Սիրան. Ուրեմն խօսք կու տամա, այժ:

Օնան. (Հեղոստ կը ժապի) Հը, ուրիշ Ի՞նչ կընամ ընկր:

Սիրան. (Երկիւլուած կը մտակայ տղուն ու ձեռքը մեկնելով) Շնորհական եմ: Տւէք ձեռքերսիդ, տւէք, մի մերժէք: (Զետքը սեղմելով յուղումէն խեղզւած) Ներեցէք ինձի:

Օնան. (Վշտաթիկ) Սիրան...

(Ուլընթարթ մը կը նային իրար լուռ:)

Սիրան. (Ցանկարծ ներուի լալով տղու վիզը:)

Օնան. (Չերմ) Սիրան... Սիրան...

(Պահ մը անշարժ դրկըւած:)

Սիրան. (Կատաց մը ետ քաշուելով՝ զգուշ ետ կը ձրէ տղան. շուռ կու տայ զէմքը միւս կողմ, ուժասալու ու ցած ճայնով) Դէ, գնամ, գնամ:

Օնան. (Կը նայի անզամ մը չեշտ. յանկարծ կոտրուկ կը վերցընէ պիտարկը, ու նորէն կանդ կ'առնէ:)

Սիրան. (Առանց ետ զատնալու, զգալով տղու կեցած բլալը, ձեռ- քի թեթեւ նշան մը կ'ընէ ու հաղիւ լսելի) Գնամ...

Օնան. (Զայրացքոտ շարժումով կը դնէ զիտարկը ու դուրս:)

\* \* \*

**Սիրան.** (Կանգնած է խորտակուած, արձանի պէս անչարժէ)

**Տիրուհի.** (Փաթթուած ամբողջապէս իր շալին մէջ՝ կը մասնէ կողմնակի գոնէն, ու նայուածքը Սիրանին՝ կը մօտենայ խորհրդաւոր, թեմիւ մը ծեռքը կը զնէ անոր ուսին ու կը շըշնչէ) **Քեզի ըսի՝ ետ չնայիւ:**

**Սիրան.** (Ոմքողջ մարոնով՝ կը ցընցուի, կը բաշէ ուսը ու կը նայի ետ:)

**Տիրուհի.** (Ոիշտ ցրշունչով ու տեսակ մը չարախնդայ) **Ետ չնայիւ, բար կը կտրիւ:**

(Եւ երկուքն ալ յամառ ու անմարթ կը նային իրար աչք-աչքի, չար ու վայրի նայուածքով:)

### Լեռն Շանիթ

## ԿԱՐ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻԶՄԸ \*)

— — — — —  
Խոչապէս որ Թարովինը դառել է օրդանական  
կեանքի զարգացման օրէնքը, այնպէս էլ  
Մարքսը դառել է մարզկային պատմութեան  
դարպացման օրէնքը:

Ֆրիդրիխ Էնգելս.

Կարլ Մարքս—սա մի անուն է, որի անկուգական կեան-քըն ու քաղաքական-գիտնական անսպառ գործունէութիւնը աւ-մելի քան կէս դար շարունակ զքաղեզնում է քաղաքակիրթ աշ-խարհի լաւագոյն տնտեսագէտներին ու սոցիոլոգներին: Իրաւ, տռաջաւոր մարդկութիւնը չունի 19-րդ դարու տարեգրութեան էջերում բացի Դարվինից մի այլ անուն, որի շօշափած կեն-

\*) Մի շարք յօդուածներով պէտք է մեր ընթերցողներին ծանօթա-ցնենք գիտական սոցիալիզմի էութեան հետ: Այս յօդուածներից յետոյ տպելու հնք Բերնշտայնի քննադատութիւնը:

սական խնդիրները ու մշակած նշանակալից թէօրիաները այն տատիճանն յեղաշրջող ուժ ու թափ ունենային և խոր հետքեր թողած լինէին, որքան Կարլ Մարքսի քաղաքական, սոցիալական, անտեսագիտական և պատմա-փիլիսոփայական գործունէ-ութիւնն է ունեցել:

Սակայն միայն գիտնականութեաբինետային հոչակը չէ, որ այնքան մեծ ու համատարած չափով բաժին է ընկել ինչողէս ընտղէտ Դարվինին, այնպէս և տնտեսագէտ ու սոցիալ-փիլիսոփայ Մարքսին: Մարքսի սոցիոլոգիական ուսմունքը պազպահ հիմքեր է առեւլ մի քաղաքական գաւանանքի, որը իր գրօշակի տակ է համախմբել բոլոր քաղաքակիրթ երկրների ամենաարմատական ու պրողբնիստ տարրերին: Այսօր Մարքսի անուան հետ շաղկապուած է և նրա ուսմունքի վրայ յենած ունի իր գոյութիւնը մի միջազգային կուսակցութիւն սոցիալ-դեմոկրատիան—որ քաղաքական անխնայ պայքար՝ գասակարգացին կոմ է մղում գոյութիւն ունեցող անտեսական-իրաւական սիստեմի և սոցիալ-քաղաքական կարգերի դէմ: Ուրեմն եթէ Մարքսի գիտնական անուրածալի հաշակին յարակցէնք և նրա սոցիալ-քաղաքական-հրապարակական հաշակը, այն ժամանակ ոչ միայն անտեղի կը լինի Մարքսի Դարվինի հետ համեմատելը, այլ և առհամարակ աւելորդ աշխատանք կը լինէր՝ բրդիլու պատմական տարեկորութեան էջերը, մի նմանօրինակ զէօք գանելու համար: «Եւ կարինենուային խոր ու սիստեմատիկ մուածող—առում է զոկտոր եաստրովը—և կրապարակական վառ ու վայլուն յեղափոխական-էը Մարքսը»<sup>1)</sup>: Իսկ սրունք այնպիսի, սովորաբար անհամակերպելի յատկութիւններ են, որոնց միաձոյլ կաղապարումը՝ իր լիուլի չափերով, կարելի է միայն Մարքսի մէջ գտնել:

Ընդհանուրապէս անհամակերպելի և սովորական ժանկանացուին չ'վիճակուած հաղուագիւտյատկութիւնները—վասկուն յեղափոխականութիւնն ու խորաթափանց գիտնականութիւնը—կազմել են Մարքսի մատառը-հոգեկան բովանդակ պարունակութեան բնորոշ կողմերը: Սակայն որքան էլ նրանք անբաժան և զուգահեռաբար աճած ու առաջ ընթացած լինէին Մարքսի մէջ, այնուամենայիւ նրանցից մէկը թէ միւսը ունեցել են իրանց յատկ տիրապետութեան որոշ շրջանները:

Որքան Կարլ Մարքսը տաք, կենպանի ու անպարաելի յեղափոխական է եղել իր երխուասարդութեան օրով՝ 19-րդ դարի 40—50-ական թուականներին, նոյնքան նա խոր ու սիստե-

1) Dr. Jastrow, «Die sociale Frage» (գառափա, Բերլին, 1903 թ.)

մատիկ մտածող է եղել, հետազօտող, քննազառող ու հիմնաւորող իր առնական ու ծերութեան հասակում՝ 60—80-ական թուականներին: Այդ երևյթը պայմանաւորուած էր տարբեր ժամանակաշրջանի և ասրբեր միջնավայրի առանձնաշատուկ կողմերով: 40-ական թուականներին ցամաքային եւրոպայի յեղյեղուկ իրականութիւնն էր, որ ուժին թափով լարում էր խոլազգաց Մարքսի յեղափոխական երակները և նրա մտազրաղ առաջնակարգնութիւնը գարձնում քաղաքական կեանքի խոչշոր փոփոխութիւնները: Այլ էին 60-ական և 70-ական թուականները: Կապիտալիզմի կլասիք հայրենիքը՝ Անգլիան, և նրա քաղաքական կեանքի նորման, խաղաղ ընթացքը դարձրել էին Մարքսին առաջին կարգի կարինեացյին դիտական, սիստեմատիկ, մասնագիտ մտածող:

Սակայն սխալ կը լինէր սիանդամայն, եթէ զրանից եղանակացնէինք, որ Կարլ Մարքսը իր կեանքի առաջին շրջանում գուրել էր երկրորդ արքանաւորութիւնից, իսկ երկրորդ շրջանում՝ գուրել առաջին արքանաւորութիւնից: Ամենեին ոչ: Այս խնդրում ևս Մարքսը եղակի մեծութիւն է: Նա յեղափոխական էր, որովհետեւ գիտական էր, և գիտական էր, որովհետեւ յեղափոխական էր: Մարքսի, ինչպէս և էնգելսի, յեղափոխականութիւնը շատ հեռու էր ժամանակակից բուրժուական իուզալիստների և քաղաքական սաղիկանների կլիւզիօնիզմից, նա յեղաշրջուող իրերի վրայ նայում էր կը ուղարկած քննող ու զննող բէալիստի ու ժատերիալիստի ակնոցներով, այսինքն գիտականի հասկացողութեամբ, և երեսյթների ու յարաբերութիւնների փոփոխութիւնները հնարաւոր համարում միայն այնքան, որքան դա կարող է պատմական անհրաժեշտութեան արդիւնք համարուել:

Միւս կողմից Մարքսի դիտականութիւնը, ըմբռնողութեան մտաւոր հորիզոնը շատ հեռու էր միջակաթիւնից, գերմանական ֆիլիսոփրութիւնից: «Կապիտալի» էջերում, գիտական այդ կոլոսալ վաստակի մէջ, իշխում է նոյն յեղափոխական ողին, որը ան «կոմունիստական Մասիֆեստի» մէջ, միայն այն տարբերութեամբ, որ 40-ական թուականներին արտայայտած կլասիք թեզերն ու փօրմուլաները 60—70-ական թուականներին հիմնաւորում ու լուսաբանուում են ձիշտ ուսումնասիրութեամբ և խորագննին անալիզներով: Թէ մէկի և թէ միւսի մէջ Մարքսի յեղափոխականութիւնն ու գիտականութիւնը փոխադարձաբար պայմանաւորում են իրար:

Այդ բացառիկ դէմքի—զիտնական-յեղափոխականի—և նրա մշակած բարդ սիստեմի մտախն բացակայում է մինչի օրս

մի խոր ու բազմակողմանի աշխատասիրութիւն։ Զնայելով որ Մարքսի մահուանից ոկտոստացած՝ աւելի քան քսոն տարուայ ընթացքում, թէ մարքսիստական և թէ բիւրգերական (հակամարքսիստական) բանակից այնքան բազմաթիւ զլուխներ զրադուել և զարադառ են Մարքսով ու մարքսիզմով և այսօց վիթխարի ծաւալ է ստացել մարքսիստական գրականութիւնը, այսուամենախիւ գեր և բացակայում է թէ Մարքսի լինակատար կենսագրութիւնը և թէ մի աշխատութիւն, որ իր մէջ ամփոփէր Մարքս-էնգելսի բոլոր թէօրիանիրի-բովանդակ մարքսիզմի խոր ու բազմակողմանի լուսաբանութիւնը՝ եղաւ այդ դասախոսաբար (referierend), թէ ըննադատաբար ներկայացրած։ Մարքսիստական մի այդ կարգի ունիվերսալ երկասիրութեան յաջողութիւն թւում է ոչ անհատական ձևոնհասութեան մի գործ և ոչ էլ հաւանական մինչև անհախտառեմնելի ապագայ։ Նոյնիսկ մինչև այժմ բացակայում է—անդամ սոցիալիզմի կլասիկ հայրենիքում։ Գերմանիայում—Մարքսի բոլոր երկերի լիտերատուր ժողովածուի հրատարակութիւնը, որի մէջ ամփոփուէին նաև նրա ժողովական աշխատութիւնները (լրտգըրներում թէ հանդէսներում):

Կարլ Մարքսի կեանքի և գործերի մասին նոյնիսկ չափուար սահմաններում զբել, նշանակում է մի մեծ զրբի ծաւալ ընանել։ Սակայն մենք չպիտի այս էջերում այդքան հեռու զընանք։ Մէնք ոլիտի աշխատենք համառոտ գծերով ամփոփ գաղափար տալ ընթերցողին Մարքսի կեանքի, սոցիալ-քաղաքական գործունէութեան և զրական-գիտնական ծառայութեան մասին, շօշափելով նրա հիմնական թէօրիաների էական կողմերը։

Որպէսզի դիւրութիւն տուած լինենք այն բոլոր ընթերցողներին, որոնք կ'ուզենային սիստեմնատիկարար զբաղուել մ'արքսիզմով—ներկայում ամենաճեծ կենսական պահանջ դարձած վարդապետութեամբ—աւելորդ չենք համարում տասնշ բերել այստեղ մի շարք կարեոր աղբիւրներ։ Մարքսիստական հսկայական զրականութիւնից կը թուենք այստեղ միայն ամենայայտնի աշխատութիւնները, այն ևս զրիթէ բացառապէս դերմանական աղբիւրներ։ Զկայ Եւրոպայում մի երկիր, ուր թէ քանակով և թէ որակով այնքան բազմաթիւ ու խորազնին ուշառմանասիրութիւններ լինին մարքսիզմի մասին, որքան սոցիալիզմի կլասիկ հայրենիքը—Գերմանիան—ունի։ Մէնք կը թուենք այստեղ ընազիրները և փակազծում հայերէն թարգմանութիւնները (ոռոսիրէն թարգմանուած երկերի վրայ կը դնենք առաջ \* նշանը):

Ախտեմ պահպանելու համար բաժանենք աղբիւրները մի քանի կաթեգորիաների:

Ա. Մարքսի կենսազրութեան համար յանձնաբարում ենք  
1. «Karl Heinrich Marx» von Fr. Engels (im Handwörterbuch der Staatswissenschaften, համ. V, եր. 704); 2. «Karl Marx zum Gedächtnis. Ein Lebensabriß und Erinnerungen \*», von W. Liebknecht («Յուշեր Կարլ Մարքսի» մասին, մի կեանքի ուրուցքիծ և յիշովութիւններ վկացելու լիրկնեխտի); 3. «Karl Marx. Persönliche Erinnerungen» \* von Paul Lafarge, («Կարլ Մարքս. Անձնական յիշովութիւններ» Պոլ Լաֆարդի):

Բ. Մարքսի ամբողջական սիստեմի մասին.—1. «Marx» von Wanckstern («Մարքս» Վենկատերսի); 2. «Die philosophischen und soziologischen Grundlagen des Marxismus von Masaryk («Մարքսիզմի փիլիսոփայական և սոցիոլոգիական հիմքերը» Մազարիկի); 3. «Die Marxistische Sosialdemokratie» von Max Lorenz. («Մարքսիստական սոցիալգեմոնկրատիան» Մարտ Լորենցի); 4. «Der Marxismus und das Wesen der sozialen Frage» von Paul Weisengrün (Մարքսիզմը և սոցիալական խնդրի էռթիւնը» Պուլ Վայզենգրնի):

Գ. Աղբիւրներ Մարքսի պիրքի մասին՝ սոցիալիզմի պատմութեան և սոցիալական շարժման վերաբերմանը.—1. «Sozialismus und soziale Bewegung im 19 Jahrhundert» \* von W. Sombart («Սոցիալիզմը և սոցիալական շարժումը 19-րդ դարում» Վ. Զոմբարտի); 2. «Die Arbeiterfrage \*» von Herrkner («Բանուորական հարցը Հերկների); 3. «Geschichte der deutschen Sozialdemokratie» von Fr. Mehring («Գերմանական սոցիալգեմոնկրատիայի պատմութիւնը» Ֆր. Մերինգի):

Դ. Դասախոսական երկեր Մարքսի սիստեմի գաղաքան մասերի վերաբերեալ: 1. «Karl Marx' ökonomische Lehren \*» von K. Kautsky («Կարլ Մարքսի տնտեսական ուսմունքները» կ. Կաուտսկու); 2. «Der dritte Band des «Kapital» von C. Schmidt («Կապիտալի» երրորդ հատորը» կ. Շմիդի); 3. Նոյնը կո. Բերնշտայնի, գրուած «Neue Zeit»-ի մէջ (XIII տարի 1 համ.):

Ե. Բնակչութեական զրականութիւն Մարքսի սոցիալ-փիլիսոփայական աշխարհահայեացքի, մասնաւորապէս պատմութեան մասերիալիստական հասկացողութեան մասին:  
1. «Wirtschaft und Recht nach der materialistischen Geschichtsauffassung» \* von R. Stommel («Ճնտեսութիւնը և իրաւունքը ըստ պատմութեան մատերիալիստական հասկացողութեան» Ռ. Շտամմերի); 2. «Ethik und Politik» von Staudinger («Բարոյա-

գիտութիւն և քաղաքականութիւն» Շտառութիւնութիւն: 3. «Die Philosophie der Geschichte als Soziologie» \* von P. Barth («Պատմութեան փիլիսոփայութիւնը, որպէս սոցիոլոգիա» Պ. Բարթի): 4. «Die Marxsche Theorie der sozialen Entwicklung» von Peter v. Struve (im Braun's Archiv für soziale Gesetzgebung und Statistik 14 համ. Berlin, 1899). «Մարքոսի թէօրիոն սոցիալական զարգացման մասին» Պետեր Ստրուվի: 5. «Der historische Materialismus» \* von L. Woltmann («Պատմական մատերիալիզմ» Լ. Վոլտմանի): 6. «Hoßbach, Helvetius und Marx» von G. Plechanow («Հոշբախ, Հելվետիուս և Մարքս» Գ. Պլեշանովի, մարքոսիական տեսակետից): 7. «Եոյն հեղինակի՝ Փոլիտիկական մասնութեամբ» Պ. Պլեշանովի, մարքոսիական տեսակետից): 8. «Die soziale Frage im Lichte der Philosophie» \* von L. Stein («Սոցիալական հարցը փիլիսոփայուն լուսաբանութեամբ» Լ. Շտայնի): 9. «Marx als Philosoph» von Weryho («Մարքսը որպէս փիլիսոփա» Վերիհո): 10. «Zur Kenntnis des Marxismus» von Mühlberger («Օմանօթութիւն մարքոսիմի մասին» Միւլբերի):

Զ. Անձանտական գրականութիւն Մարքսի անտեսացվածական իմաստական թէօրիաների մանաւորակն արժերի և յանկանալ արժերի թէօրիաների մասին: 1. «Zur Kritik des ökonomischen Systems von Karl Marx» von W. Sombart (im Brauns Archiv համ. 7. 1886 թ.), («Քննութառութիւն Կարլ Մարքսի անտեսական սիստեմի մասին» Վ. Զոմբարի): 2. «Zum Abschluss des Marxschen Systems» \* von Böhm-Bawerk («Մարքսի սիստեմի վախճանի մասին» Բ. Բաւերկի): 3. Ernst Lange, «Karl Marx als volkswirtschaftlicher Theoretiker» («Կարլ Մարքսը որպէս անտեսական թէօրիակը» Էրնտ Լանգի): 4. «Wert und Tauschwert» zur Kritik der Marxschen Wertlehre von Riekes, («Արժեք և փոխառութեան արժեքը: Քննադ. Մարքսի արժեքի ռւսամանքի մասին» Րիքսի): 5. Ueber das Verhältnis von Wert und Preis im ökonomischen System von Karl Marx von Diehl («Արժեքի և գնի յարարելութեան մասին Կ. Մարքսի անտեսական սիստեմի մէջ» Դիէլի):

Է. Նէօմարքոսիական ընթագաստական գրականութիւն, շաղկապատճեն Բերնշտայնի անուսն նես: 1899 թուականին կդ. Բերնշտայնի հրատարակած գիրքը՝ «Die Voraussetzungen des Sozialismus und die Aufgaben der Sozialdemokratie» («Սոցիալիզմի նախապայմանները և սոցիալգենուլատիայի դերը») վերնագրով—բելիզիօնիզմի այդ անկիւնաբարը—ասիթ տուագիւս մինչև օրս տեսող մի բանակուուի, որտեղի էր ունենուած ոչ միայն հանդէսների և լրագրների մէջ, այլի ծաւալ էր տալիս

առանձին գրքերի: Բերնշտայնին պատասխանում է Կարլ Կառուցին իր յաջողութեամբ պսակած անտիկրիտիկայով՝ «Bernstein und das sozialdemokratische Programm» վերնագրով («Բերնշտայնը և սոցիալ-դեմոկրատական ծրագիրը»):

Այստեղ յիշուած բոլոր բազմակողմանի երկերը, որ, կը բինում ենք, մի համեստ, բայց էսէիմն ժաման հն կազմում ամբողջ մարքսիստական գրականութեան, լոյս են տեսել 1894 թուականից ի վեր, Մարքսի գլուխ գործոցի՝ «Կապիտալի», III հատորի հրատարակութիւնից յետոյ: Սակայն, շեշտում ենք նորից, այստեղ թուած բոլոր աշխատութիւնները՝ զասախօսական թէ բննագատական բնաւորութեամբ, ոչ միայն չեն կարող գացել Մարքսի ամբողջ սիստեմը սպառելու չափ պատկերացընել կամ քննադատել, այլև նրանցից ամենալաւ մոնոգրաֆին լոկ չի յաջողուել Մարքսի որևէ հիմնական թէօրիան (բաղադրական նախատեսումների մասին չէ խօսքը) իր պողիտիւ արմատներով ջրելու, կամ մասրժէր հրատարակելու:

Այս նախարանից յետոյ անցնենք մեր բուն նիւթին:

## 1

Մարքսի կեանքր, սոցիալ-քաղաքական գործունէութիւնը եւ գրական վաստակները:

Seguirò il tuo corso, e lascia dir le genti!

(Հետեւիք ճանապարհից, և թող մարդկեկն, ինչ ուզում են):

Պահէք:

## 1.

Մարքսի ծնունդն ու ծակումը—Մարքսի հայրենիքը, նրա մանկական և պատանեկալան նպաստաւոր միջնավայրը—Ժամանակակից եւրոպայի քաղաքական, արդիւարերական և փիլիսոփայական յեղաշրջութիւնը—Մարքսի ընտանիկան, սիջնակարգ և համալսարանական կրթութիւնը—Մարքսի նշանուելը—Նրա փիլիսոփայական-մանափիտական հուսնդուն զբաղմունքները, յատկապէս Գերմանիայի կասաբի փիլիսոփայութեամբ—Մարքսը և Հեղեղի գիտեկտիկական մեթոդը:

Կարլ Մարքսը ծնուել է 1818 թ. մայիսի 5-ին Տրիերում, գերմանական ամենահին քաղաքում: Մարքսը հրէական ծագում ունէր: Նրա հայրը՝ Հայնրիխ Մարքս, մի յարգուած ու բարեկիրթ փաստաբան ու հոտար էր: Իսկ մայրը, որի ծագումը հոլլանդական հրէաներից էր, մի սիրալիր, հոգատար,

բայց մտաւորապէս ոչ այնքան կրթուած կին էր: Մարքսի ծընդունված գործութիւնը հայրը հարկադրուած է լինուած ընդունելու բողոքական գտաւանութիւնը, որովհետեւ ժամանակակից արտօլիւտիստ Պրուսիան հրաման է արձակում բոլոր հրէայ պաշտօնեաների հասցէին՝ կամ քրիստոնեայ գտանալու և կամ հրաժարուելու գործունէութեան ասպարէզից:

Կարլ Մարքսի հայրինիքը՝ Հոենոսի շրջակայրը, իրրե Գերմանիայի արևմտեան մասը, համարուում էր անտեսական արդիւնաբերական (ինդուստրիական) և քաղաքական տեսակէտից ամենազարգացած երկիրը ամբողջ Գերմանիայի: Մարքսի ծննդավայրը օղակող միջնակէտն էր կազմում «մի կողմից» հոռվմէական աշխարհաշէն կուլտուրայի բարձր կոթողների, իսկ միւս կողմից՝ ֆրանսիական այն յեղափոխութեան թարմ ու անջինջ հետքերի, որ մաքրել ու գտել է Հոենոսի երկիրը միջնադարեան ախտահոտ ճահճից»<sup>1)</sup>:

Մի կողմից ֆրանսիայի, իսկ միւս կողմից Անգլիայի մերձաւորութիւնը, Հոենոսի ջրառատութիւնը, քարածուխի և մետաղահանքերի հարստութիւնը և այլն—այդ լոլոր բարեյաջող պայմանները նպաստել են Հոենոսի երկրամասում աւելի շուտ և արագ թափով, քան Գերմանիայի որևէ մասում, զարգացնելու մեծ ինդուստրիա, կապիտալիստական տնտեսութիւն ու արդիւնաբերութիւն և ֆէօդալիզմի զէմ թշնամացած մի յեղափոխական բուրժուազիա, սակայն նաև մի ուժեղ պրոլետարիատ, որ հետզհետէ ծաւալում էր՝ իր մէջ գասակարգային գիտակցութեան սաղմային սկզբնաւորութիւնը: Հոենոսի ափերում մանր քաղաքացիութիւնը աւելի քիչ էր, քան Գերմանիայի որևէ այլ մասում. մի քաղաքացիութիւն, որ ունէր թարմ անցեալի յեղափոխական տրադիցիաներ: Զէ որ Հոենոսի երկիրը տամնեալ տարիներ շարունակ, մինչև 1815 թ., ենթակայ էր ֆրանսիական յեղափոխութեան անմիջական ազգեցութեան, — մասսամբ որպէս ֆրանսիական տիրապետութիւն, — և այն հայեցըներն ու իրաւունքը, որ ձեռք էր բերել մեծ յեղափոխութիւնը, ունէին իրենց դեռ կատարեալ թարմ ու ուժեղ հմայքը Կարլ Մարքսի մանկութեան օրով:

Սակայն այդ ժամանակ ծաղկափթիթ շրջան էր տիրում նաև գերմանական վիլիսոփայութեան մէջ: 18-րդ դարու նուաճուն յեղաշրջումները ունեցան իրենց առանձնայատուկ արտայայտութիւնները արևմտեան եւրոպայի առաջնակարգ երկըներում: «Մինչդեռ Անգլիայում ամենազարդարացայտիչ ու ո-

<sup>1)</sup> W. Liebknecht «Karl Marx zum Gedächtniss», եր. 1.

ըոշակի կերպով կատարւում էր յնդուստրիալիզմն յեղափոխութիւն, իսկ ֆրանսիայում բաղաքական յեղափոխութիւն, Գերմանիայում առանձնայատուկ յարաքերութիւնների շնորհիւ յեղափոխութիւն կատարւում էր զլուկա-ների մէջ—վիճիռովիայական յեղափոխութիւն։ Մինչդեռ իրերի յեղափոխութէւնը տեղի էր ունենում Գերմանիայում շատ աւելի զանգաղ ու անկատարեալ ձևով, քան Անգլիայում ու Ֆրանսիայում, զբա գոխարքէն այստեղ առաջ էր ընթանում իդէանների յեղափոխութիւնը տևելի խոր ու հիմնական կերպով, քան այլուր<sup>2)</sup>։

Այս կարգի միջնավայրում ու ժամանակաշրջանում էր մաշում Մարքսը իր մանկութեան, պատանեկութեան և երիտասարդութեան օրերը. թէ միջնավայրը և թէ յեղյեղուկ ժամանեալը պէտք է անհրաժեշտորէն իրանց յատկանիշ կազմակարգը գրօշմէին Մարքսի մտաւոր աշխարհի վրայ։

Այն սոցիալական անսարգել միջնավայրը (Miliou) և շըրշապատող ուժեղ ազգականիրը, որոնց նպաստաւոր ազգեցութեան տակ ազգում էր Մարքսը, այնպիսի բարեյածող պայմաններ էին, որոնք մի կողմից արագ թափով զարուի էին տալիս առողջ և ընդունակ, թարմ ու եռունդուն Մարքսի յառաջազիւմութեան, իսկ միւս կողմից առաջնորդում էին Մարքսի մտաւոր գարգացումը բարգմակողմանիմութեան և հաւասարակութեան ուղիղութիւն։ Նա գեռ աշակերտութեան օրով կարգում էր իր բարեկիրթ հօր սիրելի հեղինակսերին՝ Լոկք, Լայբնից, Լեոնիդ և Վոլտեր, ապա Հոմեր ու Շեքսպիր, որոնք տմբողջ կեանքում մնացին նրա սիրելի բանաստեղծները. վերջիններիս կարգալ ու սիրել սովորեց նու իր հօր ամենամտերիմ ընկերոջ Փօն Վեստֆալեն անունով մի ազատամիտ ծերունի բիւրօկրատի, անմիջական ազգեցութեամբ։

1834—35 թ., այսինքն 16 տարեկան հասակում, Մարքսը աւարտում է Տրիերի գիմնազիան և անդափոխուում Բօնի համալսարանը՝ իր հօր ցանկութեամբ իրաւաբանութիւն սովորելու։ Բայց մի տարուց յետոյ թողնում է նա Բօնի համալսարանը և իր հօր թոյլաւութեամբ անդափոխուում Բերլին, որ այն ժամանակ աւելի, քան այժմ, մտաւոր կենտրոնն էր կազմում։ Մակայն նախ քան Բերլին գնալը, 18 տարեկան պատանին շահանում է Փօն Վեստֆալենի ենոտի անունով աղջկայ հետ, «առմենագեղեցիկ օրիորդը ամբողջ Տրիերի», որ Մարքսից 4<sup>1</sup>/2տարով մեծ էր։ Մարքսը սովորում է Բերլինի համալսարանում նախ իրաւաբանութիւն, ապա թողնելով այդ, նուիրուում է փիլիսո-

2) K. Kautsky, «Fridrik Engels», ել. 7.

վայութեան և պատմութեան: 1841 թ. նա զոկտորութեան քննութիւն է տալիս, դասախոսութեան նիւթ ունենալով իպիկուրի փիլիսոփայութիւնը: 1842 թ. կարինետային աշխատանքին նուրուած 24 տարեկան Մարքսը վճռում է ակադեմիական կոչում ստանձնել—Բօնի համարաբանում փիլիսոփայութեան գոցենա գառնալ: Սակայն պրուսական այն ժամանակուայ խրստապահնաջ բէակցիան յիտ է մղում նրան իր մտագրութիւնից: Նոյն Բօնի համարաբանում թէօլոգիայի (աստուածաբառնութեան) պրիվատ-գոցենա Բրունօ-Բառէրին—Մարքսի մըտերիմ ընկերոջը—պրուսական կառավարութիւնը դուրս էր քըշիլ համարանից՝ բէակցիօններ ըլինելու պատճառում:

Կարլ Մարքսը իր ուսանողութեան վերջին տարիներում խոր ու հիմնական ուսումնասիրութեամբ նուիրուել էր փիլիսոփայութեան, մանաւանդ գերմանական կլասիք փիլիսոփայութիւնը պսակող շրջանին—Հեգելի գոլոցին: Ոչ թէ Հեգելի վերամրած իպէօլոգիան էր, որ այնքան ինտենզիւ զբազեցնում էր երիտասարդ փիլիսոփայ Մարքսին, այլ Հեգելի գիտլեկարգական ճկուն մեթոջը, որի վրայից գէն ձգելով Հեգելին մշուշապատ քօղը, Մարքսը զարդացրեց դիալեկտիքական մեթօդի յեղափոխական կողմը և գարձրեց նրան մի սայրասուր վէնք՝ ոսցիալ-պատմական երեսյների այնքան խոր ու վորապետորէն ուսումնասիրութեան համար: Մարքսի զոկտորական դիսերտացիայի նիւթը՝ «Ինեմնիրիտի և Լովիկուրի ընուափիլիսոփայութեան տարրերութիւնը» մի այնպիսի գիտական հըմուտ աշխատանք է, որ սկզբնական փորձը պիտի լինէր նրա ապագայ պատմա-փիլիսոփայական խոչոր հետազոտութիւնների: Հեգելին գոլոցի աշակերտներից ոչ որ—նոյնիսկ իպէալիստ լանակի պարագլուխ Բրունօ Բառէրը—չի կարողացել այնպիսի խորութեամբ ուսումնասիրել և ըմբռնել Հեգելի զժուարարա փիլիսոփայութեան էութիւնը, ինչպէս Մարքսը: «Նա (Մարքսը) անչափ շատ է կարգում—գրում է Ռուգէն՝ Մարքսի ապագայ ընկերը, Ֆոյերբախին,—նա աշխատում է մի անսովոր խորութեամբ, և ունի մի այնպիսի քննադատական տաղանդ, որ առ այժմ գործադրում է այլամեռուած դիալեկտիկայի թափու սաստկութեան վրայ: Սակայն նա գետ ոչինչ չի կատարելազործում, այլ ընդհատում է ամեն բան և միշտ ու նորից կրկին խորասուզւում գրքերի մի անսահման ու անվերջ ովկիւանի մէջ: Հստ իր գիտմական հակառակների Մարքսը պատկանում է բոլորովին գերմանական աշխարհին, իսկ ըստ իր յեղա-

փոխական մտածողութեան ձեի, նա այդ աշխարհից էտքը-ուած է»<sup>3)</sup>:

Եւ իրաւ, Մարքսը միացնում էր իր մէջ դերմանական զիտուականութեան բոլոր ֆառւստական մղումները, նա առաջնորդում էր կեանքը գիտութեան մէջ, և գիտութիւնը՝ դէպի կեանքի ծալքերը:

## 2.

Մարքսի հրապարակախօսական գործունեութիւնը:—Մարքսը որպէս յեղագոխական բուրժուազիայի որմատական կոլուուք:—Նրա ամուսնութիւնը:—Մարքսը Փարիզում: Նրա առաջնորդնական կրկերը:—Հեղեղի գիտուակայութեան և հրապարական հարցի մասին: Մարքսը և էնդելուր: Մարքսը և Փարիզի գերմանացի էմիգրանտները: Մարքսի մտաւոր ինտենդիւնը: Ավագմաները՝ պատմութեամբ, սոցիալիզմով, անանատղիտութեամբ և գիտուակայութեամբ:—Նրա աստիճանական էվոլյուցիան՝ իդէալիզմից զէպի մատերիալիզմից:—Մարքս-էնզելսի միասին աշխատանիրած առաջին գրուածքը: Մարքսը Բրիտոնիում: Նրա և էնդելուրի վերջնական հաշուետըւութիւնը գերմ. կլասիք գիտուակայութեան հետ:—Մարքսի նշանաւոր բանականը Պրուգոնի գէմ:

1842 թուականից սկսած երիտասարդ Մարքսի համար բացւում է գործունէութեան մի բեղմնաւոր ասպարէզը՝ գործնական հրապարակը: Հոենսոնեան յառաջազէմ՝ երկրի յեղափոխական բուրժուազիան կարիք ունէր իր սոսդիկալ մարերի հրապարական արտայայտութեան և դասակարգային շահերի պաշտպանութեան: Կամպհառուզէնը և Հոնդեմանը՝ լիրերալիզմի այդ ասաջաւոր իզեօլոգները—հիմնում են Քեօլում մի արմատական-դիմօլիբատական օրդումն՝ «Rheinische Zeitung» («Հռենոսի լրագիր») անունով, որին աշխատակցում էին Մարքսն ու Բաուէրը Բօնից: Շուտով Մարքսը գառնում է թերթի շէֆ խմբագիրը: Իր տաղանդաւոր, այնքան խայթող ու մերկացրնող զրչով՝ իրեւ յեղափոխական բորժուազիայի արմատական իդէօլոգ, անխնայ հարուածում էր արսօլիւտիստ Պրուիտիցի բանակարական ճնշումները: Այդ շրջանից սկսած արդէն Մարքսը մտնում է հասարակական-քաղաքական գործունէութեան մի լայնարձակ տապարէզ, ուր բանի գնում, այնքան աւելի պրոցրեստ թափով էր մասնակցում նա սոցիալ-քաղաքական խնդիրներին և աւելի ու աւելի բժրոստանումնաւ միտքը ընդդէմ գոյութիւն ունեցող հասարակական կարգերի:

3) Franz Mehring, «Geschichte der deutschen Sozialdemokratie», համ. 1, եր. 210.

Մարքսը բացի զլիսաւոր խմբագիր լինելուց, վարում էր նաև թերթի «առետրական», արդիւնագործական և քաղաքական» բաժինները: Նա շուտով ցոյց տուաւ իր հրապարակախօսական խորին հմտութիւնն ու թափանցողականութիւնը, թէ ինչպէս նա «ձարգկանց զրաւել և նրանց տրամադրութեան վրայ տիրել զիտէ»<sup>4)</sup> ասումէ Լիբկնեխտը: Սակայն ցենզորական ճնշող պայմանները շուտով վերջ են տալիս թերթի գոյսթիւնան, առանձնապէս տուժում էին Մարքսի սուր ոճով զրուած մերկացնող յօդուածները, այդ պատճառով Մարքսը թերթը գաղարելուց երկու ամիս առաջ, զրում է 1843 թ. մարտի 18-ի համարում: «Սրանով յայտնում եմ, որ ներկայ ցենզորական պայմանների պատճառով ես հեռանում եմ «Rheinische Zeitung», -ի խմբագրութիւնից: Դոկտոր Մարքս»<sup>5)</sup>:

1843 թ., 25 տարեկան հասակում, Մարքսը ամուսնանում է ենի ֆօն Վեստֆալենի հետ և անմիջապէս ուղերուում է գէպի Փարիզ: Ալմոլլ Ռուգէն հրաւիրում է Մարքսի աշխատակցութիւնը նոյն թուականին Փարիզում հիմնուած «Deutsch-französische Jahrbücher» հանդէսում (շարունակութիւնը Գերմանիայում գագարեցրած «Deutsche Jahrbücher» հանդէսի), որ պէտք է նուիրուէր երկու յառաջապէմ ժողովուրդների եղբայրութեան գաղափարին: Սակայն այդ հանդէսից լոյս է տեսնում միայն մի տետր, ուր Մարքսը հրատարակում է երկու մեծ ու խիստ հետաքրքրական յօդուածներ՝ «Kritische Revision der Hegelschen Rechtsphilosophie» («Հեգելի իրաւունքի փիլիսոփայութեան քննադատական հետազոտութիւն») և «Ueber die Judenfrage» («Հըկան հարցի մասին»): Բացի գրանից հանդէսի մէջ տպուած են Մարքսի յեղափոխական ոգով զրուած երեք նամակները, ուղղած Ռադէին:

Մարքսի վիրոյիշեալ երկու մեծ յօդուածները պարզ գաղտնաբար են տալիս մեզ, թէ ինչպէս յեղափոխական մտածողի մէջ արագ ընթացքով հասունանում են ապագայ կոլոսալ մարքսիզմի բեղմնաւոր սաղմերը — յատկապէս եղիսոյթների վերլուծութեան դիմացերական մեթոդը և պատմութեան մատերիալիստական ընթոնութիւնը: Առաջին գրուածքի մէջ Մարքսը հակադրում է Հեգելի վերացական ու մշուշապատ օբիեկտաներին իր գործնական-իրական ու մատչելի օբիեկտները: «Երկնքի կրիտիկայի փոխարէն՝ Մարքսը զնում է երկրի կրիտիկան, կրօնի կրիտիկայի փոխարէն՝ իրաւունքի կրիտիկան»

4) W. Liebknecht, «K. Marx zum Gedächtnis» Կ. 2.

5) «Karl Marx» Festausgabe von «Wiener Arbeiterzeitung» Կ. 5.

և թէոլոգիայի կրիտիկայի փոխարէն՝ քաղաքականութեան կրիտիկան»<sup>6)</sup>, իսկ դա նշանակում է վերամբարձ իդէօւզգի աշխարհից իջնել ու միխուել բնական երկրի և բէալյարաբեռթիւնների շրջանում:

Երկրորդ յօդուածում «Հրէական հարցի մասին», դեռ այն ժամանակ սկսնակ մատերիալիստ Մարքսը խնդիրը ըմբռնուած էր որպէս տնտեսական հարց, կապիտալիստական կարգերի բերմանքով առաջ նկառւած, և նրանց չքացումով անյայտացող մի հարց: Հրէանների հալածանքը—այն ժամանակ անտիսեմիտիզմ անունը գեռ մօգայում չէր—ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ քրիստոնեայ մանրավաճառի մրցութեան նախանձը հրէայ մանրավաճառի գէմ: Միայն այն ժամանակ, երբ մարդկային հասարակութիւնը կ'ազմտու է այդ մանրավաճառային ոգուց, այսինքն մօդերն արտայայտած՝ կապիտալիզմի սիստեմից, միայն այն ժամանակ կ'ազմտագրուէ հրէան կամ հրէութիւնը՝ միւս մարդկանց և ազգերի նման: Այստեղ, ինչպէս տեսնուած ենք, Մարքսը շօշափում է քաղաքական ազատագրութեան յարաբերութիւնը ընդհանուր մարդկային ազատագրութեան վերաբերմամբ:

Նոյն թուականներին Մարքսը ծանօթանուած է իրենից երկու տարով փորբ ֆրիգրիս էնգելսի հետ, որ դասնում է նրա անրաժան ընկերը մինչև մահը: Մարքս-էնգելսեան սննական-ընկերական թէ զրական-գիտնական յարաբերութիւնների մասին այստեղ շատ բան չպիտի տանք, հետաքրքրուողին մատնացոյց ենք անում էնգելսի մասին զբած մեր յօդուածի վրայ՝<sup>7)</sup>:

Մարքսը շուտով ծանօթանուած է Փարիզում զերմանացի էմիգրանտների՝ կվերբեկի, Հայնրիխ Հայնելի և ուրիշների հետ: Նա բարեկամական յարաբերութեան մէջ է մտնում Հայնէլի հետ և նրա միջոցով ծանօթանուած այն մարդկանց շրջանի հետ, որոնք աշխատակցում էին Փարիզի «Vorwärts»-ին, որին այնուհետև Մարքսը ևս սկսում է աշխատակցել:

1844 թուականը համարուած է անօդայման Մարքսի երշտառարդական տարինների ամենաբեղմնաւոր շրջանը: Նա կարինետային ինտենզիւ աշխատանքով էր զրադուած մի այնպիսի միջնավայրում—թբանսիայում—,ուր միծ յեղափոխութիւնը և նրա աշխարհաստան հետևանքները դասակարգային հուրծատող կոիւը, պատմական խոշոր ու նշանակալից երկերը,

6) L. Woltmann, «Der historische Materialismus» եր. 147:

7) Տես «Մուբե»՝ 1905 թ. № 9, սեպտեմբեր,

ոյն փարթամ զբականութիւնը, որ ծառալու էր իր մէջ սուցիալիստական հարուստ մարեր ու բաղմապիսի հայեացքներ՝ մկան Դարձափ ուսովիսից, Փորիկի Փալանատերիսմից, Լուի Բլանի սոցիալ-քաղաքական ազիտացիայից մինչև Պրուդնի մանիֆեստը—այդ լուրջը հարուստ ու բաղմակողմանի նիւթեր էին մատակարարում 26 տարեկան Մարքսի ուսումնածրաւ հոգուն, հանձարեղ մտքին:

Փարթպումն էր, որ Մարքսի մէջ հետզհետէ, օրգանական յառաջադիմութեամբ կատարուեց այն նկայական Էլիլիցիան որ նրան իլէալիզմի ծոցից մկեց դէպի մատերիալիզմի զիրկը, բորժուազիական իլէօլոգից վարձրեց պրոլետարական իլէօլոց: Անշոշտ այդ ժամանակ գարձը դեռ կատարեալ չէր և «անտեսական կատեկորիաները թւում էին Մարքսին փիլիսոփայական շղարշով վարագութած», բիւրգերական հասարակութեան վախճանի նկատմամբ «ըերում էր նա իր ապացոյցները ոչ թէ անտեսական, այլ փիլիսոփայական շահեմարտնից»<sup>8)</sup>: Այդ տեսակետից պակասը լրացրեց Ֆր. Էնգելսը, որ տարիներ շարունակ ապրելով Անգլիայում, բնակմանը օժտուել էր անտեսական փորձառութեամբ և մատերիալիստական ըմբռնողաւթեամբ ու դիտութիւններով: Էնգելսը և Մարքսի նման մի ընածին դիտակտիկ էր, որ կլասիք փիլիսոփայութեան մէջ գարբնել ու ամբացրել էր իր ձիրքերը: Թէ՛ Էնգելսը չունէր Մարքսի փիլիսոփայական սիստեմատիկ ու մասնագիտական կրթութիւնը, այնուամենայնիւ նա խորապէս ըմբռնել էր Հեգելի փիլիսոփայութեան ուզն ու ծուծը:

Մարքսն ու Էնգելսը—ընկերական և բաղմաքական-գիտական գործունէութեան անզուգական կապերով ամուր գաշնակցած հսկայ ակտանները—1843 թ. հրապարակ էն զալիս որդէն իրանց գիտնական նուաճութերով, յօրինելով միասին «Die Heilige Familie, oder Kritik der kritischen Kritik, gegen Bruno Bauer und Konsorten» («Մուլը ընտանիքը, կամ ըննադառութիւնը քննադատական քննադատութեան, ուղղած Բրունո Բաուէրի և ընկերների դէմ»)

Այդ նշանաւուր աշխատաթիւնը մի այսպէս առաջ զբական լիբուլիզացիա (հաշուէտութիւն) է հեգելեան դպրոցի ձախակողմեան բանակի հետ, որ միաժամանակ բաղաքական բաղիկալիզմի ականաւոր ներկայացուցիչներ էին համարուում ժամանակակից Գերմանիայում, —զբանք ևն Բրունո Բաուէր, Էղգար,

8) Fr. Mehring, «Geschichte der deutschen Sozialdemokratie» հառ. 1  
էլ., 212—213

ֆառութէր, իւնգնից, Սցելիգա և ուրիշները, որպէս ուրու միւտցած սուրբ ընտանիքի անբաժան անդամներ: Գրուածքի մեծագոյն ու կարեորագոյն մասը պատկանում է Մարքսի զրչին:

Այդ գրուածքի մէջ Մարքսն ու Էնգելսը, ողևորուած Ֆոյերբախի փիլիսոփայութեամբ, կանգնում են արդէն «ըէւալականն ուսմանիզմի» տեսակէտի վրայ, որ, ինչպէս յառաջարանի մէջ նկատում են, չունի Գերմանիայում ոչ մի ուրիշ վտանգաւոր թշնամի, բայց եթէ ոպիրառալիզմը (ուսմունք հոգու էռւթեան մասին) կամ սպեկուլատիւ իդէալիզմը, որ իրական անհատական մարդու փոխարէն, բնուութեան օրիեկտ է ընտրում «ինքնազիտակցութիւնը» կամ «հոգին» և աւետարանականների (էվանգելիստ) նման ուսուցանում: «Հոգին է, որ կինդանի է պահում, մարմինը չունի որևէ է օգուտ»:

«Սուրբ ընտանիքը» գերմանական իդէալիզմի կազմալուծման նորիբուած այդ երկը՝ իր արծարծած գաղափարների ներքին շաղկապումով կազմում է մի հետզհետէ կատարելագործուող շարունակութիւն այն հայեացքների ու մտքերի, որոնց արտայացտել են Մարքսն ու Էնգելսը «Deutschfranzösische Jahrbücher»-ի մէջ: «Սուրբ ընտանիքի» մէջ նրանք ասուիճանաբար զարգացնում են իրանց կրիտիկական ոպին, գիտեկտիքական մեթօդը և պատմական մատերիալիզմը: Բառէրը և ընկերը փորձել էին իրանց «Allgemeine Literaturzeitung», 1843 թ. Շարլուենբուրգ ամսաթիրթի մէջ հիմնաւորել իրանց աշխարհահայեցրը, հետազոտելով ժամանակակից մի շարք կարևոր երեսյթներ, ինչպիսիք են՝ կրօնի և փիլիսոփայութիւն, քրիստոնէութիւն և մուլսատկանութիւն, պատազերիզմ և սոցիալիզմ; անզիլական նիդուստրիա և ֆրանսիական յեղափոխութիւն և այլն: Մարքսն ու Էնգելսը սուր պոլեմիկայով հակագրում են Հեղեղեան իդէալիզմին իրանց մատերիալիստական տեսակէտը:

Մարքսին չի յաջողւում երկար ժամանակ մնալու Փարիզում: Նրա կրակու յօդուածները տեղական «Vorwärts»-ում՝ ուղղած Քերմանիայի բէակցիայի դէմ հանդիսաւ չեն տալիս պրուսական կառավարութեան, որը ֆրանսիական կառավարութեան միջոցով (Քիբոյի մինիստրութեան օրով) հեռացնել է տալիս Մարքսին ֆրանսիայի սահմաններից:

1845 թ. սկզբներին Մարքսը գալիս է Բրիւոնել: Այդտեղ նա շարունակում է իր կարինետային-սամազիտական դրազմունքները (անտեսագիտութեամբ, սոցիալիզմով, պատմութեամբ և փիլիսոփայութեամբ), իր հրապարակախօսութիւնը (տեղական «Deutsche Brüsseler Zeitung» օրդանում) և միւնոցն

Ժամանակ ձեռնարկում հրապարակական կենդանի գործունէութեան։ Նա հիմնում է այստեղ գերմանացի բանուորներից մի ընկերութիւն, ուր պարբերաբար կարգում էր ժամանչելի գտառնուութիւններ անտեսագիտական խնդիրների վերաբերեալ։ 1846 թ. Մարքսը կարգում է ազատ առևտրի կողմանակիցների կոնգրեսում մի զասախօսութիւն՝ «Rede über Freihandel» («Առաջարկ առևտրի մասին») անունով։

Փոքր ժամանակ անցած դալիս է Բրիտանի մօտ, և Էնգլելու Այդահեղ երկու մտադյգ ընկերները ձեռնարկում են մի մեծ երկհատորեան աշխատանքի, որի մէջ նրանք պօդիափառնադիմութեան են հնաթարկում Հեղեղից յետոյ եղած փիլիսոփայութիւնը, պարզ ու ակնյանի հակագրելով պատմութեան իդէօլոգիական հասկացողութեան (գերմանական փիլիսոփայութեան մէջ) իրանց մատերիալիստական հասկացողութիւնը, — «իսկապէս—առում է Մարքսը—հրաժարուելով մեր նախկին փիլիսոփայական գիտելիքներից»։<sup>3)</sup> Մակայն այդ աշխատութիւնը լոյս չէ տեսնում գժրադարձար տպագրական արգելառնիթ պայմանների շնորհիւ։ Այդ գրուածքից մնացել է միայն 11 թեղիմաներ (Մարքսից) Ֆոյերբախի մասին։ Այստեղ Մարքսի տեսակէտը հանդէս է դալիս աւելի զարգացած ու հիմնաւորուած ձևով։ Նա իր հաշիւները տեսնում է, և իր երկրորդ ուսուցչի՝ Ֆոյերբախի՝ հետ (առաջինը Հեղեղն էր): Մարքսը քննադատում է նրա մատերիալիզմի թոյլ կողմերը, նրան կրօնի և սիրոյ, մարդկայնութեան ըմբոնողութիւնը, — միշտը խնդիրներ, որոնց մասին կը խօսենք մենք յետոյ, երբ վերլուծենք պատճական մատերիալիզմը։

Ծուտով Մարքսը մի այլ նշանաւոր բանակուուի է բանւուց Դեռ Փարիզ եղած ժամանակ Մարքսը մօտ յարաբերութիւն ուներ յայտնի Պրուգոնի հետ։ Երկուսը միասին օրեր ու գիշերներ շարունակ տաք վիճարանութիւններ էին ունենում անտեսագիտական և փիլիսոփայական խոշոր պրօբլեմների մասին։ Տարբերութիւնը Մարքսի և Պրուգոնի երկույթների հասկացողութեան և նրանց վերլուծութեան մէջ, ոհեծ էր։

Այդ տարբերութիւնը աւելի է մեծանում և հակամարընիստական դասնում այն ժամանակ, երբ Պրուգոնը հեղինակում է՝ «Système de Contradictions économiques ou Philosophie de la Misére» («Տնտեսական հակասութիւնների սիստեմը կամ թշուառութեան փիլիսոփայութիւնը») վերնագրով մի աշխատութիւն։ 1847 թուականին, Բրիտանիում եղած ժամանակը,

<sup>3)</sup>) K. Marx, «Zur Kritik der politischen Ökonomie», յառաջարան XIII հր.

Մարքսը ջախջախիչ կրիտիկայով պատասխանում է (տպուած Փարիզում ֆրանսերէն լեզուով)՝ «Misere de la Philosophie» («Փիլիսոփայութեան թշուասութիւնը»), յետոյ ֆրանսերէնից թարգմանում են գերմաներէն էդ. Բերնշտայնը և Կ. Կառլցին «Das Elend der Philosophie» վերնագրով) գրուածքով:

Ինչպէս իր բոլոր բնագատակամն-պուեմիկական երկերի մէջ, այնպէս էլ այստեղ, Մարքսը սովորութիւն ունէր ոչ միայն հերքելու, բացառական բնագատառութեան հնիթարկելու իր հակառակորդի տեսակետնրը, այլև առաջնորդելու նրան գէպի նոր, ինքնուրոյն ու հիմնաւորուած մտքերի աշխարհ։

Պրուգոնի աշխատութեան հիմնական միտքը կայանում էր նրանում՝ լուսաբանել մամնաւոր սեփականութեան էլութիւնը, պատասխանել նրա գոյութեան հարցին անտեսազիտական անալիզներով։ Նա փորձում էր միմոյն ժամանակ անտեսական կաթեգորիաների սիստեմը ներկայացնել դիալեկտիկական ձևով, նշանակում է Պրուգոնը կանոնի անլուծելի անտինոմեուների<sup>10)</sup> փոխարէն գործ էր ածում Հեզելի հակասութիւնը (հակառութեան դիալեկտիկան), որպէս զարգացման աստիճան-ները ցոյց տուող միջոց։

Սակայն Պրուգոնը, ինչպէս Մարքսը ցոյց է տալիս, մի կողմից շատ թոյլ է ըմբռնել գիտական դիալեկտիկայի գաղա-նիքը, իսկ սիւ կողմից նա մեծ մասամբ կլանուել է սպեկու-լետուի փիլիսոփայութեան իլլիւզիաներով։ Փոխանակ անտե-սական կաթեգորիաները ըմբռնելու պատմական կեանքի զար-գացման որոշ աստիճանի վրայ գտնուող իրերի արտադրու-թեան եւ դրա համապատասխան յարաբերութիւնների տե-սական (թէօրետիկական) արտայայտութիւններ, Պրուգոնը ընդունեց այդ բոլորը որպէս նախագոյ (præexistirende), յաւի-տմանական իգէաներ և այդ ճանապարհով նա կրկին գառնում է և կանգնում սովորական վուլգար-թիւրգերական տնտեսագէտ-ների տեսակէտի վրայ։

Պրուգոնը իւրաքանչիւր տնտեսական յարաբերութեան, կաթեգորիայի մէջ տարբերում էր լաւ ու վատ կողմեր, որ-պէսզի այնուհետև որոնէ մի սինթեզ, մի գիտնական ձևաւո-րում, որ ընդունէ իր մէջ այդ լաւ կողմը և խորտակէ վատը։ Պրուգոնը գտնում է, որ տնտեսական այդ լաւ կամ դրական կողմը շեշտուել է բիւրգերական (բուրժուական) տնտեսագէտ-

<sup>10)</sup> Անտինմիա ըստ կանոնի նշանակում է այն թուացող հակա-ռութիւնը, որ ունեն բանականութիւնը և հասկացողութիւնը։

ների կողմից, սինչդեռ վատ կամ բացասական կողմի համար, որ անի անտեսութեան տիրապետող ձևը, բողոքել են սոցիալիստները։ Խաքը՝ Պրուդոնը, ուզում էր իր սինթեզներով և ձևակերպութներով վեր բարձրանալ թէ բիւրգերական անտեսագէտներից և թէ սոցիալիստներից, այսինքն աւելի ուստովիստ լինել, քան խկական ուստովիստներն են։

Ի՞նչ է ասում Մարքսը Պրուդոնի այդ Հերքուլէսիան խիզախութեան վերաբերմաբ։ Մարքսը տրուում է նրա իլլիւզիաները հետեւալ ջախջախիչ խօսքերով։

«Պ. Պրուդոնը հաւակնում է տալ տեսեսագիտութեան և կոմունիզմի (այն ժամանակ զործ էր ածւում գա սոցիալիզմի իմաստով։ Բ. Ի.) կրիտիկան, սակայն նա ցածր է կանդնած թէ մէկից և թէ միւսից։ Ցածր տնտեսագէտներից, որովհետեւ նա որպէս փիլիսոփայ, մոգական ֆօրմուլաները ձեռքին, թոյլ է տալիս իրան թափանցելու տնտեսագիտական մանրամասութիւնների խորքը։ Եւ ցածր՝ սոցիալիստներից, որովհետեւ նա ոչ քաջութիւն և ոչ էլ բաւարար բմբոնագութիւն ունի, իրեն սպեկուլատիւ մտածող, բուրժուական հորիզոնից վեր բարձրանալու։ Նա ուզում է սինթեզ լինել, սակայն նա իրապէս մի միաւորուած մոլորութիւն է, նա ուզում է, որպէս գիտութեան մարդ, լողալ վերին հերուում բարձր բուրժուաներից և պրոլետարներից, սակայն նա իրապէս մի մանր բիւրգեր է (քաղաքացին, մէջահնիեւ, ինչպէս ուզում է ասում Բ. Ի.), որ միշտ կապիտալի և աշխատանքի, տնտեսագիտութեան և կոմունիզմի մէջ դէս ու գէն է ընկնում»<sup>11)</sup>։

Այս նոյն առղերի (զրուած 1847 թ.) վերաբերեալ Մարքսը 1865 թ. Բերլինում հրատարակուող «Sozialdemokrat» թերթում (№ 16, 17, 18) գետեզած իր մի ընկարձակ նամակի մէջ (Պրուդոնի մասին) աւելացնում է հետեւալը։ «Ես պատրաստ եմ նոյնիսկ այսօր ստորագրելու այս խիստ դատավճռի իրաքանչիւր խօսքի տակ»։

Բ. Իշխանեանի

(Պ. Պ. Հարուսակովի)

11) K. Marx, «Das Ende der Philosophie», 110 եր.

# ԻՐԱՆԵԱՆ ԹՈՒՐՔԵՐ

ԱԶԲՈՅԻՑ ՋԱԿՆԵՐ \*

5 Իրանեան թուրքի տիպը

Մինչև այժմ ինչ որ ասացինք իրանեան թուրքերի քաշական ու ընկերային անցեալի վերաբերմամբ՝ պարզ ցոյց է տալիս որ գծուար կարող է խօսր լինել թուրքական տիպիկ առանձնայատկութիւների մասին։ Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, եթէ մանաւանդ աչքի առաջ ունենանք այր ու կին սարսկների գարսուրներմուծումը, որով թուրք արիւնը խառնուել է շարունակ զրացի արիական տարրերի հետ, ինչոքս են կովկասցիները, քիւրդերը, հայերը և իրանցիք։ Եթէ սրան աւելացնենք նուև կլիմայական, կրօնական ու հանրային գործօնների ուժեղ ազգեցած թիւնը, կը համունք այն համոզումին, որ ամենալաւ դէպքում մի սաստիկ խառնուած տիպ է մեր առաջ ևզածը, և որ սակայն զիս կըսմ է իր վրայ զուտ թուրքայինի ակրանյայանի հնտքերը։

Այս իմաստով միայն ներկի է ու կարելի մի յատուկ մարմնական կազմ՝ ընդունել իրանեան թուրքերի համար, մի կազմ, որ խորայն իր վրայ է հրաւիրում հետազօտողի ուշը հնաց որ աչքի ևս առնում ազբրբէջանցուն նրան շըջապատուկ համեմատորէն զուտ իրանական տիպերի միջից, որոնց թուին ևս հաշում իմ շիրապցիներին։

Այդաեղ արդէն իսկոյն զուրու է յայտում իրանեան թուրքի ընորոշումը, որ հետեւեալ կերպով է արտայայտում և. Պօլտկ, որ Պարսկաստանի աւել ու ցեղի հիմնական ճանաձն է։ «Իրանեան թուրքօ-թաթարի զանգը իրանեցու հետ համեմատած աւելի քիչ է ձուածե, դէմքը աւելի լայն ու աւելի նուազ արտայայտիչ, ունքերի կամարը աւելի ուղիղ է և քիչի վրայ չէ միացած իրար, աչքերի ճեղքը չանի այն նրբութիւնը, կո-

\*.) Տես «Մուլճ», № 11—12

պերը աւելի հաստ են, բիբլ գորշ բիթը կարճ ու հաստ թէ արմատում, թէ ոռունգերը. ծնօան ու այտոսկրները աւելի լայն ու աւելի մկանուտ. շրթունքը մսոտ, ձեռնուռոտը նուազ շնորհալի ու կմաղը աւելի գանգուած: Հաստկը սովորաբար աւելի բարձր է պարսիկից, ոսկրներն ու մկանունքը աւելի ուժեղ:»

Նոյն տեսակի են և Զէյզլիցի առւածնկարագիրը Անդրկովկասի թուրքերի մասին, որոնց արտաքինի վրայ նա՛մի ընդհանուր ու ախտիկ բան ոչինչ չի գտնում: Շատ հասկանալի պատճուղ նրանք ներկայացնում են զուտ թուրքայինի ու մաքուր հընդերուած մարմնագծութեան մի երփներանգ խառնուրդ, ուր զուտ թուրքայինը ասանձին շատ հազիւ է պատահում:

Սրան համապատասխան է և իս գիտողութիւնը, միայն կամենում եմ աւելցնեմ, որ Իրանի հիւսիսային սահմանագծի երկայնքով՝ Ազըրբէջանի ու Խորասանի թուրքերը շատ աւելի են պահած իրանց ազգային տիպը, բան օրինակ հարաւային Պարսկաստանի քաշկանիները, որոնց երկարաւուն բիթը, կրակուտ աչքերը ու ձիւթի մնան ու մաղերը արդէն խիստ են յիշեցնում արեակեզ հարաւեցուն:

#### 6. Իրաննան թուրքի կենցաղը

Իրենց կեանքը եղանակով իրանեան թուրքերը երկու խորի են բաժանում, նոտակեաց ու թափառակամն, կամ կիսովին թափառական: Առաջին խորին պատկանում են Ազըրբէջանի, Շամսէի, Իրանի ու մասամբ ՀՀ Խորասանի այն թուրքերը, որոնք Սելջուկների արշաւից սկսած, զուցե նոյնիսկ աւելի վաղ, իւրացքել են իրանեան ժողովուրիների կենցաղը, հաստատուել են գիւղերում և քաղաքներում, ու պարապում են աստառուով, արզիւնագործութեամբ ու հողի մշակումով: Մանաւանդ հողագործութիւնը, քանի որ անասնապահութիւնից բնական կերպով անցել են դրան, մինչդեռ տուտուրի ու արզիւնագործական մասում ետ են մնացել ու ճնշուել են ըլչապատով պարսիկներից:

Իրանի ամբողջ հիւսիսարենտեան բաժնում գիւղի ժողովուրդը բացառաբար թուրք է. Ազըրբէջանում ու Շամսէում նոյնն է նաև քաղաքների վերաբերմամբ, մինչդեռ միւս տեղերում քաղաքի բնակչութիւնը կազմուած է խառն պարսիկներից ու թուրքերից:

Սակայն այս երեսյթը Սեփիաների ժամանակից է սկսած միայն և աւելի հաստատուել է Քաջարների տիրապետութեան

միջոցին, երբ թուրք զինուորական ու պաշտօնեայ դասակարգը, հրապուրուած հանգիստ կեանքից, աւելի ու աւելի վարժուեց մի հաստատ անկիւն ունենալու, և խաղաղութեան ժամանակ սուրը ցած զրեց արօրը վերցնելու համար: Այս փոխանցումը, ինչպէս երեսում է, հեշտ չէ կատարուած, քանի որ գեռ մինչև այժմս էլ Ազգայիշանի ու Շամսէի թուրքը շատ է կապուած եայլախի սովորութեանը, այսինքն տառաը գէպի դաշտակներն ու պարտէզները քոչելուն, ամառը բաղարների կէուը մեռածի ու թողածի պէս է:

Գալով թափառականներին՝ չերեակայենք, որ գեռ երէկ տափառաններից իջած ու կուլտուրական շրջանակի մէջ մտած ցեղեր են զրանք, որ թափառում են մշակութեան ազատ հող չպանելով: Ո՞չ, նրանց թափառականութիւնը դարերի հաշիւ ունի արդէն, մասամբ ծնունդ պատմական պատահարների, մասամբ էլ արդիւնք գէպի նոտակեաց կեանքը ունեցած թուրքի ազգային հակալրանքի, որը խիստ է աչքի ընկնում: պատմութեան մէջ թուրք ցեղերի ենք հանգիպում, որոնք ոչ մի կերպ չեն կարողացել հանգիստի գան:

Դրա համար էլ իրանի ամեն մի շարժուն թուրք ցեղի, կամ ինչպէս ասում են կարճօրէն՝ իլատի<sup>1)</sup> թափառման վայրը միայն իր զիլիառը զծերովը կարելի է որոշել: Այսպէս օրինակի համար Շահնաէնները ամենից շատ գտնուում են Անդրկովկասի մեր արդէն յիշած տեղերում, բայց հանդիպում են նաև Շամսէում ու Թիհրանի զաւառում: Խօջա-Ալի, Բէգ-զիլի ու Շէյխու ցեղերին պատահում ենք նաև Պարաբազում, Մահմուդլուններին Մարաղայում, Զանրէզլուններին, Իմամլուններին, Առշարներին, Ուզանլուններին ու Բաղարներին Մազենդարանում, վերջապէս Բաշրահներին ու Ալլահվերդիններին Պարսկաստանի հարսւում:

Այս թափառականների շարքն է գասում մի պարսիկ հեղինակ նաև Բարագէօզու, Բահարլու և Ինանլու ցեղերին, երբ հետեւալ կերպով է մանրամասում թուրք թափառականներին: Բաշքահներին բաժմում է երկու մասի՝ քաշրահներ ու խալաջներ. նրանց թիւը միասին մոտ 60,000: Ինանլուններին բաժանում է նորից երկուուն՝ Զիհարդեհ-Զերիդ և Ինանլու, միասին տասած 12,000 հոգի, միջին բահարլունների թիւը 12,500 հոգի է հաշւում:

Թէև լընդհանուր անունով այս բոլորին իլատ այսինքն

1) Իլատ առաջանում է թուրքերէն իլամարգիկ, ժողովուրդ բառից, որին արարերէն յոդնակի շինող առ մասինին է կցուել:

Խափառական ցեղ ենք կոչում, բայց ես զիտել եմ, որ իրանց նկատ ու կացով բաւական տարբերւում են իրարից: Միջին Ասիայի իմաստովը առած «թափառական» բառը իսկն ասած իրանական այդ շարժուն ժողովուրդներից և ոչ մէկ հասոււածին չի կարելի տալ: Ամենից առաջ չկայ այստեղ այն ընդուրածակ արօտներն ու տափիրը, իրանց հօտերն էլ շատ են չնչին, եթէ կիրգիզների ու թուրքմանների չափովը չափենք: Մեծ մասով ոչխար են պահում, թիչ ուզու, աւելի ևս թիչ ձի: Սրանց ոչխարը մի միջին աստիճան է կազմում միջինասիական գմակառորի ու անապոլիսն ոչխարի մէջ. իսկ ձին մի խառնուրդ է նախսկին գաշտածիու ու արարական նժոյզի, որ իր բնատիպից շատ ետ է մնում թէ իր գիմացկանութեամբ, թէ ժրութեամբ: Իրանց լաւագոյն ձիերով յայտնի են շահսնենները, քաջարները և առշարները:

Ընդհանուր աչքի առնելիս իրանի թուրք թափառականները մի ողարժելի տպաւորութիւն են անում դիտողի վրայ: Աղքատութիւն ու խեղճութիւն է զուրս նոյյում նրանց մազից գործած լայնածիկ վրաններից, որն արևելքում Արքանամի վրան են տուում: Ո՛չ թաղիքն է սիրուն, ոչ վրանի գոտին է զարգարուն, ոչ ցիցերի գլխին մի ծածառուղ ոխնվոլ, ոչինչ ոչինչ չի հրապուրում նայողի աչքը. իսկ երբ գլուխզ կուցըրած մանում ես ծոխից սկացած վրանի նիրուր, իզուր ևս որոնում գոյն զկոյն զորգեր, հարուստ զգեստներ ու սիրուն քանդակագրադ ամանեղին: Եւ խկոյն պարզ է զառնում թիւ, որ առաջզ եղածները այն թուրքերիցն են, որոնց թափառավայըլը զարերէ իվեր սեղմուել է ու փոքրացել, և որ շվապատուած նստակեաց ժողովուրդներով, արդէն վազուց կորցըրել են իրանց նախսկին խելական նիստ ու կացը, առանց. թողնել կարողանալու թափառումի իրանց յաւիտենական սերբ: Ամրող ամառը, կարելի է ասել, որուում են նրանք ամեն մի կտոր արօտը ձորերի խորքում ու ժայռերի զլիխն: Անտանապահութեան տուած արշ զիւնքը չնչին է, և ուրիշ թափառականներին յատուկ աշխած կեսների հետքն անզամ չկայ նրանց մօտ: Միայն մաստիք մը նացել են զես կլանային կապերը ու իլլանիի (ցեղապեսի) համոզէալ իրանց ունեցած կոյլ հնազանդութիւնը: Իլլանի հրամայեց թէ չէ, զէնքի են զիմում բոլոր զէնք կրելու բնդունակ մարգիկն ու կտնայք, և զբանով է որ Քաշքայի ցեղապետները մինչեւ նորագոյն ժամանակներս երկիւզ են ազգում պարսկի կառավարութեան: Խանը իր ցեղակիցների աչքում շատ աւելի բարձր յարգ աւնի, քան ժամանակաւոր պարսից Շահը, որ զգուշանում է նրանց ներքին գործերի մէջ խառնուելու: Նրանց

նահապետական կազմի մէջ շատ քիչ բան է փոխուած ոչ մի այն իրանում, այլ նոյնիսկ ոռուական հողի վրայ:

### 7. Վրիական կուլտուրայի ազդեցութիւնը

Մի ժողովուրդ որ ութը զարէ իվեր անջատուած է իր ազգակից խոշոր մասից, որ ապրում է հինգիրանեան ովով ու հուած մի հասարակութեան ծոցում և որի զարգացման վրայ բացի զրանից խիստ մեծ ազգեցութիւն է ունեցել շին կրօնը մամաւորապէս, շատ հասկանալի է ու բնական, որ մի այդ տեսակ ժողովրդի բուն թուրբական վարքն ու բարքը մեծ փոփոխութիւնների է ենթարկուած լինելու: Ինչպէս որ իր լայն ու կոպիտ ձևերով ու գժուարաշարժութեամբն է որոշուու թուրքը մարմնապէս իրանական տեղացիներից, այնպէս էլ կարելի է ասել նոյնը նրա հոգեկան յատկութիւնների վերաբեր մամբ:

Բայց զարաւոր յղկումն ունրացումը անշուշտ հարթել են քիչ նրա ազգային բնաւորութեան մի քանի խիստ կոշտ անկիւնները. և իր արևմտեան ու հիւսիս-արեւելեան ազգակիցների հետ համեմատած, իրանիցի թուրքը անտարակոյս ներկայանում է իրեւ կրթութեան ու նուրբ ձևերի տէր մի մարդք նա խրացրել է մի քանի ընթացիկ քաղաքավարի ձևեր և չի կարելի արանուալ որ իր վարմունքի մէջ կայ մի որոշ տատիճանի յղկում. թէև մեծ մասով դա արտաքինն է միայն և հէնց որ քիչ կոտրումն կճեալը, իսկոյն թուրքը երևան է գալիս: Հակառակ իր գիտու-բազարավարի խօսակցական ձևերին, հակառակ իր հագուստի, շարժման ու վարմունքի շնորհալի լինելու ձգուամբն, թուրքը իսկոյն ջոկուում է հարաւային իրաւացուց: Նրամիտ, ձկուն ու խորամանկ երեալու իր բոլոր ջանքը կորչում է նրա բնածին բայսորութեան ու տափակութեան առաջ:

Այդ նկատելի է նոյնիսկ թաւրիզի, թհհրանի ու Համազանի բաղաքացիների վրայ, նայելով իրանական քաղաքակըրթութեան այդ կենդրունների անմիջական ազգեցութեանը: Մինչդեռ գիւղացին շատ աւելի ցայտուն ազգային գծեր է պահած և երբեմն իր վարքն ու բարքը վառ կերպով յիշեցնում է տափակութեան:

Այդ նմանութիւնը տարածւում է նաև ընտանեկան կեանքի որոշ սովորութիւնների վրայ... այսպէս օրինակ, մի քանի օրհնանք բոլորովին նոյն խօսքերն են զրեթէ. նոյնն են ձևելու երեխայ ձևելիս, հարս ըրեւելիս, և մանաւանդ հիւրոտիրու-

թեան օրէնքը, որ իրանի թուրքը շատ աւելի խղճմարէն է պահում, քան պարսիկը։ Այդպէս էլ թուրքի խօսքը շատ աւելի փստահնելի է, և նոյնիսկ իր սուտը, կոպիտ ու ձախլիկ, շատ աւելի նուազ է վտանգաւոր, քան ողորկ ու խորածանկ պարսկինը։ Ուսայն հրապոյրի ու շլացոցիչ շքեղութեան իր ուժնեցած հակումովը պարսիկը գուցէ զբաւում է երբեմն, բայց իսկական առնացի արժանաւորութիւնը և վճռականութիւնը թուրքին է յատուել։ Իր այդ յատկութիւններին է արգէն նա պարտական զարերէ իվեր իրանում ունեցած իր տիրող զերք, ուր իսկն ասած պատերազմիկ տարրն է կազմում, քանի որ Շահի ամրող բանակը սոսուար մեծամասնութեամբ թուրքերից է բաղկացած։

Սյո բոլորը տւելի ևս ճիշտ է իրանիան թուրքերի թափառական մասի վերաբերժամբ։ Արգէն միայն այն հանգամանքը, որ մի քանի ցեղեր, հակառակ տեղական զժուարութիւններին և ընկերային ուժեղ ազգեցութեան, չեն վարժուել նստակեաց կեսնքի, ամենից տւելի է մատնում այդ մարզոց իսկական թուրք լինելը։ Սրանց միայն վերնագոյն ծայրերին է զիսել պարսկական կուլտուրան, մինչդեռ մասսան միայն արտաքինովն է տարրերում տափաստանների իր ազգակիցներից և չի զանազանուում նրանցից ոչ իր մտածելու եղանակովը, ոչ էլ իր սովորոյթներովը։ Անսանձ է նրանց հակումը դէպի արկածները, կոփէն ու թալանը՝ կեանքի իգլար, իսկ օրեր ու տմիսներ տևող անսորդ կեանքի միօրինակութիւնը լեցնում է միայն մի զբաղում՝ իրանց ձիերի ու զէնքերի խնամքը։ Թէև Սամազիի, Հաֆրզի և միւս պարսիկ բանաստեղծների իմաստուն խօսքերը ման են զալլիս բերնէ բերան, բայց նրանց սըրտում քանողակուածը հին-թուրք նախնական առածներն են, ուրոնց վրայ և չափում են իրանց գործերն ու կեանքը։

Մի զարժանալի երեսյթ է ժողովրդագրութեան էջերում թուրքի այդպէս պինգ կպած մնալը իր հին ձէսերին ու սովորոյթներին։ յամենայն գկաս շատ քիչ օրինակներ կան, որ երկու հակասարր ժողովուրդների 600 տարուայ անընդհատ ու սերտ շփումից յետոյ փոքրամասնութիւնը այդ տոտիճանի քիչ ենթարկուած լինի մեծ մասի ազգեցութեանը, ինչպէս այդ տեսնում ենք իրանի թուրքերի վերաբերմամբ։ Նոյնիսկ տասնեակ տարիների վարժութիւնից յետոյ, թուրքը միշտ օտարի շեշտով է խօսում պարսկերէնը և միշտ սխալ, մի օրէնք, որից նոյնիսկ տիրող շահերը բացառութիւն չեն կազմում։

Զնայելով ընդհանուր կրօնի և ընդհանուր քաղաքական շահերի կապին, այդ երկու տարրերը փոխազարձարար ատում

են իրար: Պարսիկի համար թուրքը դեռ միշտ այն հին բարբարոսն է ու ատելի արարածը, ինչպէս որ նա նկարագրուած է Շահ-Նամէում: Թուրքն էլ իր կողմից արհամարհում է պարսիկին իբրև մի վասկուլիտի: Այս, ազըրբէջանի առածը շատ ճիշտ է ասում: «Թուրքին ու պարսիկին արած հազար կտոր, նետիր կաթսան ու եփիր, եփիր ամիս ու տարիներ, նրանք նորից չեն միանայ նորից կը կարաս իրարից ջոկես:»

#### 8. Եկուն ու զրականութիւնը

Գալով իրանեան թուրքերի լեզուին ու զրականութեանը, հասկանալի է, որ ամենից աւելի այսակե է երեսւմ նոր-պարսկականի կրթիչ ազգեցութիւնը, այսինքն թուրքերէնի շարագրութեան, գրական տեսակների ու փոխարեւութիւնների ոէջ պարսկականը շատ աւելի տիրող է, քան թէ թուրքմաններէն ու օսմաններէն գրականութեան մէջ: Բայց իբրև բարբառ ազըրբէջանի լեզուն սաստիկ մօտիկ է օսմաններէնին, մանաւանդ նրա այն գաւառաբարբառին, որ խօսում են Անատոլիում: Մի մօտիկութիւն, որ նախորդ զարերում շատ աւելի է եղած, քան այժմ, որի հիման վրայ կարելի է ընդունել թէ 12-րդ ու 13-րդ դարերում այդ երկու հիմա իրարից բաժանուած բարբառների մէջ ոչ մի տարբերութիւն չէ եղած, և թէ օսմանցին ու իրանի թուրքը այն ժամանակ խոշապէս սիենոյն ցեղի անդամն են եղած և մօտիկ ազգակից այս օրուայ թուրքմաններին:

Այս ենթադրի ճշմարտութիւնը ումենից լաւ ապացուցանում էն գոյթիւն ունեցող լեզուական յիշատակարանները: Այսպէս՝ եթէ համեմատենք 13-րդ դարից մեղ հասած սելջուկիան ուսանաւորները Նեշրի պատմաբանի լեզուի հետ, որ 15-րդ դարի երկրորդ կիսումն է ապրել, և այդ երկու նմուշների դէմը բռնինք արդի ազըրբէջանի լեզուն, իսկոյն պարզ կը լինի նոյնիսկ թուրքերէնին չափազանց հարեանցի ծանօթ եղողին անգամ, որ այդ յիշուած երկու հին թուրք քնարիրները թէ բերականորէն և թէ բառարանով սաստիկ նման են իրանեան թուրքերի արդի բարբառին:

Մասնաւոր կուլտուրական ազգեցութիւնների ու յետապայութիւնների օսմաններէնը հետզհետէ հետացել է ընդհանուր բարբառից, մինչդեռ ազըրբէջանի լեզուն իր էտիկան կէտերում անշարժ է մնացել: Օսմաններէնը, այսպէս տահնք, նրբացրել է իր հնչական սիսթեմը ու պահելէ մի քանի ձեւը, որոնք այսօր միայն Ուկանուրերէնին մէջ կարելի է գտնել: Մինչդեռ մի մասնաւոր մշակման չենթարկուած ազըրբէջանի

լեզուն, ընդհակառակը, պահել է կոկորդային ու շըչող կոշտ հնչիւնները—մասսամբ էլ այնպիսի ձևեր՝ որոնք այդ լեզուն մի փոխանցող միջին ասամբանսի են վերածում արևմտեան ու աւրեկեան թուրքերէնի մէջտեկում և այդ բարբառի որոշիչ յատկանիշն են կազմում:

Այսպէս օրինակ, օսմանցու Ք-ն ազըրբէջանցու բերնում լի է սիշտ. նա ասում է բախ (նայիր), չոխ (շատ) փոխանակ ասելու բաք, չոք: Օսմանցու գելմիշ (եկած), գէօրմիւշի (տեսած) փոխարէն նա սովորական խօսակցութեան մէջ գործ է ածում գելիրմէն, գէօրիւրմէն: բացասական գելմէմ, գէօրմէմ ձեխ փոխարէն ասում է գելմիրմ, գէօրմիրմ, մի խօսքով այն տեսակ տարբերութիւններ, որ այդ երկուսին կարծես դարձնում են նոյն բարբառի երկու ենթաբարբառը: Եւ իրաւ օսմանցին ու ազըրբէջանցին շատ աշելի հեշտ են իրար հասկանում, քանի թուրքմանին:

Պարսկական գրականութեան իրանեան թուրքերի վրայ արած ազգեցութիւնը աչքի առաջ ունենալով ասելն իսկ աւելորդ է, որ զուտ թուրք ազգային երկերի մասին հազիւ կարող է խօնք լինել: Նախ թուրք զրագէտների և ուսումնակունների թիւը սաստիկ չնշին է Իրանում. եղողներն էլ հետևելով տիրող գրական թօնին ընդհանրապէս գործ են ածում պարսկերէնը: Բացասութիւն են կազմում մի քանի բանաստեղծներ, ինչպէս Ֆուզուլի, Բիզիլ, Մեշրեր, Էլեղիալի ու կրօնական խաղերի մի քանի երգիչներ, այլ և երգիչների այն տեսակը, որոնց բանաստեղծութիւնները Ազոլֆ Բերմէն հաւաքել է ու հրատարակել: Վերջիններս ինարկէ միայն պատահմամբ ծանօթ գարձած աշուղներ են 18-րդ ու 19-րդ զարերից: Դրանց հետևեալ ցանքն է տալիս Բերմէն:

1. Ախունդ Մօլլա Պիհան Վաքիփ, մեռած է 1747-ին:
2. Քասիմ բէգ Շաքիր, ծնած է 1789-ին:
3. Մեսսիհա, Վաքիփի ժամանակակից.
4. Քամբեր, 19-րդ զարի 20-ական թուերին:
5. Քերբելայի Արդուլլահ Զանի, մեռած է 30-ական թուերի ալիզըին:
6. Բաբա բէգ, Քասիմ բէզի ժամանակակից:
7. Մեհդի բէգ:
8. Միրզա Ֆեթ Ալի Ախունդով, ծնած 1812-ին:
9. Աշիկ Փերի, մի բացառիկ տաղանդի աէր բանաստեղծուհի, մեռած է 1833-ին:

Բայց որ այս տեսակ աշունիք եղել էն և շատ աւելի վաղ ժամանակներից սկսած՝ երեսում է հէսց այն հանգամանը թից, որ մի քանի ցեղերի զրի ծանօթ խաները իրանց բանաշտեղծական արտադրութիւնները գրիթէ քայտաբար մայրենի լիզուով են յօրինում, քանի որ շատ քչելն են միայն վարժ պարուկերէն լեզուին ու չափին:

Թուրքը սահեծագործութիւնների մի քանիու միջինասիւական աշխարհաճայինացքի կնիքն են կրում իրանց վրայ, այսուպէս օրինակ ֆուզուլիցի և Ալլահ-Եարքի երկերը, որոնք թուրքմանների մէջն էլ իրանց ընթերցող են զանում, բարլառի թեթէ փոփոխութիւնից յետոյ: Մի քանիուն էլ սաստիկ նման են անատոլեան թուրքերի ժողովրդական բանաստեղծութեան: Մի էական բացառութիւն կազմում են միայն Քէօրօվլու անուան տակ ծանօթ հերոսական առաջնորդները, որոնց մասին ցածը խօսք է լինելու գետ, և որոնք մասամբ մի զարի հնութիւն ունեցող երկեր են լնզուն քիչ փոփոխած, մասամբ էլ կրում են իրանց վրայ զուտ թուրքան ժողովրդի ոգին նոր ժամանակի յաւելութիւններով:

Բերենք մի քանի օրինակներ այդ բանահիւսութիւնից: Առաջին երեքը հանում եմ իմ մի ձեռագիր երդարանից, որ գնել եմ ուղեղութեանու միջոցին Խօլի բազարում և մինչի այժմս էլ գանուում է մօտս:

### 1. Վարսակի

Էյ երենլիք բու գիւն բիր ջեմալ զէօրդիւմ  
Տեղելլի իմլասի օլ զատտ բենզէր  
Սիւմբիւլ մեզանինին լուհին օխըդըմ  
Փեստի քուզրեա եազմիշ այհետէ բենզէր

Այսինքն.

Ո՞վ մարդիկ, այսօր մի սիրուն եմ տեսել  
Աստուածային պատկերին էր ինքը նման,  
Իր հրաշալի զիւմբիւլ դէմքն եմ կարդացել  
Աստուծու ձեռքի գրածին էր նման:

### 2. Ղաղելի կալեան

Կալեան ալմիշ էլինէ էյ գէօզիւմ օլ եարի գէօր  
Հեմնեշին օլմուշ օթուրմուշ եար իլէն աղեարի զէօր  
Օդ զէ սու թօփրաք վէ ելզիր չունքի իսրատի նումուն

Էօգինի նիսրեա կայիրմիշ աղաւմի հուշիհարի դէօր:

Այսինքն.

Դալեանն տռել իր ձեռքը, ով աչքս, իմ եարըս տես,  
Եարիս հետ առած ու նստած ախոնեանըս տես,  
Կրակ ու ջուր, հողն ու հովը թող լինին վկայ,  
Ինձ օրինակ առած զգաստութիւնըս տես:

3. Վարսակի

Զանիմկէ բուգիւն ջանիլէ ջանան բիրիքիբգիր  
Հեմկեմ օլուրան գերդիլէ գերման բիրիքիբգիր  
Բեն բիւտրէի Փանուս օլուրան վաղի՛ աշըկգէ  
Եանդիրդի բենի նարէ վէ Փիգան բիրիքիբգիր

Այսինքն.

Հովումս այսօր հոգիս ու սէրն են միացել,  
Իրար մտերիս վիշտս ու դարմանն են միացել,  
Սիրոյ հովում մի մար ճրագէի ես,  
Վառեց ինձ, գանգատն ու հառաջն են միացել:

Ինչպէս երևում է այս բնագիրներից, Աղըրբէջանում  
խիստ տարածուած այս ստոնաւորների լեզուն զրեթէ բնաւ  
չի տարբերում օսմաններէնից, բացասութիւն է զուցէ մի քառ  
նի հնչական զանազանութիւնները, այլ և վարսակի (ոստա-  
նաւոր, զագել) բառը, որ միայն արևելեան թուրքերէնի մէջն է  
պատահում:

Արդ՝ ինչ վերաբերում է միենոյն ժամանակ աղգային հե-  
րոս ու ազգայն երգիչ Քէօրօղլուի երգերի էպիկ հաւաքածու-  
ին, գրանց ես լսել եմ շատ զանազան տեսած երգելիս թուր-  
բանների տափաստաններից սկսած մինչև Միջերկրուկան  
Ծովը, այդտեղ Քէօրօղլուն մերթ շիթէ, մերթ սիւննի, երբեմն  
տափաստանի որգի, երբեմն շահի ծառայութեանը, երբեմն էլ  
Պոլսի Սուլլանին իբրև սաղմելի, բայց միշտ իբրև նախատիզ  
նախկին թուրքի և իբրև ճշմարիտ ներկայացուցիչ թուրանի  
հերոսական ողու: Ամեն կակածից դուրս է, որ Շահ-Նամէի  
չափ տարածուած այդ հերոսական առասպելի հիմնական նիւթը  
միասին են բերել թուրքերը իրանց տափարակ նախանայրե-  
նիքից, 17-րդ դարի երկրորդ կիսում առաջացած չէ դա, ինչ-  
պէս ենթաղբում է Խօցկօ, որովհետեւ Քէօրօղլուի առասպելը

կայ և էօպրէգների մօտ և Խիվայի թուրքմանների, նոյնպէս սաստիկ տարածուած է Արալի տփինու Կասպից Ծովի հիւսիս-ային ափերում ապրող կազակների մէջ: Նաև նոյն կազմը ունեցող ու նոր ժամանակի ճնունդ «Ահմեդ Եռևուով»-ը, որից ևս նմուշներ եմ բերած իմ «Զագաստայերէն լեզուական ուսումնաւսիրութիւններ» աշխատաթեանս մէջ, կարծես թէ Քէօրօղլուի նմանութեամբ շինուած մի հնուեողութիւն է միայն:

Միջին Օքսուսից մինչև Սիրիա թուրքերի մէջ սաստիկ տարածուած այդ հերոսական առասպելը լեզուի տեսակէտից շատ չնչին արժէք ունի, բայց խիստ կարեոր է իրբու ազգային քարաքտէրիստիկ: Բնալրից թարգմանում ենք երկու փոքրիկ կտոր, որ վերաբերում է հերոսի գորշ-ձիուն (քիրատ):

## 1.

Քիրատովուզ զիւնեալար սահնա հարամդիր  
Ինան Քէօրօղլու.

Քիրատ քի էլինդէն զիտահ  
Վուր բաշինի Քէօրօղլու.

Քիրատի Ալահդան իստէ  
Քիրատիմ կոյրուզի զիւլդիստէ

Լյովինքն.

Առանց Քիրատի հարամ է քեզ աշխարհըս  
Հաւատու Քէօրօղլու.

Քիրատդ որ ձեռքից ելաւ  
Տուր զլիսիդ Քէօրօղլու.

Քիրատդ Աստծուց խնդրի  
Իր ողոչը վունչ վարդի:

## 2.

Թիւրքիստան իլինդէ էլի սալգիդիմ  
Իւմրիւմ նէն բեոլեղիգիմ Քիրատ զէլ.

Սէն զիւլմէնին բիր թէկիէնին էլինդէ  
Իւմրիւմ նէն բեոլեղիգիմ Քիրատ զէլ.

Քիր բատման զեմիրդէն չեքտիմ զեմինի  
Աջուկլան իւչ զիւն եմզզ հմինի,

Քիրկ աղաջղան բիլինդիրմէզ նեմինի  
Իւմրիւմ նէն բեոլեղիգիմ Քիրատ կէլ:

Եյսինըն.

Թուրքեատանի կողմերում քեզ ձեռք հմ' ձղել  
Կեամբավս սնուցած, Քիրանտ, նկ.  
Մի թշնամի թեքքի դու ձեռքն հս ընկել,  
Կեամբավս սնուցած Քիրանտ, նկ.  
Մի բաթման երկաթից շինել հմ սանձդ,  
Կերպ չես ուտում երեք օր սովածլզ.  
Բառառուն կանգուն է անսման գնացըզ  
Կեամբավս սնուցած, Քիրանտ նկ,

Քէօրօղլուի այդ երգերից զատ կան և հարստնեկան երգեր, աշխարհիկ երգեր, պարաբեներ, որոնք ապրում են իրանեան թուրքերի բերնում և որոնք ամբողջովին թուրքման այսինքն միջին-ասիական ծագում ունին: Իրանական ազգեցութիւնը ինչպէս մարմնի վրայ միայն արտաքին է եղած, այնպէս էլ պարսիկների զարաւոր ուսուցչութիւնը միայն երեսանց է ազգած թուրք վարք ու բարքին ու մտածելու եղանակին: Ծիի թուրքերի ու սրանց հիւսիս-արևելեան սիրնի եղբայրակիցների մէջ եղած կոյր թշնամութեան հակառակ, հակառակ այն անսահման կրօնական տափելութեան, որ այդ երկու աղանդները 400 տարիէ իսկեր բզըկառում է, նորից իրանի թուրքը շատ աւելի մօտ է իր սիջին-ասիացի ազգակցին, քան օսմանցին: Դրա համար էլ օսմանցին քննադատում ու ծաղրում է սրանց լեզուն ու բարքերի կոպտութիւնը, թէի վերջիններս ամաչելու ընաւ պէտք չունին, քանի որ բուն ազգագրական տհասակէտից հաւատարիմ են մնացել իրանց ծագումին, մի բան, որ օսմանցու համար իշարկէ ասել չի կարելի:

Անշուշտ իրանեան կոլտուրան թուրքերի բարքի ու մտածման վրայ էլ նըբացնող ազգեցութիւն է արած, որը մասնաւրապէս նկատելի է մի քանի ժողովրդական բանաօտեզծութիւնների մէջ, ուր համարական թուրք պարզ նուզան միանալով իրանեան արուեստին տառաջացրել է այնպիսի սիրուն երկեր, ինչպէս օրինակ հետեւեալն է.

1. Այ գոլանիր բատմակա  
Եռւղում գելիր հատմակա  
կլերիմի էօգրէնիրզիր  
Մէմէլերնի օյնատմակա:

2. Այ գէօգիւլիւմ, իլտիզիմ  
Գիլին գէօգիւլիւմ, կիզիմ  
Գափուզա գուրան օղլան  
Գել իչերի հալկիզիմ.

3. Արաքշինի հան գօհար  
Գէօթիւրիւր օ հան գօհար  
Բիր էօփիւշտիւն էօտիւրու  
Խըրեզիմէ կան քօհար:

4. Բու դակնիւ օ իւզիւնպէ  
Զիրան օսար դիւզիւնպէ  
Մին հարխմի տանիրըմ  
Քօջա հալ վար իւզիւնպէ:

### Այսինքն.

1. Լուսինն է մօա թեքուելու  
Քունս է եկել ընելու  
Չեռքերս մէկ վարժուել են  
Ատինքներդ խաղցընելու:

2. Լուսին չեմ ես, մասզ հմ ես,  
Աղջիկ եմ ես, հարս չեմ ես,  
Դու, դռանը կանգնած տղայ,  
Ներս ել, մհն-մհնակ եմ ես:

3. Արախջինը ծուռ է դնում  
Դընում էն կողքն է դնում  
Մի համբոյրիդ կարօտին  
Աիրտու արիւն է դնում:

4. Մի նշան իր երևին,  
Զէյրան դաշտի երեսին,  
Ես իմ եարըս կը ճանչնամ  
Խոշոր խալ կայ երեսին:

9. Իրանեան թուրքերի հաւանական թիւլ

Ինչ վերաբերում է իրանեան թուրքերի թուին, պարզ է  
Ճինելու ընթերցողին, որ այսահեղ խօսք լինել կարող է միայն

Ռուսիայի իշխանութեան տակ գտնուող Անդրկովկասեան թուրքերի մասին, քանի որ բուն նրանում ստատիստիկան կատարելապէս բացակայում է, ուր ճողովրդագրութիւն մինչև հիմա ոչ միայն չկայ, այսինքն երբէր փորձուած էլ չէ:

Ֆօն Զէյգլիցի տուած նորադոյն տեղիկութիւնների վրայ յենուելով Անդրկովկասի թուրքերի թիւը հետեւան է (19-րդ դարի վերջին քառորդ):

Դաշտանում . . . . .	19,700
Բարուի նահանգում . . .	304,800
Գոնձակի նահանգում . .	357,900
Երևանի նահանգում . .	213,900
Թիֆլիսի նահանգում . .	63,700
Զարաթալի շրջանում . .	15,700

ընդամենը 975,700 հողի

Այսինքն մօտ մի միլիոն, որի մէջ է հաշուած կրօնական ու ազգային տեսակէտից Աղբբէյաններին սերա ազգակից Կարա-փափախներին, մի կէս թափառական ժողովուրդ մօտ 6500 հոգի, որոնք ապրում են Ալեքսանդրապոլի ու Ղարուի մէտեղը: Այդ թուի մէջ է հաշուած նաև թիրեքմէնները, որոնք իրանց թուով առնուազն Կարա-փափախների չափ են ու թափառում են Ալբալցընայի ու Ալեքսանդրապոլի մէջիրը, թէև յաճախ նրանց աւագակային արշաւները հասնում են մինչև օսմանեան քիւրդերի հողը, որոնք զես նախնի ժամանակներից այդ կողմերի ահարկու աւագակներն են եղած: Ինչպէս իրանց անունիցն էլ յայսնի է (թիրեքմէ, աւելի ճիշտ թիրարեմէ, արարելին յոզնակի թիւրքման բառի) ծագումով թիւրքման են, զես ոչ շատ հին ժամանակներում, այսպէս, երեխ, 18-րդ դարում եկել են հարաւարեւմուան Կովկաս և ընդունել մերթ պարսկական, մերթ առև նպատակութիւնը նայելով պատմական պայմաններին: Սրանց թուրքման լինելը ապացուցանում է նախ իրանց լեզուն, որ շատ է մնան եօնուանների բարբառին, երկրորդ էլ իրանց կրօնը: Որոնք պատկանում են սիւննի աղանդին, թէև ամեն կողմից շրջապատուած են եղել շիբներով: Իրանց արտաքինով նման են Դիարբէրիրի շրջանում նստած թուրքմաններին:

Գալով բուն իրանի հողի վրայ ապրող թուրքերի թուին, շատ խախուտ ենթադրութիւններ կարող ենք միայն անել, որոնք սակայն իրանց հիմք ունին պատմութիւնն ու ժողովուրդի արդիւ

ազգագրական գրքը: Այսինքն՝ կասկած չկայ, որ Իրանի հիւ-  
սիսային մասը Մոնղոլների արշաւանքից սկսած մինչև օրս են-  
թակայ է եղել թուրք արարի գերիշխանութեան, թէև Խորա-  
սանի գլխաւոր քաղաքները, ինչպէս են Մեշեկ, Նիշաբուր,  
Սիրդեւար ևայլն, կարողացել են միշտ իրանց իրանական  
ընոյթը պահել: Այս գիտողութիւնը արել է Շարդէնը գեռ  
17-րդ դարում, և նոյնիսկ 15-րդ ու 16-րդ դարերի իտալացի  
ճանապարհորդները իրանց տուած տեղեկութիւնների մէջ ասել  
են նոյնը: Եւ որովհետեւ մինչև այժմ նոյնը մնացել է անփո-  
փոխ, կարծում ենք սիսալուած չենք չինի, եթէ Իրանի թուր-  
քերի ընդհանուր թիւը երկու միլիոն հաշուենք, որին կցիւով  
Անդրկովկասի թուրքերի մէկ միլիոնը, ընդամենը բոլոր ազգո-  
րէջանների թիւը կը դառնայ երկը միլիոն:

H. Vambery

## ԶՈՂԱԿԻՐԸ

Լէօն Փոստիէ՛ի

Ո՞չ կոյր և ոչ թեազուրկ ծնուր Փոքր Բիէս, այլ աւելի  
պէշտաւանց հայրենիքի. օրուան մը մէջ փողոցը կորսուած առար-  
կաներու շարքին կը պատկանէր: Աղքատախնամ վարչութիւնը  
վերցուց ան և զրկեց ստնառուի պողթօնական պղտիկ համայնքի  
մը մօտ, Պալիվօ, ուր համնելուն՝ ոչինչ զտան իր մասին ըսել,  
բայց միայն սա. «Երկրէն չ»:

Ուրիշ ընելիք բան չունենալուն՝ մեծցաւ: Երբ հինգ տա-  
րեկան եղաւ, գպրոց գրին զինքը՝ կարծես պատժելու. համար:  
Եր ընկերները զինքը ծեծելու և ձեռքէն գնդակները խիլու-  
մասին շատ լաւ կը համաձայնէին իրարու հետ: Զէր գանգա-  
տէր, կը զգար, որ մեծ յանցանքը իրենն էր. երկրէն չէր:

Երբ տասներեք տարեկան եղաւ, Աղքատախնամ Վարչու-  
թիւնը դադրեցուց անոր թոշակը, նկատի ունենալով, որ

կարող էր իր պէտքերը հոդալ. ավատ էր և կրնար ուզած բանին ձեռնարկել. ոչ մէկը կ'արգելէր զինքը դառնալ կալուածատէր կամ խմբագիր: Գնաց աշխատեցաւ ազարակներուն մէջ և շարունակեց բնակիլ իր սանտու ծնողըին մօս, որ ծերացած էին, և աղքատ, տկար ու ընտանիքէ լքուած լինելնուն՝ Փոքր Բիէռ քիչ ատենէն անոնց միակ նկացուկն եղաւ:

Այս ջանասէր, պարկեցաւ և սակաւապէտ տղուն խոկապէս միայն մէկ յանդիմանութիւն կարելի էր ընել. «Երկրէն չէր»:

Տասնըութը տարեկան եղաւ: Այս միջոցին անծանօթ պատճառներէ ծագած յաճախաղէպ հրգեհներ երկիրը կ'աւերելին: Դիւզացիները իրենց հունձքին, իրենց տանը համար վախի մէջ էին, և կը գողացին իրենց եղներուն վրայ. բայց անվասնութեան ու նուե ազահութեան պատճառով իրենց մէջ ոչ մէկը չէր համարձակել ապահովագրական պայմանագրութիւն մը կնքել:

Չորս համայնքներ էին աղէտէն հաւասարապէս վնասուածները, որոնք՝ մէկը միւսին խոսնուելով՝ կը կորսու էին հովիախին խորը, պարկին յատակը մոսցուած վիճակախաղ զընդակներու նման: Դիւզապէտութիւնները հաւաքուեցան և որոշեցին, որ անհրաժեշտ է ջրհանկիրներու ընկերութիւն մը կադմակերպել համայնքներու բնակիչներէն՝ անոնց թիւին համեմատականութեամբ: Պալիվօն՝ իր աննշան կարեորութեանը համար՝ մէկ մարդ միայն պիտի տար:

Սակայն զժուարութիւն մը մէջտեղ ելաւ: Այս գիւղին մէջ ամենքը իրենց շահին շատ կապուած մարդիկ էին. չէն ուզեր տեղէ շարժիլ, եթէ իրենց քալած ճամրուն ծայրը անմիջական օգուտ մը չաւնենացին: Ամէն մարդ շատ կը փափարէր, որ իր սաացուածքը հրգեհի գէտ ապահովուած լինի, բայց ոչ մէկը իր մէջ կոչում կը զգար ջրհոն գործածելու և ուրիշն ստացուածքը պաշտպանելու:

Բարեհազարար, Պալիվօնի գիւղապետը կտրուկ բնաւութեան տէր մէկն էր, և համոզումի ածելիով զժուարութեան հանգոյցը քակից: Դիմեց Փոքր Բիէռին:

—Տղաս, զուն երկրէն չես, ըստ, բայց ոչինչ, ատոք վրայ այլևս չմտածենք. դնւն պիտի ըլլատ համայնքին ջրհանկիրը: Երկար ատենէ ի վեր մեր հողին վրայ կ'ապրիս և մինչե հիմա քեզմէ շատ զժուածելու պատճառ տուած չես. ցոյց տուը, որ գուն ըոլորովին արժանաւոր աղայ մըն ես: Պէտք է մարզ իր նմաններուն օգտակար ըլլայ, պէտք չէ որ փակուի իր անձնասիրութեանը մէջ, անձնուիրութիւնը առաքինութիւններուն ամենէն զեղեցիկն է...: Բարձրահասակ ես և լսւական լւա-

կտղմ ունիս, դրացի համայնքներու տղոցը մէջ դուե աչքի զարնող մէկը պիտի լինիս, ու մենք պիտի կրնանք հպարտանալ մեր ջրհանկիրովը. քեզ համագեւստ ալ շինել կու տանք...: Դէ գնա, բոլոր բնակիչներուն համակրանքը քեզ հետ է. ապահով եղիր, որ հիմակուընէ իսկ յարգանք և երախտազիտութիւն ու նինք մեր ջրհանկիրին համար: Արդէն աներկրայ եմ, որ չպիտի թերանաս բանի մը արժանաւոր գործեր լինէ: Կարող ես մեր վրայ վստահիլ բարեկամո, դիտես, որ կրնանք խնդրել և ստանալ քեզ համար քաջիրուն մրցանակը:

Եւ Փոքր Բիէս ստացու: մեծկալ ստղաւարա մը, որ համազգեստը կը կազմէր:

Փոքր Բիէս հրդեհներու մէջ առաջին ամենավտանգուոր տեղը կ'երենար: Այս բանը բնական կը համարուէր, երկրէն չէր, կարանցներու ոչինչ չունէր. ոչ մէկը իր մասին կը դոզար, օնինաւորապէս ոչ ծնողը ունէր և ոչ բարեկամներ Միւս ջրհանկիրները իմաստուն շրջանայեցութեամբ մը կը կտոսարէին իրանց պարտականութիւնը. մարդ իր ընտանիքին նուիլուած է, և պէտք չէ խնճիք պէս վասնգի մէջ նետէ ինրդինը՝ երբ իր եսեր զուակներ և ինչքեր ունի:

Խրախոյաներ չէին պակսեր Պալիկօյի ջրհանկիրին. տեղիկալը աչքէ չէր կորսնցնէր զինը և շարունակ էշ պոսար, «Բայց Փոքր Բիէս վազէ, տղաս»:

Ու օրին մէկը, Փոքր Բիէս տանիքէ մը հնոցին մէջ ինկաւ և հաւի մը պէս խորովուեցաւ:

Յաջորդ օրը առաւօտուն կը պատմէին արկածը ամէն տեղ, պանդուներուն մէջ իրարու ետեին կանծելով. և, ամեն տեղ, եղրակացութիւնը նոյնն էր. «Քայլ և այնպէս երկրէն չէր»: Այդ տեսակ հաւաստում մը պատահարը նուազ ախուր և զոհը հուազ արգահատելի կը զարձնէր:

Յուղարկաւորութեան օրը ձախող օր մը եղաւ, քահանան պոտեկ ունէր կատարելիք՝ յուղարկաւորական արարողութենէն անմիջապէս ետքը, ու մինչեւ զիրեկմանատուն չկրցաւ մեռնելին լինկերանալ, գիւղապես հիւմանդ էր, մօտակայ գիւղերու ջրհանկիրները մրցումի կ'երթային. օղնականը հարսնիք գնացած էր, դաշտային պահակը գտաւառ կանչուած էր, նամակարերը իր պաշտօնը կը կատարէր, ուսուցիչը զաս կու տար. գիւղապետական խօրհրդականներէն մէկ քանին շուկայ գնացեր էին և միւսները շատ լուրջ և սախլողական գործերով էին զբաղած, ստատու ծնողը անդամալոյցներ էին, այն քանի մը բնակիչները՝ որ կրնային երթաւլ՝ իրարու վրայ յոյս դրին. և վերջապէս ոչ մէկը տեղին շշարժեցաւ:

Յուղարկաւորութեան արարողութենէն ետքը չորս մարդ ջրհանկիրին գագաղը վերցուցին և, առանձին, ուղղուեցան դէպի գերեզմանատունը, կարծես թէ անծանօթի մը մարմինը փոխազրէին։ Կէս օր էր լնկճող արել կը ստիպէր մարզիկ շուքին ապաւինիլ, դադաղակիրները միայն փոշի կը հանէին իրենց ծանր ոտքերով։

Գերեզմանատունը եկեղեցիէն հեռու էր, կէս ճամբան՝ պատգարակը գետին դրին և կանգ առին՝ շունչ քաշելու համար։ —Այ, անպիտան, ի՞նչքան ծանր է, բայտ անոնցմէ մէկը։ —Կարժէ՞ արգեօք այսքան յոգնիլ տղու մը համար, որ երկրէն չէ, պատասխանեց ուրիշ մը։

Կին մը, գուրսը աղմուկ լսելով, տանը սեմին վրայ երեւցաւ, երեսը խաչ հանեց և շտապով ներս մտաւ։

Մարգիկ լուս կը հեային։ Արեագարձային տաքութեան տակ ճամբան կ'երկարէր՝ ճերմակ ու ամայի։ Ամէն տեղ գուռները և փեղկերը վիակ էին։ Խոր լոռութիւն մը, անհունութեան լոռութիւն մը կը տիրէր զաշտին վրայ։ Օդը բուրումնաւէտ էր. թիթեանիկներ ինքինքնին կը դիտէին մեռնողին սազաւարտին մէջ, որ սպիտակ ծածկոյթին վրայ գրուած էր։ Շուրին մէջ, զուան մը անկիւնը, մազերը թափած ծեր շուն մը կեցած էր և խորապէս կը մտածէր։

Քանի մը բոսկէ ետքը մեռելակիրները իրենց բեռը վերցուցին՝ գործը շուա լրացնելու հապճեպով։ Շունը կը դիտէր. նայեցաւ աջ ու ձախ, և միայն ու միայն անողոք արել տեսոււ։ Այն ատեն այս քոսոտ, անդամալոյծ կենդանին ցաւագինօրէն կանգնեցաւ, և ոտքերը քարշ տալով, ինքնամփոփ, գլուխը ծուած, հետևեցաւ գագաղին մինչև գերեզմանատուն՝ մարդկութեան յարզանը մը ընելու համար։

Ֆանսներէնէ թարգմ.

Ա. Շահէն

# ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

(Մարտնչող հրապարակախոս)

## I

Ժամանակը զործիչների ամենատաճառաչառ դատաւորն է. միայն ընտքիաներն են զիմանում նրա արդար գատաստանին: Անցնում են տարիներ, և զործիչների մեծամասնութիւնը մատնում է մոռացութեան կամ նրանց շնորհուում է պատմութեան արխիվում մի համեստ անկիւն. միայն ընտրհանութեան է յաջողուում երկար ժամանակ յուզել մոքերը, ոգնորել մեղ:

Մեր ազգաւիկ գրականութեան մէջ այդ ընտրեալներից մէկը, անկասկած, Միքայէլ Նալբանդեանցն է:

Կարճատե էր նրա գործունէութիւնը, բայց բովանդակալից էր և հրանանգիչ, նա փայլեց մեր գրականական հորիզոնում, ինչպէս մի պայծառ աստղ, փայլեց լուսավառ, բայց և շուտ մարեց, նո վախճանուեց երեսուն վեց տարեկան հասակում, երբ դեռ լիովին չէր արտայայտուել նրա հոգեսր ոյժերի ամբողջ կորով:

Մ. Նալբանդեանցը վայթսունական թուականների ամենաբնորոշ զործիչներից մէկն է, համախոհ և զինակից Ս. Նալբանդեանցի, տաղանդաւոր աշխատակից «Հիւսիսափայլ» ամսագրի, նա հաճուկ եկաւ այն ժամանակ, երբ Ռուսաստանում արգելուած չէր յուսալ և երաղել, երբ ոռւս մտածողները, գուղափարական տեսնդով բռնուած՝ խորհելիս են եղել իրանց հայրենիքի մտաւոր-բարուական վերածնութեան մասին. նրանց վեհ յոյզերը, ոռւս հասարակական մտքի բարոյական վերացումը չէին կարող չազգել և մեր սակաւաթիւ ինտելիցիանցի այի վրայ, որ ստանում էր իր կրթութիւնը ռուսաց համալսարաններում. նա էլ է սկսում երազել աւելի լաւ ապօգայի մասին, նա էլ է մտածում բարեփոխել իր հայրենիքի տիտոր

ներկան, նա էլ աշխատում է լոյս և պիտութիւն տարածել հայրենակիցների մէջ, ժանգից և բորբոսնից մաքրել ազգային միտքը:

Մ. Նալբանդեանցը իր կոչումով՝ զբականագէտ հրապարակախօս է, իրքի զբականական խօսքի վարպետ նա քիչ մըրցակիցներ ուներ. իրքի հրապարակախօս նա անզուգական էր ժամանակակիցների մէջ իր մերձաւոր ծանօթութեամբ մայրենի իրականութեան հետ, իր խորաթափանց վերլուծութեամբ մեր կեանքի երեսիթների, իր լոյն բժբանումով ազգային-հառարակական խնդիրների. նա առաջաւոր հրապարակախօս էր, որ իւրացրել էր իր ժամանակի լաւագոյն գաղափարները, նա մի տեսակ ժողովրդական տրիբուն էր, ճարտար հռեատոր, որ կախարդում էր ժամանակակիցներին իր ազգու և կրտկու լեզուով, իր մոժերի ներդաշնակ և տրամարտանական կազմութեամբ նրա հոգեոր կերպարանները բնորչւում է նրա մարիքնազատական ուղղութեամբ. նու ամեն ինչ վերլուծում է, բննութեան բովից է անցկացնում. նա, կարծես, ծնուռած լիներ զատափետելու հին հասկացողութիւնները, կեանքի խորիու հիմքերը, մարդկանց թուլութիւնները: Նա օրդանական զրուանք էր զբում դէպի այն ամենը, որ աւանդի կամ չառագուած ձշմարտութեան բնաւորութիւն էր կրում. նրա զաւանանքն էր՝ զարթեցնել թմբած ժողովուրզը զարտաւոր քնից, բարձրացնել նրա քաղաքացիական զիտակցութիւնը, ցոյց տալ նրան այն ձանապարհները, որոնք տանում են դէպի լուսաւոր նւրապան և սրա քաղաքակրթութիւնը: Ձշմարտութիւնը մի սրբութիւն է, որին նա երկրպագում է. նա զիտէ, որ ձշմարտութեան ձանապարհը փշու է և նրա սպասաւորները միշտ հոլածանքի են ենթարկուել, լայց նա ուխտել է «սուութեան և խարերայութեան զեր գուրա վանել Հայաստանի նուիրական աւերակներից և կանգնեցնել այնտեղ ձշմարտութեան գրօշակը», ուխտել է «լոյսի տակ քննել մեր ազգային գործերը». նա չէ կատենում «խուարի վարագուրով ծածկել մեր վէրքերը, որոնք այսքան տարի թաքուն մնալով բժիշկներից կարօտ են այժմ՝ մեծամեծ վիրարուժական հնարների»:

Նա զիտէ, որ «իւր քարոզած ձշմարտութիւնը գուցէ կըտրասում է ազգի սիրաը, լայց այդ սուրը միտակ հնարն է փըտած և ճարակած խոցը ասողջ մասերից բաժանելու համար»: Նա խարազանում է ամեն ինչ, որ կաշկանզում է հասարակական միտքը, թշնամի է կեղծ ազգասիրութեան, պարտը և հա-

մարում «բարոյական երկաթ ու կրակ գործ դնել, վիրաբուժական գարման մատուցանել ժողովրդին, հրապարակել մեր ախտերը, որ ազգը տեսնէ իր կեղոքը, զգուի, գարշի և խնամք տանէ մաքրուելու»:

Խիստ են այն միջոցները, որոնցով նա ուզում էր բռնձկը ազգի ցաւերը, բայց լուսամիտ անձը այլապէս չէր կարող ծառայել մայրենի բարիքին:

Մեր կեսնիքը յիմնական թուականներում յուսահատեցուցիչ պատկեր էր ներկայացնում. ամեն տեղ խաւարի բռնապետութիւնը, որ ոչ միայն անկարող էր վարել ազգի լուսաւորութեան գործը, այլ նոյնիսկ հովուել իր հօտը, բարոյապէս դաստիարակել նրան. խաւար էին մեծատուններն ու փողաւոր «աղանելը», սարկութեան այդ հարազտ զաւաները, որոնք, զրաւելով հասարակական կեսնիքի զեկը՝ ճնշում էին ազատ միաբը, բռնակալ իշխանաւոր էին գարձել ժողովրդի վրայ. խաւար էր բուն ժողովուրդը, անխնամ և անպաշտապան. խաւար էր, վերջապէս, և ազգային լրագրութիւնը, որ պապինական զրոյցներով էր զաստիարակում հասարակութիւնը, մեծաւորներին էր զրուատում, մոլեսնագութիւնը էր քարոզում: Լրագրական զործիչները գարձրել էին մատուլը ազգային սնապարծութեան և հաճոյախօսութեան գործիք. նրանց շնորհիւ գրականութիւնը կանոնած էր մեծատուն մեկնաների նախատինեակում, իբրև ձանձրոյթ բերող ինդրատու: Մ. Նալբանդեանցը բարաքացիական յանցանը է համարում մակել աչքերը այն տխուր պատկերի առաջ, թէ ինչպէս ագգը խարխատում է տպիառութեան խաւարի մէջ. նա չի ուզում «վարագութիւն ճշմարտութիւնը աշխարհին հաճոյանալու համար», նա զինուորում է հասարակութեան բարձր խաւարի և այն աւանդապահ հրապարակախօսների դէմ, որոնք ճնշում են անկախ մոքի ամեն մի արտայայտութիւն. նա չափազանց շիտակ է և ուղղամիտ, որ ասպազրական խոռը ծառոյեցնէ մեծատունների հաճոյըին. նա շանթահարում է որանց վարթառ և գիշ կեանքը, բարոյական ոչնչութիւնը և մաքերի ուղղիչ լինելու յաւակնութիւնը: Անարդ սիւնին է բնեսում նա և հայ վաճառականին և բացարձակ անուանում է նրան «մաքսանենգ, խարերայ, կեղեքիչ թոյլերի և անողաշտապանների աշրեան գնով կարողութիւն ձեռք բերող, հասարակ «զուքանչի», որ զուըլ է ընկերական միութեամբ գործելու շնորհքից, իր երկրի առեսուրը աւելի լայն, արգիւնաւէտ հողի վերայ զնելու զաղափարից: Իր համախոն Մ. Նալբանդեանցի նման նա էլ

բողոքում է կրօնական մոլեռանդութեան քարոզողների դէմ, ուրոնց աչքում «կրօնը միայն արտաքին ծէսեր են»:

Բարոսա հրապարակախօսի այս մարակով ուղղութիւնը, նրա «անպատկառ» լեզուն, նրա խռովայոյզ մտքերն ու հայացքները իրարանցում են գցում հասարակութեան և լրագրութեան մէջ: Վրդովուած է հասարակութիւնը, որ ապրում էր հնութեան աւանդներով և միայն քաղցր հառեր էր լսում տիրող կ'օրգերի մասին. նա շօշափուած է համարում իր արժանաւորութիւնը, իր կրօնական զգացմունքը. ոտքի են կանոնում խայթուած պահպանողականները, վայնասուն են հանում աղբային պատուի պաշտպոնները: Նրանց բերան «Մեզու Հայաստանի»: յանձին իր աշխատակից իսահակեանցի շանթեր է արձակում խռովարար հրապարակախօսի դէմ, ազգի «նախատիչ» ու զրաբարիչ» է հոչակում նրան, ողբածայն կանչելով. «այս թնչ զատատառն է, որ մեր լեզուագէտները գործ են դնում. այս թնչ հայրենասիրութիւն է, որ կացին և մոնղաղ վեր առած, լեզուները սրած՝ ազգը պախարակելու վերայ են և վերը վերըի վրայ զնելու... մինչև երբ պէտք է նախատինքի, բամբասանքի և զրաբարտութեան պարսաբարեր և թուք ու մուր արձակուեն նրա վրայ. ով պարոններ, ազգը այս աեսակ կրթութիւն չի ստանալ, ազգը վայ ու վագլախով իրա կորուսը չի զանիլ. մանկութիւնը սիրում է գգուանք, փափկութիւն, սիրում է փաղաքշանք»...

Պարզ է, որ իրար դէմ արշաւել են երկու հակառակ սկզբունքների ներկայացուցիչներ. մէկը օրօրք է ասում ազգը ախորժ թմրութեան մէջ պահելու, միւսը՝ թմրուկ է զարկում նրան կորսատարեր բնից արթնացնելու. մէկը փաղաքշանքով է ուղում կրթել ստրկութեան զարերում քարերում քարացած ազգը, միւսը մտրակով է մտածում կենդանացնել նրա ըթացած զգայնութիւնը և մղել նրան զէպի լոյս:

Կարող է արգեօր խօսք լինել այն մասին, թէ այս երկու ուղղութիւններից որն աւելի նպատակայարժար էր մի տպէտ ազգի առաջխաղացութեան համար: Անկասկած, ոչ: Առաջազիւմութեան գործը միշտ պահանջում է խիստ միջոցներ, մանաւանդ, յետամնաց ազգերի մէջ. ոչ մի տպէտ ազգ չի լուսաւորուել օրօրքով և գգուանքով. ոս մի տարբական ճշմարտութիւն է: Բայց չի կարելի ժխտել և այն, որ ազգային շահերի անկեղծ սպասաւոր նալբանդեանցը յաճախ անարդարացի էր զէպի իր հակառակորդները. իր բանակուուի մէջ նրանց հետ նա անզուսպ էր ու կրքոտ՝ շօշափում էր նրանց պատիւը, անուանարկում էր նրանց, և այդպիսով գրականական պայրաբը

դարձնում էր յաճախ անձնական կույտ. կուսակցական թափը երբեմն հասցնում է նրան անսերելի սոլեռանդութեան դէալի արքի գործողութիւնները. նա չի կարող հաշառել այն բանի հետ, որ հակառակորդ Զերքէզեանը քննադատել է զիտնական էմինի հայերէն քերականութիւն սուսաց լրագրում. նա «անսպատշաճութիւն է համարում, որ հայերէն գործի վրայ գրել են օտար լիզուով». նա պարսաւում է և Խուդաբաշեանցին, որ թոյլ է տուել իրան սուսերէն գրել հայոց պատմութիւնը: Ինչ ասել կուզէ, որ այս միակողմանի հայեացըը չէր վայելում առաջաւոր հրապարակախօսին, ոտք բանակուտական յափշտակութիւն էր. կուսակցական անհամբերողութիւն, մի գիծ, որ յատուկ է նրան և նրա գրչին:

## II

Աղմակալից էր Մ. Նալբանդեանցի հրապարակախօսութեան նախերգանքը, խիստ բացառական էր նրա վերաբերումը մեր կեանքին, բայց նրա գրականական գործունելութիւնը չի սահմանափակում հասարակական խոցերի մերկացումով, ամբաղինուող հասկացողութիւններն մարակելով. լոկ բացասականութիւնը չի կարող բարոյապէս զոհացնել նրան. նա գրական գործիչ է, որ բուռն եռանուով պիտի մասնակցի հասարակական խոցիբների լուծման հանդիսին:

Նրա զինակից Մ. Նաղարեանցը աշխարհաբարի դատ է սկսում: Մարակող հրապարակախօսը չի կարող լուս մնալ այդ լուրջ խնդրի տուած, նա պաշտպանում է աշխարհիկ լեզուի քաղաքացիական իրաւունքները, որովհետեւ նրա իդէալն է ստեղծել այնպիսի գրականութիւն, որ օրգանապէս կապուած լինի ժողովրդի հետ, ծառայէ ազգի պէտքերին, դաստիարակէ նրան իսկ զա հնարաւոր է այն դէպում, երբ նրա հետ խուն նրան հասկանալի լիզուով: Հին լեզուն հին կեանքի արգասիք է. նա չի կարող նոր հատկացողութիւնների թարգմանը լինել. նրան չի կարելի արտեստապէս պատրաստել նոր կեանքին, որովհետեւ նա գաղաքել է կենսունակ լինելուց և այլեւ չի հաճապատասխանում ժամանակի ողուն. «Լեզուն մի որևէիցէ վարդապետութիւն չէ. ամենավատթար վարդապետութիւնը կըարելի է տարածել» և նա, հայելով իր յատկութեանը՝ կը ճարէ այստեղ ու այնտեղ իրեն հետեղներ. բայց լեզուն կարելի չէ քարոզել. ուզես առ բոլոր ազգը և նոտեցը աշակերտական սեղանների վերայ, որ անկարելի բան է, զարձեալ աշխատանքդ անօպուտ կը լինի: Լեզուի մշտ-

կութեան ասաջին խնդիրը այն պէտք է լինի, որ խնամք տարուի այդ լեզուն դիւրըմբնելի դործիք անելու և գաւառաշընակի համար ճառչելի, և այդպէս դիտութեանց համար ճառնապարհ բանալու»:

Այսպէս է գաւում Նալբանդեանցը լեզուի մասին, այսպէս է փաստաբանում նա աշխարհաբարի իրաւունքները: Նա տուեց իր ժամանակի համար օրինակելի լեզու, նա գրում էր այնպէս, ինչպէս խօսում էր, և չէր ընկճում զբարարից, որա քերտկանական ճարտար հիւսուածքից. նա ճիգ է թափում իր մթքի արգասիքը ճառչելի զարձնելու ընթերցողներին, օգտուելով կենդանի բարբառներից և մշակելով նրանց իր ստեղծագործական արհեստանոցում. նա չի մտածում զբականական լեզուն գարձնել խօսակցական լեզու, այդ անհնարին է նոյն իսկ ամենաքաղաքակիրթ ազգերի համար. նա միայն ջանում է, որ զբականական խօսքը հասկանալի լինի ժաղովրդին և ծառայի սրա հոգեոր շահերին, որ գրականութիւնը ժողովրդականացուի, և այդ ջանքը պսակուեց աջողութեամբ. աշխարհաբարը տարաւ յաղթանակը և մի անգամ ընդ միշտ հասաւատուեց մեր գրականական անդաստանում:

Բայց հրապարակի վրայ զրուած էին և ուրիշ կարեոր խնդիրներ. ժողովուրդը և նրա լուսաւորութեան գործը զբարդեցնում էր լուսամիտ մարդկանց. ժամանակի ոգին պահանջում էր պարտաճանաչութիւն դէպի այդ մուացուած տարրը, զործունեայ մասնակցութիւն նրա չարքաշ կեանքի բարուորման մէջ: Կարմիր էր արդեօք այս կոչին արձագանք չտալ այն հրապարակախօսը, որ մինչեւ ոսկորների ծուծը տողորուած էր ժողովրդասիրութեամբ, որի համար ժողովուրդը և նրա մտաւոր-բարոյական պէտքերը մի տեսակ հաւատոյ հանդանակ էր. նա համոզուած է, որ «ազգութեան հաստարանը և լծակը հասարակ ժողովուրդն է, որ «մի ազգ, որքան էլ հարուստ լինի երեկի մարդկերով, այնուամենայնիւ այդ ազգի ազգութեան մերենան շարժւում է հասարակ ժողովրդի վրայ, սա է այդ մեքենայի առանցքը, լծակը և հաստարանը». նա համոզուած է, որ «լուսաւոր մարդիկ պարտական են միայն ուղղութիւն, զարկ և ընթացք տալ այդ մեքենային»: Երբ մերենան ջարդուած է, նրա գործիքները ցիր ու ցան են ու ժանգու, նա, անկասկած, ամբողջութիւն չի ներկայացնում, ուրեմն և չի կարող շարժուել, գործ կատարել, նրան հարկաւոր է վերանորոգել, գտել, թարմացնել, իսկ «այդ հնարաւոր է միայն, գիտակցութիւն տնկելով ժողովրդի մէջ, իսկ գիտակցութիւնը բղիում է լուսաւորութիւնից»:

Ազգային դպրոցը ամենակարեռը հարցն է նրա աչքում։ Նա ազգային չի ճանաչում «այն դպրոցը,ուր երբեմն խօսում են հայերէն»։ Նա տում է, որ, «եթէ դպրոցի խորհուրդն անպատճել համաձայն չեն ազգի էական օգուտներին, եթէ նա մի մեքենայ է՝ հայի զաւակի մէջ օտարութիւն պատռւասելու, լաւ է մանուկներին տպէտ հայ մեալ, բան թէ գառնալ թերակիրթ չնայ»։ Նա պնդում է, թէ օտար միջավայրում ստացած կրթուէիւնը խորթացնում է հարազատ կեանքից, թէ «ազգային դպրոցները պարտական են բանալ մանուկների միտքը, տնկել նոցա սրտում հայութեան կրակը», թէ մանուկները պիտի կըրթուեն մայրենի լեզուով մայրենի հողի վրայ, որ նրանք չփոխեն իրանց բնական առանձնայատկութիւնները։

Բազմակողմանի է քննում նա ազգային լուսաւորութեան խնդիրը. նա էլ Ս. Նազարեանցի նման յայտարարում է այն ոկզրունքը, որ աղքը ինք պէտք է հոգայ իր պէտքերը, իր կրթութեան գործը և ոչ ապաւինի հոգեորականներին, որ ինքնագործունէութիւնը և ինքնամբամութիւնը առաջադիմութեան լրաւպոյն դրաւականն է. «Լուսաւորութեան պատճառը պէտք է կառուցուի ամրող ազգի ձեռքով. լուսաւորութեան հանդէսուն շատ ներ է հոգեուր մարդերի առաջակը, թող հոգեորականները պարապէն աստուածային բանի վարդապետութեամբ, բայց աղքային լուսաւորութիւնը պէտք է առաջանայ բուն ազգի հազարարձութեամբ, ոչ կաթուզիկոսը, ոչ առաջնորդները պէտք է լինին լուսաւորութեան անտեսներ և սպասաւորներ. ինքը աղքը պարապէն է մի օրհնեալ և սուրբ հունա հնձել. մենք չնորհակալ կը լինինք հոգեորներից, եթէ նոքա աշխատեն արժանաւոր քահանայը պատրաստելու և բարոյապէս դաստիարակել իրանց հօտը»։

Այս են նրան զեկավարող հայեացքները դպրոցական խնդրի վերաբերմամբ, բայց նա ոչ պակաս կարևորութէւն է տալիս ընտանեկան գաստիարակութեան, նա լաւ հասկանում է, որ ազգային լուսաւորութիւնը այն ժամանակ կարող է արդիւնաւէտ լինել, երբ ընտանիքը գիտակցում է իր սերտ կապը զպրոցի հեա և աշխատում է նրա արժանաւոր օգնականը լինել. Նա ճիգ է թափում ներշնչել այդ զիտակցութիւնը հայ ծնողներին, բացատրում է նրանց, որ շրջապատը զրոշմում է երեխայի վրայ իր վատ կամ լաւ կնիքը, որ ընտանեկան գաստիարակութիւնն է բարոյապէս ձևում և կերպարանում նրան. «Ծնողական գաստիարակութիւնը ստանում է երեխան զլիսաւրապէս իր մօր ձեռքով, ուստի հարկաւոր է մեծ ուշադրութիւն գարձնել աղջիկ զաւակների գաստիարակութեան վը».

բայ՝ բանագէտ և առաքինի մայրել պատրաստելու համար՝ առանց այս հոգաբարձութեան սուտ է տմենայն կատարեալ լուսաւորութիւն մի ազգի. մայրը կաթից յետոյ պէտքէ կերակրէ իր զաւակը հոգեսր կերակուրներով, ապա գպրոցը կարող է ասաջայնել մի այգախիսի աղայի մէջ ցանկալի հետեանրը». բաւական չէ կերակրել հազցնել և ամուսնացնել զաւակներին. «Ճնողի հոգսը և փոյթը պէտք է լինի զաստիարակել նրանց, բարոյականութեան և առաքինութեան կենդանի օրինակ լինել երեխան մի հայելի է, որի մէջ ցոլանում է այն, ինչ որ ցոյց կը տառ. նա միենոյն է իրան ըլջապատող արտաքին աշխարհի և ընկերութեան ձեռքում, ինչպէս կաւը բըռութի ձեռքում, որին նա կարող է ամենայն ձև տալ», հոգատար և պարտաճանաչ մայրը պէտք է շատ աշխատորչ լինի, կշռի և չափի իր ամեն մի գործողութիւնը. մօր իրատներն ու քարոզները չպէտք է հակասեն նրա կեանքին, ապա թէ ոչ երեխան խալոյն կը նկատէ խօսրի և գործի հակասակութիւնը, և այդ կը դառնայ գայթոկղութեան քար, ճնողների մի անզգուշութիւն, մի անտեղի գործողութիւն, որ կատարում է երեխայի առաջ, «Նման է մի կայծի, որ՝ բնկներով գիւրավառ նիւթի մէջ կարող է մի մէծ հրդեհի կամ աւերուածքի պատճառ լինել», մայրը երեխայի գաստիարակչունին է, նրա բարոյական կազմակերպութեան զեկավարը և աղբիւլը. մայրն է պատրաստում գոլրոցական կրթութեան արգասաւոր կամ վնասակար հողը:

Նրա խորհրդագութիւնները ընտանիկան զաստիարակութեան մասին մի տեսակ յայտնութիւն էր ժամանակակիցների համար, ուստանելի են նրանք և մեր օրերում, երբ նոյնիսակ կը թուած ճնողները հետո են իրանց ճնողական պարտականութիւնները գիտակցելուց. Խորատէս ներշնչուելով ապագայ ուրուղի դաստիարակութեան խնդրով՝ նա դիմում է հայ կնոջ, յիշեցնում է նրան ճնողերորդ գարի փափկասունների առաքինութիւնները, որանց անձնուրաց զործերը, բացատրում է, որ կինը այլիս ստրուկ չէ և ոչ ապրանք կամ կահ-կարասիք, նա իր ամուսնու հաւասար ընկերն է, նա մարդ է և ոչ, ինչպէս առաջ, «ուստանայ կամ հրեշտակ», որ հայ կինը մէծ կատարելիք ունի ունի գաստիարակել զաւակներին և տալ ազգին պիտանի քաղաքացիներ. նա ասում է նրանց. «ապգը աւերուել է, պէտք է նրան վերանորոգի. ազգը թմրել է խոր քնով, պէտք է նրան զարթեցնել. մերկացըք ձեր վրայից անհոգութեան զատապարտելի քօղը, հագէք հայութիւնը ոչ որպէս քրինօլին, այլ որպէս գոյն ձեր մարմնի. չենք պահանջում ձեռնից այն բնատանէկան զատապարտելութիւնը, որ պահանջելի

է երազական կանանցից, տուէք ձեր զաւակներին խստակ կաթի հետ նախ՝ մեր լեզուն, և երկրորդ՝ հոգով և ուղրուով հայութիւն և երրորդ՝ անձնազո՞ն սէր գէպի աղջութիւնը և մեր ազատ կրօնը»:

Նրա աչքից չի խուսափում ոչ մի հանգամանք, որ կարող է նպաստել լուսաւորութեան գործին, նա գիտէ, որ մի ազգի կրթութեան համար ազգային պատմութիւնը ամենազօրեղ տարրից մէկն է. բաւական չէ ասել, թէ հարկաւոր է ուսուցանել ժողովրդին և հայ մանուկներին հայոց պատմութիւն. պէտք է նրան զրել քննադատութեան բովից անցկացնելով աղջիւրները, գտնել նոր նիւթեր, ստուգել նրանց՝ վաւերականը անվաւերից, «իսկ զա մի լուրջ զիտական նպատակ է, որ կարելի է իրագործել համախմբուած ոյժերով», և ահա նա իրական միջոց է առաջարկում՝ կազմել մի ընկերութիւն, որը «հոգաբար հին ձեռագիրների տոպագրութիւնը. հաւաքէր ազգային պատմութեան կամ ժամանակագրութեան վերաբերեալ յիշատակներ, որը զրազուէր պեղումներով, ուսումնասիրէր հայութեան բեկորները, հնութիւնները» և ասպա «մարդիկ ընտրէր գրելու ազգային և եկեղեցական պատմութիւնները եղած և նուրագիւտ նիւթերի հիման վերայ, զրել տաճկանայ և սասահայ բարաններով և ատրածել ժողովրդի մէջ»:

Ժամանակի ստեղծագործող աշխատանքը, ազգաշինութեան վեհ գաղափարը զարգար չեն առլիո մտածող հրապարակախոսին. նա անազում է մեր իրականութիւնը, թափանցում է մեր կեանքի բոլոր անկիւնները, մտածում է ազգը առաջ մզելու, նրա ցաւերին գեղ ու զարման գտնելու մասին. նա հաւատում է աղջի ոյժերին, նրա ինքնազործունէութեանը, միայն հարկաւոր է զարթեցնել նրա մէջ կարիքների զիտակցութիւնը, ներշնչուել նրա հոգեոր շահերով, աշխատել ճանաչելու նրան, ուսումնասիրէ նրա «աղնութեական վիճակը» իմանալ մեր թիւը, որքանութիւնը, որ հարկադրուած չլինենք ոռւս ու մուս ծանօթութիւններ մուրալ օտարը հեղինակներից կամ ճանապարհորդներից. նա ճանաչում է ժողովրդին, նրա կեանքը, զիտի նրա պէտքերը, իրական պահանջները, գիտի, որ նրա գոյաւթեան գլխաւոր աղբիւրը, նրա կերակրիչ մայրը հոգն է, որ նա երկրագործ ժողովուրդ է, ուստի քարոզում է զիւղաւոներական ուսում, որ «երկրագործութիւնը ծաղկի մեր մէջ և առաւ հունձեր տայ նրա մշակներին»: Նա պակաս չէ ճանաչում և հայ վաճառականին, որ մի մանրավաճար է, մի ողործելի միջնորդ արւորդնաբերողների և սպասողների մէջ, ուստի արծարծում է առեւրական ուսման ինդիրը, որ «առեւտուրը Յունուար, 1906.

հայերի մէջ զլուի հաստատուն հիմքերի վրայ», որ հայ վաճառականը ծառայէ ոչ միայն իր գրամնին գործելով «իբրև խարդախ վերեղակ», այլ և երկրի շահերին, հիմնելով ընկերութիւններ, կառեր հաստատելով Եւրոպայի հետ, նախաձեռնութիւն ցոյց տալով: Ահա ինչ հրատապ հարցեր է շօշափուն նա, հարցեր, որոնց լուծումը անհրաժեշտ էր մեր մտաւորաւուկան բարդաւաճան համար:

Նա գիտակցում է մասուլի և գրականութեան ճշմարիտ կոչումը՝ աղնիւ արտայայտիչ լինել ժողովրդի կարիքների, ցոլացնել և ստեղծել հասարակական կարծիք: Նա քայլ առ քայլ հետեւում է մեր կեանքի երևյթներին, վերլուծում է և բնորոշում նրանց կերպարանքը, ցոյց է տալիս նրանցից բըզի վնամները և նրանց առաջն առնելու միջոցները: Ալլովիսի երևյթներից էր հաւատափոխութիւնը, միաօնարների պրօպագանդան մեր երկրում, և Մ. Նալբանդեանցը ճիգ է թափում արթնացնել հասարակութեան մէջ գիտակցական վերաբերութէղի այդ աղէտը:

## III

Հոսովմի բարոզչութիւնը մուտք գործեց մեր երկիրը հեռու անցեալում, դեռ առանելչորսերորդ զարում ըուն էր զրել կիւլիկեայում կաթոլիկութիւնը. Ռուբինեան իշխանների տկնկուրութիւնները Եւրոպայից, ձախորդ բաղաքական հանգամանքները, եկեղեցիների միութեան խնդիրը, որ ծագել էր Ն. Լամբրոսնացու օրիերավ, մեր եկեղեցու և նրա առաջնորդների համբերողութիւնը, այն բոլոր հանգամանքները նպաստաւոր հող էին ներկայացնում հաւատրութեան համար: Փամանակի ընթացքում կաթոլիկութիւնը ներս է խուժում և բուն Հայուտանի գաւառները ձիկութեանների և Միսիթարեան բարոզիչների եռանդուն գործունէութեան շնորհիւ, և ապա նա ստանում է այնպիսի մեծ ծաւալ, որ 1835 թուականին հիմնում է հուն կաթոլիկների պատրիարքութիւն, աշակցութեամբ պապի և կաթոլիկ տէրութեանց զեսպանների: Այնուհետեւ սկսում են դաւանսփոխ հայերի և լուսաւորչականների մէջ երկպատկանթիւններ, որոնց հետեւանքն են լինում արխինհեղութիւններ, ցեղակիցների սխերիմ թշնամութիւն:

Խոշոր բաղաքական երևյթ էր կատարուած իրողութիւնը, գա մի չարիք էր, որ սպառնում էր խախտել ազգի ամրողակութիւնը, նրա ինքնատիպ կազմը: Պէտք էր զգացում այդ չարիքի գէմ մաքառելու, բայց ոչ այն զէնքով, որ բանեցնում

Հին հոգեորականութիւնը և նրան համամիտ դրողները. Կրօ-  
նական վէճերով և աստուածաբանական խորիմաստ գատողու-  
թիւնսերով, հալածանքներով ու անէծքներով նա չէր վերաց-  
ւում. սաստկանում էր միայն մոլեռանգութիւնը, ազգակիցնե-  
րի փախազարձ առելութիւնը, աճում ծաղկում էր երկպատա-  
կութեան թոյնը նրանց մէջ:

Լաւ գիտակցելով ազգային միութեան սպասմացող վը-  
տանզը՝ Մ. Նալբանդիանցը քարոզում է եղբայրական վերա-  
բերում դէպի մոլորուած ազգակիցները և պնդում է, թէ Քրիս-  
տոսի անունով մշտառուածը ոչ լութերական է, ոչ կաթոլիկ և  
Քրիզորեան, այլ քրիստոնեայ». սակայն դատապարտում է  
հաւատորսութիւնը, քրիստոնեաների մէջ քրիստոնէութիւն տա-  
րածելու սովորոցիւր, որ անպատւաբեր գործ է քաղաքակիրի  
ազգերի համար, կոչ է անում մըցելու օտարազաւսու քարոզիչ-  
ների հետ, բայց ոչ մեզանում ընդունուած միջոցներով՝ կրքեր  
գրգսելով նրանց գէմ, այլ քաղաքակիրիթ դէնրով՝ լուսաւորե-  
լով ժողովրդին, ներշնչելով նրան իր միութեան և անբաժա-  
նութեան գիտակցութիւնը մայրենի եկեղեցու հետ: Միենոյն  
ժամանակ նա ջերմ պաշտպան է հանգիստում ազգային եկե-  
ղեցու, ընդդեմով նրա բացառիկ նշանակութիւնը մեղ համար,  
զրուատելով նրա ժողովրդական կազմակերպութիւնը զուտ  
ընտրողական սկզբունքների վրայ հիմնուած, նրա համրերով  
ոգին: Նա յայտարարում է «իր գաւանութիւնը հայոց ազգի  
ամբողջական առաջարկութեան վերաբերամբ, թէ ազգը իւր  
զոյսութիւնը պիտի պահպանէ իւր եկեղեցու միջնորդութեամբ,  
թէ եկեղեցու ինքնուրոյնութիւնը եղել է և ուր ազգի ապա-  
հովութեան գրաւականնը»:

Սյունակ եկեղեցին եղել է միակ պաշտօնական գործօնը, որ  
գարեր շարունակ պահել է ցիրուցան հայ ժողովուրդը իր հո-  
վանու տակ, եկել է մեզ շաղկապող միակ օգակը սարկութեան,  
բիբա տպիտութեան օրերում, երբ նա ոչ միայն մեծ բարոյա-  
կան հիմնարկութիւն էր, այլ և լուսաւորութեան միակ ազբոյըը,  
մեր գլուխոցը, նոյն իսկ մեր ինքնազործունէութեան կենտրօնը:  
Նա միակ քաղաքական հիմնարկութիւնն է, որ մենք պաշտ-  
պանել ենք, ինչպէս մեր աշքի լոյսը, արիւնոտ անցեալի փո-  
թորիկներից, առ լինելով ազգային ոգու ընորոշ արտայայտու-  
թիւններից մէկը, չի կարող լինել մեր զոյսութեան միջնորդը, մեր  
ապահովութեան միակ գրաւականը: Ազգային ոգին չի կարող ամ-  
փոփուել նրա շրջանակների մէջ, որ շատ սեղմ է և անձուկ, նա աւե-  
լլ լայն հօրիզոններ է պահանջում իր ոյժերի արտայայտութեան  
համար և կարոտ է առելի կենդանի ազրիւրների, քան եկեղեցին,

որ ըստ իր էռութեան անզօր է մի աղքի յարատե դոյտթեան պատուարը լինելու և վերակենդանացնելու ճակատազրի զա հարուածներից հիւծուած, մաշուած հային:

«Հայ» խօսքը կը կորցնէր իր ազգային իմաստը և կը պատնար լոկ կրօնական նշանացոյց, եթէ հայութեան հիմնաբարը համարէինք միայն նրա եկեղեցին: Եկեղեցին ազգայնութեան միակ ձև է նրա միջնորդութիւնը մեզ կը դարձնէր կրօնական համայնք, որոց քրիստոնէական աղանդի պատկանող խմբակցութիւն: Ազգային ինքնազիտակցութիւնը պիտի բգիւր և ուրիշ ազգիւրներից, ինչպիսիք են մեր լիզուն, գրտիւնաւթիւնը, աւանդութիւնները, մայր երկիրը, ժողովուրդը և նրա հոգեոր կարողութիւնը, ազգի ստեղծագործական ոյժերը չեն կարող մնունք առնել միայն կրօնքից և միջնորդ ընտրել միայն եկեղեցին, որ ապրում է անխախտ զաւանանքներով և անփոփոխ:

Պարզ է ուրիմն, որ Մ. Նալբանդեանցի զաւանանքը եկեղեցու վերաբերմանը միակողմանի է, պարզ է նոյնակէս, որ նըրա սիրութ չէր կարող չխոցուել, երբ իր եղբայրակիցները ուրանում են մայրենի եկեղեցին և զրանով խախտում են ազգի ինքնասիա գոյութեան հիմքերից մէկը: Նա իր մտքի ամրոջ էութեամբ զինուում է այս սուրանացող չարիքի դէմ յանձնութիթարեանների, որոնց հեղինակութիւնը ճանաչուած էր ամենքից, նա չի կարող ներել նրանց, որ նոքա օտարացել են մայրենի եկեղեցուց և պատկաման սերմեր են ցանում ժողովրդի մէջ, նա զիտէ, որ նրանք մեծ վարկ ունեն, ազգեցիկ ոյժ են ներկայացնում, ուստի պէսք է զլորել նրանց զբաւած բարձր զիրքից, ջլասել նրանց ազգեցութիւնը ժողովրդի վրայ: Իր «Միիթար և Միիթարեանք» ընդարձակ յօդուածում նա անխնայ քննազատութեան է ենթարկում կաթոլիկութիւնը և կաթոլիկ Միիթարեաններին, ցոյց է տալիս, որ կաթոլիկ եկեղեցին սորքացրել է մարդկանց, կաշկանդել է մարդկային միաբնութիւնը և դարձն կաթոլիկ է Քրիստոսի վեհ վարդապետութիւնը միքարքական հիմնարկութիւն՝ զերելու և նուանելու ազգերը: Դեռ պատահելութեան հասակից նա աղոյորուած էր տակելութեամբ զէպի կաթոլիկութիւնը, տարիների ընթացքում այդ զգացմունքը կուտակում է նրա սրտում և արտայալուում է օթափառական Հրէայ»-ի թարգմանութեամբ, որի յառաջարանում նա թափում է իր մաղձը ճիզուիտների վերայ, վերլուծելով նրանց կրօնքի էութիւնը, ուղղութիւնը և մերկացնելով նրանց մեքենայութիւններն ու հաւատորանութեան անարգ ու չոցները: «Այն ուսումը և լուսաւորութիւնը, ասում է նայու

կաթողիկների ձեռքով է մատակարարւում, նման է օպիումից շնուծ մի քաղցրեղէնի, որ ասիացի դայեակները սովոր են տալ երեխաներին սրանց քնացնելու համար։ Այս համոզմամբ նա շնորհակալութիւն է յայտնում Մխիթարեաններին, որ նրանք «չնուիրեցին իւրեանց անձը գիտութիւն տարածելուն մեր ազգի մէջ» և նրանց երախտիքը տեսնում է միայն այն բանում, որ «հայոց գրատպութիւնը տճեց և հասակ առաւ Իտալիայի երկնքի տակ, գօտեպինդ Մխիթարեան արեւաների շնորհիւ»։

Անարդարացի է Մ. Նալբանդեանցը դէպի վաստակաւոր Մխիթարեանները. նա անաշառութեամբ չէ քննում նրանց բազմարդիւն գիտական-գրականական գործունէութիւնը, մոռանում է նա և այն քաղաքական պայմանները, որոնց լնական արդիւնքն էր նրանց միաբանութեան ծագումը։ Մենք գիտենք որութիւնի միաբանութեան անկումից յիշոյ Հայաստանը տառապում էր հարեան պետութիւնների լժի տակ, որ գոյութեան զաֆան կրիւը կլանել խեղեկը էր մեզանում բարձր հոգեու շահերը, որ կենդանի միտքը չէր գտնում արգասաւոր հող մայր երկրու և ազգի առաջադիմութեան նախանձախնդիր անհատները յուսակառում ողբում էին երկրի թշուառ վիճակը, օտարից ազերսերով օգնութիւն. գիտենք նաև, որ ուխտի հիմնագիր Մխիթար վարդապետը ջանք չէ խնայել վաս պահելու քուն Հայաստանում մտաւոր շահը, ծառայելու ազգի լուսաւորութիւնան զործին և հանգիպել է զոս ազիտութեան, հալածանքի. նա չէ գտնում գործելու մի խաղաղ անկիւն, և ստիպուած է լինում երկարատև չարքաշութիւնից յիշոյ ապաստանուել օտար երկրում, հայրեննիքից զուրս հիմնել իր միաբանութիւնը։ Իրաւ, թանգ գնով դնեցին նրանք Իտալիայի հիւրընկալութիւնը՝ հարազատ կրօնքի ուրացմամբ, սակայն քաւեցին այդ մեզքը պատկասելի աշխատանքով, տասնասկատիկ վարձառքեցին մեզ իրանց փառաւոր գործունէութեամբ։ Իրաւ է նոյնապէս, որ նրանք հետու էին հայրեննիքից, հայ ժողովրդից, հարազատ իրականութիւնից, մի տեսակ կրաւորական քաղաքացիներ էին, ժամանակակից կեանքը իր կրքերով և փոթոքիներով, իր չարն ու բարիով չեն զբաղեցրել նրանց. նրանք գիտական վանականներ են, որոնց փոյթը չէր մեր կեանքի յուզող և տանջող խնդիրները, անյոյդ և անվրդով նրանք ուսումնասիրել վորփորել են անցեալը, բայց վատահ և յուսալից, որ ապազյում կը պատրաստեն վերածնութեան նպաստաւոր հող. նրանց սէրը գեպի հայրեննիքը աւելի մատհնական էր, որ բղխում էր հին յիշատակարանների ուսումնասիրութիւնից, քան իրական սէր, որն առաջանում է անմիջական շփումից

կեանքի և-սրա ցնցող պատկերների հետ Նրանք ուսումնաւ-  
սիրեցին ոսկէ դարի լեզուն, վերակենցաղեցին հայ դպրու-  
թիւնը, կորսորց աղատեցին հին գրաւոր յիշատակարանները,  
տպագրեցին նրանց և ընդհանուրի սեփականութիւն դարձրին,  
թարգմանեցին բազմաթիւ կլասորիկան երկեր, քերակունու-  
թիւններ կազմեցին, բառագրեր հրատարակեցին, միայն Հայ-  
կագեան բառարանը մի հոյակապ գործ է, մի կոթող նրանց  
տոկուն աշխատանքի. նրանց պարծմանը հին լեզուի և մատե-  
նագրութեան ուսումնասիրութիւնն է: Արդարութիւնը պահան-  
ջուռ է ասել, որ Միխիթարը և նրա միտրանութիւնը, չնայած  
նրա զուտ կրօնական ուղղութեան և վանական կազմակերպու-  
թեան՝ մեր նորագոյն ողատութեան ամենափայլուն երևոյթն  
է, հայ մոռքի վերածնութեան սկզբնաւորութիւնն է:

Գիտնական կրօնաւորների այս մեծ երախտիքը չգնահա-  
տեց ըստ արժանուոյն Մ. Նալբանդեանցը շնորհիւ իր նեղ զա-  
ւանանքի, որ ունէր հարազատ և կեղեցու կոչման մասին և այն  
զայրոյթի, որով առգորուած էր զէպի կաթողիկ Միխիթարեան-  
ների քարոզչութիւնը: Բացի այս՝ նոր ժամանակի իդէալների  
չատադրվը, նոր սերնդի յոյդերի և իդենտիկ կրակոտ արտայայ-  
տիչը չէր կարող համակրել հնութեան հոգեզմայլ երկրպագու-  
ներին. նսեմացնելով նրանց վարկը, տքնելով փակելու հաւա-  
տութանութեան ճանապարհները, երեան հանելու կաթողիկ քարո-  
զիչների որոկայթները՝ նա մեղանչց իր առաջնորդով սկզբ-  
քունքների և ուղղութեան դէմ: Իր անտիպ գրուածքներից մէ-  
կում նա մինչեւ անգամ առաջարկում է «Ճիմնել մի կրօնական  
ուխտ և հասուատել նրան օսմանեան բաժնում, հնուց մնացած  
պատուական վաճաքերից մինի մէջ, Պարիստը սարերի լանջերում,  
Ճորոխ գետի վրայ, որպէսզի միութիւնը զիւրին և աջող ճա-  
նապարհ ունենայ Սկ Ծովի միջնարդութեամբ եւրոպայի հետ  
հաղորդակից լինելու: Ուխտի էական խորհուրդը և նպատակն  
է իր վանքի պատերի մէջ կազմել մի ուսումնական ազգային  
հարազատ կենտրոն և այդ կենտրոնից ազգել ազգի լուսաւո-  
րութեան վրայ, հիմնելով և պահպանելով իր մէջ գպրոց և տը-  
պարան»: Միաբանութիւնը պիտի ճանաչէր Պոլսի ուստրիարքի  
և ամենայն հայոց կաթողիկոսի կրօնական իրաւասութիւնը,  
բայց լիովին անկախ և աղատ, իրքն վարչական մարմին: Ուխ-  
տի նպատակն էր ստեղծել մի «ուսումնական հարազատ կեն-  
տրօն»՝ իրքն հակադրութիւն հեղինակաւոր Միխիթարեաններին,  
ստեղծել մի պատճէշ հաւատափոխութեան հոսանքի տուած և  
ջլատել կաթողիկ «պրոպագանդանան»: Բացի այդ՝ այդ վանական  
կենտրոնը պիտի լոյս տարածէր ազգի մէջ, կրթութեան դեկը

բաներ իր ձեռքում, մի համուգամանք, որ բոլորովին հակառակ էր ազատամիտ հրապարակախօսի այն հայեացրին, թէ «ազգայշին լուսաւորութիւնը պիտի առաջանայ բուն ազգի հոգարար ծութեամբ, թէ հոգեարականների կոչումն է քահանայր պատրաստել և բարոյապէս գաստիարակել իրանց հօտը»:

Ակներե է, որ նրա զաւանանքը լուսաւոչական և կեղեցու մասին և նոր ուխա հիմնելու այս առաջարկութիւնը հակառակ են նրա իդէալներին, խախտում են նրա աշխարհահայեացքի ամրողութիւնն ու ներդաշնակութիւնը, և մենք զիտմամբ յիշեցինք այս մասին, որ կարեւոյն չափ ճիշտ բնորոշենք նրա հրապարակախօսական կերպարանքը, բայց այդ բնորոշումը կիսակատար կը լինի, եթէ չծանօթանանք նրա գաստակների հետ գրականութեան այլ և այլ ճիշերում:

## IV

Մ. Նալլանգեանցը տաղանդաւոր գրականապէտ է. նա և բանաստեղծ է՝ լոյս, նորոգութիւն քարողող, և երգիծարան է՝ մեր նախապաշարմունքները և հասարակական արատները ծաղրող, և բանուկ քննադատ է, և չնորհալի թարգմանիչ:

Սակայն նա բանաստեղծ չէր սովորական մաքով, թէպէտ գրած ունի շատ ինքնուրոյն և թարգմանական ուանաւուներ, նա չափազանց զգայուն քաղաքացի էր՝ որ սաւաննէր մուսանիրի տշխարհում, չափազանց իրական զործիչ էր՝ որ ներցնչուէր լոկ բանաստեղծական մտորումներով, գեղանի ձեերով. հրապարակախօս բանաստեղծը չէր ուզում մատնուել երկակայութեան բուն սլացքներին.

Ես պիտի դուքս զամ դպի նրապարակ

Առանց բնարի, անկարի խօսքերով.

Ես պիտի ցոչեմ, պիտի բողոքեմ,

Խաւարի ընդդիմ պատերազմելի:

Զնայած այս նշանաբանին՝ նա շատ երգեց և ունի ստանաւորներ, որոնք արդիւնք են ճշմարիտ ստեղծագործութեան, բանաստեղծական բարձր ներշնչման. նա բանեցնում է ազգու և վառվառն լեզու, ցոյց է առլիս ուժեղ խառնուածք, վերամբարձ արամապրութիւն. նա մեծ տպաւորութիւն է գործում մեզ վրայ ոչ վառ գոյներով և պատկերներով, ոչ կենդանագրական ճարտարութեամբ, այլ իր անկեղծ խօսքի փայլով և ոլժով, իր անսասան համոզուածութեամբ, իր հրաբրուք

զգացմունքնելով։ Նրա բանաստեղծութիւնների «գլուխ զործոյց»-ը «Ազատ Աստուածն» ռոտանաւորն է, որի մէջ նա թափեց իր մորի ամբողջ կորովը, իր սրտի կրակը, դա գունեղ և գեղապահոյց երգ չէ, այլ մի կրակոտ ներբող է աղատութեան գաղափարին, իսկ սա ոչ միայն նրա խէչալն է, որով նա ապրում է, այլ մի պաշտամունք է, նրան ալէկոծող և զմայլեցնող մի կիրք...»

Նա գիտի, որ «աղատութեան զինուորի ճանապարհը վիշտ է», որ «աղատութիւն սիրողին այս աշխարհը խիստ նեղ է», բայց նու «զես օրօրոցում կապկապաձ՝ խնդրում էր մօրից բազուկները արձակել, և այն օրից ուխտեց աղատութիւնը սիրել».

Թոնի որոտան իմ զիմին,  
Փայլակի, կայծակի, հուր, երկան,  
Թոնի դաւ վնէ թշնամին,  
Էս մինչ ՚ի մահ, կախաղան,  
Մրնչեւ անարդ մանու սիւն,  
Պիտի գոռամ, պիտ' կրկնեմ  
Անդադար, աղատութիւն։

Այս վեհ գաղափարը նրա գրականական-հասարակական զործունեութեան տիրապետող եղանակն է և նոյնիսկ ելակէտը. յանուն նորա նա քարոզում է կրօնական համբերովութիւն, մարտնչում է կաթողիկութեան գէմ, որ շղթայում է մտքերը. յանուն նորա նա հարուածում է ժողովրդի վրայ լունացած հոգեորականներին և մեծատուններին, յանուն նորա պաշտպանում է անհատի, ժողովրդի, հայ կնոջ իրաւունքները։ Ազատութեան գաղափարն է զրդում նրան երգել իտալացի աղջկան, որ, ջերմ հայրենասիրութեամբ ներշնչուած՝ տալիս է եղբօրը արտասուրով լուացած, իր ձեռքով զործած զրօշը, ճամբում է նրան գէպի կոռուի գաշտը, որ նա իր արեամբ գնի իտալիայի անկախութիւնը, երանական մահով մեռնի հայրենիքի փրկութեան համար. և բանաստեղծի սիրտը կտրատում է, տեսնելով իտալուհու այս ուժգին սէրը գէպի թշուառ հայրենիքը.

Սորտ կէսը, կէսի կէսը  
Գէթ երեւէր մէր ազգում.  
Բայց մէր կանայք... ո՞ւր Եղիշէ,  
Ո՞ւր մէր տիկնայք փափկասուն։  
Չի... թշուառ չէ խաղիսն,

Աթէ կանայք այսպէս են:

Բանաստեղծ քաղաքացի Գամառու Բաթիստան կրակու լիւզով խօսեցնում է Վարդան Մամիկոնեանին «Հիմի Էլ լսենք» ոտանաւորի մէջ, սլարսաւում է հայի անփութութիւնը դէպի իր չարաբաղդ վիճակը, անխնաց մտրակում նրա լոռութիւնը, երբ «Հիմքից կործանուց Թորգոմայ տունը», երբ «Նա պահպուխտ, հալածեալ, շղթայուած գերի է», երբ նոյն իսկ «քարեր ու ապառաժները խօսում են նրա տեղը», և զայրոյթով բացականչում է.

Թնդ լրու մունջը, ամուճմալոյձը,  
Կամ՞ որոց քաղցր է թշնամու լուծը,  
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրո քաջ,  
Ե՛կ անփախ ելնինք թշնամու առաջ,  
Գոնէ մեր փառքը մահով յիս խրինք  
Աւ այնպէս լուսնը:

Սրան պատասխանում է Մ. Նալբանդիանցը Վահան Մամիկոնեանի բերանով, «Հիմի Էլ խօսենք» բանաստեղծութեամբ, նոյնպէս խօցուում է մեր սիրտը, նախատում է մեզ, որ մենք «ընտանեկան երկողառակութիւններով, իրալ զաւելով, ազգուրացութեամբ նախնաց ուխտը ոտքով կոխել ենք», որ մեր թըշնամուն, գահիճներին «կեցցէ արին» զուում ենք, և այսպէս է վերջացնում իր կշտամբանքը.

Ե՛կ մեր երեսին մնաց մի կաթիլ  
Ամօթի սուրբ ջուր, որ բերան բանանք:  
Ո՛չ թէ ջննք՝ ուզում հողէց հող կորչիլ,  
Թշնամու արեամբ մեր թրին ջուր տանք,  
Ազդ, եկեղեցի փրկինք, ազատենք,  
Ազգա թէ խօսենք:

Ազգային վշտի երգիչ Պատկանեանը բարոզում է «Ճոռանալ Հայկ ու Լեռնին», թափ առաջ մեզանից փոշին հնութեան, վերածնել մեր մէջ նոր կեանք ու նոր բարք», դնելով մեր յոյշու երիտասարդ ոյժերի և ոչ սիծատուների ողորմութեան, օտարի խոստանքների վրայ: Հայրենիքի վերածնութեան աշխոյեան Նալբանդեանցը պատասխանում է, թէ լոկ խօսքով մենք և ազատամէր հերոսներ ենք, և մեր փրկութեան փափաղով կտրիճներ. բայց իրօր սորուկ ենք, «օտարի երդուեալ ծառանիր», թէ՝

Աեր յոշօր սատկայն մեզ վրայ լինի,  
Այսինքն պղի մեր բնդիանքութեան.  
Աղքատ ու հարուստ տուած թեւ թեւին  
Աշովիս մէ միայն կայ ճոր փրկութեան:

\* \* \* \* \*

Ե՛լ Հայկ, Տիգրանին յիշենք, եղքարք,  
Կորովենք նոցա փառքը սուրբ անուան,  
Գուցէ, այս կերպով, մ' սաոյզ նոր կիանք  
Առնու խեղճ, այրի Ապրն-Հայաստան:

Դուք տեսնում էք, որ երկու բանաստեղծն էլ մի փափազ  
ունին, մի նպատակի են ձգուում, բայց մէկը տւելի լաւատեհու  
է, հաւատում է, որ հայ քաղաքացիները կը սթափուեն, սորի  
կ'ելնեն ազգային պատուը վերականգնելու, եթէ միայն կոչ  
անհօ դէպի նրանց պարտականութեան զգացունքը. միւսն տա-  
ւելի յուսեան է, ինքնագիտակցութեան նշոյներ քիչ է տես-  
նում մեր մէջ, գործ է պահանջում, հրաւիրում է նախնաց  
փառքը յիշել, նրանց սիրակործութիւնների ճանապարհով  
ընթանալ: Բանաստեղծութեան մէջ էլ նա նոյն մարտնչող  
հրտապարակախօսն է, նոյն ազատատէր քաղաքացին. նա մի  
զաղափարազաշտ դրոյ է, որ լցուած է աղղային տեսչելով և  
կարիքներով:

Երգում է նա գալուստը գտրնան, որ «ցրուեց Մասիսի  
րքածին ամպերը», լացացրեց նրան և ծով գտրձրեց նրա թա-  
փած արտասուքը, զարգարեց նրա կուրծքը զալար արօսով և  
ծաղիկներով, վասից-յուսազրեց վհատած սրաերը. բայց դա  
բաւական չէ բանաստեղծի համար. նա հայցում է, որ կենդա-  
նաշունչ զարունը «մի յաւերժ արձան կանգնի իրան, յիշատակ  
թողնի», «աալով հայերին ընտիր Հովուապես, հայկական հօ-  
տին անքուն, անխոնջ զէտ»: Անզամ բնութեան ծոցում հան-  
գիսս որսնելիս, նրա հրաշալիքներով հրճուելիս՝ նա չի մոռա-  
նում ժամանակի կարենոր խնզիրը, կաթողիկոսի ընտրութիւնը.  
Նրան յաւզում է այն համզամանքը, որ տաճկահայերը յդացել  
են յանցաւոր միտք՝ հաստատելու նոր կաթողիկոսութիւն Օս-  
մանեան պետութեան մէջ:

Թարգմանում է նա Հեյնէի «Երազը», թարգմանում է սա-  
հուն և պատկերաւոր լեզուով, բայց երկրի սպասաւոր երգիչը  
զայթակղութեան մէջ է ընկնում. նա վերամշտկում է հայաց-  
նում ստանաւորը, յարմարեցնում է նրան մեր կեանքին և

պատկերացնում է մեր ցեղական արատը, մեր անմիտամնութեան ոգին:

Այսպէս են ստեղծագործում նրա ժուսանիրը, այսպէս է հասկանում նա իր կոչումը: Նա չի սաւառնում Ոլլմպոսի բարձունքներում. «արուեստը արուեստի համար» սկզբունքը օտար է նրան. արուեստը կեսնքի համար է, կեանքնէ է նրա ներշնչման աղբիւրը: Նա անխղելի կապերով կապուած է երկրի հետ, նրան կաշկանդում է բորբոքուն քաղաքացին իր հասարակական մտորումներով, իր ըմբոսա իդէանիրով, և նա իր բնատուր ձիրքը, իր արուեստը ծառայեցնում է մայրենի իրականութեանը:

Այս, Մ. Նալբանդեանցը խոշոր բանաստեղծական առաջնորդ չէ: Նա չըրեց զիւթիչ գեղանկարներ, վայլուն քերթուածներ, բայց նա մեր սրտիցն է խօսում, մեր հոգի լարերն է շարժում, ընած մտքերն է արթնացնում, և նա մեր սիրելի ժողովրդական բանաստեղծներից մէկնէ: Բայց, բանաստեղծութիւնը միակ գրականական ձեւ չէ, որ նո բանեցնում է. նրա կորովի ոգին միշտ գործողութեան մէջ է—չի ամփոփում միայն հրատարակախօսութեան և բանաստեղծութեան մէջ, նա պահանջ է զգում սուր խայթոցներով սթափիցնել հասարակութիւնը, բնկճել հասարակական մտքի գեկավարների յամառութիւնը, նոր հոսանքներ առաջացնել հրատարակախօսութանաստեղծը նոր զէնիրի է զիմում՝ կծու ծաղրի: Կրակ է ցայտում նրա երգիծանքից: Իր հոչակառոր «Ճիշտակարաններում» նա թունաւոր նիստը է շաղ տալիս մի շարք գրականական-հասարակական գործիչների, հայութիւնը կտիարգուած շրջանում պահովների վրայ. մերկացնում է նրանց «շահապիտական և փառակիրական տենչերը»: Նա ծագրում է մեր նիստն ու կացը, մեր ընտանիկան վարքն ու բարքը, նախապաշարմունքները և մնապաշտութիւնները, ծագրում է յանձին Բէգլազէի այն կղերականներին, որոնք էֆիմերդէն համարում են իմաստութեան աղբիւր և նրա մէջ են որոնում: Կեանքի հարցերի ու բնութեան երեսյթների բոլոր մեկնութիւնները, որոնք կրօնական համբերողութիւն քարոզովներին, Սուրբ Գիրքը աշխարհաբար թարգմանելու խնդիրը արծարծովներին «Լօթեռ և փարմասօն» են հոչակում, որ ժամանակի լեզուով նշանակում էր «հերափիկոս, անհաւատ»: Նրա «Ճիշտակարանները», երգիծարանական պատկերները սարսափ են ազգում կենդանաբանական ազգասիրութեան ժառանգորդներին: Տառամսեց խայթուած հասարակութիւնը, նրա ճահիճ կետնքը շարժուեց, ծըփիծիաց, և այդ ճահճի երկոտանի մոծակները զէն:

հն կանգնում յանդուզն երգիծաբանին և լի չարութեամբ տըզտըզում են, ճիգ թափում խեղգելու «խռովաբարի» ազատ խօսքը: Այսպէս է պատկերացնում հեղինակը նրանց դայրոյթն ու գառնութիւնը իր «Ասորեայ աշխարհ» ոտանաւորի մէջ:

Ի՞՞նչ ես գոռում, ի՞՞նչ ինդում,  
Դու անհանդիստ հեղինակ:  
Մեզ խաղալիք շինեցիք  
Ողջ աշխարհի խայտառակ:

Յո բարձր Ֆշմարտութեան  
Ճառագայթները փայլուն  
Չեն տանելի մեր աչքին,  
Ատելի են մեր հոգուն:

Զ'իսո իւով մ.թ ինիցնը,  
Զ'արմկելով մեր հոգին,  
Տնւր մոզ տաղիք, վեպ, տոնի,  
Համօյացիք մեր սրախն:

Հանգստութեան միջոցին,  
Մարսողութեան լու ժամին,  
Դու դատաւոր մի՛ նստիք  
Խրառներով մեր զլիսին:  
Վշտաբեր ամիսարկութիւնը,  
Հեռի՛, նեղիչ դադախարը,  
Մի՛ լինիք դահիճ մոլութեան,  
Որ չլինիս դահիճ մարդերին:

Անողոք երգիծաբանը դիտաւ նշանին, ցնցեց հասարակութիւնը. հէնց այն էր հարկաւոր խիզախ մարտնչողին, որ աւելի ևս բորբոքուէր նրա ըմբռաս միտքը: Նա բաջ գիտէ, որ հայը ճակատագրի խիստ հարուածների տակ լիովին խորասաւզուել է իր հսական աշխարհի մէջ, ճանաչում է միայն իր անձնական բարօրութիւնը, որ հասարակական շահների գիտակցութիւնը, ագգայնութեան և հայրենիքի գաղափարը թոյլ են նրա մէջ, որ նիւթական անկախութեան զգացմունքը, զուքանչիութիւնը, հարսաւութեան ծարաւը նրա պարծանքն է և մոլութիւնը, և նա մրցում է այս չարիքի դէմ, որ արձանացել էր մեր առաջ, ինչպէս մի վիթխարի եղիպատճեան բուրգ: Իր «Հայ մարզու հայրենիքը» ոտանաւորի մէջ նա վերաբռնադրում է այդ չարիքը

դաստիարակի ամսովորմութեամբ, նկարելով հայի գծուծ կերպաւրանքը, նրա հոգեոր սնանկութիւնը.

Հայ մարդ, հայ աղօ, ասա արդիօր,  
Ո՞րտեղ է րո հայրենիք:  
Հայ մարդ, որտեղ է կենտրօնի.  
Ունես մի բան քեզ սեպանկան,  
Յոց տուր ինձ զու րո պարծանք:

Ասկի, արծաթ, զանարեղէն  
Իմ պարծանքը, իմ գանձերը,  
Թէ զրանով չես քառական,  
Տես իմ երկու պատուի նշանքը.  
Գու ինչ կենտրօն և հարցնում,  
Իմ կենտրօնը է իմ փորք,  
Ասկի արծաթ, նարսութիւն—  
Ահա կեանքիս լոկ խորհուրդի:  
Աս սիրում եմ իմ հայրենիքը,  
Նրան միշտ ու միշտ զոյսմ եմ,  
Օտար աղջի առաջեւը  
Պարասութիւնքը ծածկում եմ:

Եւ երգիծարանը դասնացած սրտով բացականչում է.

Արտախացի՞ր, զու Հայաստան,  
Լուսով րո սրգու խօսքը,  
Փառք եւ պատիւ քեզ կը թիւն  
Յո մարմնապաշտ մեծատուն քրու:

Դուք տեսնում էք, որ նրա ծազրը անխնայ է, լիզունչ  
կծու, զոյները խտացրած; բայց դա, ոռւսահայերի երգիծարանական զրականութեան սկզբնաւորութիւններն էք, մեր ինքնագննութեան առաջին փորձն էք: Անկասկած, այդ սկզբնաւորութիւնը անկատար էք. մեր բարբերն ու հասկացողութիւնները երգիծարանող հեղինակը յանձախ չի կանոնած իր կոչման բարձրութեան վրայ. Նա չափազանց կրօստ ու բծախնդիր է, երբեմն անցնում է զրական վայելչութեան սահմանից, լուսանկարելով մասնաւոր ժարդկանց, պատկերացնելով տիտիքական բնաւորութիւն չունեցող երեսյթներ: Իր «յիշատակարաններ»-ից մէկում նա արձանագրում է այն չոչին գէպքը, որ ինչպէս մի

մեծասուն անքաղաքավարի է գտնուել գէպի իր հիւրերը, ուրոնց թէյի-էր հրաւիրել, թէ ինչպէս նա, կնոջից հարկագրուած «կից սենեակում բաղնիքի հանդէս է կատարում» այն միջոցին, երբ հիւրերը վագուց սպասելիս են եղել իրան: «Մեսելահարցուկ» վիպական գրուածքում, որ զուրկ է գեղարու հստական արժանիքներից, նա գուրս է բերում կենդանի գէմքեր, նկարագրում է մի հայ հարուստի լնոտանեկան կետնքը աններեկի անսանձութեամբ, և այզպիսով տպագրական խօսքը գարճում է մի տեսակ պարսաւագրութիւն: Դրանք, ինարկէ, գեղարուեատական պատկերներ չեն և ոչ կենդանագրած ընտառութիւններ, այլ միայն ծիծաղաշարժ պատմուածքներ են, չափազանցացրած ծաղրանկարներ՝ հակառակորդներին նուաստացնելու նպատակով զրուած:

Այսպէս թէ այնպէս՝ նրա երգիծանքը իր բոլոր թերութիւններով մի խոշոր երեսյթ էր զրականութեան մէջ. գտառաջին յազթական աղաղակն էր, որ հնչում էր հայ բաղաքացու ցաւագար կրծքից. արթնացած միտքը ասպարէզ է նետւում, վերագնահատում է այն ամենը, որ անժխտելի ճշմարտութիւն էր համարւում, հեղինակութիւն էր ճանաչում, հնութեան պահնորդների զատաստանն է անում և տուաջապիճութեան ճանապարհ փուշ ու տատակակից մաքրում:

Բայց Մ. Նալբանդեանցը ուրիշ վաստակներ էլ ունի զբական անգամատանում. նա ժողովրդականացնում է բնական դիտութիւնը, որ վազուց զրաւել էր ուսու ոէալիստների լուրջ ուշագրութիւնը, զրում է «աշխարհի կազմուածի և նրա հրաշալիքների մասին», շիրամարտւութեան ձեսնարկ է կազմում. նա թարգմանում է բազմաթիւ ուսունառուներ, վէպեր «Թափառական Հրէայ» Եւժէն Սիւի, «Դքուհի զը Շելքեօզ» Կլեմանս Ռորեատի, «Թալիսամներ» Ֆարը գ'Օլիվիէի, թարգմանում է «Ղազար Փարագեցու թուղթը Վահան Մամիկոնեանին» լնդարձակ գիտական լուսարանութիւններով:

Նա, վերջապէս, և շնորհալիք քհնաղաւ էր. նրա ասաջին փորձը Մ. Նալբանդիցի «Հանդէս նոր հայախօսութեան» գրքի մասին մի յայտնութիւն էր, որով հիմք գրուեց մեղանում զրականական բննագատութեան: Առաջին անգամ զրականական երկը արժանանում է լուրջ և անկողմնապահ գնահատման պատուին: Իր այդ յօդուածում նա երկարօրէն բացարում է, թէ ի՞նչ է կը լիտիկան և ինչ կատարելիք գեր ունի, ոկրիտիկան, առում է նա, մի անաշաս զատաստան է, որ չի ճանաչում ոչ բարեկամ և ոչ թշնամի, մի չափ է, մի այնպիսի կը իս, որով իսկ և իսկ հասկացւում է որ և իցէ ազգի լուսաւորութեան

աստիճանը, նորա հայեացքների և սկզբունքների պարզութիւնը կամ պղարութիւնը, մի ազգի մատենագրութեան մէջ երեսում է նրա հոգին, նրա ընկերական կեանքը, իսկ քննազատութեան մէջ՝ այդ բոլորի չափը և աստիճանը. սորա գործն է սահմանել և զնամատել նոցա»:

Քննելով պատկառելի Հանդէսը՝ նա ամենայն անաշառութեամբ յայտնում է, թէ «հեղինակը երբեմն ոչ հայաբար, այլ երսպէարար է բացատրել իւր միտքը, որ նրա լեզուն աւելի մօտ է հին լեզուին, քան թէ ժողովրդականին, մի տեսակ աշխարհաբարականն զրաբար է»:

Գրականութիւնը «մի պահարան է, ուր ամփոփւում են մարդկային մտքի և հոգու բղխուածքը», մի հայելի, որ պիտի ցոլացնի իր մէջ աղգային կեանքը, հոգին. հակառակ զէպրում նա «մի խորթ մայր» է և ոչ մի գաստիրաբակիչ նշանակութիւն չի կարող ունենալ ժողովրդի համար: Այս տեսակէտից նա ապարդիւն է համարում Միլիթարիաների քարոզած մատենազրութիւնը, որ «զանակով կարուած բաժանուած է ժողովրդից, անժամանակ և սորան», մինչդեռ ողջունում է Պոօշեանցի «Սօս և Վարդիթեր»-ը, իրեն կեանքի իրական պատկեր, իրեն մի զրուածք, որ սերտ կապուած է ժողովրդի հոգու և մտքի հետ թնառում է նա և Գամառ-Թաթիպայի մանկական զրքոյկը Ռուբինզոնի մատին, ցոյց է տալիս լեզուական մի քանի թերութիւններ և նոյնպէս սղջունում է նրան իրեն մի աշխատութիւն, որ իր լուսականքութեամբ համապատասխանում է ժամանակի պահանջներին:

Այս բազմակողմանի և անընդհատ աշխատանքի նպատակն էր առաջ ժողովրդին ընթերցանութեան առողջ նիւթեր, աղացուցանել աշխատանիկ լեզուի և նորածիլ զրականութեան կենսունակութիւնը, մօտեցնել զրականութիւնը ժողովրդին: Եւ նա իր միւս գործակիցների հետ նոր զրականութեան հիմքը զրեց:

Ահաւասիկ նրա զրականական զործունէութեան համառօտ պատկերը, նա եղակի անձնաւորութիւն էր իր երախտիքներով և բազմատեսող ձիբքելով, եղակի էր նա և իրեն քաղաքացի իրեն առաջաւոր զարդարաների կենզանի հաղորդիչ: Պակասաւոր կը լինէր նրա հոգեսր կերպարանքի պատկերը, իթէ չյիշենք նրա հաստրակական զործունէութիւնը:

## V

Մ. Նալբանդեանցը մի հաստրակ կպլավտաճառի զաւակ է, նա աշակերտել է Տէր-Գառը իւլ քհ. Պատկանահանցին, որ յայտ-

նի հոյկարանի համբաւն ունէր, ինքնակը թութեամբ լրացնում է իր ուստւմը և տպա, ժամանակի սովորութեան համաձայն, դառնում է տիրացու: Անշուշտ, այս կոչումը չէր կարող գոհացնել նրան, հոգեոր ասպարէզը նեղ էր նրա ապատակը բնութեան համար, նրան հարկաւոր էր գործունէութեան աւելի լայն շրջանակներ, և նա կարճ միջոցում նուածեց աւելի ամսկախ զիրը հասարակութեան մէջ, թեև ական ասացնորդը զնահատելով նրա բնածին խելքը և փայտուն ընդունակութիւնները, նշանակեց նրան անձնական քարտուղար: Այս պաշտօնը բացեց նրա առաջ նոր-Նախիջևանի իրականութեան մութ խորշերը, աղաների քմահամ արարքները, հոգեորականութեան նիւթամուլութիւնը և մարդանածութիւնը, ծանօթացրեց հասարակական գործերի և կարիքների հետ: Այժմ նա պարզ տեսնում է, որ աղաները երկրի տէր են, միահեծան իշխանաւորներ. նրանց են յանձնում եկեղեցիների տնտեսական կառավարութիւնը, նրանք են հասարակական կեանքի զեկավարները, հիմնարկութիւնների գարիքները, իսկ ժողովուրդը և նրա իրաւոնքները, առոշինչ են համարում: Աղայ Խալիբեանն է եկեղեցական կարուծների վեքիլը, նա է եկամուտների ինքնագուխ ժողովուրդն ու ծախսարարը, նա նոյն խել խառնում է զուտ կրօնական խնդիրների մէջ, քմահաճութեամբ գարում է հասարակական ըոլոր գործերը, իսկ բարձր հոգեորականութիւնն ու հասարակութիւնը ընկճում են նրա ոյժի առաջ:

Չէ ուզում և չէ կարող ընկճուել լուսամիտ Նալբանդեանցը, ժողովրդական իրաւոնքների, հասարակական պատուի ջերմ պաշտպանը, նա բողոքում է ինքնիշխան վեքիլի բանի գործողութիւնների զէմ, պահանջում է նրանից եկեղեցական հասոյթների և ծաղքերի հաշիւր: Բողոքը անսպասելի էր: Քստմնում է իշխանաւոր Խալիբեանը այս արտասովոր յանդգնութիւնից: Թմրուկ զարկեցին, աղմուկ բարձրացրին նրա բազմաթիւ արբանեակները, զրապարտեցին նրան կաթողիկոսի ասաջ, և մեր լմբոստ տիրացուն ստիլուեց հրաժարուել հոգեսր կոչումից: Բայց նա զինաթափ չէ լինում, հալածանքը աւելի ևս բորբոքել է նրա զայրոյթը. նա տեղափոխում է Մոսկու, որտեղ միաժամանակ կատարելազործուում է ուսման մէջ, աշխատակցում է «Հիւսիսափայր»ին և հետեւմ է իր ծննդավայրի գործերին: Նա խրախուսում է իր բարեկամ՝ Հայրապետեանցին և միւս համախոններին, որ նրանք զիմազրեն բանութեանը, առաջ տանեն ժողովրդի արդար դատը, և այդ յորդորը պատկռեց յաղթանակով. հպարտ և անմատչելի վեքիլը հարկառուեց յաղթանակով. հպարտ և անմատչելի վեքիլը հարկառուեց յարգել ժողովրդի իրաւոնքը, ներկայացնել մանրա-

մասն հաշիւ։ Սա անզրանիկ փորձն էր թօթափելու խնամակալ աղաների լուծը, ժողովրդի բաղաքացիական ինքնաճաշ՝ նաչութեան առաջին արտայայտութիւնն էր, որ աւելի ծաւալուց և ծաղկեց հօթանամնական և յետագայ տարիներում։

Չի խնայում Մ. Նալբանդեանցը և Խալիբի մտերիմ բարեկամին, Բեսարարիոյ առաջնորդ Այլազեան վարդապետին, որ վատահացել էր տարածել ժողովրդի մէջ մի քօղարկուած շրջաբերական թուղթ Մատթէոս կաթողիկոսի դէմ, մերկացնում է դայթակղեցուցիչ թղթի խորհուրդն ու նպատակը, կշտամբում է ստորագրեալ վարդապետի վարձունքը, որ մի «մեծ յանցանք է աղջի Հայրապետի դէմ», «պատերազմ է Աթոռի և հեկեղեցու անկախութեան դէմ»։

Անընդհատ գրականական աշխատանքը չէ խլացնում նրա բաղաքացիական զգացմունքը մայրենի Նախիջևանի վերաբերմամբ։ Նա նորոգում է «Հիւսիսափայր»-ի էջերում «Հնդկական գումարի» նշանաւոր խնդիրը։ Յայտնի է, որ հնդկաստանցի Մատիհ Բարաջանը իր մնծ կարողութեան մի մասը նուիրել էր Նախիջևանի բաղաքին, այդ նուէրը արգասիք էր այն կոչի, որ արել է Յովսէփի հավիալ։ Արդութեան Հնդկաստանի հայերին իր հիմնած քաղաքի պէտքերի համար։ Թանիցս յարուցուել էր մատուլի մէջ այս խնդիրը, բայց չէր ունեցել ոչ մի հետևանք։ Հարկաւոր էր մի հաստատակամ և հասարակական օգտին նախանձաւոր մարդ, որ նա ստանար գրական լուծում։ և այդ մարդը Մ. Նալբանդեանցն է, որ, ընտրուելով քաղաքի հաւատարմատար՝ ճանապարհուում է դէպի Հնդկաստան, զարմանալի եռանդով և տոկունութեամբ ձեռք է զարկում դործին, ոսվորում է անգլիերէնը, ուսումնասիրում է անզլիական օրէնքները կտակաւանդութեան մասին և, բոլոր արգելքներին առաջն առնելով, համուռմ է նպատակին։ կտակը օրինական է ճանաչում, որդուում է Նախիջևանին հասանելիք զումարը և տարեկան եկամուտը կտակարարի անշարժ կայքերից։ Նախիջևանի հալածական որդին ազատեց Հնդկական գումարը, բայց հիւանդութեան պատճառով և քաղաքական հանգամանքների գժրախտ բերմունքով չէ կարողանում լիամարն հաշիւ ներկայացնել համաքաղաքացիներին։ Բնորոշն այն է նրա ճանապարհորդութեան մէջ դէպի Հնդկաստան, որ նա, համելով Պոլիս, տաճկահայերի մտաւոր կենտրօնը՝ ընկնում է նրանց կեանքի յորձանուտը, դրան նպատում է սահմանադրութիւնը, որ նոր էր մտել գործադրութեան մէջ։ Նա ովենորւում է նոր հոսանքով, չի կարողանում սառնասիրս հանդիսատես լինել հասարակական երեսյթների, կարծիքներ է յայտնում Յունուար, 1905.

արծարծուող լսնովիլների մասին, խառնուում է տեղական գործերի մէջ, կողմնակից է ժողովրդի, հակառակորդ է տմիրաների ու էֆենովիների, որոնք բոհուած ունէին ազգային կեանքի դեկը:

Օրուայ հերոսը վանի ախրահոչակ առաջնորդ Պօղոս հովիսկովոսն էր, որ գրպանը էր հասարակութիւնը իր անառակ կեանքով ու զեղծումներով և բաժանել էր մամուլը երկու կուսակցութեան՝ «Պօղոսիան և Ա.Պօղոսիան»։ Ժողովուրդը պահանջում էր պաշտօնանկ անել նրան, իսկ ամիրաները և նրանց կամակատար գրչակները պաշտողանում էին իրանց գաշնակից հոգևորականին։ Խնչ ասել կ'ուզէ, որ Նալբանդկանցը համամիտ է ժողովրդին, գտատափետում է անքարոյական առաջնորդին և քարոզում է թէ լրագրութեան և թէ հասարակութեան զանազան շրջաներում, որ պէտք է նրան պաշտօնից հեռացնել, խիստ պատժի ենթարկել Սյատեկ էլ նա նոյն մրցորդ հրապարակախօն է, նոյն առաջաւոր և բոլորող քաղաքացին։

Թէ գականութեան և թէ կեանքի մէջ նա մի ժողովրդագար է, անվեհեր գրօշակակիր լաւագոյն իգէաների, ազատ մտքի և նորողութեան քաջամարտիկ ախոյիան։ Նա մի խնկելի մշակ է, որ նուիրեց իր ձիրքերը, իր բորբոքուն հոգին, իր եռուն կեանքը ազգային առաջադիմութեան վեհ գործին։

Լինել արթուն դէտ հասարակական կեանքի և միշտ դիմագրաւել սրա պղտոր հոսանքներին, պաշտպանել անօդնական ժողովուրդը զօրելների բոնութեան և անիրաւութեան զէմ, լինել միշտ մրցութեան հրապարակի վրայ և անդազրուն մղել հայրենակիցներին զէպրի լուսաւոր իգէաները, քաղաքացիական ինքնաճանաչութիւնը, զա մի մհծագործութիւն է, որ կարող էր անել միայն լայնուրա տղամարդը, իր մարդկային կոչումը խորապէս հասկացող քաղաքացին, և այդ իգէալիստ քաղաքացին Մ. Նալբանդեանցն է։

Կարապետ կուսիկնաց

# ԳՈՅՉՈՒԹԵԱՆ ԿՐԻՒ

ԱՐԹՈՒՐ ՖԻՇՎԵՐՆԻՑ

(Kampf um's Dasein)

Իմ առաջեւ բարձրանում են դէպ երկնքի գիրկը լուս  
Մեր թշնամու սև ու մոայլ ամրոցները ամրակուու:  
Եւ պարխապներ, աշտարակներ, բերդ ու ամրոցք տյդ հսկայ  
Առաւոտեան պիտի գտունան մեր յարձակման ենթակայ:  
Երկար օրեր քնից զրկուած մարտիկներս վըրանում  
Այժմ մուցած ամբողջ աշխարհ, լուռ նիհրում են, քնանում,  
Միմիայն յոզնած իմ աչքերին քունը գեռ չի մօտենում,  
Քանի վճռի կատարածը գեռ ևս չեմ իմանում:

Դիշերային լուսվիւնը խանգարում է միմիայն  
Պահապանի էն հեռաւոր պահակներից հնչող ձայն.  
Եւ բանակի խարոյկները, տես մերթ ընդ մերթ խաւարում  
Աղօտ անփայլ նսեմ լուսով առկայծում են ու մարում:  
Բայց այ, այնուեղ, այն հեռաւոր պատնէշի մօտ միայնակ  
Քնչ մի սոսուեր, և ով է այն այս ուշ պահուն երեսի.  
«Կանգ տու իսկոյն, ասան շուտով, թափառական.»  
Արդեօք ով ես թշնամի ոք, թէ բարեկամ:

Միթէ իրօք շրջապատող ինձ խաւարն է շփոթում:  
Բայց ահա նա հսկայի պէս դէպ այս կողմ է. ընթանում,  
Ահա արդէն լուսմ եմ ես մի անորոշ խուլ շաշում,  
Հսկայ ոյժով դեռնին գիպչող նորա սուրն է շառաչում.  
Իսկ իւլ դէմքը պատած է մի ամպի քօղով թափանցիկ,  
Արպէս երկնի կամարներում ճառագայթող էն աստղիկ:  
—Տես, ասաց նա, ես եմ ահա պատերազմի վէս հողին.  
Մեծ իշխանը առհասարակ բանակների մարդկային:

«Եւ այժմ, ասա, հկել ես դու վճռել այն հարց կարևոր.  
Թէ վաղն արգեօք մեր այս երկու բանակներից զօրաւոր  
Որբն պսակէ պիտ յաղթութեան դափնէ թափն փառաւոր»:

—Այն կշխուր, որ յաղթութեան վիճակըն է որոշում  
Որպէս մինչ այժմ, նոյնպէս այսօր չէ տատանում, չէ ճօճում.  
Եւ առըտուայ ոլտաերազմի վիճակըն ու կատարած  
Իսկզբանէ մի օրէնքով որոշուած է պայմանած:

«Թախանձում եմ, ասա շուտով.

Կըկործանեմ թշնամւոյն.

Արգեօք վաղը սուր սուսերով

Ի՞նձ պիտ օգնես դու ողջոյն»:

—Կեանսքի կռւում ես կանգնած եմ լաւերի հետ յաւխտեան  
Որովհետեւ, գլացիր, թոյլը պիտ կոտորուի անպատճառ  
Եւ հզօրին պիտ վիճակուի յաղթանակը անպայման:

«Երբ թշնամու բանակի մէջ դու կըկանգնես օգնական՝  
Ել ծայրայեղ ջանքը նոյնիսկ չի ունենալ չնչին շահ,  
Այն ժամանակ ինձ այլևս էլ չի մնալ ուրիշ բան,  
Բայց թէ միայն ձեռքյետ քաշել, մնալ անգործ, անվստահ»:

—Որպէս օրէնք է սրբազնն.

Կըպաշտպանեմ ես լաւին.

Վաղը ցոյց տուր՝ դու ես արժան

Երբ դրօշներ ծածանին:

Ասոց եղաւ աներեսյթ: Դէհ շուտ ուրի, ընկերներ.  
Տեսէք այզը հալածում է մութն ու իւաւար գիշերուայ:  
Առէք զէնքեր, հեծէք ձիանք. ապա շուտով, պատրաստ կազմ  
Հնչեցրէք փող ու թմբուկներ, որ ընթանանք պատերազմ,  
Որը այսօր պիտ ունենայ մի արիւնոտ կատարած.  
Կոռէք, կոռէք դուք իմ քաջեր, սա է որ պիտ ցոյց տայ մեզ.  
Արգեօք կորուսան է մեր բաժին, թէ յաղթանակ վեհապանձ:

Գերմ. թարգմ. Եան-Հուս:

# Օ Բ Ե Ռ Լ Ե Ն Ե Ր Ը\*)

Դ է Պ

Թ բ ն է Շ ա զ լ ե ր ի

XIII

Օ բ ե ր ն է ի ս լ ա ր ի ս պ ն ե ր ը

Տասն օր յետոյ, կիւսիէնն ու մայքը մտան այն տունը,  
ուր տիկին Օքերլէ անցկացրել էր իր ամբողջ երեխայութիւնը,  
Բիհէքների տունը, որ իր երեք յարկերը՝ կանաչ փոքրիկ ա-  
պակեռոր պատուհաններով և եռանկիւնի կատարով՝ բարձրա-  
ցնում էր Օքերլէի վաղեմի պարիսպներից վերև, երկու բոլորո-  
վին միօրինակ և միենոն — տասնեւթեցներորդ դարից մնացած  
տների մէջտեղ:

Տիկին Օքերլէ սանդուխներից բարձրացել էր պահապանին  
տակով.

— Քիչ յետոյ մի պարոն պէտք է գայ և ինձ հարցնէ, ըն-  
դունեցէք նրան:

Նա մտել էր տուաշին յարկի մեծ սենեակը, որ մէկն էր  
կահաւորուած փոքրաթիւ սենակներից և ուր տեսել էր իր  
ծնողների ապրելն ու մետնելը. կաղնեայ մահճակալ, մուգ յախ-  
ճապակեայ վառարան, աթոռներ՝ ծածկուած՝ ըրդեայ սփոցով,  
մի խաչելութիւն, շրջանակուած՝ գոգաւոր ապակով, 1837  
թուին նտալիայում կատարուած մի ճանապարհորդութիւնից  
բերուած երկու տեսարաններ — այդ բոլորը մնացել էին իրանց տե-  
ղումը և միենոյն կարգով: Շէմքից անցնելիս, ընազդաբար նա  
փնտուեց օրհնուած ջրի ամանը, որ կախուած էր զրան վերեի  
սեամից, և ուր հսկը, երբ սենեակ էին մտնում, կոխում էին  
իրանց սատները, ինչպէ մի սրբավայրի շէմքից անցնելիս:

\*) ՏԵս «Մուլճ» № 11—12:

Երկու կանայք գնացին պատուհանի մօտ Տիկին։ Օբերլէնագել էր նոյն այն ու շըջազգեստը, որ կրում էր Ստրազբուրգի նահանգապետին ընդունելիս։ Լիւսիէն, իր երանգաւոր խարսիաշ մազերի վրայ, կարծես նրանց ստուերով քողարկելու համար, զրել էր մի յարդեայ, լայնելլր, մոխրագոյն գլխարկ, զարդարուած մինոյն գոյնի փետուրներով։ Մայրը նրան գեղեցիկ էր գտնում, բայց նրան այդ մասին ոչինչ չէր ասում։ Նա սիրով կ'ասէր այդ, եթէ նշանածը չլինէր այն անձը, որին սպասուի էին, և եթէ հէնց տան տեսքը և նրանում բնակուող պատուական ալզասկցիների հետ յիշողութիւնները աւելի ևս սաստկացրած չլինէին իր զգացած վիշտը։

Նա գլուխը յենեց ապակիներին և նայեց վար, պարտիզում, գնդանեկ կտրուած մացաններին, օճապոյտ և նեղ ծառուղիներին, ուր նա խազացել, մեծացել, երազել էր։ Պարտիզի այն կողմ, քաղաքի պարխուպների վրայ հաստատուած էր գրուարանը, և այնանդ, միքանի բայլ հեռու տնկուած շագանակիների արանքից բացում էր կապոյտ զաշտը։

Լիւսիէն, որ Օբէրնէ զալուց իվեր գետ բերանն անզամ չէր բացել, զախնալով որ մի գուցէ վրդովէ մի հոգու, որ ինքն իրան հարց էր տալիս, թէ արդեօք կարող պիտի լինՔ կատարելու իր զոհաբերութիւնը մինչեւ վերջը—մօտեցաւ իր մօրը, և հարցրեց ըստ երեսյթին յուզիչ ձայնով։

—Մայրիկ, երկի գուք շատ էք պարապում։ Նկատի ունենալով ձեր համոզմունքները, ձեր արածը համարեած հերոսութիւն է։

Մայրը աչքերը չբարձրացրեց, բայց արատունքները աւելի շուտ ըթթեցին։

—Ի՞նչ որ անում էր, թելազբում է ձեզ կնոջ սիրու և ես, զրտ համար, հիանալի եմ զանում ձեր վարմունքը։ Ինձ թւում է որ ես ձեր արածը չպիտի կարողանայի անել—հրաժարուել, միչև այդ տատիճան, իմ անձնականութիւնից։

Նա չէր կարծում որ իր խօսքերն անողոք են։

—Ուրիմն դու ուզում ես ամուսնահալ, հարցրեց մայրը յանկարծ զլուխը բարձրացնելով։

—Անկասկած, այն։ Այժմ մենք ձեզ հման չենք նայում ամուսնութեան վրայ։

Մայրը լիւսիէնի ծիծաղից հետեւցրեց, որ ամուսնութեան գաղափարը մեխուած էր աղջկայ ուզեղում և վիճաքաթեան համար բռպէն անյարմար համարելով լսեց։

—Ես երախտապարտ եմ ձեզ, շարունակեց երիտասարդ աղջիկը։

Յետոյ մի բռովէ վարանելով.

—Բայց և այնպէս, ի հարկէ դուք եկար այստեղ և յանձն սովոր ընդունել պ. դը Թարնովին ոչ թէ հօրս կամքը կատար բելու հստար, այլ...

Նա աչքին ածեց սենետի շուրջը և բեկոնց իր մօր վրայ, որը տառապում էր: Այս վերջինը անմիջապէս պատառ խանցց.

—Այն, ոչ թէ հօրդ հնագանդուելու համար:

—Ես համոզուած էի: Բայց ի՞նչը ձեզ զրդեց:

—Քիչ յետոյ կ'իմանաս:

—Պ, Թարնովի տռաջ պիտի ասես:

—Այն:

Լիւսիէնի դէմքի վրայ գծագրուեց խոր դժգոհութիւն:

—Ճիշտ է մենք բոլորովին հակարծիք ենք միմիանց, բայց ևս չեմ հաւատում, որ դուք կարող կը լինէք իմ նշանաձին ինձանից բաժանել:

Տիկին Օբերլէի արտևանունքների անկիւնում երևեցան արտասուրքի երկու կաթիւնիր:

—Ո՞հ, լիւսիէն:

—Ո՞չ... Չեմ հաւատում... Չեր յայտնելովը շատ կարևոր է:

—Այն:

—Ի՞ս մասին է:

—Ո՞չ, ըստ մասին չէ:

Երիտասարդ աղջիկը բաց արեց բերանը խօսքը շարունակելու համար, յետոյ լոեց, մի բիչ դժգումուեց և ամբողջապէս զարձաւ դէպի գուռը, մինչդեռ մայրը միայն կիսով չափ գտնում էր միենոյն կողմը: Մէկը բարձրանում էր սանդուխներից: Դա վիշելս ֆոն Թարնովը էր. նրա տռաջից զնում էր դռնապանուհին, որը բարձրացաւ մինչև սանդուխի գլուխը և յետ զարձաւ: Թարնով՝ դռնի բացուածքից նշմարեց ափին Օբերլէին և ինքնամփոփուելով՝ որպէս զօրահանդէսում, և արագաքայլ անցնելով սենետի միջից, եկաւ խոնարհեցրեց իր գոռող գլուխը նախ մօրը և ապա երիտասարդ աղջկայ առաջ:

Նա կրում էր քաղաքացիական շորեր և շատ վայելուչ տեսք ունէր: Յուզմունը դժգումնեցնում և ակօսում էր նրա զէմքը: Նա արտասանեց քրանուերէն, ծանր, ծանր.

—Շնորհակալ եմ ձեզանից, ափին:

Յետոյ նայեց լիւսիէնին, և նրա կապոյտ, անժաղիտ աչքի մէջ փայլատակեց հպարտ ուրախութեան մի կայծ:

Երիտասարդ աղջիկը ծիծաղեց:

Տիկին Օբերլէ բարկութիւնից ցնցուեց, բայց աշխատեց

զսպել ինքն իրան: Նա շեշտակի նայեց վիլհելմ ֆոն Ֆարնովի կարծր-կապոյտ աչքերին: Տեղակալը անշարժ կանգնել էր զինուորականի զիրքով, որպէս մի մեծ պետի տռաջ:

—Ինձնից չպէտքէ շնորհակալ լինել պարոն: Ես ոչ մի դեր չունեմ այս գործում: Ամուսինս ու աղջկու են որոշել ամեն ինչ:

Դը Ֆարնով սորից խոնարհութիւն արեց:

—Ես կը ցանկայի ազատ լինել մերժելու ձեր ցեղը, ձեր կրօնը, ձեր բանակը, որոնք իմը չեն... ինչպէս տեսնում էր ես ձեզ հետ անկեղծ եմ խօսում... Ես ուզում եմ ձեզ անպատճառ յայտարարել, որ ոչինչ պարտական չէք ինձ... Բայց որ նոյնակս ես ոչ մի անարդար թշնամութիւն չունեմ ձեզ դէմ: Ես հաւատում եմ նոյնիսկ, որ զուք մի պատուական զինուոր էք, և մի յարգելի անձնաւորաւթիւն: Այնքան հաստատավէս հաւատում եմ, որ ձեզ պիտի հաղորդեմ մի մտահոգութիւն, որը տանջում է ինձ անդադար...

Նա մի բոտէ վարանեց և շարունակեց.

—Աշէյտում մի սարսափելի տեսարան տեղի ունեցաւ, երբ կոմա զը Կասորվեցը այցելութեան եկաւ մեզ մօտ...

—Կոմա զը Կասորվեցը պատմեց ինձ բոլորը, տիկին: Նա նոյնիսկ խորհուրդ տուեց ինձ հրաժարուել օրիորդ Լիւսիէնից: Բայց ես չեմ հրաժարում: Որպէսզի հրաժարուեմ, պէտք է որ...

Նա սկսեց ծիծաղել.

—...Պէտք է որ Կայսն իսկ հրամայէս: Ինչպէս ասացիք ես պատուական գերմանացի եմ, և հեշտութեամբ չեմ հրաժարուի իմ յաղթանակի պտուղներից: Եւ պ. զը Կասորվեցը իմ հօրեղբայրն է, ուրիշ ոչինչ:

—Բայց զուք չզիտէք այն, որ իմ կեսրայրը, որ երկոր ասարիներից իվեր կորցրել է իր խօսելու կարողութիւնը, իր զայրոյթի, իր ծայրայեղ ցաւի մէջ խօսեց առաջին անգամ: Նա աղաղակեց Ժանին. «Կորիր, կորիր!» Ես ինքս լսեցի այդ խօսքերը և վագեցի նրա մօտ: Լաւ ուրիմն, պարսն, ինձ տմենից աւելի յուզողը այն չէր, որ ես տեսայ ոլ. Ֆիլիպ Օքերլէին ուշաթափ եղած, ձգուած՝ սրահի գորգի վրայ. ոչ, այլ իմ որդու դէմքի արտայայտութիւնը, այն է, համոզում թէ նա այդ բոպէից գնուել է արդէն թողնել, հետանալ Ալզասից:

—Օ՛հ, բացազնչեց Ֆարնով, լաւ չէր լինի այդ:

Մի հայեացը զցեց գեղանի Լիւսիէնի վրայ, և տեսաւ, որ, իբրև ժխտումի նշան, ցնցումէր խարտեաշ մազերը:

—Այս, լաւ չէր լինի, շարունակեց մայրը, առանց իմանալու թէ ի՞նչ մտքով էր գործածել Ֆարնով այդ խօսքերը: Ինչպիսի

ծերութիւն պիտի լինի իմը, իմ երկպառակուած ընտանիքի մէջ, առանց իմ աղջկան, որը գուք խլում էք ինձանից, առանց իմ որդու, որը անա մեկնում է... Դուք գուցէ զարմանում էք, որ ես ձեզ հաղորդակից եմ անում մի այսպիսի մտառանջութիւն...

Դը ֆարնով խուսափոխական մի շարժում գործեց:

—Ես ձեզ հաղորդեցի այս բոլորը նրա համար, շարունակեց մայբը աւելի թափով, որ ես ներկայ դէպքում ոչ մի խորհրդատու, ոչ մի օգնական չունիմ: Լաւ մտածեցէք: Ես ժւմ դիմեմ: Ամուսնուս: Նա պիտի բարձրանայ. իսկոյն իմ որդու ընթացքի դէմ պիտի մաքառի. սրա, նրա ապեցութեան պիտի դիմէ, և ութ օրից մենք պիտի լուսը որ ֆանը մակը է կայսըութեան հիւսիսային կամ արևելեան բանակը, իբրև զինուոր... Ասացէք, ժւմ դիմեմ. իմ եղբօրը: Նա աւելի շուտ կը դրդէ իմ որդուն հեռանալ Ալզասից... Խնչակս առնում էք, պարոն, միայն գուք էք մնում, որ կարող էք մի ճար զտնել իմ ցաւին...

—Իսկապէս թ'նչ ճար, տիկին:

—Շատ... ժամը խոստացել է ինձ մտնել բանակ: Դուք կարող էք այսպէս անել որ լաւ ընդունեն նրան բանակում, որպէսզի չխրոնի, գուք կարող էք նրա համար պաշտպաններ, ծանօթներ, ընկերներ գանել, նրա հետ խօսել... Վաղուց է գուք ճանաչում էք նրան... Դուք կարող էք արգելել նրան, որ անձնատուր չլինի նա իր մուայլ մտքերին, չգործադրէ, եթէ նորից փորձի, իր մտադրութիւնը:

Տեղակալը խիստ յուզուած՝ յօնքերը կիտեց, այլայլուեց տիկին Օքերէի վերջին խօսքերից յետոյ:

—Տիկին, ասաց, մինչև հոկտեմբերի 1-ը ձեր որդին խոստացել է ձեզ մնալ Ալչէյում: Այնուհետեւ ես ինձ վրայ եմ առնում պահել նրան:

Ցետոյ, ինքնիբան խօսելով, ընկդմուած՝ մի մտածմունքի մէջ, որը ամրողապէս չէք արտայայտում.

—Այն, մրննջաց, շատ վատ... չպէտք է:

Լիւսիէն լսեց:

—Է՞ն, ինչ արած: Ես կը յայտնեմ իմ եղբօր գտղանիքներից մէկը: Բայց նա ինձ կը ներէ, երբ իմանայ, որ զաղանիքը պարզել եմ մօրս խաղաղացնելու համար... Մայրիկ, հանդիսատ կացէք. Ժանը չի հեռանայ Ալզասից:

—Որովհետեւ...

—Նա էլ սիրում է:

—Ում, որտե՞զ:

—Ալչէյում, Օդիլ Բաստիանին:

Տիկին Օրերլէ հարցրեց, ուրախութիւնից յուզուած.

—Իսկապէս, ճիշտ է:

—Նոյնքան ճիշտ, որքան յայտնի է թէ մենք այստեղ ենք  
և ոչ ուրիշ տեղ: Նա ինքն է ինձ պատմել:

Մայրը փակեց աչքերը, և, յուզումից համարեա շնչառեղձ  
եղած, հեխճ.

—Փամաք Աստուծոյ... վերջապէս ծագում է ինձ համար  
յոյսի մի նշոյլ... թողէք որ լաց լինեմ: Մեծ կարիք ունեմ ար-  
տասուելու:

Չեռքով ցոյց տուեց, սանդուխի միւս կողմում, մի սեն-  
եակ, որի գուռը նոյնպէս բաց էր և լուսաւորուած՝ մի մեծ  
պատուհանով, որի միջից նշանաւում էր մի ծառ:

Ֆարնով խոնարհեց իր բարձր հասակը ցոյց տալով Լիւ-  
սիչնի, որ պատրաստ էր նրան հետեւելու: Եւ երիտասարդ  
աղջկը ուղղուեց գէտի գուրս անցնելով այն սենեակից, ուր իր  
նախոհայրերը այնքան սիրել էին Ալզաս:

Տիկին Օրերլէ դէմքը շուռ տուեց պատուհանի մօտիկ  
հստած՝ ճակատը յինեց ապակիներին, որտեղից դիտել էր իր  
երկիխայութեան ժամանակ ալզասական ամրողջ երկիրը: «Օդի՛  
Բաստիան, Օդի՛,» կրկնում էր խեղճ կինը: Մօր երևակայու-  
թեան մէջ ծնունդ էր առնում ջահէլ աղջկայ պայծառ դէմքը,  
ժպիտը, շրջապեսուր, Ալզեյմի այն տեկիւնը, ուր նու ապրում  
էր գեղեցկութեան, բարոյական առողջութեան մի ամրողջ քեր-  
թուած: «Ե՞նչ համար ժանը ինձ չյայտնեց իր ծրագիրը, մը-  
տածում էր Սա մի փոխարինութիւն է միւսին... Այժմ ես  
հանդիսա եմ... Ես ժանը չպիտի բաժանուի ինձանից, բանի  
որ կապերից առենառութեալը կապում է նրան Ալզասի հետ...  
Վերջ իվերջոյ գուցէ մեզ աջողութիւն առունուա յամա-  
սութիւնը... Ես նրան պարզ կերպով ցոյց կը տամ այն զոհոս-  
դութիւնը որ կատարում ենք ժանն ու հս, ընդունելով այդ  
գերմանացուն...»

Նոյն բոսկին, հանդիպակայ սենեակից, ուր բացի երկու  
աթոուից ոչ մի կահ չկար, Լիւսիէն ու Ֆարնովը կողք կողքի  
հստած՝ Լիւսիէն մի արմուկը յինած բաց պատուհանի վանդա-  
կին, տեղակալը փոքր ինչ յետե, նրան գիտելով և նրա հետ  
սատիկ ողերութեամբ խօսելով, —երբեմն գալիս էին ծիծաղի  
ագմուկներ: Տիկին Օրերլէն վիրաւորում էին այդ քրքիջները,  
բացց նա ետ չէր գառնում: Նա շարունակում էր նայել, ալզա-  
սական դաշտերի խուսափուկ կապոյտի մէջ, սփոփիչ պատկե-  
րը, որ արթնացրել էր Լիւսիէն իր երևակայութեան առաջ:  
Վիհելս ֆոն Ֆարնով՝ այդ միջոցում խօսում էր և օգտը-

ւում էր այդ սուր ժամից իրան հասկացնելու համար Լիւսիէնին։ Այս վերջինը մտիկ էր անում, ըստ երևոյթին մոլար հայացքով և երազուն, բայց իսկապէս ուշագրութեամբ, իր պատասխանները մի ծիծաղով կամ դէմքի նշանակալից մի կծկումով ընդունով։

Գերմանացին ասում էր. «Դուք ինձ համար կազմում էք մի փառաւոր յաղթանակ։ Խմ գնդի սպաների մէջ պիտի լինէք որպէս թագուհի... Ֆրանսիական ծագումից, բայց Աւստրիայում ծնուած մի կին էլ կայ, սակայն նա տգեղ է։ Կայ և մի խտալուհի, կան գերմանուհիներ և անգլուհիներ։ Դուք, օրիրնդ, միայն զուք կրում էք նրանց բոլորի շնորհների գումարը. գեղեցկութիւն, սրամութիւն, փայլ, գերմանական գաստիարակութիւն և ֆրանսիական ինքնարուղիս ոգին... Հէնց որ ամուսնանք ես ձեղ կը մոցնեմ Բերլինի բարձր շրջաններում... Ինչպէս կալողացաք զուք ապրել, մեծանալ Աղէյմում...»

Լիւսիէն աւելի գոսող, քան քնքոյշ հոգի ունէր, և զրահամար էլ այդ տեսակ փաղաքշանքները զուր էին գալիս նրան։

Նոյն ժամին, օգտուելով այն գէպքից, որ ոլ. Ժողէֆ Օրերէ բացակայ էր—նա գնացել էր Բարբ—ոլ. Ռւլրիխ այցելութեան էր եկել իր քրոջ որդուն, ժամի։

Երիտասարդի զօրանոց մտնելու օրերը մօտեցել էին։ Պէտք էր նրան յայտնել վերջապէս Օղիւ Բաստիանի հօր մօտ կատարուած դիմումի անյաջողութեան մասին։ Պ. Ռւլրիխ՝ երկար վարանելուց յետոյ, համոզուած լինելով, որ աւելի զժնվակ էր մի երիտասարդ սէր ջախջախել քան պատերազմի գնալ, մտաւիր քրոջորդու մօտ, և ասաց նրան ամեն բան։ Մի ժամից իվեր խօսում էին, կամ աւելի ճիշտ մօրեղբայրը մենախօսում և աշխատում էր միիթարել ժամին, որ նրա առաջ բաց էր արել իր վշտոտ սիրաը և լաց էր լինում առանց քաշուելու։

— Լաց, փաքքիկս, ասում էր մօրեղբայրը։ Հէնց այս բոպէս մայրդ ներկայ է լինուած Լիւսիէնի և միւսի առաջին տեսակցութեան։ Խոստավանուած եմ, որ հս նրան չեմ հասկանում... Լաց, բայց մի վհատուի։ Պէտք է որ վաղը զու քաջ լինեաւ Մտածիր, որ երեք շաբաթից յետոյ զու զօրանոցում պիտի լինեաւ։ Զալէտք է որ նրանք տեսնեն քո լաց լինելը։ Է՞ս տարին մի կերպ կ'անցեկենայ, զու կը վերապանաս մեկ մօտ, և, ո՞վ է լիմանում...»

Ժան սրբեց իր արտասուրները, և վճռապէս առաց։

— Ո՛չ, մօրեղբայր։

— Ի՞նչ, ո՞չ։

Այն միևնույն տեղում,ուր անցեալ ձմեռ, երկուսը միասին նստած այնքան զուարձութեամբ խօսել էին ապագայի մասին, նստել էին և այժմ, մէկը՝ բազմոցի մի ծայրին, միւսը՝ միւս ծայրին։ Դրսում արեգակը խոնարհուում էր, ճառագայթարձակ դեռ ևս և տաք։ Պ. Ուլրիխ յանկարծ Ժանի ցաւագին դէմքի վրայ գտաւ կորովի այն արտայայտութիւնը, որ նրան այն անդամ զարժացրել, հիացըրել էր։ Վօժերի գոյնն ունեցող աչքերը, երկար յօնքերի տակ, խուսափուկ ցոլքերով լցուեցին։ Եւ սակայն բիբերը անշարժ մնացին։

—Ո՞չ, կըկնեց Ժանի։ Պէտք է որ դուք այդ գիտենաք, զուք, ինչպէս և մի ուրիշը, որին պիտի ասեմ. ևս չպէտք է անեմ իմ զինուրական ծառայութիւնն այստեղ։

—Ապա ո՞րտեղ պիտի անես։

—Ֆրանիայում։

—Ի՞նչ ես ասում։ Լուրջ։

—Կատարալապէս լուրջ։

—Եւ շուտով պիտի մեկնես։

—Ո՞չ, զօրաբանակ մտնելուց յետոյ։

Պ. Ուլրիխ բարձրացրեց թեերը.

—Դու զժուել ես, Բ՞նչ։ Դու ուզում ես փախչել հէնց այն ժամանակ, երբ ամինից աւելի զժուար է և վտանգաւոր։ Դու զժուել ես։

Սկսեց երթեեկել սինեակում, պատուհանի առաջից մինչ չե գիմացի պատը։ Յուզումից նա մեծ շարժումներ էր անում, և սակայն նա աշխատում էր ցածր խօսել, որպէսզի առն մարդիկ չլսին նրանց։

—Ինչու համար յետոյ։ Վերջապէս ասա տեսնեմ ինչու յետոյ, և քեզ չեմ հասկանում։ Ինչու։

—Ես մտադրել էի մեկնել. նախ քան բանակ մտնելս, ասաց անվլուով երիտասարդը։ Բայց մայրիկը գուշակել էր իմ մտադրութիւնը և ինձ երդուել տուեց, որ չզնամ, մտնեմ զօրանոյ։ Հետեւաբար պիտի մտնեմ։ Մի՛ փորձէք յետ կանգնեցնել ինձ իմ մտադրութիւնից։ Թէս անմիտ բան է, բայց խոստացել եմ։

Պ. Ուլրիխ ցնցեց ուսերը։

—Այս, նախ կամ յետոյ մեկնելը լուրջ հարց է, բայց զլխաւորն այդ չէ։ Էականը որոշուած է։ Ո՞վ, Բ՞նչը զրգեցքեղ կայացնել այդ որոշումը։ Դուցէ նրա համար որ պապդ կանչեց։ «Կորիք»—զու ուզում ես գնալ։

—Ո՞չ, նա մտածեց այնպէս, ինչպէս ես, ուրիշ ոչինչ։

—Դուցէ իմ բարեկամ Բաստիանի մերժումն է պատճառ։

—Ո՞չ էլ այդ: Եթէ նա զրական պատասխան տուած լինէր,  
ևս պէտք է նրան խոստովանուէի այն, ինչ ասացի ձեզ այս ե-  
րեկոյ, ես ոչ Գերմանիայում պիտի ապրեմ և ոչ էլ Ալգասում:

—Իսկ քըոջդ ամուսնութիւնը:

—Այն, այդ հարուածն իսկ բաւական էր, որ ես փախչէի  
այսեղից: Ի՞նչ կը լինէր իմ կեանքը Ալէյմում: Մտածել էք  
այդ մասին:

—Լսիր, ժան, դու եքում ես այդպիսով իբրև ալգասեցի  
բու տեղը:

—Ո՞չ, ես ոչինչ չեմ կարող անել Ալգասի համար:  
Ես չեմ կարող այլևս զրաւել ալգասեցիների վստահու-  
թիւնը, իմ կանաճելի, վտանգաւոր հօր և մի որուսիացու  
հետ ամուսնացած քըոջ պատճառով:

—Պիտի ասեն, որ դու դասալիք եղար:

—Թող այդ գան ինձ ասեն, երբ ես ծառայելիս լինեմ  
ֆրանսիական ըանակում:

—Իսկ քո մայրը, միթէ դու նրան պիտի թովնես այս-  
տեղ, մենակ...

—Դա է գլխաւոր առարկութիւնը, այ, հէնց այդ: Ես ինքս  
մտածեցի զրա մասին... Մայրս չի կարող պահանջել սակայն,  
որ իմ կեանքն էլ գոհուած ու զատարկ անցնի ինչպէս իրանը...  
Սկզբում գուցէ ինձ զատապարտի, ըայց յետոյ անկասկած նա  
կը գովի իմ զարմանքը, որովհետև ես ազատուած կը լինեմ  
այն անտանելի լծից, որ ծանրացել է իր վրայ... Այն, նա ինձ  
կը ների: Եւ յետոյ...

Ժան ցոյց տուեց ժանիքաւոր և կանաչ վօժերը:

—Եւ յետոյ կայ թանկազին Ֆրանսիան, ինչպէս դուք էք  
տառած: Նա է որ ինձ ձգում է: Նա է որ իմ որտում խօսեց  
առաջինը:

—Երեխայ, բացազանչեց ալ, Ռւլրիխ:

Կանգնեց երիտասարդի առաջ, որ մնում էր նստած և  
ժպտում էր համարեա:

—Ո՞րքան գեղեցիկ պէտք է լինի մի աղք, փոքրիկա, որ-  
ով պէսի երեսուն տարուց յետոյ նա զարթեցնէ այնպիսի սէրեր,  
ինչպէս քոնն է: Ո՞րտեղ է այն ժողովուրդը որի կարօտը քա-  
շէին այդպէս: Օ՞հ, օրհնուած ցեղ, որ խօսում է զեռես քո  
սէլ...

Մի ըոտէ կանգ առաւ:

—Եւ սակայն, պէտք է որ քեզ ասեմ, թէ դէպի ի՞նչ զըժ-  
ուարութիւններ և պատրանքներ զնում ես: Դա իմ պարտակա-  
նութիւնն է ժան, իմ ժան, երբ դու սահմանն անցնես և ֆրան-

սիացիութեան իրաւանքդ պահանջես, ըստ օրինի, և մի տարուայ զինուորական ծառայութիւնդ կատարես, ինչ պիտի անհսայնուհետեւ:

—Ես միշտ կարող եմ իմ հացը շահել:

—Այդքան էլ վստահ մի լինի! Մի կարծի, որ ֆրանսիացիները գրկարաց պիտի ընդունեն քեզ, որովհետեւ դու ալզասիցի ես... Նրանք գուցէ մեզ մուացել են աւելի, քան մենք նրանց... Յամենայն գէպս, նրանք նման են այն մարդկանց, որոնք մի շատ հին պարտք ունեն. չկամութեամբ և ուշ են վճարում... Զկարծես որ քեզ կ'օգնին Ֆրանսիայում աւելի քան մի ուրիշին:

Ժան Նրան ընդհատեց.

—Յամենայն դէպս ես վճռել եմ: Էլ չխօսենք զրա մասին, խնդրում եմ:

Այն ժամանակ, Ռուրիխ մօրեղբայրը, որ շոյում էր իր մոխրագոյն ու որածայր մօսուքը, որպէս թէ այնտեղից բղիւեցնելու համար խօսքերը, որոնք տրատւնջ էին արտայայտում թանկազին երկրի գէմ, լսեց, երկար գիտեց իր քրոջ որդուն, մեղակցութեան մի մպիտով, որը միծանում էր և ծաղկում: Եւ վերջ իվերջոյ ասաց.

—Եյժմ՝ որ իմ պարտականութիւնը կատարել եմ, և անկարող եմ եղել քեզ համոզել, իրաւունք ունեմ քեզ խոստովանելու, ժան, որ ես էլ երրեմ ունեցել եմ այդ սիտքը... Ի՞նչ կ'առէիր, եթէ ես էլ քեզ հիտ գայի ֆրանսիա:

—Դժուք:

—Ռէ անմիջապէս: Իմ այստեղ ապրելու նպատակը այն չէր, որ տեսնեմ, թէ ի՞նչպէս ես մեծանում դու և ի՞նչպէս շարունակում ալզասական աւանդութիւնը. ոչ, իմ կեանքի նպատակը բոլորպին այլ էր... Բայց նա խորտակւում է ահա... Գիտե՞ս, թէ իմ գալը լաւագոյն միջոցներից մէկն է, որ զու վատ ընդունելութիւն չկանհս ֆրանսիայում...

Ժան այնքան բուռն կերպով յուղուեց այդ յայտնութիւնից, որ անմիջապէս ասաց.

—Լսեցէք, Ռուրիխ մօրեղբայր, ես ձեզ կարիք ունեմ ոչ թէ ապագային, այլ մի քանի օրից... Ես ձեզ յայտնեցի իմ որոշումը, հէնց նրա համար, որ դուք ինձ օգնէք...

Վեր կացաւ, գնաց գէպի գրադարանը, որը գտնուում էր գրան կողքին, վերցրեց մի սպայախմբի (etat-major) քարտէզ, և, բաց ամսելով, վերադարձաւ բազմոցի մօտ:

—Նոտէք ինձ մօտ, մօրեղբայր, և մի քիչ աշխարհագրութեամբ զբաղուենք:

Ծնկների վրայ փռեց Ստորին-Ալզասի սահմանադիր քար-

տէղը:

— Ես վճռել եմ փախչել այստեղ, տասց: Պէտք է փոքր

ինչ ուսմասիրենք:

Ուլրիխ մօրեզբայրը զլուխը թափ տուեց իրքե հաւա-

նութեան նշան, և շահագրգոււեց այնպէս, կարծես որսորդու-

թեան կամ մօտալուտ պատերազմի մի պլանի մարին լինէր

խօսքը:

— Լաւ տեղ է, բացագանչեց, Մեծ-Ազրիւրի կողքից: Ինձ

թւում է, արդարեւ, որ Ստրազբուրգից ամենամօտ սահմանա-

զլուխը այդ կէտն է... Բայց ով տուեց քեզ այդ տեղեկու-

թիւնը:

— Ֆրանսուան, Ռամշպախէրների միջնակ որդին:

— Այդ կէտից ապահով է: Երկաթուղի պիտի նստե՞ս:

— Այս,

— Մինչև որտե՞զ:

— Երկի մինչև Շիրմէկ:

— Ոչ, զա չափազանց մօտ է սահմանագլխից և չափա-

զանց կարեսը կայարան է: Եթէ քո տեղդ լինէի նախորդ

կայարանը Ռուս-Հէրս-բախ կ'իջնէի:

— Լաւ: Այստեղից կը նստեմ կառքը, որ նախապէս կը

վարձեմ... կը գնամ մինչև Մեծ-Ազրիւր, կը նետուիմ անտառ:

— Ուզում ես ասել, կը նետուի՞նք:

— Ի՞նչ, միթէ դուք էլ էք զալիս:

Երկու մարդիկը միմեանց նայեցին, միմիանցով հպար-

տացած:

— Իհարկէ, շարունակեց պ. Ուլրիխ, զարմանալու ոչինչ չկայ: Դա իմ արհեստն է: Ուղերութեան անձանձիր սիրահար, ես ուզում եմ գնալ ծանօթանալ այդ տեղերի հետ, յետոյ, երբ անտառը ուսումնասիրեմ այնպէս, որ կարող լինեմ նոյն իսկ գիշերով իմ ճանապարհը գտնել, այն ժամանակ եսքեզ կ'ասեմ, թէ ծրագիրը լմա է թէ ոչ, և որոշուած ժամին, դու ինձ կը գտնես քո կողքին պատրաստ: Բայց չմոռանառ զբոսաշրջիկի, տու-

րիսափ ձեռվ հագնուելու, կակուզ զլխարկ, սրնքակալներ, և

մանաւանդ բեռի նշոյլ անզամ չունենաս:

— Անկասկած:

Պ. Ուլրիխ նորից հայեցքը զցեց պատուական ժամնի վրայ, որը առ յաւէտ թողնում էր Օբերէների, Բինէյների,

բոլոր նախնիքների հողը:

— Յամենայն դէպս, առա, հակառակ վտանգի հաճոյքին,

քո վախուսուը տիսուր է, այնպէս չէ:

—էհ, ասաց Փան, ջանալով ծիծաղել, կը գնամ՝ կը տես-  
նեմ Հռենոսը այնտեղից, ուր նա ազատ է հռում:

Պ. Ուլրիխ նրան համբուրեց:

—Արիութիւն, փոքրիկ, շուտով գարձեալ կը խօսակցինք:  
Ուշազրութիւն արա որ ծրագիրդ զաղանի պահես: Ո՞վ է այն  
միւսը, որին ուզում էս յայտնել քո մտազրութիւնը:

Պ. Բաստիանը.

Մօրեղբայրը հաւանութիւն տուեց, և մինչեւ շէմքը տռա-  
ջանալուց յետոյ, մատնացոյց անելով հարեան սենեակը, որ-  
տեղից այլես դուրս չէր գալիս ու. Ֆիլիպ Օրերէն:

—Այդ գժրախտը: Եւ մտածել, որ նա, կէս-մարդ լինելով  
հանդերձ, շատ աւելի նախանձախնդիր է իր պատուին, քան  
մնացեալ բոլորը միասին վերցրած: Ցաւսութիւն, իմ Փամ:

Մի քանի ժամ յետոյ, սովորութեան համաձայն Փան գնաց  
գործարանի գրասենեակը: Բայց այնքան ցըռւած էր ուշազրու-  
թիւնը, որ անկարող եղաւ ոչ մի աշխատանք կատարել:

Նրա հետ խօսելու կարիք ունեցող ծառայողները նշմա-  
րած լինելով նրա մտացիրութիւնը, գերմանացի վերակացու-  
նէրից մէկը առաց իր հայրենակից գրագիրներին:

—Գերմանական հեծելազօրքը աւերի է մատնում կարծես  
այս կողմերը. մեր պատրոնը համարեա գժուածի կերպարանը  
է ստացել:

Միհնոյն հայրենասիրական զգացումը նրանց բոլորին ծի-  
ծաղել տուեց, անշշուկ:

Յետոյ ընթրիքի ժամը հնչեց: Փան սարսափում էր մօրն  
ու Լիւսիէնի ներկայութիւնից: Այս վերջինը, սեղանատուն  
մտնելու բովէին բանեց և պահեց եղրօրը, և կիսաստուերի մէջ,  
գորսվագին համբուրեց նրան իր կրծքի վրայ սեղմելով: Իսչպէս  
բոլոր նշանաձները, Լիւսիէն մի քիչ համբուրում էր միւսին  
գուցէ անդիտակցաբար: Սակայն մտածումը Փանի վրայ կենտ-  
րօնացած էր: Լիւսիէն մրմնջեց:

—Ես նրա հետ խօսակցեցի երկարօրէն, Օրենքում: Նա  
ինձ շատ դուր է գալիս, որովհետեւ գոռող է ինձ նման: Նա  
ինձ խոստացաւ քեզ պաշտպանել զօրաբանակում: Բայց նրա  
մասին ընթրելու ժամանակ չխօսենք. չլինի: Աւելի յարմար է  
լուել: Մայրիկի վարմունքը հիանալի էր: Խեղճ կինը ինձ յուզեց:  
Նրա համբերութիւնը սպառուել է... իմ Փան, ևս հարկադրուած  
եղայ նրան յայտնել քո գաղտնիքը, և նրան ասացի որ դու  
չես հեռանայ Ալզասից, որովհետեւ սիրում ես Օդելին: Ինձ կը  
ներբեռ, չչ:

Լիւսիէն թեն անցկացրեց եղբօր թեին, և նախասենեաշկից դուրս գալով մտաւ սեղանատուն, ուր նստել էին արդէն պլ. և տիկին Օրերլէ, լուս ու մունջ:

—Իմ խեղճ, սիրելի եղբայր, այս տան մէջ ուրիշների վշտովն է գնուում ամեն ուրախութիւն: Տես, միայն ես եմ բաղդաւոր:

Ընթրիրը շատ կարծ տեսեց: «Օրերլէ խոկոյն իր աղջըւկան տարաւ գնդամուզի սրահը, նրան հարց ու փորձ անելու համար: Մայրը մի քանի ըռպէ էլ մնաց սեղանի առաջ, իր որդու մօտ, որի հետ այժմ մենակ էր: Որպէս մի քող՝ նրա ղեմքի վրայից վար ընկաւ դժգոհութեան արտայայտութիւնը: Մայրը երեսը շուր տուեց գէպի որդին, հիացաւ նրանով, ժըստաց նրան, և սրտակցութեան յուղիչ տոննվ ասաց.

—Իմ թանկագին զաւակս, ես էլ չեմ կարող դիմանալ իմ ցաւին: Ես ջախջախուած եմ և պետք է որ ամեն բանից ձեռք քաշեմ: Բայց ես ուզում եմ քեզ խոստովանել, որ իմ տառապանքի մէջ մի միակ ուրախութիւն զգացի: Երեակայիր, որ մինչև վերջին օրերս ես կարծում էի, և հաստատապէս, որ դու մեզ պիտի թողնես...

Ժան ուժգնութեամբ ցնցուեց:

—Օ՛, այժմ հանգստացել եմ, մի վրդովուիր... Քոյրդ ինձ ասաց գաղտնի կերպով... որ, մի օր, մի փոքրիկ ալզասուհու հարս պիտի բերեմ... Օ՛, չեմ կարող երեակայիր թէ որքան բազգաւոր պիտի զգում ինձ այդ օրը... իհարկէ, շատ լաւ եմ հասկանում, որ դու չեիր կարող ինձ հաղորդել քո գաղտնիքը, միմիանց յաջորդող այսրան վրդովեցուցիչ գէպերի ընթացքում... Եւ յետոյ այդ բանը նոր է, այնովէս չչ: Զես տհմնում իմ ժան, որ այս ըռպէս քեզանից ոչինչ չեմ հարցնում և որ կատարելապէս հանգիստ եմ քո մասին... Անչափ սիրում եմ քեզ:

Նա էլ համրուրեց ժանին. Նա էլ սեղմեց ժանին իր կըրծըի վրայ: Բայց նրա միակ ուրախութիւնը, միմիթարութիւնը այդ էր. Նա յիշում էր ժանին օրօրոցում, նրա համար անցկացրած օրերն ու գիշերները, կրած մտատանջութիւնները, ձեռք առած կանխաղպուշութիւնները, արած ալզօթքները, նրա համար ունեցած երազները, և մտածում էր. «Այդ բոլորը գեռ ոչինչ է, բաղդատմամբ այն ամենին, որ կը ցանկանայի անել միշտ նրա համար:»

Երբ տիկին Օրերլէ հեռացաւ, ժան քիչ յետոյ լսեց, որ պապի սենեակի դուռը ճռնչաց և մայրը, ըստ իր անխախտ սովորութեան, որ բարի գիշեր մաղթեց անկարին: Ժան այն ժամանակ վեր կացաւ և դուրս եկաւ սեղանատնից: Նա դաշտուար, 1906.

տերով գնաց մինչև այն ծառերի շարքը, որ լրջապատռում էին Բաստիանների տունը, յետոյ մաս պարկը և ծածկուած այնտեղ, որոշ ժամանակ սպասեց և դիտեց մեծ որահի պատուհանի փեղկերից դուրս մաղուող լոյսը:

Զայներ՝ խօսում էին հերթով: Թէպէտե նրանց հնչումը ճանաչում էր, բայց բառերը որոշ չէր լուս: Ուշ ուշ, դանդաղ զանդաղ էին արտասանուում խօսքերը. Ժան հետևեցրեց դրանից, որ նրանք տիտուր էին: Փորձեց առաջ գնալ և վըճռուալիս մտնել սրահ: Մտածում էր. «Այժմ, երբ վճռել եմ ապրել Ալզասից գուրս, այժմ երբ նրանք ինձ մերժել են հօրս բռնած դիրքի և Լիւսիէնի ամուսնութեան պատճառով, ես այլու իրաւունք չունիմ հարց ու փորձի հսթարկել Օդիլին: Ես կը թողնեմ կը գնամ, առանց իմանալու, որ նա էլ տառապնում է ինձ նման... Բայց մթթէ չեմ կարող նրան տեսնել, իրանց տառնը, վերջին անգամ, երբ նրանք երեքը միասին հաւաքուած խօսում են մտերմօրէն: Ես նրան չեմ գրի, ոչ էլ կ'աշխատեմ խօսել նրա հետ. բայց կը տեսնեմ նրան և ինձ հետ կը տառնեմ նրանից մի վերջին յիշողութիւն, և նա կը գուշակի գուցէ, որ հս արժանի եմ գթութեան:»

Բայց այնուասենայնիւ նա վարանում էր: Այդ երեկոյիտն նա իրան չափազանց դժբաղդ, չափազանց տկար էր զգում: Մինչև հոկտեմբերի 1-ը գուցէ մի ուրիշ օր կարող լինէր այցելելու: Մի բայլ էլ առաջացաւ դէպի պարտէզի կողմը: Ժան դարձեալ նայեց լոյսի բարակ ճառագայթին, որը ցոլում էր սրահից, ուր նսակել էր Օդիլ: Եւ յետ զարձաւ:

## XIV

## ԱԵՐՋԻՆ ԵՐԿՈՆՆ

Հասել էր վերջին երեկոն: Ժան պէտք է Օրերնէից գիշերուայ գնացը նստէր Ստրավրուրդ գնալու և հետեւալ առաւօտ ժամի հօթին, օրինական ժամին՝ Սէն-Նիկօլայի զօրանոցում լինելու համար: Ստրավրուրդի գերձակներից մէկին պատուիրած: Իր զինուարական հագուստները—մի տարուայ կամաւոր զինուարի սովորական հագուստները—ըսպասում էին նրան, կապոյա ու դեղին, ծալուած, դրուած երկու աթոռների վրայ, այն սենեակում, որ մի ամիս առաջ վարձել էր տիկին Օրերէ, Սէն-Նիկօլայ զօրանոցի դիմաց, Բալէյօր փողցի մէջտեղերըում:

Հնթրիբից յետոյ ժան ասել էր իր մօր.

—Թողէք ինձ մի քիչ զբունեմ մենակ, որպէսզի մնաք քարով ասեմ Ալշէյմ գիւղին, որը երկար ժամանակ չպիտի կարողանամ տեսնել:

Տիկին Օբերլէ ժպտացել էր: Պ. Ժողէֆ Օբերլէ պատասխանել էր,

—Մնաք բարով ասա և ինձ, որդեակ, որովհետեւ վաղը, հոկտեմբերի 1-ին, մի պարտամուրհակ ունիմ վճարելու և դրա համար պէտք է զնամ զբասենեալ, աշխատեմ. մեկնելու ժամիդ ինձ չես զանիլ այստեղ: Եւ յետոյ ես աւելորդ յուզմունքներ, փղձկումներ չեմ սիրում: Ճմշտ է, երկու ամսից առաջ հեշտութեամբ արձակուրդ չես կարող ստանալ, բայց ոչինչ, այնուհետեւ աւելի մեծ բաւականութիւն կը պատճառէ քեզ քո արձակուրդը, երբ գուն վերադառնաւ: Դէ, համբուրի՛ր ինձ, ուրեմն:

Փան համբուրել էր նըան իր կարծածից աւելի բուռն խանդաղատանքով և դուրս էր եկել տանից Լիւսիէնի «ցտեսութիւն» բացազնչութիւնից յետոյ:

Գիշերը տարօրինակ կերպով խոնաւ էր: Ո՞չ մի ամպ: Լուսնի մահիկը. ըիւրաւոր աստղեր: Բայց երկնքի և երկրի մէջտեղ փոռւած էր մասախուզի մի քօզ, որը չէր սքօղում լոյսը, այլ նրան ցրւում էր այնպիսի ձևով, որ չկար մի առարկայ, որ գտնուէր իսկապէս ստուերի մէջ, ոչ էլ փայլելիս լինէր: Մի սատափեայ մթնոլորտ պարփակում էր ամեն ինչ,

—Ո՞րքան քաղցր է իմ Ալզասը, մրմնջաց ժան, երբ բաց արեց բանջարանոցի դուռը և ինքն իրան գտաւ գիւղի հուեռում դաշտի առաջ, ուր քնում էր լուսնի պայծառութիւնը, տեղ-տեղ ծածկուած՝ մի խնձորհնու կամ մի ընկուզենու կլոր ստուերով: Մի անսահման թմբրութիւն դուրս էր ժայթքում հողից, որը թրջել էին աշնան առաջին անձրեները: Հերկի բուրմունքները խառնուում էին խոզանների հոտին, և իրանց ամբողջ փթթումին ու անուշահոտութեան հասած բուսականութեան բոյրին: Լեռը փչում գուրս էր տալիս մեղմիկ դէպի հովիտը իւր շուճիների բեղմնաւորման փոշու, իր անանուխների, իր մահամերձ ելակնիների և անցորդների ու հօտերի ոտի կոխան դարձած զանազան բոյսերի ծաղիկների բուրմուքը: Ժան շնչեց իր Ալզասի քաղցր հոտը և մտածեց. «Սա վերջին անգամն է, Այլս երբէք, երբէք չեմ տեսնելու:»

Տանիքներից, որ ձգւում էին երիտասարդի հետևած ուղու ձախակողմը, ծուխ չէր բարձրանում: Նրանք, եկեղեցու շուրջը եղբայրաբար իրար միացած ձեռքերի տեսքն ունէին և նրանց իւրաքանչիւրի տակ ժան կարող էր երկակայել մի ծանօթ

կամ բարեկամ դեմք: Եւ այսպէս, քայլելիս, նա մի քիչ ժամանակ խորհեց: Բայց հենց որ դաշտերի մէջտեղ նշմարեց ծառերի խոշոր ու գորշ պուրակը, ուր թագնուել էր պ. Քսավիէ Բաստիանի բնակարանը, ուրիշ ամեն մտածում ցըռւեց: Ազարակի գլուխը հասնելով՝ մտաւ կեռասենիների ծառուղին, դարձեալ քիչ խորհրդածեց ու կանգ առաւ սպիտակ վանդակապատի առաջ: Ո՞չ որ չէր անցնում: Եւ յետոյ, ի՞նչ փոյթ, եթէ նոյն խկ անցնում էր: Ժան բաց արեց դուռը, սահեց ներս, մարգագետնի եղբերից քայլելով, ծառերի շուաքի տակից սողոսկելով հասաւ մեծ սրահի պատուհանի առաջ, որը լուսաւորուած էր, յետոյ տան շուրջը պտոյտ գործեց ու կանգ առաւ դրան մօտ, որ բացւում էր Ալշէյմ գիւղի հակառակ կողմի վրայ:

Մի բոպէս սպասեց, մտաւ գաւիթը և բաց արեց սրահի դուռը, ուր հաւաքւում էր ամեն զիշեր Բաստիան ընտանիքը:

Ի՞նչպէս ժան երեակացել էր, երեքն էլ նստել էին լամբի շուրջը: Հայրը լրագիր էր կարգում. երկու կանայք, նստած՝ մուգ սեղանի միւս կողմը, որի վրայ դարսուած էր ծալուած սպիտակեղէնի մի կոյտ, անձեռցների ծայրին սկզբնատառեր էին ասեղնագործում: Դուռը բացուել էր համարեա անշշուկ. միայն դուռն ծերպերի շուրջը դրուած բամբակեայ ոլորները քսուել էին տախտակամածին: Սակայն բնակարանի շրջակայքում և տան մէջ այնպիսի խոր լուսթիւն էր տիրում, որ Բաստիան ընտանիքը շուր տուեց գլուխը դէպի դուռը, աշքերը փոքրացրեց, տեսնելու համար թէ նվ էր նկողը:

Մի բոպէս պ. Բաստիանն ու ժանը վարանմունքի մէջ թաղուեցին: Ժան իր հայեացը զցեց նախ Օդիլի դէմքի վրայ: Տեսաւ որ նա էլ՝ իր նման՝ տառապել էր և որ առաջինը, միակը՝ ճանաչեց ներս մտնողին, դժգունուեց, անձկութեամբ ձեռքը բարձրացաւ և շնչառութիւնը, հայեացը կանգ առան:

Օդիլի ասեղնագործած սպիտակեղէնը ձեռքից սահեց վայր ընկաւ և նա ամենաթեթև շարժումն անգամ չփործեց վեր առնելու համար նրան:

Եւ գուցէ այդ նշանից պ. Բաստիան ճանաչեց, թէ նվ էր այցելուն: Խոկոյն յուզմունքը գրաւեց նրան:

— Ի՞նչպէս, հարցրեց քաղցրութեամբ, դժւ ես ժան: Ո՞չ որ քեզ չառաջնորդեց... Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել:

Լրագիրը գանգաղօրէն դրեց սեղանի վրայ, անընդհատ սենեակի մթութեան մէջ դիտելով երիտասարդին, որ դռնից երկու քայլ հեռու կանգնել էր միենոյն տեղում:

— Եկել եմ մնաք բարովի, ասաց ժան:

Բայց ձայնը այնքան այլայլուած էր, որ պ. Բաստիան

հասկացաւ, որ ինչ որ անծանօթ և ողբերգական բան մտել էր իր տունը։ Վեր կացաւ, ասելով։

—Հա, իրաւ, վաղը հոկտեմբերի 1-ն է... Զօրանոց հստանելու, իմ խեղճ բարեկամու... Երեխ ինձ ասելու բան ունես։

Պ. Բաստիան շտապով դիմել և երկարել էր ձեռքը երիտասարդին։ Ժան սենեակի ամենամութ անկիւնը տանելով՝ պատասխանել էր նրան շատ ցածր, աչքերը նրա աչքերին յառած։ Տիկին Բաստիան նայում էր մութի մէջ, ուր երկուսը անորոշի խումբ էին կազմում։

—Ես մեկնում եմ, մրմնջաց ժան, և երբէք չեմ վերադառնալու, պարոն Բաստիան։ Դրա համար է որ ես ինձ թոյլ տուեցի գալ այստեղ։

Ժան զգաց որ ալզասու կարծը ձեռքը դողում էր։ Տեղի ունեցաւ մի գաղտնի, արագ խօսակցութիւն, որի ընթացքում երկու կանայք, անհանգիստ, վեր էին կենում իրանց աթոռներից և ձեռները սեղանի վրայ յենած՝ ծուռում էին զէպի առաջ։

—Ի՞նչ ես ուզում ասել։ Մի տարոց չե՞ս վերադառնամ։

—Ո՛չ, պիտի զինուրագուեմ, որովհետև խոստացել եմ։ Բայց իսկոյն զինուրութիւնը պիտի թողնեմ։

—Պիտի թողնեմ, ե՞րբ։

—Վաղը չէ, միւս օր։

—Ո՞ւր ես գնալու։

—Ֆրանիսա։

—Մշտապէս։

—Այն։

Մի բոպէ ծերունի ալզասեցին զէպի ետ դարձաւ.

—Դէ, խօսեցէք դուք, կիսարմատներ, խօսեցէք, զրադուցէք. մենք փոքր ինչ գործ ունենք։

Կանայք բոլորովին վեր կացան իրանց տեղից։ Պ. Բաստիան շնչահատ՝ կարծես վազած լինէր։

—Զգոյշ կաց քո անելիքի մասին... Խոհեմ եղիք... Զըրոնուեմ։

Նա երկու ձեռքերը զրեց ժանի ուսերի վրայ։

—Իսկ ես, իհարկե, կը մնամ այստեղ։ Ի՞նչ արած, ես էլ այս ձեռվ եմ սիրում Ալզաս։ Մրանից լաւ ձև չկայ։ Այստեղ ապրել, եմ այստեղ էլ պիտի մեռնեմ։ Քո բանը ուրիշ է, զաւակս... Ես հասկանում եմ քո զրութիւնը... Կանանց հչինչ շայտնես այդ մասին։ Դա շատ ծանր փորձ է... Զերոնը տեղեկութիւն ունին։

Ո՛չ։

—Ոչինչ մի ասա, գաղտնի պահիր:

Աւելացրեց շատ կամաց.

—Երեկի փափազեցար Օդիլին տեսնել. դրա համար քեզ չեմ կշտամբի, որովհետև դուք էլ միմեանց երթէք չէք տեսնելու...  
Փան գլխի մի շարժում արեց որ նշանակում էր. «Այս ես ցանկացայ նրան տեսնել»:

—Դիտիր նրան մի բոպէ և յետոյ հեռացիր... Կանգնիր այդտեղ և նայիր իմ ուսի վրայից...

Եւ պ. Բաստիանի ուսի վրայից Փան տեսաւ, որ Օդիլի աշքերը՝ նախ խոռվուած՝ սարսափահար արտայալութիւն ստացան: Օդիլ չամաչեց դիմագրաւելու ։Փանի հայնացքը: Նա հետաքրուած էր միմիայն իր հօր և միչև տեղի ունեցող խօսակցութեամբ, այս խորհրդով ուր զգում էր որ խառնուած է ինքը, և իր դէմքը մատնում էր իր երիտասարդութեան գերագոյն տանջրնքը:

«Ի՞նչ են ասում միմիանց: Արդեօք վատ հետեանք է ունենալու, թէ լաւ: Ո՞չ, լաւ չէ, որովհետև միասին չին գտնում դէպի ինձ:»

Մայրը էլ աւելի դժգոյն էր քան աղջիկը:

—Մնամ բարով, զաւակս, ասաց պ. Բաստիան ցածր ձայնով:  
Քեզ շատ էի սիրում, հաւատացած եղիր... Ես ուրիշ կերպ չէի կարող անել... բայց ես քեզ յարկում, իմ հս քեզ միշտ կը յիշեմ...

Փղձկած ծերունի ալզասեցին սեղմեց Փանի ձեռքը լուս, և բաց թողեց. Փան արագ կտրեց անցաւ այն փոքրիկ տարածութիւնը, որ բաժանում էր նրան գոնից... Նա զողզողում էր և շփոթուած... Մի վերջին անգամ շուս տուեց երեսը. ուրիմն հեռանում էր... մի բոպէից աներևութացած պիտի լինէր... Էլ չպիտի վերադարնար Ալշէյ:

—Ցտեսութիւն, տիկին, ասաց:  
Կամեցաւ ցտեսութիւն ասել և Օդիլի, բայց հեծեծանքը արգելեց նրան խօսելուց: Փան նետուեց դէպի խաւար նրբանցքը... լսուեց նրա արագ բայլերի աղմուկը...

—Այս ինչ է նշանակում, հարցըց տիկին Բաստիան. Քսանվիէ դու մի բան թագնում ես մեզանից:

Ծերունի ալզասեցին հեծեծում էր: Տիկին Բաստիան իսկոյն հասկացաւ և իր բոլոր կանխակալ կարծիքները չքացան:

—Օդիլ, բացազանչեց, վագիր նրան մնաս բարով ասաւ: Օդիլ թուաւ, անցաւ որանով, հասաւ Փանի ետեից տան անկիւնի մօտ:

—Պաղատում եմ, ասաց, ինչու այդքան դժբաղդ էք:

Ժան շրջեց դէմքը հաստատապէս վճռած՝ բնաւ չխօսել և պահել իր երդումը։ Օդիլ բոլորովին մօտեցել էր իրան։ Ժան բաց արեց թերը։ Օդիլ նետուեց նրա դիրկը։

—Ա՛հ, Աստուած իմ, գոչեց բարձր ձայնով, դուք հեռանում էք, զգում եմ հեռանում էք։

Ժան զորովագին համբուրեց նրա մաղերը առ յաւէտ, և փախաւ շուռ գալով տան անկիւնը։

## XV

## Բանակ մտնելը

Ժամը եօթից քառորդ պակաս ժան Օբերլէ՞ քաղաքացիական շորերով՝ գնում էր նախկին ֆրանսիական Սէն-Նիկոլայ գօրանոցի կղմինտրաշէն ախուների երկարութեամբ, որը դերանացիները կոչում են այսօր «Նիկոլաուս Կաղէրնէ»։

Նա հասաւ զօրանոցի վանդակապատ գրան առաջ, բարեկց պահակազօրքի գլխաւոր ենթասպային, մի քանի բառ փոխանակեց նրա հետ, մօտեցաւ երկոտասանեակ երիտասարդներից բաղկացած մի խմբի, բոլորն էլ մի տարբուայ կամաւոր զինուորներ, որոնք կանգնել էին բակի միւս ծայրում, շնորի եռայարկ ընդարձակ ճակատի խոշոր ժամացոյցի տակ, բաց կապոյաներկուած պատերի առաջ։ Հեծելազօրքի զինուորներ՝ երկնազոյն կապոյտ թիկնոցով, սկ տափատով, տափակ գդակով՝ անցուդարձ էին անում ընդարձակ, փոշոտ, միապազաղ գետնի վրայ ամին ուղղութեամբ։ Հեծեալ մի ջոկատ, նիզակ ուսին, ճախակողմում, մի զոմի երկարութեան շարուած՝ ճանապարհ ընկնելու համար սպասում էր սպայի հրամանին։

—Herr Sergeant, առաց ժան, մօտենալով յաւակնուու ու ամբարտաւան երկոյթով բոնազօսիկ արդ ու զարդով և սամիկ դէմքով մի ենթասպայի, որ սպասում էր նրան կամաւորների խմբի զլուխը կանգնած, —այս տարբուայ կամաւորներից մէկն էլ ես եմ։

Ենթասպան, որ շատ երկար սկ բեխեր ունէր, որոնց անդադար քաշում և վեր էր բարձրացնում, պահանջեց ժանի անունն ու ազգանունը, և իր ձեռքին բռնած ցուցակի վրայ կպցրեց միւս անունների և ազգանունների շարքում։

Միաժամանակ, իր համազեստում խրոխտ զիրք առած և ներքնապէս փախեցած իր ընդունած կամաւորների ենթագրեալ հարստութիւնից, փափագելով նրանց դուր գալ և աշխատելով իր այդ ձգտումը ծածուկ պահել, նա հայեացըով ոտից

մինչև զլուխ չափչում էր իր հետ խօսող կամաւորին, որպէս թէ վնատոելիս լինէր նրա մարմնական թիրութիւնները, արատը, ձեռքի կամ երևսի ելունդները, մի խօսքով այն՝ ինչ կարող էր ծիծաղելի թուալ հնիթասպայի աչքին, ալզասեցի այդ բաղաքացու վրայ.

Երբ քննութիւնը վերջացրեց, բացազամչեց:  
—Կանգնեցէք միւսների շարքում:

Միւսները՝ մեծ մասով բաղկացած էին գերմանացիներից, որոնք պէտք է եկած լինէին, ինչպէս ցոյց էր տալիս նրանց տիպերի բազմազանութիւնը, կայսրութեան ամեն կողմից։ Համազգեստը հազնելիս՝ աշխատել էին լաւ տուալէտ անել, որպէսզի իրանց կամաւոր ընկերներին և զօրանոցի զինուորներին ցոյց տան թէ իրանք, քաղաքացիական կեանքում, հարուստ գերդաստանի զաւակներ են։ Փայլվուն կօշիկներ, թանգ կաշուց գեղին կամ կարմիր ձեռնոցներ էին լըռում, իրանց փող կապները կապել էին շատ շիկ կերպով և մեծարժէք գնդասեղներ էին մինել նրանց վրայ։

Նրանցից իւրաքանչիւրը ինքն իրան ներկայացնում էր իր ապագայ ընկերներին՝ ասելով. «Թոյլ տուէք ներկայացնել ինձ ձեզ. իմ ազգանունն է Ֆիւրբախ. իմ ազգանունն է Բլուման»։ Ժան զրանց և ոչ մէկի հետ ծանօթ էր։ Բաւականանում էր միայն խոնարհութիւն անելով, առանց իր ազգանունը յայտնելու։ Ի՞նչ կարիք կար ծանօթանալու, քանի որ միայն այդ օրը պէտք է նրանց ընկերը լինէր։

Խմբի ձախակողմուն կանգնեց. միտքը թուչում էր հետու, Սէն-Նիկոլայ զօրանոցից շատ հետու. իսկ սրա շուրջը միենոյն հարցումը մասն էր գալիս շրթունքից շրթունք. «Ո՞վ է աս։ Ալզասեցի՞ է, չէ՞» Ու շատերը հեգնութեամբ ժպտացին, ոմանք միմիանց գգուշացրին նրանց ցեղական խուլ ատելութեամբ վասուած, մի քանիսը ամրաբուանութեամբ խրոխտացին նրա վրայ, ուրիշներ շեշտակի սկսեցին ըսեսել իրանց կապոյտ ու խստահայեաց աչքերը նորեկի վրայ։

Երկու կամաւորներ էլ եկան։ Ժամը հնչեց, և ենթասպան տասնեհինգ կամաւորների զլուխն անցած՝ մտաւ մեծ զանից, որ տանում էր զօրանոցի ճիշտ կհնտրոնը և բարձրացաւ երկրորդ յարկում մի սրահ, ուր պիտք է տեղի ունենար բժշկական քննութիւնը։ Ժամի ութին կամաւորները դարձեալ հաւաքուեցին, բայց ոչ ըստ իրանց քմահաճոյքի, այլ երկու կարգի վրայ շարուած և սպայի խիստ հսկողութեան տակ։ Սպասում էին գնդապետին։ Ժամի ձախ կողքին կանգնել էր Ֆրիրուրդի ինդուստրիէլներից մէկի որդին, բարձրահասակ, առ-

անց բեխ ու մօրուքի, կենդանի աչքերով և խարտեաշ երեխայի այտերով, որոնք կրում էին երկու սպիներ, մինը՝ քթի մօտ, միւսը աջ աչքի մօտ. ուսանողական մենամարտների յիշատակներ: Տեսնելով որ ժամ Օբերլէն շատ մտածկոտ և լուռ է, նա կարծեց, որ վախիլառմ է այդ նոր միջավայրից և իսկոյն առաջարկեց նրան, իրու առաջնորդ, իր ծառայութիւնը:

Մինչդեռ ալզասեցին՝ ձեռքերը ետև շղթայած, գժկոյն և առողջ դէմքը դէպի վանդակաղուռը ուղղած՝ հոկտեմբերեան արեգակի մէջ դիտում էր Ստրավուրդի ազգաբնակութիւնը, որ անցուքարձ էր անում փողոցներով, իր հարևանը աշխատում էր նրա ուշադրութիւնը բևեռել զօրանոցի կեանքի մանրամասնութիւնների և անձնաւորութիւնների վրայ:

Դուք սխալւում էք ինձ պէս չանելով. ես հարկաւոր եղած միջոցները գործ գրի, որպէսպի ծանօթանամ մի քանի սպանների հետ: Ես նպատակին հասայ: Այս, տեսէք այն wachtmiester-ին, որ ենում է ախոռատնից, դա Շտիւրէլն է, լաւ իւր մող, լաւ ուտող, բարի մարդ է: Նա որ մեզ դիտում է բակի միւս ծայրից, կարմրաւուն, փոքրիկ բեխաւորը, տեսնում էք, կոչւում է Գոտֆրիդ Համմ, մի զգուելի տիպ... ձանաշնում էք նրան:

—Այս:

—Ուշադրութիւն, հրամայեց սպան: Ուզիղ կացէք: Իսկ ինքը տասը քայլ առաջ գնաց շտապով և գլուխը բարձր, երկու թերը ձգած մարմնի երկարութեան, ձախ ափով բռնած սուրը՝ կոթից ներքեւ, կանգ առաւ:

Նա նշմարել էր մի սպայի, որ փաթաթուած էր մոխրագոյն վերարկուի մէջ, առաջանում էր հանդարտ, հանդարտ. Նրա երեալը բաւական եղաւ, որ քսանի չափ հուսարներ, որոնք արեգակի տակ, պատերի երկայնքին թափառում էին, ծակէ ծակ մտնեն: Գնդապետը կանգ առաւ առաջին շարքի առաջ, որ կազմուած էր երիտասարդներից, գերմանական բանակի պահեստապօրքի յոյսից: Դա մի արիւնային և արագաշարժ մարդ էր, վարժ ձիավար, շատ կորովի, նիհար սրունքներով, լայն իրանով, համարեա սև մազերով և այնպիսի աչքերով՝ որոնք առաջասարակ ուարտափ էին տարածում ծառայութեան ժամանակ:

—Պարոն գնդապետ, ասաց սպան, ահա մի տարուայ կամաւորները:

Գնդապետ՝ իսկոյն կիտեց յօնքերը, և ասաց, յաջորդաւը միենոյն խստութեամբ նայելով իւրաքանչիւր կամաւորի.

—Դուք առանձնաշնորհեալներ էք: Ծնորհիւ ձեր ստացած

կրթութեան միայն մի տարի պիտի կատարէք ձեր զինուորական ծառայութիւնը։ Ապացուցէք, որ արժանի էք այդ շնորհին։ Միւս զինուորներին օրինակ հանդիսացէք։ Մտածեցէք, որ ապագայում նրանց պետերն էք դառնալու։ Եւ, մանաւանդ, չինէ թէ որևէ է զանցառութիւն դորձէք զինուորական կարգապահութեան վերաբերմամբ։ Համազգեստի տակ, ոչ մի քմահաճոյք։ Ո՛չ մի բոլէ քաղաքացիական շորերով շտեսնեմ ձեզ։ Ապա թէ ոչ խստիւ կը պատժեմ։

Պահանջեց կամաւորների ցուցակը։ Երբ ժանը անունը կարդաց, մտքով զուգորդեց ֆօն Ֆարնով տեղակալի անուան հետ և կանչեց։

—Կամաւոր Օքերլէ։

Ժան շարքից դուրս եկաւ։ Գնովագետը՝ առանց հայեացքի խստութիւնը մեղմացնելու, շեշտակի նայեց մի քանի վայրկեան երիտասարդի դէմքին։ Մտածում էր որ սա եղբայրն էր այն լիւսիէն Օքերլէի, որին կնութեան ինդրելու թոյլ էր տուել տեղակալին։

—Լաւ, բացագանչեց։

Երկու մատները տարաւ գլուխին և շուռ տուց երեսը, ուսած՝ հիւսիսի բաժուց, որ սկսեց իսկոյն փչել մոխրագոյն վերարկուի բացուածքից ներս։

Հազիւ անհետացել էր երբ մի սպայ, շատ գեղեցիկ տղամարդ, զինուորական և աշխարհիկ կատարեալ վայելչութեամբ, որ հունոսեան հուսարների աղիւտանումայօրի ողոշտօնն էր վարում, եկաւ կանգնեց կամաւորների խմբի առաջ և կարդաց մի հրամանագիր, որ իւրաքանչիւր կամաւորի ո՞ր գնդում և ո՞ր բաժնում ծառայելն էր մատնանիշ անում։ Ժան դանւում էր երրորդ գնդի երկրորդ բաժնում։

—Բազդ շունիս, մըմուաց իր հարեւանը. զա Փօտֆրիդ Համմի գունդն է։

Այդ բոլեից սկսած՝ տասնեհինգ կամաւորները իսկապէս մտել էին զինուորական ծառայութեան մէջ, նրանք դրուել էին իւրանց տեղը այդ կարգաւորեալ բազմութեան մէջ, ունէին իւրանց պատասխանատու պետերը, իրաւունքը՝ պահանջնելու այս ինչ մագաղինից զինուորական շորեր և այնինչ ախոռից՝ մի ձի։

Ինչ որ կատարեցին նրանք անոմիջապէս։ Ժան և իր գիպուածական բնկերը, կայոցիգի զրավոճառներից մէկի որդին, բարձրացան զօրանոցի վերջին յարկը և մտան հագուստեղէնսի մագաղինը, որտեղից ստացան իւրանց համազգեստը իր բոլոր պարագաներով և թողեցին իւրանց մի քանի հագուստները։

հեծելազօրքի վերաբկուները և մի մի դոյդ կօշիկ, որ կամ-  
տեր-sergeant-ը ընդունեց իրա համար, իբրև բարի զալստեան  
նշան կամ յանձնելու համար բանակի ուրիշ ենթասպաներին:

Սյդ գործողութիւնը երկար տևեց: Վերջացաւ միայն  
ժամի տասնից յետոյ: Այցելեցին այն սենեակը, ուր բնակւում  
էր սպայի առաջին ծառան, և ուր գտնում էր սպիտակ փայ-  
տեայ այն փքրիկ զարակը, որի գործածութիւնը այնուհետեւ  
պէտք է ընդհանուր լինէր, և կամաւորի և՛ զինուորի համար.  
այցելեցին նոյնպէս ախոռի տասնապետին, որը պէտք է նրանց  
ցոյց տար իրանց յատկացուած ձին: այցելեցին և՛ վաշտի  
գերձակին: կէս օրից անցել էր, երբ ժան կարողացաւ փախ-  
չել զօրանոցից և շտապով ճաշել

Կամաւորները, այդ առաջին օրուայ համար թոյլտութիւն  
ունէին զօրանոց մտնել ժամի մէկին: Չիանները զարմանելուց  
յետոյ միայն նրանք զօրանոցի բակում երևացին, բոլորը մի-  
ասին—այդպէս էին պայմանաւորուած—իրանց շողշողուն, նոր  
համազեստների մէջ փառահեղ, որոնց դիտում էին հեծելա-  
զօրքերը, մանաւանդ ենթասպաները, որոնք ըննում էին նրանց  
անցնելու ժամանակ, նախանձով նրանց հագուստի կերպասի  
նրբութիւնն և ձեզ, օձիքների վայելչութիւնն և թևերի զար-  
դարանքները, ինչպէս և փայլուն կօշիկների շողքերը: Այդ  
երիտասարդներից միայն մէկը չէր զգում միւսների զգացած  
պատուասիրութեան հաճոյքը: Նա մտածում էր մի հեռազրի  
մասին, որ պէտք է գտնէր իր անում, և որի պայմանաւորու-  
ած խօսքերը ծածանուեցին ժանի աչքերի առաջ ամբողջ կէս  
օրից յետոյ: Նա զբաղուած էր միմիայն այդ հեռազրով: Ուշ-  
ըիս մօրեղբօսից մեկնելու մասին աղջարարութիւն չստանալը  
մի կողմից, զղայնութիւնը միւս կողմից, արգելք հանդիսա-  
ցան երիտասարդին, որ այդ առաջին օրուայ սաստիկ յոգնու-  
թիւնն զգար: Նա աղատուել էր միայն երեկոյեան ժամի ութ  
և կէսին, ձիավարժութեան, մարմնամարզութեան և ախոռի  
ծառայութեանց ծանր հոգսերից յետոյ: Կամաւորներից մի քա-  
նիսը այն աստիճան յոկնել, զաղարել էին, որ նախամեծար  
համարեցին չընթրած պատկել:

Ժան նրանց օրինակին հետեւց, բայց բոլորովին այլ պատ-  
ճառներից դրսուած: Անմիջապէս վեադարձու Բալէյիօր փո-  
ղոցի իր բնակարանը.

\* Տան շէմքի վրայ էր, երբ զանապանուհին կանգնեց-  
րեց նրան:

Պարոն Օբերլէ, ձեզ համար մի հեռազրի ստացուեց:  
Ժան բարձրացաւ առաջին յարկը, վառեց իր մոմը, և

կարգաց առանց ստորագրութեան այն մի քանի բառերը, որոնց  
սպասում էր. «Ամեն ինչ լաւ է գնում»:

Դա նշանակում էր, որ ամեն ինչ պատրաստ էր հետևեա-  
լ օրուայ համար, որ պ. Ուրիխը կատարել էր ինչ որ հար-  
կաւոր էր: Ուրեմն այսուհետեւ բաղդի անիւը շուռ էր եկել.  
Ժան պիտք է հեռանար զօրանոցից և Ալզասից հոկտեմբերի  
2-ին, մի քանի ժամից յետոյ: Թէպէտե մի բոպէ իսկ չվարա-  
նեց, բայց երիտասարդը մի բուռն յուզմունք զգաց այդ հեռա-  
գոի ընթերցումից, որը մի կերպ հրաւել էր, կատարելու իր  
խոստումը: Վերջնական բաժանումների իրականութիւնը ուժ-  
գնապէս ազգեց իր մտքի վրայ, և, յոգնութիւնն էլ օժանդա-  
կելով, ժան լաց եղաւ: Հագնուած նետուեց իր անկողնու վրայ:  
Գլուխը բարձի մէջ թագցրած՝ նա սկսեց մտածել այն անձանց  
իւրաքանչիւրի վրայ, որոնք պետի շարուակէին ապրել Ալզա-  
սում, մինչդեռ ինքը յաւէտ աքսորում էր իրան ծննդավայրից:  
Նա երեակայում էր, թէ ինչ տեղի պիտի ունենար Ալշէյմում,  
երբ իր հեռանալու լուրն ստանային. ոմանք պիտի լաց լինէին.  
ուրիշներ պիտի զայրանային: Նա երեակայութեամբ տեսնում  
էր նրան՝ որին սիրուն էր, Զատկի Նախատօնակի զուարթ Օ-  
դիլին, յուսահատութեան մատնուած, մեկնումի ժամին, ամեն  
ինչ գուշակելով և պաղատագին ինդրելով՝ մի պատասխան, որ  
նա չկարողացաւ ստանալ... Այդ բոլորը անհրաժեշտ էին, այդ  
բոլորը անդարմանելի էին: Սահում էին գիշերուայ ժամերը:  
Փողոցը լոել էր. ժան ըմբռնեց, որ շուտով նա պէտք պիտի  
ունենայ բարոյական իր ամբողջ կորովին: Զանալով իրանից  
հեռացնել իր կասկածերն ու մորմոքները, որ սպասում էին  
նրան, մտքում քսան անգամ իրար ետեից կրկնեց այն, ինչ ո-  
րոշուած էր, երեք օր առաջ մօրեղբօր և իր միջև տեղի ունե-  
ցած մի տեսակցութեան ընթացքում, և որը պէտք է իրագոր-  
ծէր կէտ առ կէտ, այսօր:

Այս, այսօր, որովհետեւ աքաղաղները երգում էին արդէն  
հարեան բակերում Անկարելի էր մեկնել առաւտուայ գնացքերից  
մէկով: Կամաւորների ժամագրութիւնը՝ զօրանոցում, նշանակ-  
ուած էր ժամի չորսին: Արդ, առաջին գնացքը մեկնում էր  
Ստրագուրդից, Շիրմէկի ուղղութեամբ, ժամի հինգից քառա-  
սուն և ութ բոպէ անցած. Խուս—Հէրսբախ կարող էր համել  
միայն ժամի եօթին, և այդ գնացքը նստել, պարզապէս բըն-  
ուել կը նշանակէր: Կարելի չէր, արդարև, որ երեք ժամ ան-  
ցնելուց յետոյ, մի կամաւոր ի բացակայութիւնը չնկատուէր,  
և այդ առիթով շփոթը չընկնէր զօրանոցում: Մօրեղբայր Ուր-  
իխը և ժանը համաձայնուել էին այն բանի մասին, որ ա-

ուանց կատկածներ յարուցանելու սահմանագլխից անցնելու համարեա անսխալ սիջոցն էր Սարազբուրգից մեկնել կէս օրից տաս բոպէ անցած գնացքով, այսինը կամաւորներին ճաշի ժամին:

«Ես այդ փորձը կատարել եմ, ասել էր պ. Ռւլրիխ: Ես վստահ եմ իմ թուանշանների վերաբերմամբ: Դու Ռուս—Հերսպախ կը հասնես մէկ ժամ քսան և մէկ րոպէին, կառքը մեզ կը բարձրացնէ Շիրմէկ մի բառորդ ժամում: Կը դառնանք դէպի աջ և կէս ժամից կը լինենք Մեծ-Աղբիւր: Այդտեղ կը թողնենք մեր կառքը, և չնորհիւ քո և իմ սրունքների նման լաւ սրունքների, կը կարողանանք լինել Ֆրանսիայում ժամի երկուս քառասուն և հինգ րոպէին, կամ երկուս յիսունին: Այնուհետև ես քեզ կը թողնեմ և կը վերադառնամ:»

Գլխաւորն այն էր, որ կէս օրից տասն անցած գնացքը չփախցնէին, և այդ հեշտ էր, որովհետև կամաւորները առ հասարակ ժամի տասնեմէկից ազատ էին լինում:

Ժամ վերջ իվերջոյ քննեց, բայց քիչ ժամանակուայ համար: Ժամի չորսից առաջ նա մտնում էր Սէն-Նիկոլայի զօրանոցի վանդակապատ դմնից ներս:

Նրա ստացած փորբիկ հանգիստը բաւական էր եղել նրանց վերադարձնելու իր կամքի ամբողջ ոյժը: Ինչպէս զօրեղ կամքի տէր եղողներից շատերը, ժամն նախապէս վրովվուած էր զգում իրան: Բայց դործելու անհրաժեշտութեան առաջ, նորից գտնում էր իր անձի կատարեալ տիրապետութիւնը: Զիերի դարմանումի, յետոյ հեծելավարժութեան, յետոյ զինուորական մարզանքի ամբողջ ընթացքում, որը տեսն մինչև ժամի տասն և մէկը, նա միանգամայն խաղաղ էր: Նրա վարմունքի մէջ կար նոյնիսկ ինչ որ աւելի հետաքրքրութիւն, աւելի ջերմութիւն քան նախորդ օրը: Նրա ընկեր Սակսոնը նկատեց այդ: և ասաց նրան: «Օհօ, արդէն վարժուեցինք, այնպէս չի:» Ժամ ժպտաց: Այժմ նա նայում էր այդ շէնքերին, այդ սպաներին, այդ զինուորներին, զերմանական ոյժի այդ գործիքին, միևնույն եղանակով և միևնոյն զգացմունքով, որով նայում է ազատագրուած զպրոցականը իր կողեւժի պատերին, պրոֆեսիօներին և աշակերտներին: Նա իրան զգում էր արդէն այդ ամբողջութիւնից կտրուած. զննում էր, մտսամբ զուարձ հետաքրքրութեամբ, այն տեսարանները և դէսքերը, որոնց էլ բնաւ չէր տեսնելու:

Ժամի տասնեմէկին մօտ, բարոն գը մարնովին նշմարեց, որ հուսարների մի ջոգատի զրուխն անցած վերադառնում էր զօրանոց, հուսարներ, որոնք հոյակապ էին իրանց երիտասարդութեամբ, զինուորական առագութեամբ և կարգապահ կամքով:

Զիանները՝ ժամերի՝ ընթացքում Նէրդօրֆի մարզաբառանում երկար արշաւած լինելու պատճառով, գալիս էին մինչև լանջերը ցեխոտուած. մարդիկը՝ պարտասատձ՝ գէտի առաջ էին ընկնում, և սպասում էին դադարի նշանին անիծելու համար օրուայ տարտապտրհակ աշխատանքը: Ֆարնով՝ ամենելին չյոգանած՝ վարում էր իր նժոյգը բակի միջից մինսոյն հաճոյքով, որով պիտի քշէր իր ձին, եթէ սրան հրաւիրած լինէին պատուական որսի և հէնց նոր մեկնէր դիպի իր ժամադրավայրը: Ժան մտածեց. «Ահա այն մարզը, որ իմ քրոջ ամուսինը պիտի լինի: Մենք այլևս միմեանց չենք հանդիպելու երրէք: Պատերազմի գէպքում նա իմ թշնամին պիտի լինի:» Նա երևակայեց նրան իբրև հեծելալորքի տապակաց մի մեծ պետ, արշաւասոյր քշելիս իր ձին մի դաշտի փոշու մէջ, գոռալով, ծառացած իր ասովանդակների վրայ, բերանն ու ոնդունքները բաց: Ֆարնով չկասկածեց անգամ, թէ ինչ կարգի զուարձութիւններ էր մատակարարում երիտասարդ կամաւորին, որի վրայ հազիւ իր կաղոյտ աչքերի մի ակնարկը զցեց: Հեռացաւ գէպի բակի խորքը. իր մարդկանց գլուխն անցած: Լսուեց մի կտրուկ հրաման, միմիանց բաղիսող զէնքերի շառաչը, և յետոյ էլ ոչինչ: Մարզանքը՝ մտրպիչ սպայի փութաջնութեան պատճառով կէս ժամ աւելի երկարեց: Ժամի տասնեւմէկ և կէսից, Ժան, անհանգիստ, ըմբռնելով որ հաղիւ ժամանակ ունէր համելու կայարան, կէսօրից տասն անցած զնացքին, շտապով բարձրանում էր այն սանդուխներից, որ տանում էր իրան սպասաւորով զինուորի սենեակը, երբ իր վաշտի մարդկանցից մէկ գոչեց նրան:

—Կէս օրին, Յ-րդ գնդի, Զ-րդ բաժնի զինուրական համազգեստների ցուցահանդէս! Հարիւրապետն ասաց, որ ամենաքին յայտնեն: Գուրս գալու ժամանակ չունէք:

Ժան առանց նոյնիսկ ուշադրութիւն դարձնելու այդ արգելքին, որ ցցուում էր յանկարծ իր առաջ, in extremis, շարունակեց բարձրանալ սանդուխներով: Նա վճռել էր: Պիտի մեկնէր: Պիտի գնար գտնէր, Ռուս—Հէրսախում իր մօրեղբայր Ռւլրիխին, որ սպասում էր նրան կառքով հէնց որ գնացքը տեղ հասաւ: Ժան մի բանի մասին էր միայն մտածում. զուրս գալ և վազել կայարան: Շտապով վերցրեց իր քաղաքային շուրեն ու փայլուն կօշիկները, իջաւ բակը, և, խառնուելով մի խումբ կամաւորների, որ պատկանում էին ուրիշ գնդերի և ոչ մի պատճառ չունէին գօրանոցում մնալու, առանց դժուարութեամբ անցաւ վանդակադռնից:

Երբ փողոց դուրս եկաւ, պահակատեղից մի քանի մետր

հազիւ հեռացած, Բալէյիօր փողոցի մայթի վրայից սկսեց վազել Մեծ ժամացոյցը իր ենում ցոյց էր տալիս, կէս օրից տասնինեօթ բոպէ պակաս: Պէտք է ժամանակ գտնէր հասնելու բնակարան, բարձրանալու իր սենեակը և, փոխելով իր համազգեստը, քաղաքացիական շորերը հագնելու. արգեօք պիտի բաւէր ժամանակը: Պիտի կարողանալ ժամանել գնացըին: Որովհետև պէտք է ամբողջ քաղաքը կտրէր անցնէլ: Իսկ, միւս կողմից, չափաղանց մեծ անխոհեմութիւն էր փորձել համազգեստով անցնել սահմանագիւց: Ժան, վազելով հանգերձ, մտածեց որ կարող էր հեշտութեամբ տանել մի պայուսակ և փոխել հագուստները կամ գնացքում, կամ Ռուս—Հերսրախում: Մասելով տան նրանցքը, կանչեց գոնապանուհուն, և շնչասպառ.

—Ես պէտք է որ մի տեղ գնամ սաստիկ շտապով, ասաց: Հաճեցէք հրապարակից մի կառը կանչել: Ես այս բոպէիս կ'իջնեմ:

Երեք րոպէից յետոյ, մի ուայուսակի մէջ զետեղել էր արդէն տափատը, ժակէտը, գլխարկը, որ նախնապէս հէնց առաւոտուանից պատրաստել էր և գրել՝ իր անկողնու վրայ, և ցատկելով կառքի մէջ զգուշութիւնն ունիցաւ տալու միայն իբրև հասցէ. «Մեղանծ փողոց»: Բայց կառը հազիւ մտել էր փողոցի առաջին դարձուածքը, որ վեր կացաւ և հրամաց.

—Կառապան, քշիր կայարան, որաբշաւ:

Վերջին բոպէին հասաւ. վերցրեց մի տոմսակ Ռուս-Հերսրախի համար և մտաւ առաջին կարգի մի բաժանմունք, ուրիշ երկու ճանապարհորդների հետ: Մի բոպէ էլ և գնացքը շարժուեց, սահեց երկաթուղիների վրայով, միտւեց փապուղու (tunel) մէջ, որ միջահատում է քաղաքի ամրութիւնները, եկաւ լոյս աշխարհ և կտրելով Ալզասի հովիտը, թաւալուեց դէպի արևմուտք:

Հէնց նոյն ժամին, հարիւրապետը, որ աչքի էր անցնում բակում զինուորական իրեղինները, նշարելով իր վաշտին յատկացրած երկու կամաւորներից միայն մէկին, հարցրեց վախտմէյստըրին:

—Ո՞րտեղ է միւսը:

—Ես նրան չեմ տեսել, պարոն հարիւրապետ, պատասխանեց Համեմ:

Եւ գառնալով դէպի երիտասարդ Սաքսոնը՝ Օբէրէլի ընկերոջ:

—Դուք գիտէ՞ք որտեղ է նա:

— Զինուորական վարժութիւնները անելուց յետոյ նա դուրս եկաւ, պարոն վախտմէյստըր, և զեռևս չի վերադարձել:

— Առաջին անգամն է, մրմուաց հարիւրապետը, չեմ պատժի: Երեք նաև չհասկացաւ. բայց երբ վերադառնայ, դուք իմ կողմից նրան դիառութիւն կ'անէք, չմոռանաք Համմ:

Դէպքը ուրեմն անսիջական հետևանքներ չունեցաւ: Բայց երբ մարդիկը նորից հաւաքուեցին ձիաները զարժանելու համար, որը տեղի էր ունենում առէն օր ճաշից յետոյ, ժամի մէկից մինչև երկուսը, ժամի բացակայութիւնը չէր կարող չնկատուել: Ախոռների ամբողջ երկարութեամբ, զրափ կողմը, ձիերը կապուած էին երկաթեայ օղակների: Հեծելագորքի ղինուորները խողանակում էին իրանց ձիաները, նրանց մէջ էին և նախորդ օրը եկող կամաւորները, որոնք ձիադարմանութեան գտաներ էին առնում, իրանց երկրորդ մարզիչի հսկողութեան տակ: Տասնապետները անփութեամբ հսկում էին, երբ երրորդ բաժնի վախմէյստըրը դուրս եկաւ իր զրասենեակից և քայլերը ողղից բակի հարաւային կողմը, որտեղ պէտք է գտնուէր Օբերլէն: Հաստ շրթունքներով խածնում էր իր կարմիր բեմերը: Նա հայեացքը շուր տուեց ամբողջ շարքի վրայ:

— Օբերլէն ուրեմն չի վերադարձել, ասաց նա:

Նոյն ընկերը պատասխանեց.

— Զօրանոցից դուրս գալու և իր սենեակի կողմը գնալու ժամանակ նա վազում էր:

— Ճաշարանում նրան տեսամք:

— Նա մեղ հետ չնախաճաշեց:

— Այդ չափը բաւական է, ասաց վախտմէյստըր:

Համմ արագ հեռացաւ: Նա զէմքի մի ծամածուռ շարժում գործեց, միենոյն ժամանակ թաւալեց իր շէկ աչքերի բիբերը, որով ցոյց էր տալիս, թէ դրութիւնը ծանր է: Այս նա շատ ծանր էր գտնում զրութիւնը Օբերլէնի համար. բայց և նոյն քան լուրջ իր համար: Ոչ հարիւրապետը և ոչ էլ տեղակալը այդ զուլէում զօրանոցում չէին: Եթէ զիտուածով մի անհամ պատմութիւն դուրս գար, հարիւրապետը անպատճառ կ'ասէր. «Ի՞նչու ինձ լուր չտուիք»: Համմ բակի ամբողջ երկարութեամբ բայլեց, խորհելով թէ ի՞նչ կարելի էր անել և յիշելով իր հօր՝ Օբերնէի տասնապետի խօսքերը: Այս վերջինը միթէ բառ առ բառ իրան չէր ասել, երբ նա տասնընդինդ օր առաջ զնացել էր Օբերնէ. «Ծուտով դու քո զօրագնդում կ'ունենասո Պ. Օբերլէնի որդուն: Լաւ հետեւիր նրան: Ես շատ կը զարմանամ, եթէ նա իր մասին խօսեցնել չտայ: Նա ճիշտ իր մեծ հօր պա-

տկերն է, մի կոտտղած, որ ատումէ գերմանացիներին և որը ընդունակ է մի անժմռութեան»:

Բայց հարկաւոր էր տեղեկութիւններ հաւաքել, նախ քան վութաջանութիւն ցոյց տալը: Դա զժուար չէր: Բայց հօր փողոցը գտնում էր վանդակապատի զիմաց: Համմ մատների ծայրով իր կապոյտ պատմումանի փոշիները թափ տուեց, խոտորուեց դէպի զօրանոցի գուուը և գնաց ժանի տանտիբունու մօտ, կանաչ փեղկերով ձախակովմին մեծ տուեր:

Նա ստացաւ հետեւեալ պատասխանը.

—Կէս օրից առաջ կարեով մեկնեց, մի ճանապարհորդական պայուսակով:

—Ի՞նչ հասցէ տուեց:

—Մէզանժ փողոց:

—Առանց համարի:

—Յամենայն դէպս ես չլսեցի: Զը գիտեմ:

Համմի կասկածը ձշտում էր:

Վախտմէյստը այլ ևս վարանելու կարիք չունէր: Նա վագեց հարիւրապեսի մօր, որը ապրում էր նոր թաղերից մէկում, Հէրտէր շտրամէի վրայ: Հարիւրապետը տանը չէր:

Յուսահատած և ման գալուց արիւնը տարացած, Համմ վերադառնում էր զօրանոց կարճ ճանապարհը րոնած, կորել անցնելով Համալսարանի պարտէղները, երբ յիշեց, որ հէնց շատ մօտիկ, Գիրմանիա փողոցի տների կոյտի հտեւ, Գրանդիդիէ փողոցում բնակւում էր տեղակալ Ֆարնովը:

Այս վերջինը երկրորդ գնդին չէր պատկանում: Բայց Համմ լսել էր սպայի նշանախօսութիւնն մասին: Այդ մասին խօսուել էր աստիճանաւորների շրջանում: Նա բարձրացաւ հոյակապ տան առաջին յարկը, որը շինուած էր միակտուր, կանոնաւոր և յայտուն քարերով: Երբ հարց տուեց տեղակաւին սպասաւորով զինուորին, այս վերջինը պատասխանեց.

—Պարոն տեղակալը հազնուումէ:

Եւ արդարեւ տեղակալ Փոն Ֆարնովը հագնուում էր մի քանի այցելութիւններ անելու և յետոյ սպաների կազինօն գնալու համար: Անդրավարտիկով և շապիկով, կռացած մի արդուզարդի սեղանի վրայ, որը ծանրաբեռնուած էր սանզրներով, վրձիններով և արդուզարդի այլկայլ առարկաներով:

Նա լուսանում էր երեսը: Սենեակում զգացւում էր օդբեկունի բուրմունքը: Նա դարձրեց դէմքը դէպի վախտմէյստը և մի անձեռոց վերցնելով՝ ասաց:

—Այդ գուը էր, Համմ: Ի՞նչ է պատահել:

—Պարոն տեղակալ, ես ինձ թոյլ տուի մտնել ձեզ մօտ,

որովհեակ իմ հարիւրապեաին տան չգտայ, և որ կուժաւոր Օրէրլէն...

—Օրէրլօ: Ի՞նչ է արել Օրէրլէն, ընդհատեց ֆարնովը, և մի ջղային ցնցում ունեցաւ:

—Ահա տառնըմէկ և կէս ժամ է որ նո չի յայտնուել:

Ֆարնովը, որ զէմքը սրբում էր, նեակ ուժգնութեամք սրբիչը սեղանի վրայ և մօտեցաւ հնիթասպային: Նա յիշեց տիրէին Օրէրլէնի երկիւդները: Իսկ Համմը մտածեց, «Նա նոյն բանն է խորհում ու կարծում, ինչ որ ես:»

—Ի՞նչպէս, չի յայտնուել: Բարեյիօր փողոցը վնացի՞ք:

—Եյն, պարսն աելուկալ, նա հեռացել է տանից կառքով, կէս օրից տասը բովէ տակաս:

Երիտասարդ աեղեկալը զգաց թէ ի՞նչպէս մահուան սարսուսը զիտաւ իր սրտին: Մի վարկեան նա աչքերը վակեց, մի ուժգին ջանք զործ զրեց, որպէսզի ինըն իրան տէր եղող մարդու կերպարանք ստանայ և այդ սրան աջողվից: Նա գուշատուել էր, բայց իր զէմքի ոչ մի մկանը չէր շարժում, երբ նա տառց.

—Դուք միայն մի բան կարող էք անել, Համմ, այն է զետել յայտնել ձեր հրամանատարին: Նա աեղեկութիւններ կը հաւաքէ և կ'անէ... ինչ որ սահմանուած է այսողիսի զէպրերում:

Ֆարնովը նոյնիսկ ուժ ունեցաւ նայելու սարսոնական զարդարուն ժամացոյցին, որը պճնում էր իր սեղմոնը, և աւելացրեց:

—Երկուսից քսան պակաս, պէտո է շտապել: Վախոմէյսերը բարեկ ու հեռացաւ:

Սպան իսկոյն վաղեց իր աշխատասնեալը, որ կից էր լուացարանին և խնդրեց որ հաղորդակցութեան մէջ գնեն իրան Սարազրութի կայարանի վերահսկիչ զործակալներից մէկի հետ: Տաս բովէից յետոյ նրան կանչեցին հեռախօսի զանոգով և հաղորդեցին որ մի կամաւոր, հուսարների գնդից, համազգեստով, վերջին բովէին հասել էր կայարան մի պայտապետ, և վերցրել էր առաջին կարքի մի տոմասկ Ռուս-Հերուսակ զնալու համար:

Ո՛չ, զա անկարէլի է, բայցագաչեց ֆարնովը, ընկնելով իր աշխատասնեակի բազմոցի վրայ: Այստեղ մի սխալմունք կայ... Ռուս-Հերուսի, ուս համարեա թէ սահմանն է, և Ժանը չի կարող վատիչել, որովհեակ նա սիսում է... Նա պէտք է որ Ալչէյմումը լինի... Երկի նա ուղեց Օդիլին աեսնել... Իսկո՞ն գնամ իմանում:

Նա բուռնցքով խփեց իր ընկուզենու սհզանի վրայ.

—Հէրման:

Սպասաւոր զինուորը, մի լայնաթիկունք գերմանացի, բաց արեց զուտը:

—Թամրիր իմ ձին և քոնը, շնուտ:

Ֆարնով շտապով պատրաստուեց, վար իջաւ, և փողոցում արդէն պատրաստ դտաւ երկու ձիերը, դուրս եկաւ. Սորազրութից և երր քաղաքի ամրութիւններերից անցաւ, սկսեց քառասմբակ քշել ձին լայն ճանապարհով:

Որքան մօտենում էր Ալշէյմին, այնքան աւելի հակում էր ժանի գտառալքութեան գաղափարն ընդունելու: Տիկին Օբերլիքի հետ ունեցած խօսակցութիւնը իր բոլոր մասնամասնութիւններով՝ պատկերանում էր իր մարի տուած, ինչպէս և այլ պատճառներ՝ հաւատալու գժրալզութեան, որի զեմ իր հրաժայուղական կամքը կուռում էր տաժանելի կերպով:

«Նա այնքան քիչ է ճանաչում Գերմանիան: Նա այդ փառք էր համարում իրան Բրաւսիդ խործրդականի առւնը... Եւ յետոյ, իր երկպառակուած ընտանիքը, իմ նշանախօսութիւնը, որ աւելի շեշտեց պառակումը... Եւ սակայն նա էլ է նշանուած, կամ համարեա նշանուած... Եւ նրա ընաւորութեան տէր մարդիկը, ֆրանսիական ընաւորութիւնն ունեցող մարդիկը պէտք է որ յաղթահարուեն սիրուց... Ո՞չ... Ես նրան կը գըտնեմ այնտեղ... կամ կ'իմանամ թէ ո՞րտեղ է:»

Օդը տաք էր երկար, առանց հովանու ճանապարհի վրայ, որ տարածում էր իրի փոշու մի լայն ժապաւէն, մի գիւղից միւսը, հնձուած դաշտով: Երկինքը՝ հովտի վերի, պղաոր էր և պղնձեայ հորիզոնում, վոժերից այն կողմ, անշարժ, ճաճանչայեղձ ամողի կատարները կային: Յըտնաթաթախ ձիերը գնում էին միշտ սրաբշաւ: Մենաւոր կաղնիների տակ, խոզանների մէջաեղ, պատսնիները բարձրացնում էին պտուղ թափելու իշրանց գաւազանները և երգում էին ձիաւորների տնցնելու ժամանուի:

Հէրման մտածում էր. «Ի՞նչ է, պատահել, Տէր Աստուած, պարոն աեղակալը գժուի՞լ է: Հետզհետէ աւելի արագ է քշում ձին:

Ֆարնով քանի մօտենում էր, այնքան լիցւում էր անձն կութեամբ:

«Եւ եթէ նրան չկտնե՞մ... եթէ, իսկապէս...»

Օբերնէն մնաց աջ կողմը: Մի կողմնակի ճանապարհ մաղլցում էր զէպի Ալշէյմ: Շուտով Օբերլիների կապոյտ տանիքը երեաց և ուժացաւ զալարիների մէջ:

«Լիւսիէն: Լիւսիէն: Լիւսիէն:»

Աշնան այդ փոթորկալից ջերմութեան տակ թմբած տան մէջ մի ձայն միայն խզում է լուռթիւնը, և այնքան միօրինակ Դա արկին Մօնիկ Օրերլէի ձայնն է: Պապի բազկաթոռի առաջ, այն սենեակում, որից էլ չի հեռանում անկարը, տիկին Օրերլէ բարձրածայն կարգում է, «Ժուրնալ դ' Ալզասը», որով հետեւ ցրիչը բաժանել է արգէն երեկոյեան թղթատարը: Բաց թողնուած պատուհանից լուսում է բառերի մրմունչը, և դա յեշցնում է համարիչին բնկերացած արօթքի ներդաշնակ արտասանութիւնը: Գնուպամուզի սրահում, այն սենեակի տակ, որ հատկացրած էր միշտ ժամանին, պ. Ժողկի Օրերլէ, վարագուրիշուաքի մէջ նոտած՝ մրափում է, ծնգների վրայ մի քանի նամակներ, և «Ստրագբուրգի Պօստի» մի համարը: Սենեակի միւս ծայրում, նոյնպէս ստուերի տակ, Լիւսիէն կացած՝ Լուգովիկոս ԽՎԼի ախպի մի փոքրիկ գրասեղանի վրայ, զրում է:

—Պարո՞ն, պարո՞ն Օրերլէ:

Գործարանատէրը ընդուած զարգնեց, և արագ ուղղուելով, լայն բաց արեց զուոր, որը կիսով միայն բաց էր և հաւատ նախառենեակում սպասաւորի ետեից, որ շտաղով զալիս էր:

—Ի՞՞նչու ձայն էր տալիս: Գիտէք որ չեմ սիրում...

Մի լոպէ խօսեց ծառայի հետ, և մատւ սենեակը, շողշողուն գէմքով:

—Լիւսիէն, աղջիկս, պ. զը Թարնովը սպասում է քեզ պարկի վանդակագուան առաջ:

Նա արդէն վիր էր կացել, վաշդ կտրած զէմքով:

—Նա: Ի՞՞նչու համար ներս չի գալիս:

—Երկի ձիով է, շատ շտաղում է... Գուցէ և չի համարձակում... Միրելիս, գնա իմ կողմից կանչիր նրան... Ասն որ ոչ մի գայթակղութիւն չի պատճառիլ. ես խօսք եմ տալիս արգելել որևէ է նոր անախառժութիւն:

Ինքն իրա վրայ դարձող ձեռքի մի շարժումով դոյց էր տալիս, որ աւելի շուտ կը փակէր վերեի գմները, որտեղից գալիս էր լրագրի ընթերցանութեան միօրինակ շշուկը:

Լիւսիէն հայելու մէջ նայեց, և կարրի բիրեց մազերը չայըր կրկնեց.

—Գնա, գոհարս, քեզ է կանչում: Եթէ շուտով չզաք, եակը գամ ձեզ մօմ:

Լիւսիէն բարեկալով հեռացաւ: Երկուս առ երկուս իջառ վերնագաւթիւ աստիճաններից: Նա ծառուղու միջով քայլում էր:

արակարագ, մի քիչ խոռվուած, բազուառը, շրթները կիսարցց, աչքերով փնտոելով ֆարնովին:

Միայն երբ հասաւ ծառուղու ծայրին, տեսաւ երկու ծխաշունչ, քրտնաթոր ձիերին, որ կանդսել էին ճանապարհի վրայ և որոնց սանձից բռնել էր Հէրմանը, և համարեա միենոյն ժամանակ սպային՝ որ պատի ստուերից դուրս գալով առաջանում էր գէպի իրան:

Տէր Աստուած, ո՞րրան կարմրել է այսօր ֆարնովի առ հասարսկ դժգոյն գէմբը, որքան մտասանջ կերպարանը ունի, և մրգան շատապում է: Բայց նրա շտապանը ուրախութիւնից չէ, որովհետեւ նա ոչինչ չի պատասխանում Լիւսիէնի, որ սկսել է արդէն համարեա վազել, աշխատելով ժառանգալ:

—Բարե Վիլհէլմ: Այդ ի՞նչ գեղեցիկ անակնկալ է:

Ֆարնով վեր է առնում զլխարկը. բոնում է գէպի իրան երկարով ձեռքը, բայց փոխանակ համբուրելու, փոխանակ նրանով հիանալու, ինչպէս սովորաբար, իր կարծը աչքերով, որոնք տենդափառուում են—բաշում է Լիւսիէնին մի կողմ, առանձնանալու համար: Լիւսիէնի սուր շրթունքները յամառում են ժպտալ, նրանք արի են, իրանց բազուառը են ցոյց տալիս, մինչդեռ սիրտը արգէն սեղմուած է անձկութեամբ:

—Ի՞նչ, ինձ պիտի առեանդէք: Իմ բարեկամը ո՞րքան անընտել է գարձել, որ մինչև անգամ բարեկիս չի պատասխանում: Գուք սակայն, մյսքան բաղագավարի...

—Եկէք... Ահ, այստեղ, մեզ չեն կարող տեսնել...

Նրանք ատազձարաննի ծայրին են հասել համարեա, մի տեսակ առանձնարանում, որ կազմուած է տախտակի երեք անհաւասար աեղերից: Ֆարնով բայց է թողնում Լիւսիէնի ձեռքը:

—Ժանն այստեղ է: Լոմիր, լաւ լսիր ինձ. Ալշէյմում է:

Ամբողջ անձկութիւնը և ամբողջ անհամբեր երիտասարդութիւնը, որ կամենում էր տիրապետել, հրաժայել դժբաղութեան, ֆարնովի աչքերի մէջ ցոլանում էին և որոնում էին պատասխանը:

—Զէ, պարզ պատասխանց, Լիւսիէն:

—Փոնէ չչք սպասում նրան:

—Բնաւ:

—Ուրեմն, կորսնք, օրիորդ: Կորմաք:

—Օրիորդ:

—Այն, եթէ նա այստեղ չէ, ուրեմն նշանակում է դասաւիք է եղել:

—Ա՞հ:

Երիտասարդ աղջիկը մի ուժգին շարժում գործեց գէպի

ետ, որպէս թէ վայր ընկնէր, և յիշուեց ատխտակներին, թեւ ռաց արած, աչքերը մոլոր:

—Դասալիք է եղել... Կորմնք... Բայց միթէ չէր տհանում, որ ինձ սպանում էր այդ ահսալ խօսքերով... Միթէ, իսկապէս, ժանը..., Վատահ էր...

—Քանի որ նա այստեղ չէ, այն, վասահ եմ... Նա սումսակ է վերցրել Խուս-Հէրսախի հումար... Նա արգէն անցում էր լինի սահմանափլխից... Ես ձեզ ասում եմ, որ նա՝ ահա երեք ժամ է ինչ հեռացել է Ստրագրուրգից...

Ֆարնով ցնցուեց ցաւի զայրոյթի մի ծիծակով:

—Ի՞նչ, միթէ չէր յիշում: Նա երգուել էր ձեր մօրը, որ պիսի զինուորագրուի, մանէ զօրանոց: Արդարեն մտաւ բայց նա իր խոստումը այսօր կատարել վերջացրել է: Եւ զասալիք է եղել, փոխել բանակից... Իսկ, այժմ:

—Այս... այժմ:

Լիւսիէն ուրիշ ապացոյցներ չէր պահանջում: Նա արգէն հաւատում էր: Նրա կուրծքը հեռում էր: Նա բաց թողեց տախտակները, որոնց ըստի էր պինդ և ողաղտագին միացրեց երկու ձեռքերը: Նա հարկացրուեց վշտից անշարժ կամքնած ֆարնովին ուղղելու միհնոյն հարցումը:

—Այժմ ի՞նչ պիտի անէք, Վիշէլու:

Ֆարնով, պրկուած զիմաղծերով, ուղիղ կանգնած իր փոշոտ համազեստի մէջ, ասաց տկար ձայնով.

—Թողնել ձեզ...

—Թողնել ինձ, որովհետեւ եղբայրս դասալիք է եղել:

—Այս:

—Բայց դա անմիտ է, ինչ որ ասում էր:

—Այդ է զինուորի իմ պարտականութիւնը:

—Ռւըեմն գուք ինձ չէր սիրում:

—Օ՛չ, ինչպէս չէ, սիրում եմ... Միայն մէ արժանապատռութիւնը այլու թոյլ չի տայ ինձ ամսւանանալ ձեզ հետ... Ես չեմ ուզում մի գասալիք զինուորի վիստն լինել, ես՝ սովոր, ես՝ ֆարնով.

—Այդ զէպքում թողէք սպայութիւնը և շարունակեցէք սիրել, աղաղակից լիւսիէն բարձրացնելով բազուկները զեպի կապտած, անշարժ արձանը: Դիհէլս իսկական արժանապատռութիւնը կայանում է սիրել Լիւսիէն Օքերլէին, չփել նրան, չզրծել նրան տրուած խօսքին... Թողէք իմ եղբօրը. Թող գնա ուր կամենում է: բայց մի խորապէք մեր երկուսի կեանքը:

Ֆարնով հազիւ կարող էր խօսել: Լսեց մի բոպէ: Ի՞՛

կամքի ճիզը ուսեցնում էր իր վզի բոլոր մկանները, երբ առայ.

—Աւելի վատը կայ: Ո՞չ, դուք պէտք է որ խմանաք ամրող ճաշմարտութիւնը, կիւսիչն, ևս պարտաւոր եմ նրան մատնել:

—Մատնել ժամանին: Ո՞չ, դուք այդ չէք անի, աղաղակեց կիւսիչն, նահանջի մի շարժում անելով: Ես արգելում եմ ձեզ:

—Այս բողէիս պիտի անեմ: Զինուրական օրէնքն է հարկադրում:

—Ո՞չ, դա ճիշդ չէ: Այդ տեսակ անկթութիւններ չեն կարող գրուած լինել այնուել:

—Հէնց այս բողէիս կը համոզուեք... Հէրման:

Ծառան յատնուեց և ֆարնովից և կիւսիչնից տասը քայլ հեռու, ծառուղու բերանը, գարմանքից շուարած և վազքից զիմազծերը դեռ ևս ուսած:

—Էաւ լիիր ինձ: Մատերի օրինազրքի յօդուածը: Ի՞նչ է հրամայում, երբ մէկը տեղեկութիւն ունի որ մի դինուոր պէտք է զասալիք լինի:

Զինուրը մի բողէ տմփոփեց միարը և արտասանեց:

«Ով որ տեղեկութիւն է ունեցել, արժանահաւատ աղբիւրից, դաստեքութեան մի ծրագրի մասին, մի այնպիսի բողէում՝ երբ դեռևս կարելի էր խանգարել, և որ չէ նախազզուշացնում իր պետերին, կը որատժուի մինչև տասն ամսուայ, իսկ կառի դաշտում մինչև երեք տարուայ բանտարկութեամբ»:

—Շուտակ բեր այսուղ ձիերը, պէտք է մեկնինք:

Եւ գտնալով՝

—Մնաս բարեամ, կիւսիչն:

կիւսիչն վազեց գէպի ֆարնով. բանց նրա թիից.

—Ո՞չ, ոչ, աղաղակեց, չպէտք է մեկնէք: Զեմ ուզում:

ֆարնով մի բողէ զիտից այդ արտասոսւաթոր զէմքը, ուր խառնում էին կրակաւ սէրն ու վիշտը: կիւսիչն կրկնեց:

—Զեմ ուզում, լանւմ ես:

Այն ժամանակ ֆարնով զրկեց նրան իր բազուկներով, բարձրացրեց գետնից, սեղմեց կրծքին, և, կրքով, համբուրեց նրա աչքերը, որ էլ չէր ուզում տեսնել: Եւ համբուրի յուսահատ ուժգնութիւնից միայն կիւսիչն հասկացաւ, որ դա իսկապէս մի հրաժեշտ էր:

Ֆարնով նրա յետ մղեց ցըտութեամբ, վաղեց զէպի վանդակակուռը, ցարքեց թամրի վըայ, և որաբշաւ մեկնեց Օբերնէի ուղղութեամբ:

XVI

## Մ' ինի էոի անտառում՝

Գիշերը մօտ էր։ Ժան գիտես չէր զուրս հկել բնու դեր-  
մանական անտառներից։ Ժան, խնձէնքից ուժառպառ, մամու-  
ռի և կաղնու լեզուանսան տերեների վրայ պառկած՝ քնում էր,  
և պ. Ռւլրիխ հսկում էր, ուշադիր դէպի հաւանական վտանգը,  
տակաւին յուզուած նրանից, որից նոր էր խուսախել։ Երկու  
մարդիկը գրաւում էին ստորին մասը այն նեղ տարածութեան,  
որ թողել էին փայտահարները խուրձի երկու դէպերի մէջուզ:  
Կաղնու մի պուրակ էին ցանցառացրել։ Դեռ կանաչ, հիւթալից  
ճիւղերը չէին սմքել և կազմում էին մի ապահով ապառանա-  
րան։ Նրանց շուրջը լեռան բարձր ծառերը բաց էին անուն  
իրանց կատարի փնջերը փոթորկալից քամու առաջ, որ փչում  
էր։ Ուրիշ ոչ մի ազմուկ չէր հանում մինչև այդ բարձրութիւն-  
ները։

Մօտաւորապէս երկու ժամ կար, որ պ. Ռւլրիխի և իր  
քրոջորդին այդտեղ էին ապաստանել։

Երբ գնացքը հասել էր Թուու-Հէրսըախ կայտրանը, Ռւլրիխ  
մօրեղբայրը իսկոյն համացել էր և ժամին ասել՝ որ ժամա-  
նակը սննցել էր համազգեստը հանելու։ Այդ փոքրիկ, անմշան  
դէպքը շատ շատերի ուշադրութիւնը ոլիտի գրաւէր այդ սահ-  
մանագլխային փայտում, որը լիրն է տեսանելի և անտեսանելի  
դիտողներով, ուր քարերը լսում են և կաղնիները տեսնում։  
Մի հայնոյանքով նա զցել էր պայտուսակը կառապանի առաջ,  
որը վարձուած էր երեք օրից ի վեր Շիրմէկում։

— Ահա մի աւելորդ ըեւ, մոլոտակը մարդու քշեցէք, կառապան։

Զիերը մաել էին այն ճանապարհը, որ անցնում է Շիրմէկ  
քաղաքի մօտիկ գանուող մի խղճուկ գիւղի միջից, թողել՝ զըլ-  
խաւոր հովիտը և աջակողմնան նեղ ու ոլորտապոյտ հովտով  
բարձրացել էին դէպի Մեծ-Աղբիւրը։ Ոչինչ ցոյց չը տալիս,  
թէ կառկածներ էին զարթեցնում ուղեորները։ Բայց նրանց  
կարծեցեալ զբոսանքի ծանօթ վկաները աւելանում էին։ Եւ դա  
մի ծանրակշիռ հանդամանք էր։ Որքան որ էլ ժան կիսաթագ-  
նուած էր, մեծ մասամբ ծածկուած՝ կառքի պատուհանի վա-  
րագոյրով և մի ծածկոցով, որ պ. Ռւլրիխ զցել էր իր քրոջ  
որդու վրայ, անկառած, նրա չափազանց փայլուն համազգես-  
տի հոտը պէտք է որ առած լինէին Շիրմէկի փողոցներում խո-

չաձև կանգնած սոտիկանները, և ճանապարհի վրայ եղող քառահանգիրի մէջ աշխատող բանուորները և այն մաքսային պաշտօնեան, որ ծխում էր և շարունակել էր ծխել այնքան հաճագարաւթեամբ իր ծխամորճը, նստած՝ ծառերի հովանու տակ Մեծ-Աղբիւրի տուաջին կամուրջի ձախակողմում։ Պ. Ուլրիխ ամեն բոլէ իր մտքում ասում էր, «պէտք է որ իժացած լինեն, և իմաց տուած՝ բոլորին, եթէ այդ գիս չէ եղել՝ շուտով կը լինի, գուցէ ամեն ինչ յայտնի է արդէն, և որևէ մէկը՝ պետութեան անթիւ զործականներից մէկը, կը մօտենայ մեզ, կը հարցաքննէ և, ինչ էլ որ պատասխաննեաք, մեզ լրտեսել կը տայ։» Նա իր երկիւղները ամեննեն չէր հաղորդում ժանի, որի որաւմագրութիւնը նախորդ օրուանից բոլորովին տարբեր էր, նա չսփազանց ոգեսրուած էր իր փախուստի գաղափարով։

Կառքը՝ հակառակ զառիվերի և ճանապարհի գայլախազներին, արագ բարձրանում էր հեղեղատի երկարութեամբ և մտնում էր Մեծ-Աղբիւրի աների միջեւմամի երկուսից տասնենինկ բոսէ անց էր, երբ ձիերը կանկ առան զիւղի կենարունում, մի թեք հրապարակում, ուր մի աղբիւրի ջուրը թափւում էր քարէ մի մեծ տաշախ մէջ։ Ճանապարհը կառքի համար այլու անյարմար լինելու պատճառով, ուղեսրները իջել էին կտորից։

—Գնացէք մեղ սպասեցէք Ռէմի Նաէգերի պանդոկում, առել էր պ. Ուլրիխ։ Մենք կը կատարենք մեր զրօսանքը և մի ժամանից կը վերադառնանք... Զիաների կերը կրկնապատկեցէք և իմ հաշուից Մօլշայմի մի շիշ զինի կոնծեցէք։

Ու այնուհետեւ պ. Ուլրիխ և Ժան ճանապարհ ընկան դէպի Մինիչուի անտառը։

Հազիւ երկու հարիւր մետք տուաջ էին գնացել, երբ նըշմարեցին Մաթիսկորֆի անտառապահն, որ զառիվայրով իջսում և զալիս էր գեպի իրանց կողմը։ Մարդը տիրօւնան գգակ ծածկած, կանաչ բլուզ հազած, զալիս էր իր տանից, որ գտնուում է Մինիչուի բարձուքներում, և մանում էր այն նըրուղին, ուր պէտքէ անուպատճառ հանգիպէր երկու ճանապարհորդներին։

Պ. Ուլրիխ վախուցաւ։

—Ժան, ասել էր, ահա մի համազգեստ, որին նախումնար կը համարէի հանգիպէլ աւելի ուշ։ Մանենք անտառը։

Անտառը ձախակողմումն էր։ Մաթիսկորֆի կաղնուտներն էին և քիչ հեռու ձգւում էին Կորբէյլի թաւուտները, թանձրախիտ զառիվայրներ, ուր թագսուցները անպակաս պէտք է լինէին։

Ժան և մօրեղբայրը անցան յանկապատից և մտան կաղնիների ստուերի մէջ։

Ճիշդ ժամանակն էր։ Ստրավուրդի զինուորական վարչութիւնը անմիջապէս զգուշացրել էր սահմանապահներին։ Մեծ Աղբիւրի մաքսատան և շրջակայ բոլոր պահականորդներին հեռախօսով լուր էին տուել, որպէսզի արգելեն կամաւոր Օբերլեյտի վախուսաբը։ Անտառապահը, որ ոչ մի նախազգուշացում չէր ընդունել, երևան չեկաւ։ Բայց ժամ և պ. Ուլրիխ—սա վերցրել էր իշխայի հիմ հեռազիտակը—շուտով նկատեցին անհանգստացուցիչ երթեւեկութիւններ։ Խաղաղ հավատմ իսկոյն երեացին մաքսային պաշտօննեաններ և սոտիկաններ։ Նրանք էլ մտան Մաթիսկօրֆի անտառը։

Եւ վախուսաբ սկսուեց։

Պ. Ուլրիխի և ժամի եակեց շնուան, բայց նրանք նկատուեցին։ Մի ամրող ժամնրանք հալածուեցան պուրակից պուրակ, և ուակայն անկարող եղան սահմանագլխից վախչել, որովհետեւ պէտք էր այդ դէպքում անցնել հովտի խորքից, որը բաց էր, անտառձածկ չէր։

Պ. Ուլրիխ հնարամտութիւն էր ունեցել մազլցելու ժամի հետ վայտի գէգերից մէկի զաղաթի և թուալուելու՝ զիզուած խուրձերի միջն գտնուող մի բացուածքում։ Ահա այդ հնարքը ազատել էր վախուսականներին։ Ոստիկանները, մի ժամանակ կաղնուալի մէջ թափառելուց յետոյ, հեռացել էին և զնացել Գլասիմոնի ուղղութեամբ։

Ժամը քննել էր, և գիշերը վրայ էր հասնում։ Քամին կուտակում էր ամպերը և արագացնու՞մ էր մութը։ Ազաւաների մի երամակ՝ քսուելով ծառերի կատարներին սահեց անցաւ։ Նըրանց թեարադխումի շրջիւնեց Ուլրիխը սթափուեց իր երազանքից, ուր խորասուղել էր նրան իր քեսորդու տեսքը, դերմանացի հեծելազօրքի իր համազգեստով և ատրածուած։ Ալզասի հողի վրայ։ Վեր կացաւ և զգուշութեամբ բարձրացաւ կանաչ խուրձերի զագաթը։

—է՞յ, մօրեղբայր Ուլրիխ, հարցրեց ժամ զարթնելով՝ ի՞նչ էր նայում։

—Ոստիկանի ոչ մի սազաւարտ, մաքսային պաշտօնեայի ոչ մի գտակ, շնչաց ու. Ուլրիխ կսանալով։ Ինձ թւում է, որ նրանք մեր հետքը կորցրին։ Բայց պէտք է միշտ զգոյշ լինել այդ մարդկանցից։

—իսկ Մինիէսի հովտում։

—Ամայի երեսյթ ունի, բարեկամաւ։ Ոչ ոք չկայ երկու ձանապարհներում, ոչ էլ զիւղի շուրջի մարգագետիններում։ Որսպանն անգամ պէտք է որ տուն վերադարձած լինի և նըս-

տամ սեղան, որովհետև այս բռպէիս ծխնելոյզից ծուխը զալու-  
րում է... Ի՞նչպէս, իմ փոքրիկ, արիութիւնդ վրանդ է.

— Կը տեսնէք, եթէ որ մեզ հալածեն:

— Ել մեզ չեն հալածի: Բայց, զաւակս, եկել է ժամը...

Մի ըսպէ լսութիւնից յետոյ, նա կարծես ականջները ու-  
րած մտիկ էր անուժ, մի կողմի, յետոյ աւելացրեց.

— Վեր կաց, որպէսզի մշակենք մեր կոռուի ծրագիրը:

Երբ ժամ բարձրացաւ իր մօտ և գլուխը խուրձերի գէ-  
ղից դուրս ցցելով նայեց գէպի արևմուտք.

— Տեսնում ես, Աւրիխ, ցածում, Մինիէսի դիւղը:

— Այս:

— Հակասակ մութին և մառախուզին դու կարող ես նկա-  
տել, որ միւս կողմում լեռը ծածկուած է մասամբ կաղնինե-  
րով և մասամբ կաղամախիներով:

— Գուշակում եմ:

— Որպէսզի խուսափինք Մինիէսի այգիներից ու մար-  
զագետիններից, այժմ մի կիսաշրջանակ կը գծենք և երբ կը  
հասնենք այնտեղ, ճիշդ մեր գէմուզէմը, հազին երկու հարիւր  
մետր կը մնայ իջնելու և այնուհետև արգէն ֆրանսիայումն ես...

Ժամ ոչինչ չը պատասխանեց:

— Այդ տեղը քեզ համար եմ ման եկել ու ճարել: Պէտք է  
որ լու յիշես, այնտեղ, հեռուս, մեօն-սիւռ-Պլէնի շուրջը, գեր-  
մանացիները իրանց վերապահեցին բոլոր անտառները. Նրանք  
ֆրանսիային թողեցին բոլոր լերկ գետները: Ուղիղ մեր հան-  
գէպ, զախիվերի միւս կողմում կայ ֆրանսիական մարզագե-  
տնի մի շերտ... Ես այնտեղ տեսել եմ նոյնիսկ մի հին, լքուած  
տղարակ, որը մնացած լինելու է, եթէ չեմ սխալում, պատե-  
րազմից... Ես առաջ կ'անցնեմ...

— Ոչ, ներողութիւնն, ես պէտք է առաջ անցնեմ:

— Ո՛չ, հաւստացնում եմ քեզ, փոքրիկս, որ ետեից զնալը  
նոյնքան վտանգաւոր է: Եւ յետոյ պէտք է որ վերջապէս քեզ  
առաջնորդեմ, չ՞... Ուրեմն ես կ'անցնեմ առաջ, խոյս կը տանք  
կածաններից, և քեզ կ'առաջնորդեմ զգուշութեամբ, միսց այս  
կէտը, ուր քիչ կը մնայ միայն մի բան անել. վաղելով կ'անց-  
նես մի ճանապարհի վրայից, կը ծոսւես գէպի աջ, կը մտնես  
անտառը, մի քանի քայլ՝ և անտառից այն կողմարզագետինը  
ֆրանսիական է...

Պ. Ուրիխ համբուրեց ժամին մթութեան մէջ: Զկամեցաւ  
աւելի երկարել համեշտը, որովհետև վասիցաւ, որ մի գուցէ  
ինքն իսկ յուղուի մինչդեռ պէտք էր այդ բռպէին կատարելա-  
պէս տէր լինել իր ածին:

—Ե՞կ, ասուց:

Նրանք սահեցին մեծ կտղնիների ստուերի մէջ, որոնք սկիզբն էին առնուած իրանց մօտից: Զառիվայրը խոչնպատճեռով լիբն էր, որոնց բախուած էին յաճախ ժանը կամ հօրեղայրը. թաւալուած մամապատա, բարեր, ծառի ջախջախուած, փոած բուներ, մթութեան մէջ մաղիխների նման երկարող ճիւզեր: Ամեն բողէ Ուլրիխը կանգ էր առնուած մտիկ անելու համար: Յաճախ յիտ էր դառնուած նոյնպէս և իր բաժակուած նշմարուած էր շարունակ ժանի բարձր ուրուագիծը, որի դէմքը չէր տեսնուած այլն:

Երբեմն ժան առնուած էր.

—Քիները շատ պիտի կոտրուի, մօրեղեայր:

—Ե՞ս կաց, իմ ժան: Դեռևս չենք ազատուած:

Երկու ընկերները՝ ծառելով մինչև Մինիէոի մարդագիտինների եղերքը, իջան, և նորից սկսեցին բարձրանալ, միշտ սակայն անտառի սառւերով, դեպի Վուճերի հանդիպակաց, վերջին գօտին:

Երբ պ. Ուլրիխ կատարին հասաւ, կանգ առաւ, լայն շնչեց զիմացի կողմից փշող քամին աւելի ազատորէն, որովհետեւ ծառերը աւելի մատաղ էին, և հակառակ այն բանին, որ խօսելը վտանգաւոր էր, մրմնջեց.

—Զգնում ես Ֆրանսիայի խողաների հոտը:

Նրանց առաջ ատրածւուած էր մի հովիտ, բայց նա անտեսանելի էր: Միայն կարելի էր ընդհամարել ծուխի անշարժ բուլաներ, որոնք, ներքեսուած գանուող անտառներն էին, և նրանց վերև ծուխի թափառիկ ամսելի էին:

Պ. Ուլրիխ սկսեց իջնել աւելի մեծ զգուշութեամբ, ականջները սրած: Մի չղջիկ թոչկոտեց: Պէտք էր երեսուն քայլաշափ առաջ զնալ քշարէց մացանեւիլի միջով, որոնք կառչուած էին հագուստներին: Եւ յանկարծ, առջեկց, մի ձայն աղաղակեց անտառի մէջ.

—Կաց:

Պ. Ուլրիխ չոքեց, զցեց ձեռքը ժանի ուսին, և արագ.

—Մի շարժուիլ: Ես նրանց կը գրաւեմ դէպի Մինիէոի կողմը: Երբ նրանք իմ ետեկից ընկնեն, դու վեր կը կենաս, կ'անցնես ճանապարհի վրայով, յետոյ կը մանես անտառ, մի բանի քայլ ևս և վերջացաւ: Վապիր ուզգակի դէպի առաջ:

Պ. Ուլրիխ վեր կացաւ, զգուշութեամբ մի բանի քայլ արաւ, յետոյ, անտառի մէջով, վաղնիվագ փախոււ:

Զայնը, որ աւելի մօտեցել էր, նորից գոչից և երկու աճած միմիանց հահից.

—Կաց, կաց:

Հրազդի մի հարուած ձեղքից խաւարը: Երբ ճիւղերի աղմուկը գագարից, լսուեց պ. Ուլրիխի ձայնը, որ արդէն բաւական հեռուից պատասխանում էր.

—Անյաջնլ, վրիպեց:

Միկնոյն ժամանակ ժան Օբերլէ նետուեց դէպի սահմանագլուխը: Դլուխը քաշ գցած, առանց ոչինչ տեսնելու, արմաւկները բարձրացրած, կուրծքը ճիւղերից մտրակուելով վագում էր իր ամբողջ ոյժով: Սախուեց անցնել մի քանի քայլ հեռու թագնաւած մի մարդու առջեից: Տերեները խշրտացին: Սուլիչի մի սուր ճիչ պատռեց ողը: Ժան աւելի արագացրեց վազքը, կոխեց յանկարծակի ճանապարհի վրայ: Իսկոյն պայթից հրացանի մի երկրորդ հարուած: Ժան թաւալուեց անտառի եղերբին: Միաժամանակ թնդացին աղաղակներ.

—Ահա: Ահա նա: Եկէք:

Ժան անմիջապէս վեր կացաւ: Նա ընդհարուել էր մի ակոսի: Ցատկեց անտառի մէջ: Բայց սրունքները տկար էին: Նա զգում էր որ մեծանում էր իր մէջ մի անխուսափելի տկարութեան անձկութիւնը: Նրան հալածողների աղաղակները հնչում էին քամակից: Ծառերը շուռ էին գալիս: Վերջապէս լոյսի, սառը քամու, պատ արածութեան մի զգայութիւն տնեցաւ, և էլ ոչինչ չտեսու:

Գիշերը բաւական ուշ, զարթնեց իր ուշաթափութիւնից: Անտառը ցնցում էր փոթորկից: Մի լքուած աղարակի սենեակումն է, առանց կահ-կարսափիքի, լուսաւորուած մի աղօտ կանթեղով: Նրան պառկեցրել են կանաչ ճիւղերի վրայ: Մի մարդ կուցել է դէպի ինըրը: Ժան նայում է նրան: Մաքսային մի ֆրանսիացի պաշտօնեայ: Սարսափի առաջին տպաւորութիւնը ցրւում է: Դէմքը զուրեկան է:

—Ուրիշ հարուած արձակեցին, հարց է տալիս:

Մարդը պատասխանում է:

—Ո՛չ, էլ չկըսկիցին:

—Աւելի լու: Ուլրիխ մօրեկը այրկուած է... նա ընկերացել էր ինձ մինչև սահմանագլուխը... ինչպէս տեսնում էք, բանակումն էի ծառայում... եկել եմ որ ձեզ մօտ դինուոր լինեմ...

Տեսնում է, որ զինուորականի վերարկուն հանել են: Որ

շապկին վրայ արիւնի բիծեր կան... Դժուարութեամբ է շնչում:  
—ի՞նչ է պատահել ինձ:

Մարտային պաշտօնեան, թանձր, ոլորուած քիսերով մի  
մարդ, որ եթէ չամաչէր լաց կը լինէր, պատասխանում է.

—Ուսիցդ գիրաւորուել ես, բարեկամու: Ոչինչ շուտով կը  
րժշկուի... Բարերազգաբար մենք ման էինք զալիս այս կողմե-  
րում, երբ դուք ընկաք մարդագետնի վրայ: Բնկերս զնաց բը-  
ժիշկ կանչելու: Արշալոյսին այստեղ կը լինէին...

—Հոգ մի անէք... Ո՞վ էր դուք:

Կիսաերազում, ժամ պատասխանեց.

—Ալզասը...

Հազիւ կարող է սակայն խօսել: Փոթորկալից անձրել  
սկսել է տեղալ: Նա ծեծում է տանիքները, գնների տախտակ-  
ները, տերեները, ժայռերը, ամրող անտառը որ շրջապատում  
է տունը: Ծառերի կատարները զալարւում են և թաւալում,  
ինչպէս ծովու խորքերում ջրմուռի (algues) մաղերը: Մի ան-  
սահման մրմունջ, ուր սիսախանուել են բիւրաւոր ձայներ,  
բարձրանում է դէպի վուժերի գազաթը և ծաւալում գիշերի  
մէջ: Վիրաւորը տկանջ է դնում: Ի՞նչ անցաւ մաքովը: Նա  
թոյլ է: Փափում է:

—Ֆրանսիան է երգում, շշնջում էնա:

Եւ, աչքերը փակելով, նորից ընկնում է անկողնու վրայ,  
արշալոյսին ակնկանջ է դնում: Ի՞նչ անցաւ մաքովը:

Գ. Ե. Բ. Զ.

\* \* \*

Միշտ դգում եմ ես, որ մի հետաւոր,  
Օտանը աշխարհում ինձ պէս վշտահար  
Մի սիրո է այլում՝ անյայտ, մենաւոր  
Եւ երազում է, թախծում ինձ համար:

Եւ թւում է ինձ, որ սուլը համբոյը ով  
Ես փայփայում եմ ձեռները նորա.  
Եւ գուրգուրում եմ, զգւում կարօսով  
Քնիքուշ գլուխը իմ կրծքի վերայ...

Եւ. Խամարկեան

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԱԳՈՒՅՆԻ ԵՒ ՑԵՇԱ- ՓՈԽԱԿԱՆ ՐՈՄԱՆՏԻԶՄ<sup>1)</sup>

Ռոմանտիզմի տակ պոլիտիկայի մէջ սկզբում հասկանում էին՝ դէպի անցեալը գարձած ցնորդ կամ ութուղիա: Չգտում՝ վերակենդանացնել անցած ժամանակների հաստատութիւնները, վերակենդանակցնել այն ժամանակ, երբ բոլոր ջանքերը ճէնց իշխանց հիմքերսի հակառակ են այդ հաստատութիւններին, բուժանտիզմ—դա հինահին դարւոց յիշատակների ֆանտասիլ ջառագովումը, անցեալի գեղեցիկ լուսապատճենվ ոգեսրումն է:

Սակայն րոմանտիկ մտածալութիւնը բնաւ անխօնելիորէն կապուում չէ անցեալի պաշտամունքի հետ: Անիբական, հանգամանքների նկատառութեամբ չպատճառարանուածի իւրաքանչիւր պաշտամունք, անկշռադատ և առանձնայատուկ ոլայմանները հաշուի չառնուած տեղափոխում ժիջոյների կամ ձգտումների—իսկապէս րոմանտիզմ է: Եթէ Ֆրիդրիխ Վիլհելմ IV-րդի կողմից բոմանտիզմ էր—ցանկալ ճանապահների հաղորդակցութեան և խոշոր արդիւնապործութեան ծաղկման ժամանակներում վերագրածնել ֆէօդալական օրերի սովորութիւններն ու հիմնարկութիւնները, պակաս բաւանտիզմ չէ 1848 և 1871 թ. թ. Գրանսորտկան յեղափոխականների ցանկութիւնը՝ նորից լոյս աշխարհ բերել 1792 թ. յեղափոխական կոմմունան և սովորել, որ նա խաղայ այն գերը, որ նա կատարեց

1) Այս յօդուածի հեղինակը՝ կղուարդ Բէրնշտայնը՝ տաղանդառոր հրապարակիոս և յայտնի քաղաքական գործիչ է, ծնուել է 1850 թ. հրեական ընտանիքում և պատկանում է գերմանական սոցիալ-դեմոկրատիական կուսակցութեան: Մի ժամանակ նա արտաքսուած էր Գերմանիայից, մեղադրուելով «կայսրին վիրտուոզանք հասցնելու» մէջ: Վ. կուսակցութեան ամենալուրջ հրատարակութիւնները նրա խմբագրութեամբ են լոյս տեսել: 1898 թուականից նա սկսում է մի շարք խիստ քննադատական յօդուածներ մարքսիզմի և ու. գ. կուսակցութեան տակտիկայի մասին, բանտկոիւ և ծագում: և զերծ, ու. գ. բաժանւում է երկու թիվ, բերեալինական կամ բելլիզիսաների և օրուդանների: Բէրնշտայնը դասախոսութիւն է արել և հայկական հարցի մասին, որ լոյս է տեսել առանձին բրօշիւրով. «Die Leiden des armenischen Volkes und die Pflichten Europas»:

ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ամենազօրեղ զարգացման տարիներում: Աչ այլ ինչ էր, եթէ ոչ բոմանափզմ Ռուսիայում 1881 թ. մարտի 1-ին աջողուած փորձից յետոյ՝ Ֆրանսիայում, Սպանիայում, Աւստրիայում, և այլն տեղերում, անցեալ զարի ութուունական թուականներին, ուժանակով սպանութիւններ անելու փորձերից շատերի հիմքում: Զնայած որ Ռուսաստանում յիշած սպանութիւնը ոչ միայն չնպաստեց յեղափոխական շարժման յաղթանակին, այլ ընդհակառակը՝ եւրոպական գաղափարների ազգեցութեան մատչելի Ալեքսանդր Ա-ի փոշիարէն զահ բարձրացաւ խիստ օրթոդոքս-պահպանողական մի ցար, որ անխնայ գաժանութեամբ հալածում էր առ առեն ինչ, որ թէկուզ ամենահեռաւոր կերպով յիշեցնում էր եւրոպական քաղաքական կեանքի ժամանակակից կարգերը, — այսուամենայնիւ ուումբի միջոցով այդպիսի ահապին հետևանքի հասնելու հէնց միայն միաբը միամիտոցայնական կամ հերոսարատման տրամադրուած ուղեղների վրայ արթեցնող ներգործութիւն էր անում: Ծագեց ուժանակի (դիմամիտ) պաշտամոնքը (կուլո), և որժէ միայն հայեցք ձգել նրա զրակտութեան մէջ, որպէսզի բոմանտիկ մահաւաստութեան բոլոր գծերը ակներե լինեն: Ուժանակը ամենակարագէ, այդ պայթուննիւթի միջոցով կարելի է հիմնայստակ անել ամբողջներկայ սոցիալական կեանքը: «Erlösungsmedizin ist Nitroglycerin»<sup>1)</sup> բանաձել (Փորմուլլ) շատ շատերի հաւաւատամբն էր, և հարկաւորուեց շատ տարիների փորձը, որպէսզի վարկարեկ անուի նա: Այսօր ուժանակը, կռուելու զբանան միւս գործիքների հետ միասին, աւերիչ միջոցների շարքում, որոշ պայմաններում յեղափոխական կռում կարող է նոյն նշանակութիւնը ունենալ, ինչ վաղուց լիվեր յատկացրուած է զրանց՝ պետութիւնների իրար գէմ վարած պատերազմներում: Սակայն այլիս գոյութիւն չունի այն՝ մինչև ծուծը ըսմանտիկ հասկացողութիւնը, որ իրարթէ այդպիսի միջոցներով կ'աջողուի փոխել քաղաքական և տնտեսական մաքառաման բոլոր ձեերը, այնպէս որ այդ ահաբեկիչ միջոցների հետ համեմատած՝ երկրի տնտեսական զարգացման աստիճանը, բանուորների քաղաքական պրոֆեսիօննել զարգացումը իրը թէ դառնում էն անշան գործօններ:

Բայց այդ հասկացողութեան հետ միասին չքացած արդիօք քաղաքական կեանքից կամ գէթ սոցիալիստական շար-

1) Փրկութիւնը—նիտրոգլիցերինի (ուժանակ շինելու նիւթ) մէջ է: Ե. Թ.

ժումից և լուսանախիկ մտածողութիւնը առնասարակ կամ այդ կերպ մտածելու հակումը: Բոլորովին ոչ: Խրաքանչիւր յարմար գէպրում մենք կրկին հանդիպում ենք նրան, թէկուզ կերպարանափոխուած ձեի տակ: 1905 թ. յունուարից մուսաստանում տեղի ունիցող քաղաքական վիթիսարի գործադուլ ները, ի միջի այլոց, այն հետեանքը ունիցան որ Գերմանիայում քաղաքական գործադուլի գաղափարը այնպիսի ժողովրադականութիւն ստացաւ, ինչպիսին անկարելի էլ երեսկայել զեռ մի տարի առաջ: Ինքն ըստ ինքեան այդ ֆակտը միայն կարելի է շնորհաւորել որովհետո քաղաքական գործադուլը, անտեսականի նման, մաքառման գործիք է, որ բանուորական գաղափարը այս կամ այն պայմաններով կարող է հարկադրուած լինել գործադրելու. և այդ պատճառով գործադուլի մտքի հետ անհրաժեշտ է որ նա առաջնուց ընտելանայ: Ինձ ընաւ չի անհանգստացնում և այն, որ այժմ, երբ այդ գաղափարը ժողովրական գտնուաւ, նրան ձեռք բերելու առանձնաշնորհումը իւրացնուած են իրանց մարդիկ, որոնք մի քիչ առաջ նըրա դէմ էին դուրս ենում կամ այդ գործադուլը թոյլատրում էին այնպիսի վերապահութեանը, որոնք գործնականապէս համարիշ էին յիստածգել այն ad calendas graecas<sup>1)</sup>: Մարտ երբէք չողէտք է իր ուրախութիւնը թօւնաւորի չհաւատացողների գարձի ասիթով նրա համար, որ նրանցից ոմանք իրանց ընտրեալներ են երեսկայում հրաւիրուածների մէջ... Այդպիսի երեսյթների պակասութիւն պատմութեան մէջ երբէք չի եղել: Յիւրիխում ինձ անուանում էին մայր Գերմանիայի քաջամարտիկ զաւակներից մէկին, որ շվեյցարական քաղաքացի լինելու իրաւունքը ստանալուց յիսոյ, հէնց նոյն համայնական ժողովում, որ նրան շվեյցարական քաղաքացիութեան գիրկը ընդունեց, երբ մի այլ ուրիշի նման խնդիրքն է քննուելիս եղել, խօսք է պահանջել և յայտնել, թէ շտէ հէրիք է օտարներին ընդունել և պէտք է գաղաքահցնել այդպիսի քայլեր անելու... Վերջին ժամանակներս ես յաճախ եմ յիշում այդ զոչազին: Առանձին զէպքերում ինարկէ վաս չէ յիշեցնել այդպիսի նոր ներկուածներին, թէ նրանց վրայի ներկը դեռ չի չորացել, բայց ընդհանուր առմամբ չարժէ որ մարդ վչացնի իր տրամադրութիւնը այդպիսի կողմանակի երեսյթներով, մինչեւ որ չափը անցուած չէ գործի էութեան մէջ և նոր ձշմարտութեան քարոզը չի ստացել նոր նախապաշարմունք ստեղծող կամ ըոմանտիկ բնաւորւ-

1) Հայերէն դրան ասում են «էջի զտակին»:  
Յունուար, 1906.

թիւն տուող մի ձև: Այն ժամանակ արդէն կուսակ անել չի կարելի և պէտք է լրջօրէն խօսել:

Հէնց այդ մաքով, բառ իս<sup>1)</sup>), պէտք է հասկանալ Յ.— Էլմի, Ֆրումի և Լեշէի 1905 թ. նոյեմբ. 23-ից զրուածքը «Hamb. Echo»-ի մէջ:

Ներքոյ ստորագրեախներս մեր պարտքն ենք համարում կուսակցութեան և ընտրողների առաջ անել հետեւալ ազդը.

Վերջին շաբաթների ընթացքում ինչպէս կուսակցութեան մամուլի մէջ, այնպէս և կուսակցութեան ուղղվածում տարածում են իցը կուսակցութեան մեծամասնութեան անդամից այնպիսի հայեացքներ, որոնք մեր հացողմամբ խիստ հակասում են կուսակցութեան շատ կարեսը որոշումների ճշգրիտ տեքստին և անդամնեցին: Մենք նախ և տառաջ ի նկատի ունենաք նայում ընդունուած որոշումը ընդհանուր քաղաքական գործազուրի վերա-

բերմամբ:

Այդ որոշումը պատճառաբանող իր փերջնական ճառում Քերելի, որպէսզի ցրի ըոլոր կամածները և այլ առիթով ծագած տենգեցները, պարզորէն ընդգծեց որ այդ որոշումը չեւ պարտաւորեցնում «որոշ գէպրերում գործադույցայտաբարել ամեն տեսակ պայմաններում, ինչ զնով էլ այդ նաև լուլինի»: Այդ երկիւղները, Քերելի կարծիքով ոչ մի հիմք չունեն: Կուսակցական համամոդովին առաջարկում է միայն համաձայնուել «որպէսզի հարկաւոր գէքրում, յայտնի պայմաններում» կուսակցութեան առաջնորդները միանան պրոֆեսսիօնել կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ և քննութեան առնեն՝ մասսային քաղաքական գործադույլի գաղափարի իշրագործումը, ենթակըրելով նրա կարելիութիւնը հաստատուած: Այդ խօսքերը ընդհանուր հաւանութիւն գտնն կամ առնուածն ամենափոքր ընդզիմախօսութիւն անդում չը յարուցին:

Սակայն չնայած զրան, կուսակցութեան մէջ վերջին ժամանակ ծագել է նոր սովորութիւն, որ աչքի և ընկնում չափազանց վասնավուր, նոյնիսկ կուսակցութեան համար ուղղակի կորսուարել յեղափոխական լուսանութիւնով: Այդ վկայում է թէալ մտածողութեան ամենաշնչին նշայըլի բացակայութիւն և կանոնած է բացարձակ հակասութեան մէջ պատմութեան զրայ մատերիալիստական հայեացքի հետ, որ դիմականորդն հիմնաւորել է կարլ Մարքսը: Վերս յիշած նոր ուղղութիւնը մոլեսանդ նախանձափնդը թեամբ ձգտում է ենայի որոշումը բացատրել այն մտքով, որ իրեկ թէ քաղաքական գործադույլը սոցիալ-դէմոկրատական կուսակցութեան համար անխուսափելի գործ է թէ ոչ այսօր—գէթ վաղը պէտք է կարմ պատրաստ լինել այդ զործադույլի համար: Իւրաքանչյուրին ով չի համակրում զրայ յեղափոխական բոմանափմին դրանք պիտի ամսաղը մասնաւում են կամածանքով թէ այդպիսիները ձգտում են սասցնել մասսայի տրամադրութիւնը, թէ պատկանում են ըեզրիզոնիստներին, որոնք ձագրում են յեղափոխական ողին կուսակցութեան մէջ<sup>2)</sup>: Այդ պատպազմանդի տեսակը ամրողջապէս հնրո բոլոր միջոցները ոչնչով չեն տարբերուում անարիօս-սոցիալիզմից:

1) Ե. Քերնշտադի այդ յօդուածը տպուած է և գել Socialistische Monatshefte ամսաղը այս տարբեր յունուարի տեսարակում: մենք օգտուել ենք «P. B.» թարգմանութիւնից:

2) Տես յօդուածի սկզբում գլուած ժամանութիւնը բնիվիզիօնիստների մասին:

Բանուորների պրօֆէսորիօնէլ 2) կազմակերպութեան անհրաժեշտութիւնը և նրա իբր էական գործօնի նշանակութիւնը բանուուրական դասակարգի ազատական շարժման մէջ ճանաչուած էին լուսոր սոցիալ-դեմոկրատական համաժողովներից, իսկ նոյայի կուսակցութեան ժւրաֆանչիւր անդամի վրայ՝ նպաստել պրոֆեսալիօնէլ միութիւնների ձգութմներին և նպատակներին։ Սակայն նոր ուղղութեան ներկայացուցիչների համար պրոֆեսորիօնէլ կադմակերպութիւնների սահմանադրում ամեն մի դործունէութիւն սիդիֆեան աշխատանք է, նրանցից հենց այն և լուսմ թէ «պրոֆեսուրիօնէլ միութիւնները անդօր են» և այլ նման քրաղներ, որոնք վնասում են պրոֆեսորիօնէլ շարժման շահերին։ Նմանադրէս և պարլամենտական գործունէութեան գնահատման նկատմամբ այդ ուղղութիւնը այնպիսի գիրք է ըստնել որ ճակասում է սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան բոլոր կոնգրեսների որոշումներին։ Այդ նոր ուղղութեան ներկայացուցիչները խօսում են և զրում պարլամենտարիզմի ողորմելի ունացնութեան» մասին, «պարլամենտական ձանձի նեղ տեսակետի» մասին, յայտնում են թէ «պարլամենտարիզմի վրայ հիմնուած մեր բոլոր հաշիւնները աւազի վրայ են շինուած» և այն։

Այդ ուղղութեան գէմ մենք բոկորում ենք իբր կուսակցութեան անդամներ և նրա ներկայացուցիչները բայխատազում և յայտնում ենք որ յիշեալ պրոպագանդը չի համարաւասախանում կուսակցութեան և բանուուրական շարժման շահերին։

Անուանուած սոցիալ-դեմոկրատները «Vorwärts»-ին գլւքած նամակում յայտնում են թէ իրանց այդ ազդի իբր մերձաւոր առիթ ծառայել է Ռոզա Լիւրսեմբուրգի ճառը քաղաքական գործազուլի մասին։ Արգարութիւնը պահանջում է նկատել որ Ռոզա Լիւրսեմբուրգը վաղուց ասում է այն, ինչ ասել է Համբուրգում։ Սակայն մինչև այժմ նրա ճառաբանութիւնները ոչ մի ազդեցութիւն չեն արել գերման սոցիալ-դեմոկրատիայի գործնականի վրայ, և այդ բաւական էր որ նրանց նշանակութիւն չտրուի։ Այլ բան է հիմա, երբ Ռոզա Լիւրսեմբուրգ դառնել է ս.-դ. կուսակցութեան կենարունական օրգանի առանձնաշնորհեալ անդամը և երբ կարող է այնպէս թուալ թէ նա խօսում է ոչ իբր մասնաւոր անձ, այլ իբր կուսակցութիւնից առանձին լիազօրութիւններ ստանձնած մի ներկայացուցիչ։

Սակայն ում կարող է հրապուրել բանակուիլ Ռոզա Լիւրսեմբուրգի հիմունքը հատ: Ես կը փորձեմ միայն պատասխանել կուսակցութեան մէջ այժմ գրած հերթական հարցին—սուսական անցքերի կէրառութեանը Գերմանիայում։

2) Պրօֆեսորիօնէլ նշանակում է արուեստակցական, միենոյն պրագմունքով կամ արուեստով պարապողները միենոյն պրոֆեսուայցի (արուեստի) են պատկանում, ամեն մի պրոֆեսուա ունի իր առանձին՝ պրոֆեսորիօնէլ շահերը։

## II

Այս հարցի լուծման ժամանուկ շատ հեշտ է ընկնել թէ մէկ և թէ միւս ծայրայեղութեան մէջ: Ռոմանտիկի հակապատկերը ֆիլիստերն է, որ այնքան հրաշալիօրէն բնորոշուած է Գեօթէի «Ֆառառ»-ում, ինչպէս մի մարդ որ երեակայում է թէ այն ժամանակ երբ ցանկապատի ետևում ամեն ինչ տակն ու վրայ է լինում—նրա մօտ, տանը, ամեն ինչ կարող էր շարունակուել հին կարգով: Զէ որ Գեօթէի աշքերի տաջն ծաւալուում էր ֆրանսիական յեղափոխութիւնը որ Գերմանիայում անզամ չառ հին կարգեր փոխեց: Եւ սուսական յեղափոխութիւնը, իհարկէ, առանց խոր ազգեցութեան չի անցնիլ զերմանական քաղաքականութեան վրայից, սակայն նրա ազգեցութիւնը կարող է երեան դալ և ոչ այժմ: Նմանապէս և ոռւս բանուորների ժամանակակից կոիւը, որքան և մինուրմալ լինեն զրա պայմանները, մեզ կարող է շատ բան սովորցնել: Իբրև տարերային շարժում, այդ կոիւը յաճախ ընթանում է հակասակ բոլոր ընդունուած աւանդութիւններին, ստիայն այնուամենայնիւ անհրաժեշտ է որոշել թէ ի՞նչը պէտք է բացառապէս այդ անսովոր պայմաններին զերագրել և ի՞նչ նպատակայարժարմար է կամ հնարաւոր է միմիայն այդ իսկ պայմաններում:

Ուրիշները արդէն մատնանիշ են արել մի կողմի վրայ, այդ այն է որ սուսաց քաղաքական գործադուլը հէնց սկզբից վայելում էր բուրժուական դասակարգերի չափագանց համակրանքը: Արդեօք երկար կը տեի այդ համակրանքը—զա այլ հարց է: Արդէն նշաններ կան, որ այդ համակրանքը տեղ տեղ հուազում է: Սակայն կարեոր է նշանակել և մի այլ կողմ, ոռւս բանուորների առջև մի կողմից կանգնած է միանդամայն վարկագուրկ ու թուլացած պետական իշխանութիւնը, իսկ միւս կողմից՝ կազմակերպութիւնից և հմուտ զիկավարներից բոլորին զուրկ բուրժուազիան նուսաստանի ներկայ դրութիւնը —զա համարեա կատարեալ անիշխանութեան մի զրութիւն է: Բոլորն էլ զիտակցում են որ հին ինքնակալութիւնը այլևս պիտանի չէ, սակայն ոչ ոք չգիտէ թէ ի՞նչ պէտք է փոխարինի նրան, ինչ կը փոխարինի: Ոչ ոք չի հաւատում այն բանին ի՞նչ որ գոյութիւն ունի, սակայն ոչ ոք էլ չգիտէ թէ ի՞նչ կը լինի իսկոյն: Թէ այդ մերձաւոր ապագան նուսաստանի տընտեսական կառուցուածքի (ստրուկտուր) և կուլտուրական զարգացման պայմաններում չի կարող լինել սոցիալիստական հասարակութիւն, այդ բանի մէջ սկի չեն էլ երկրայում ոռւս սո-

ցիալիստների մեծ մասը, հէնց Բոզա Լիւքսեմբուրգն էլ է այդ ընդունում: Բայց եթէ ոչ սոցիալիզմը, ուրիշ ի՞նչ: Ո՞ր կուսակցութիւնը նախ և առաջ կը կանգնի կառավարութեան գլուխը: Այդ ոչ որ չի կարող դուշակել: Առեն բան կարող է պատահել, բայց ոչինչ չի կարելի ասել վստահօրէն:

Թէ այդ դրութեան մէջ ինչպէս կը սկսի գործել պետական հին ապագարատը—դժուար չէ երեակայել մանաւանդ եթէ տիշել որ նա բազկացած է մի չինովնիկութիւնից, որ երբէք աչքի չի ընկել պարտականութեան գիտակցութեան առանձին ամրութեամբ և միայն այն պատճառով էր պատրաստակամութեամբ հպատակւում բարձրագոյն իշխանութեան, որ այնանդ նու տհոնում էր երկաթէ բունցը: Իր առջև չտեսնելով այդ երկաթէ լուսնացը ուսւ չինովնիկութիւնը կորցնում է իր բըռնելիք ընթացքի ուղեկցոյցը: Այդ է պատճառը այն բազմաթիւ գէպքերի, երբ մասայի առջև պոլիցիականները ընկճուել անձնատուր են եղել: Ի՞նչպէս այդ պոլիցիականները մաքառեն մասսայի դէմ, երբ նրանք հաւատացած չեն թէ նաև վաղը կառավարութիւնը նրանց մէջքում պինդ կանգնած կը լինի և կը պաշտպանի իրանց, կարող կը լինի իրանց պաշտպանել! Խուսաստանի շատ բաղաքներում այժմ իրապէս տիրապետում է մի տեսակ բունցը իրաւունքը. իրաքանչիւրը անում է, ինչ որ ցանկանում է և հասարակական կեանքը, որ չափով նա առհասարակ շաբունակում է հին ձեռվ գործել, գոյութիւն ունի միայն սովորութեան վրայ յենուելով:

Այդպիսով քաղաքական գործադուը Խուսաստանում դառնել է համարեա առօրեայ երեոյթ, բայց դրա հետ միասին թուլանում է և նրա ազգեցութիւնը: Պոլիտիկայի մէջ ամեն բան մաշտում է, ամենասրածայր նիզակներն էլ ժամանակի հետ բթանում են: Երբ ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ ահարեկման (տերրոր) միջոցով սարսափեցնելու և վախեցնելու սիստեմը հասաւ իր զարգացման զագաթնակէտին—նա գագարեց երկիւղ ազգեր: Այդ սիստեմի կողմնակիցները իրանք յովնեցին, և գիլեօտինան, եթէ կարելի է այդպէս ասել, ձանձրացրեց նրանց: Զգերը ըթացան, մարդիկ համակուցան մի տեսակ ֆատալիզմով: Միայն թերմիդորը<sup>1)</sup> մացրեց նոր գըրգիո, բայց այդ յեղաշրջումը յեղափոխութեան թուլանակն էր արդէն ցոյց տալիս:

1) 1794 թ. յուլիսի 27, երբ ընկաւ յեղափոխութեան բոնակալ Բորիսպիհուը և վերջ տըուեց նրա յարուցած կատաղի տերորներին:  
Ծ. թ.

Ո՞ւմ դէմ է ուղղուած քաղաքական գործակուլը: Կառավարութեան դէմ: Ո՞ւմ է նա հարուածում: Մասամբ կառավարութիւնը, բայց առաւել ևս մեծ չափով և բորժուական հասարակութիւնը, ապա ուրեմն միջնորդաբար և բանուորութիւնը: Դրանով արդէն ասուած է որ քաղաքական գործադուլը կարող է յաջողութիւն ունենալ միմիայն որոշ պայմաններում, այն է. երբ զործադուլը բանուորները անում են հասարակութեան կամ նրա գերակշռող մասի հետ միասին կամ երբ բանուորները այնքան ոյժ ունին որ կարող են ստիպել որ թէ հասարակութիւնը և թէ կառավարութիւնը նպատակուին իրանց: Այդ աշտերնատիվի վրայ է յենուում այժմ ոռուական յեղափոխութեան վիճակը, որքանով նա որոշուում է բանուորների մասնակցութեամբ: Կառավարութիւնը ընտրել է սպասողական գեր: Նա ցանկալի է համարում որ զես մինչև Փուժայի բացումը կատարուի այն, ինչ որ եղաւ ֆրանսիայում միայն ազգային ժողովի բացումից յետոյ: Քաղաքական զործադուլի զբաւչութիւնը կը թուլանայ, հաւատը գետի նրա ստեղծագործական ոյժը կը կորուսուի և հետաքրքրութիւնը գէսլի նա կը բթանայ: Հեռուից զժուար է վճուել թէ այդպիսի տակաթիկան որքան աջողութիւն կ'ունենայ: Սակայն, ըստ երևոյթին, ազգային ներկայացուցութեան յետաձգումը յեղափոխական ոյժերի լուրջ կորաւատ է, եռանդի ահագին պաշարի մսխում:

Ֆրանսիայում ազգային ժողովի գործունէութեան առաջին ամիսներից յետոյ նկատելի էր անտեսական բաւական խոչշոր կենդանութիւն, ազգային ներկայացուցչութեան ձեռք տուած աղատական միջոցները արդասաւոր կերպով ազգեցին տուերի և արդիւնագործութեան վրայ, բարձրացան նախաձեռնութիւնը և վարկը: Ռուսաստանում մենք հակառակն ենք աեմնում, առեւտրի և արդիւնագործութեան մէջ աւելի և աւելի մեծ գաղաք վարկի և նախաձեռնութեան աւելի զօրեղ տնկում: Ով է կարող այդպիսի պայմաններում աւելի երկար գիտանալ—ինքնակալութիւնը թէ զեսեւ ընդդիմազիր բուրժուազիայի լայն մասսան, զրանից է կախուած լինելու կուսի մերձաւոր ելքը:

Այդ բոլորից երեսում է թէ որքան նեշտ է սխալուել ժամանակակից Ռուսաստանի քաղաքական գործադուլի նշանակութիւնը գնահատելիս: Օրէց օր կարող է փոխուել այդ նշանակութիւնը: Այն նեշտառաթիւնը որով այդ գործադուները կաումւում են, այն յանկարծակիութիւնը, որով երբեմն նրանք ծագում են—միայն մոմենտի ընդհանուր ընորոշում են տալիս, բայց չեն կարող ծառայել իբրև չափ բանուողական զառակարգի սեփական ոյժերի, այլ աւելի շուտ միայն նշան են

միւս զաստկարգերի և կառավարական իշխանութեան ժամանակաւոր թուլութեան և անդճուղականութեան:

Եթէ արդէն անպատճառ հզրակացութիւն անել քաղաքական գործադուլի նշանակութեան մասին, գուցէ կարելի լինի միայն ասել թէ այժմ Ռուսաստանում տիրող նման պայմաններում ամեն աեղ հեշտութեամբ իշտրելի կը լինէր յայտարարել այդպիսի գործադուլներ և թէ նրանք ամենուրեք նոյնպիսի արձականու կը գանէին: Իսկ վերջնական ազդեցութեան մասին ոչինչ չի կարելի ասել, որովհետեւ դեռ զժուար է տեսնել որտեղ են Ռուսաստանում այժմեան գործադուլների սահմանները: Նրանից որ ծագող գործադուլներից մի քանիոք շտակարան մասնակութեան մասին գործադուլները և այլական հզրակացնել որ այդ սահմանները անկասկած դոյցութիւն ունեն: Եւ ի՞նչպէս կարող է այլ կերպ լինել: Մենք զիտենք թէ ինչ ահագին միջոցներ է պահանջում իւրաքանչիւր երկարող գործադուլը հէնց լոկ գործադուլ անողներին քիչ-միշ սովից՝ պաշտպաննելու համար: Մինչդեռ վաս կազմակերպուած և վաս վարձատրուող ոռուս բանուուրների բազմութիւնը ուղղակի սիփական ոչ մի ազգիւր կամ բհսաուրս չունի: Տարածուած և երկարատե գործադուլի դէպքում նրանց առջև երկու ազգիւր կայ. յայն չափելով միւս հասարակական զաստկարգերի կողմից յօժարակամ աջակցութիւնը կամ — խանութների ջարդ ու թալանը և այլն:

Սակայն վերջին միջոցը երկար ժամանակով չի օգնիւ, իսկ առաջինը հնթարկում է գործադուլը հասարակութեան միւս զաստկարգերի բարի կամքին, այսինքն հնարաւոր է զարձնում միայն դէպքում և այն չափով, որ չափով գործադուլը ծառայում է միւս զաստկարգերի նպատակներին:

Սակայն այգովիսի կամ նման պայմանների մասին, որոնք այժմ տիրուած են Ռուսաստանում, Գերմանիան հարկ չունի ծանրանալ: Չնայած մեր «բարձր շրջանների» կողմից դէպի զանազան անակնկանները ունեցած բոլոր հակումներին, կարելի է ամենամեծ անհաւանականութիւն համարել այնպիսի մի պատերազմ, որ նոյն չափով ուժասպառ անէր գերմանական կայսրութեան ոյժերը, ինչ չափով ուռւուծալուականը՝ Ռուսաստանի ոյժերը, և նոյն չափով անժողովքական լինէր: Հէնց միայն քաղ. կուսակցութիւնների և կուսակցական կեանքի զարգացումը ապահովում է Գերմանիան ուռւականի նման պայմանների վրահասումից: Եթէ Ռուսաստանում վաղուց ի վեր գոյութիւն ունենային կաղմակերպուած կուսակցութիւններ և կուսակցական պայքար, ինչպէս այդ մշտական երեսյթ է դարձել Գերմանիայում, այնտեղ էլ բանը հազիւ թէ այդ տնօտել

անիշխանութեան համնէր: Աբովլիւտիզմի (միահեծանութեան) քամակում միշտ կանգնած է քաօսը: Նրա ստեղծած արուեստական կարգը կործանւում է արտովիւզմի հետ միասին: Այդ պատճառով ոչ առանց հիմքի ազատութիւնը անուանուած էր պահպանողական գործոն: Որքան մի երկիր աւելի մեծ քաղաքական ազատութիւն է վայելում, այնքան աւելի զերծ է նա խոշոր քաղաքական ընդհարումներից: Իհարկէ, պրուսականացած Գերմանիան գեռ շատ հեռու է՝ քաղաքական կուսակցութիւնների զարգացման համար: Եւ եթէ կատարեալ իրաւունքով կարելի է ասել որ՝ եթէ Գերմանիան ազատ երկիր լինէր, նրա քաղաքական կուսակցութիւնները շատ կողմերից այլ կերպարանք կ'ունենային, բայց և այնպէս՝ կայսրութեան մէջ զոյութիւն ունեցող ընդհանուր ընտրողական իրաւունքը այն ազգեցութիւնը ունեցաւ, որ կուսակցութիւնները աւելի յարմարուեցան ժամանակակից սոցիալական կոռեխն, բան այդ հնարաւոր կը լինէր, օրինակ, Պրուսախայի երեք-դասեան ընտրողական սիստեմի ժամանակ: Մշուշապատութիւնը—գտ մի պակասութիւն է, որի համար ամենից քիչ կարելի է մեղադրել գերմանական կուսակցութիւնները: Յամենայն դէպս մեր կուսակցութիւնները ոչ մի կերպ չի կարելի համեմատել այն քաօսի հետ, որ ընորոշ է Ռուսաստանի ներկայ զրութեան համար: Եւ նմանապէս նաև մեր պետութիւնը բոլորովին այլ կերպարանք ունի, քան սուսականը: Մեր բիւրոկրատիան չի կարելի, իհարկէ, մինչ երկինք բարձրացնել, սակայն յամենայն դէպս նա բոլորովին այլ տիսակի է, քան սուսականը: Մերոնց տրափիցիանները լուրովին այլ են, և շատ յատկութիւններ, որոնք չափազանց թոյլ են զարգացած ուսւու չինոմնիկի մէջ, մերոնց մէջ, զուցէ, չափազանց են զարգացած: Գերմանացին—բաւծին պաշտօնեայ է, և ինչ հաւաքքի էլ է նա լինում է լինի, բայց պետութեան նա հաւատում է: Մեր առջև՝ Գերմանիայում՝ կուս շաղկապուած պետական օրգանիզմ կայ, որ զեր կարող է վտանք լինել ի ըլաշտօնեանների հաւատարմութեան:

Այդպիսի մի պետական օրգանիզմ, լաւ զարգացած քաղաքական կուսակցութիւններ, (որոնք եթէ ոչ միշտ ճշտութեամբ գիտեն, թէ ինչ են ցանկանում, յամենայն դէպս պարզ գիտակցում են թէ ինչ իրանք չեն կուտենում), ձեռնարկուների համեմատարար լաւ, իսկ արդիւնագործութեան որոշ ճիւղերում նոյնիսկ չափազանց լաւ կազմակերպութիւնը,—այդ բոլորը այնպիսի հանգամանքներ են, որոնք մեղանուու պահանջում են բա-

դաքական գործադուլի հարցի նկատմամբ բոլորվին այլ վերաբերմունք, քան ներքնապէս խոր կերպով քայրայուած և ստանուած մուսաստանում, այդ չտեսնելու համար հարկաւոր է մանուկի միամտութիւն կամ թուղթ խաղացողի թիթեամութիւն:

Իրաւ է, մեր բանուորական գասակարզը շատ աւելի գորեղ, անհամեմատ աւիլի լաւ է կազմակերպուած և հոգեապէս աւելի բարձր է կանգնած, և նրա մասին առանց չափազանցութեան կարելի է ասել թէ յեղափոխական դրութեան մէջ նա անպարտելի կր լինէր: Սակայն յեղափոխական զրութիւն գոյութիւն չունի, և այդ չես կարող ստեղծել հրամայելով, ինչպէս և քաղաքական գործադուլով: Այդ գործադուլի իրքն հետևանք կարող է առաջ դալ և յեղափոխական դրութիւն, սակայն գուշակել այդ չի կարելի, եթէ ամբողջ մթնոլորտը առողջուց չի առգործուած յեղափոխական էլեքտրականութեամբ, ինչպէս այդ տեղի ունէր Պետերբուրգում: Բայց չէ որ Փերմանիայում զրա նմանի անունն էլ չկայ: Ճիշտ է, խմորումը նկատուած է հասարակութեան և այլ խաւերում, բանուորական դասակարգից զատ ոգին մուտք է գործում նաև այնպիսի շրջաններ, ուր անկարելի էր սպասել. ճիշտ է և այն որ մանր պաշտօնիաների մէջ (որոնց հաւատարմութեան վրայ է վերջ ի վերջոյ հաստատուած պետական ամբողջ շէնքը) օրէցօր աճում է համակրանքը դէպի սոցիալ-դեմոկրատիան, սակայն համակրանքի և ներգործական կողմասանցութեան մէջ,—ինչպէս եղաւ մեր աչքերի առջև մուսաստանում,—ահազին տարբերութիւն կայ: Ընդհանուր գործադուլի ժամանակ բանուորները Գերմանիայում կարող են յոյս զնել միմիայն իրանց սեփական ոյժերի վրայ:

### III

Եւ այնուամենայնիւ, կարող են հարց տալ ինձ, զու քաշովում ես քաղաքական գործադրութ: Այսո, սակայն սիայն որոշ զէպքի և որոշ պայմանների ներկայութեամբ: Ես քարոզում եմ ընդդ. քաղ. գործադուլ իրքի բանուորականութեան կամքի հըզօր տրտայայտութիւն, երբ նրանից ուզում են խլել նրան պատկանող կարեոր իրաւոնքներ կամ երբ նա այլիս անկարող է ապրել առանց այս կամ այն գեռ չսուածած իրաւունքի, բայց՝ ոչ իրքի յեղափոխական մի խաղ: Իրքն անհրաժեշտ միշնոց բանուորականութեան, երբ նրա ձեռքում եղած մաքաւման միջոցները բաւականաչափ չեն, սակայն ոչ իրքի յեղափոխա-

կան բումանուիզմ: Ահա որտեղ է կարեոր տարրելութիւնը, որ բաժանում է ինձ, ինչպէս և Ձ.-Էլմին և ուրիշներին, բաղաքական գործադուլի նորագոյն աղիտատորների մի մասից: Ես չեմ հաւատում մի բաղաքական դործադուլի, որին իրրե նախարան պէտք է ծառայի՞ ամրող հաստրակութեան պատերադման յայտարարելը, պարլատենաական կոուի և պրոֆեսիօնէլ շարժման սէնչացումը, ևս ուզգակի այդպիսի գործադուլ համարում ետ գատապարտելի և կորստարեր: Եթէ այդպիսի պրոպագանդը տարածում է bona fide, այդ գէպքում նու սպառնում է բանուրներին այսպիսի ճենարդիութեան մէջ գցել, որ իրերի ներկայ զրութեամբ խոստանում է միայն խոշոր պարտութիւն, որ իր կողմից անբարոյականացնող ու կազմալրող կերպով կ'ազդի: Նա ընդգիւմազրութիւն է նախատեղում ամրող բուրժուական հասարակութեան կողմից, որ զես մեծ ոյժ ունի, որովհետեւ նրա յետեից կանգնած է ամրող պետական ապարատը և անտարբերների ու բժամիտների վերջապահ զունզը: Իսկ եթէ նրանք, որոնք բարողելով տարածում են մասսային քաղաքական գործադուլներ և իրանք չեն մատածում լրջօրէն զրանց իրագործման մասին—այն ժամանակ զրանք զիտութեամբ կամ անդիտութեամբ կեղծ խաղը են խալում այդ բառի ամենավասիժամանը: Մի ցնորդի համար նրանք վարկարել են անում քաղաքական գործադուլի այն ձեզ, որ հնարաւոր է և այժմ և կարող է անհրաժեշտութիւն զանալ:

Քաղաքական գործադուլը, եթէ նա յեղափոխութիւն չի նշանակում, պէտք է գործադուլի միայն իրրե կոչ խզմի առաջ, իրրե միջոց արթնեցնելու արդարութեան ընած զգացմունքը: Այդ գործադուլի միջոցով հասարակութիւնը սովորան: անելու միոքը ըսլորից արգէն սխալ է ճանաչուած: Նա միայն—անտեսական գործիք է բարոյական (էթիկ) նպատակների համար: Ես գիտեմ որ այդ անելով իրակ և մ անում բողոք յարուցել և այն էլ ոչ միայն այն խմբակի կողմից, որ երևակայում է կամ ներկայացնում իրան իրը դասակարգացին կոուի արտօնեալ պաշտպան: Դժբաղպարար բանը այնաև է հասել որ գասակարգացին կոիւը լուսաւորութեան միջոցից գառել է խաւարեցնելու գործիք: Ի՞նչպէս է կարող, ասում են, դասակարգացին սազմիկը էթիկ զգացմունքների կոչ անել: Իրաւ է, Մարքս, Լասուալ վկայ էին կանչում էթիկան, իրաւ է մենք էլ ենք այդպէս անում ընտրուական պայքարի ժամանակ, պարլամենտում, ամեն տեսուլ գէպքերում, միայն թէ զրտ մասին խօսել պէտք չէ: Թէ ոչ յանցանք կը գործես նոր մաքրուած վարդպետութեան գէմ... Սակայն ևս չեմ ուզում վերջացնել այսպիսի տարածայ-

նութեամբ: Թէև քաղաքական գործադրուլը նախ և առաջ իսիդճ զարթեցնող կոչնակի նշանակութիւն ունի, բայց ժամանակին և կանոնաւոր կազմակերպուած, այսինքն այն ժամանակ, երբ զրգուումը իսկապէս խոր կերպով տիրել է բանուոր դասին, երբ բանուորներն լցուած են իրաւունքի համար կոռւելու այն զգացմունքով, որ բարձրացնում է մարդուն առօրեայ մանր հոգուերից շատ վեր, զործագուլը կարող է նամանապէս ծառայել իրեն մ'նել, թերել: Իսկ ո՞ր մաքառումն է կարող մեր օրերում բանուորի համար աւելի մեծ նշանակութիւն ունենալ, քան ընտրողական իրաւունքը միթէ իրականապէս սոցիալական յեղափոխութիւն չէ, շահագործումից աշխատանքի ազատագրութիւն չէ:

Ռոմանատիկ է նաև, ով չի ուզում այդ տեսնել: Ընտրողական իրաւունքը և պարլամենտական գործունէութիւնը, չէնց նրա համար որ զրանց ապդեցութիւնը մի օրում չի արտայայտում, որ նրանք չեն աւերում օրէնքները և իրաւունքները ձեռք չեն բերում բռնութեամբ, շատերին թւում են չնչին՝ քաղաքական յեղափոխութեան համեմատութեամբ: Սակայն իսկապէս ընդհանուր ընտրողական իրաւունքի վրայ յենուած պարլամենտարիզմը, տնտեսապէս առաջադիմող հասարակութիւնների մէջ—ինչպիսիների հետ մենք այժմ գործ ունենք,—ամենառողիղ միջոցն է՝ առանց արիւննեղութեան, խնայելով կեանքը, առաջացնել յեղաշրջում, որ հին ժամանակներում ամբողջ սերունդների արիւնահեղ և կործանիչ կուրուների զնովն էր կատարուած: Պարլամենտի համար և պարլամենտում՝ կոփելը—զաօրինական ձեերի մէջ պարփակուած ու մեր կուլտուրական հասակացողութիւններին համապատասխանող անդադրում օրգանական յեղափոխութիւն է, նա ամենաարձ ձեն է դասակարգային կառուի: Եւ այդ պատճառով քաղաքական գործադրուլը, որի նըսպատակն է՝ ընտրողական իրաւունքի ապահովումը, մի զործէ, որի անունից բանուորները կարող են աջողութեամբ զիմում անել ոչ միայն իրանց ընկերների դասակարգային զիտակցութեան, այլ և միւս զասակարգերի արդարադատութեան և խելահասութեան:

Է. ԲԵՐՆԱՇՏԱՅՆ

## ՔԱԶԵՐԻՆ

Մուա սարերից ստւառնեց քամին,  
Դրօշակը մեր հպարտ ծըփծըփաց.  
Տեսէք, դաշտերից կու գայ թշնամին,—  
Սրբազն կոռւի կոչը որոտաց:  
Էյ, հայ ախալբոտիք, եղջիւր հնչեցէք,  
Իջէք ժայռերից, անյաղթ արծիւներ.  
Սարերից պութկած հուր ու ջրի պէս  
Թափուեցէք ստոր դիւշմանի զլիով.—  
Նա— մեր գրացին, և նամարդ, և չար,  
Գիշերը գողտուկ ելաւ մեզ վրայ.  
Ու մեր թիկունքից՝ ծածնւկ, զաղանարար  
Սողաց օձի պէս, ելաւ մեզ վրայ.  
Զարդեցէք, չնվաէք էզ նամարդ օձին,  
Որին մենք, աւանդ, հազար տարիներ—  
Տաքացրեցինք մեր ազնիւ ծոցին  
Հազար տարիներ, հազար տարիներ:  
Նա մեր արիւնր խմեց ու ծըծեց,  
Բայց համբերեցինք ուղիղ որրի պէս.  
Մենք խրատեցինք, խակ նա մեզ ծեծեց,  
Բայց համբուրեցինք նրան աղբօր պէս...

Զան, աղիկ Ալմաղ, լոնչպէս դու հիմա  
 Մեր վառ արխւնով կարմիր ևս կապէ.  
 Մեզ ինչ—ամօթից թաղ նա սեանայ,  
 Ով ճառել գիտէ, կռուել չգիտէ:  
 Վառ, կորմիր հաղիը, դու հայ-ժողովուրդ,  
 Եւ սուրդ շարժէ, քեզ ճանապարհ բաց.  
 Այս աշխարհի մէջ սուրն է միշտ կարող—  
 Կորիր ու տիրիր—անյաղթ, հզօր կաց:  
 Եւ սուրդ ամուր դու խփիր երկրին,  
 Հողիդ ու տանդ տէրը դուն եղիր,  
 Էյ, դու արեի ճամբորդ վաղեմի,  
 Սրով, գօտէպինդ և յառաջ քայլիր.  
 Անյողլողդ զնա դէպի լոյսն—արե,  
 Եւ ազգերն ամեն, յարգանքի նշան,  
 Յետյետ գնալով և տալով բարե  
 Ազատ, անարդել քեզ ճամբայ կը տան...

Աւ. ԽԱՅԻԱԿԻԱՆ

8 յունուարի 1906.  
 ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՆ

## ՔՆՆԵՐԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԸՏԵՆԸՆՈՍՈՒԹԻՒՆ

Առանձակ «Պ.Շ.» ծիծառը, Թիֆլիս, 1905 թ. գ. 1 թ.

Մեր ընթերցողներին ծանօթ է հեղինակի անունը, որի ապատուածքով է սկսում և այս համարը Առանձարը իր զրական գործունէութիւնը սկսեց և զարգացրեց հէնց այս էջերում. բնականարար գրել նրա մասին չենք կարող այն գովեստներով, որոնց նու արժանի է: Հինդ տարիների ընթացքում նրա զրած պատուածքները այժմ լոյս են տեսնում—ժողովուած մի հատորիկում (200 երես), ունինալով «յառաջաբանի տեղ» Դշտի ծիծաղ փոքրիկ պատմուածքը...

Լենքթիմուբը գրաւել էր Սերաստիան երկար զիմաքրութիւնից յետոյ և փորձուած էր ամեն տեսակ դիւային հնարքներով հանգստացնել իր քէնը: Նա վերջ ի վերջոյ այնպիսի զիւային վրիժասութիւններ է հնարում որ քաղաքուած ողջ մնացածները վշտից և տանջանքներից խելագարուում են և սկսում փողերով և թմրուկներով փողոցներն ընկած երգել, պարել ու խնդալ... «Դշտի ծիծաղ» են իսկապէս Առանձարի և միւս պատմուածքները, որոնց մէջ իրական գոյներով են նկարագրուած թիւրքահայկական սոսկալի կացութիւնը: Առանձարի յումորի, ծիծաղի, հեգնութեան տակ զժուար չէ նկատել թափնուած արցունքներ...

Թուղթը և տպագրութիւնը շքեղ են, ցանկալի է որ մեր ընթերցող հասարակութիւնը այս վշտի օրերին «Դշտի ծիծաղով» էլ հետաքրքրուէր, հայութեան վերքերն ու ցաւերը աշխարհագրական սահմաններ չեն ճանաչում և մեր կովկասահայերիս ներկայ կացութիւնը ջնջեց և այն տարբերութիւնը սահմանի երկու կողմերում որ մի ժամանակ չափազանց մեծ էր համարւում...

*Les Oberle'*, pièce en cinq actes, par M. Edmond Haraucourt, D'après le roman de M. René Bazin, de l' Académie française.

Այս համարում վերջանում է Խենէ Բաղէնի «Օբերլէներ» վէպի հայերէն թարգմանութիւնը: Ելզափի տրագիկ դրութիւնը, գերմանա-ֆրանսիական յարաբերութիւնները այդտեղ, հին և նոր սերունդի պայքարը այդ հետաքրքրական վայրում, նրա հրաշալի բնութեան նկարագիրը—աչքի ընկնող տաղանդով է կատարել հեղինակը, որ ֆրանսիական ակադեմիայի անդամ է: Բաղէնի այդ վէպը այնքան աչքի ընկնող գործ էր ֆրանսիական գրական կեանքում, որ նշանաւոր էդմոնդ Հարօկուրը շտապել է «Օբերլէները» վերածել գրամայի:

Մենք ստացել ենք «L' Illustration Théâtrale»-ի հրատարակութեամբ, փառաւոր պատկերներով զարդարուած այդ (5 գործ.) գրաման, որի ներկայացումը Պարիզում մեծ զովասանքներով է ընդունել ֆրանսիական կրիտիկան: Եթէ մեր իրականութեան պայմանները այնքան ցաւալի չլինէին՝ կարելի էր յանձնարարել մեր թատերասէրների ուշադրութիւնը այդ նոր պիէսը:

\*

## ՆԱՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Դարդան Քամալիսնց, վրէժ, հատոր Ա. 1, Վառնա, գ. 504.
- 2) Իզան Վազօֆ, Լուծին տակ, վէպ սլուղկար տոլստամբական կեանքէ, արտատուկ. «Զայն Հայրենիաց»-էն. 1906 թ., Պոսթոն:
- 3) Ա. Վ. Արդութեան-Երկայնարապուկ, «Մանկապարուշ», Թիֆլիս, 1906 թ. գ. 3 ր.:
- 4) Ա. Լալայեանց, «Արդարութեան նշանակութիւնը կեանքի մէջ», 1 ընդհանուր դատողութիւններ, Թիֆլիս 1906 թ. գ. 10 կոպ.:
- 5) Les Oberlé, pièce en 5 actes, par M. Edmand Haraucourt, d'après le roman de M. René Bazin de l'Académie française:
- 6) Առանձար, «Վշափ ծիծաղը», Թիֆլիս, 1905, գ. 1 ր.:
- 7) Բժշ. Վահան Արծրունի, «Վարակիչ հիւանդութիւնները և նրանց թոյնը», պատկերագարդ, Թիֆլիս, 1902, գ. 15 կ.
- 8) Մ. Մինասեան, «Բնաշրջականի ոը ներշնչումները», 1905 թ. Բոստոն:
- 9) Դոկտ. Փաշայեան, «Բնդարձակ զպրոցական ասովզապահութիւն» 20, 24, 25 և 26 թերթերը, իսկ 19, 21, 22, 23 թ. թ. չենք ստացել. երեխ կորել են ճանապարհին: Այդ օգտակար հրատարակութեան մասին խօսել ենք անցեալ տարի: Արժէ որ մեր բոլոր զպրոցները ձեռք բերեն այդ գիրը:

ԴԵՌԱՀԱԱՍՆԵՐՆ ԻՆՉ ԿԱՐԴԱՆ \*

(Յով. Տէր-Միլաքեանի)

Մի բանի լուսը:

«Դեռահանոների տղամ լնթերցանութիւնը» զրուածքս հրատարակեցի 1898 թուականին մեր գլուցների փակման առիթով, իսկ այժմ նոյն նպատակին ծառայող այս նոր աշխատութիւնու հրատարակում եմ նոյն գլուցների վերաբացման առիթով: Այս ժամանակ գրախօսուած, ըստ հասակների գառաւորած ընթերցանութեան դրքեր տաճարկելով հայ ծնողներին՝ ցանկացայ նպաստած լինել մայրենի գրաւոր լեզուի պահպանման գեռահաս սելնդի մէջ լնտանիքուու: Բայց ցաւօք սրտի պիտի ասեմ, որ հայ ծնողներից քչերը կամեցան օգուտ քաղել այն զրուածքիցս, որ թիթե աշխատութեամբ դլուխ չէր եկել: Մեր ժամանակ մանկական գրքերի թարգմանիչներին, փոխադրիչներին ու ճեղինակներին էլ մի ուղեցոյց տալու համար՝ նախ յատկապէս ուսումնասիրեցի ժամանակական գրական ու մանեկավարժական պահանջները այս կարդի զրուածքների նկատմամբ: Ապա այս երկու դիտութեանց կողմից զրուած պահանջների համերաշխութեան կէտարը գտնելով՝ այդ որոշ տեսակէտներով քննութեան առաջ վերոյիշեալ զրացուցակի գրքերը ըստ արժեքի ու հասակի և այսպէս կազմեցի «189 յանձնարարելի ու մերժելի զրքերի ցուցակը»:

Այս հայութեան տակնապալից և մինոյն ժամանակ խորհրդական օրերին, նրա երկունքի ծանր օրերին, երբ վերածընւում է հայկական զպրոցը, առանց վարանմունքի նորից ձևոք առայ այս կարևոր խնդիրը: Այս զրուածքը յատկապէս նուիրուած է զրացուցակին: Այս անգամ լրացրի ու կատարելագործեցի գրքերը երկրորդ մասը՝ զրացուցակը՝ առաջին ցուցակի գրքերի բովանդակութեան մասին էլ 148 նորերի հետ աւելի:

\*.) Մեր գլուցների վերաբացման առիթով աւելորդ չենք համարում տալ մեր գրականութեան մէջ եղած զրքերի վերգնահատումը, որպէսզի զասահարակներն ու ծնողները, ունենալով մի ուղեցոյց, զիտակցօրէն կատարեն լնթերցանութեան զրքերի բնարութիւնը:

մանրաւմասն տեղեկութիւններ տալով։ Այստեղ միայն կը յիշեմ այն կէտերը, որոնք արծածուել են առաջին գրուածքում։ Եւ եթէ մեր նորակազմ դպրոցական զործին ծառայող ուսուցիչների մէջ այս խնդիրները հարցասիրութիւն առաջացնեն, այն ժամանակ ես ուսուցուականութիւն կը զգամ աւելի նոր ու մանրաւմասն ուսումնասիրութեան արդասիք տալու նրանց։

«Դեսահասունների ազատ ընթերցանութիւնը» պրուածքիս 200 էջերում արծածուած են հետեւեալ պրական ու մանկավարժական խնդիրները։

Ա. Ազատ ընթերցանութեան ծալբումը, լ. զարգացումը, զ. նոպատակը, դ. գեռահասունների ու հասակաւորների մարի ու զգացմունքների և հետեւարար նաև պահանջների տարրերութիւնը, ե. այս առանձնայատկութիւններից առաջացած տարբեր շրջանների ընթերցանութեան նիւթերի տեսակները, գ. փոխադրութեան զանազան կերպերը, է. ազատ ընթերցանութեան հետեւանքների հետազոտութիւնը, ը. գրքերի ընտրութիւնը, թ. տարածումը և վերջապէս ժ. արձարածուած խնդիրների աղբիւրներին վերաբերեալ մատենախօսական տեղեկութիւններ ինչ ինչ բացարարութիւններով։ Թէ արգեօր մեր թարգմանիչներն ու փոխադրիչները, որքան են հետարրքուել այսպիսի խնդիրներով և պարտականութիւն զգացել գրիչ ձեռք անելուց առաջ ուսումնասիրել այս խնդիրները, այդ ամենից լաւ ցոյց կը տայ հրապարակում գոյութիւն ունեցող մանկական ընտիր, միջակ ու անողետք զբարերի վիճակագրութիւնը։ Արժէ ուրեմն այստեղ թոյլ տալ, որ թուերը խօսին։

Վերոյիշեալ գրուածքիս մէջ գրուած էր սի աղիւսակ, որ ցոյց է տալիս, թէ մանկական զբականութիւնը մեղանում նախ սկսուել է արևմտեան հայերի մէջ 1828 թուականից և առաջ գնացել առանց զգալի զարգացման ոչ որակը և ոչ քանակի կողմից։ Այդ զբականութիւնը յետ է մնացել և 80-ական թուականներից առաջնութեան տեղը տուել է արևելեան հայերին մանկական զբականութեանը, որ մասնաւոնդ շնորհիւ մեր Հրատարակչական ընկերութեանը՝ հետզհետէ գէթ որոշ չափով զարգացել է թէ որակի և թէ քանակի տեսակէաներով։ Մեր կովկասեան հայ Հրատարակչական ընկերութեան զործունէութեան զազարելուց յետոյց մասնաւոր անհատներ ու փոքր ընկերակցութիւններ ժողովրդական գրերերի հետ աշխատել են հատարակել նաև գեռահասունների համար գրքեր։ Արդ տեսները թէ ինչ են ասում թուերը 1873—1899 և 1890—1905 երկու շրջաններում հրատարակուած մանկական գրքերի մասին, ու

բանք զետեղուած էն առաջին ու երկրորդ մասենախօսական գրացուցակների մէջ։ Մի ընդհանուր գաղափար կազմել տալու համար՝ գրախօսուածն գրքերը Յ տեսակի բաժանեցի՝ ընդունելի, միջակ ու մերժելի։ Ընդունելի գրքերի թուի մէջն էն հին ցուցուիլիս 1873—1899 շրջանէն 80 հատ անպայման ընտիր գրքերը՝ մասնաւոր անձերի ու փոքր ընկերակցութեան հրահրատարակութիւններից և 30 հատ թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան հրատարակածներից և նոր ցուցակիս 1899—1905 շրջանից 42 անպայման ընսաիր գրքերը։

	ընդունելի	միջակ	մերժելի	ընդհ. թ.
1873—1899	122	43	24	189
1899—1905	104	32	12	148
	226	75	36	337 **) )

Բայց ընսաիր գրքերի թիւը անհամեմատ աւելի պակաս կը լինէր, եթէ թ. չ. չ. ընկերութեան զագարումից յետոյ մեր երկու ժողովրդական գրող բժիշկները՝ պ. պ. Արծրունիի և Բուգուղեան չտային մեզ մի շարք իսկապէս ժողովրդական առողջապահական ու մասամբ բնախօսական-զաստիարակչական օդապար զրուածքներ։ Նոյն գովնատով ցաւօք սրտի չեմ կարող խօսել թիֆլիսում գործող մի խումբ կանանց մասնաւոր ընկերակցութեան հրատարակած գրքերի մասին «Նուէր մանուկներին» մակագրութեամբ։ Որքան որ այս համեստ ընկերակցութիւնը մեղուածան աշխատութեամբ գործում է, նոյրքան լուրջ վերաբերմունք թարգմանելի նիւթերի ընտրութեան նկատմամբ ես չկարողացայ տեսնել նրա գործունէութեան մէջ <sup>1)</sup>։ Այս ընկերակցութիւնը ակներե կերպով երեան է հանում մի միտում աւելի թարգմանել կին զբողների գրուածքներից։ Ի հարկէ, բան չէինք ունենայ տուելու, եթէ այդ ընտրութիւնները յաջող կատարուած լինէին։

Այսակ պատեհութիւն չունենալով այս մասին աւելի խօսելու՝ կը ցանկայի մատնացոյց անել Կո читать дѣтямъ? <sup>1)</sup>

\*\*) Այբուրենական կարգով և ըստ հասակների գասաւորուած չեն № 334—350, իսկ 338—350 գերոյիշեալ աղիւսակը կազմելուց յետոյ եմ ստացել հրատարակիչներից։

1) Գրախօսածու 21 գրքոյիներից (ընդհանուր 23-էն հրատարակել) կերպով յաջող պէտք է համարել զոնէ իմ կարծիքով։

1) «Что читать детямъ?» Выпукъ I Разборъ детскихъ книгъ. Изд. Педагогического музея военно-уч. завед., въ СВБ. Отдѣль краткіи и библиографії детской литературы.

(Մանուկիները ի՞նչ կտրդան) հեղինակաւոր գրաւածքի մէջ արտայտյառուած կարծիքները այն սուս կին գրողների մասին, որոնցից որ վերոյիշեալ կանաց ընկերակցութիւնը զլաւորապէս ընտրում է թարգմանելի նիւթեր: Ինչպէս յայտնի է, հազարագիւա են մանուկների համար զրող ընտիր հեղինակները, իսկ կին գրողների մէջ նաև այլ կուրտուրական երկրներում այդպիսիներին կարելի է միայն «մատով ցոյց տալ»: Սյս առիթով կ'ուզէի ցանկութիւն յայտնել, որ մեր Թիֆլիսի Հ. Հ. ընկերութիւնը որբան կարելի է շուտ վերսկսէր իր զործունէութիւնը, միայն թէ աւելի լայն ծրագրով, ինչպէս որ խօսուեց անցեալ 1905 թ. ավլիլ ամսինախապատրաստական ժողովում՝ Մանկական գրականութիւնն էլ որոշ չափով կուլտուրացի արտայայտիչ պէտք է լինի, հետևաբար նրա մէջ յայտնի աեղ պէտք է ըսնեն տրուեսաի, գեղարուեսաի, արգիւնաբերութեան և այլն վերաբերեալ զրբերը, սոցիալական տարրական զիտելիքների և այլն: Բայց սրանից ցանկալի էր, որ այսուհետեւ այդ ծանրակշիռ գործի վլուխ անցնողների մէջ լինէին միշտ նաև այնպիսի անձեր, որոնց մէջ միացած են և առնչութեան մէջ զրուած զրական ու մանկավարժական հայցակեաները: Սկսնակ ու անփորձ թարգմանիչների գովելի ջանքերը զնահատելով հանդերձ խորհնուրդ կը տայի այդպիսիներին այնքան էլ չշտապել զրականութեան ասպարէլզ մանկալու համար: Լաւ զրբեր ընտրելը և մայրենի լեզուի ոգով թարգմանելը հեշտ բան չէ: Սկսնակները սեղուհ պարտականութիւն պէտք է զգան որեւէ գիրք թարգմանելուց աստղ փորձնական թարգմանութիւնը հայերէնին հմուտ մարդկանց ցոյց տալու և ըստ այնմ վարուիլ: Ինչ վերաբերում է թարգմանելի զրբերի ընտրութեանը, բացի վերոյիշեալ սուսերէնի ուղեցոյցի, կամ նաև որիշները. Կո չիտայ ձետայ առ առօլինաց ազրացած 1) Ի այլն:

Դեսահանների համար հրատարակուած զրբերի որակի մասին խօսելուց յետոյ անցնենք զրանց տեսակներին և տեսնենք թէ գրախօսածո 337 զրբերից ըստ տեսակի որբանն են

<sup>1)</sup> «Родительский връховъ» при Иеда, живет В. Н. З. СИБ. Այս զրբոյիկ մէջ կայ նաև մի բաւականին մանրաման տեսութիւն մանկական զրականութեան վերաբերեալ—«Դեսահանների ազատ ընթերցանութիւնը» գըրուածքին 65—78 էջերում բացատրութիւններով հաղորդած ազբւըներից զատ, կ'ուզէի Jugenddrührer—Warte թերթի 1905 թ. № 9 մատնացոյց արածնոր հանգէսներից Dic Jugendschrift և die Jugendlücherei զերգմաներէն զիտեցող մեր թարգմանիչների ուշազրութեանը յանձնաբարել: «Jugendschriften-Warte» 12 թերթիկի գինը՝ 1 մարգ 20 պ.:

միքարելում այս կամ այն հասակի ընթերցողներին։ Որովհետու ամեն մի տեսակի գիրք որոշ չափով ներկայացուցիչներ չուներ, ուստի այս բոլորը միայն երկու բաժանմունքի վերածեցին, առ զինուորապէս բելետրիստական ու կենսագրական գրուածքների, ըստ բնագիտական, բնախօսական ու առողջապահական գրուածքների։

Ա. Բաժանմունքինը

Բ. Բաժանմունքինը

Հին գրացուց.	Նոր գրացուց.	Հին գրացուց.	Նոր գրացուց.
Տար.	Տար.	Տար.	Տար.
<b>3—6=1</b>	<b>3—6=2</b>	<b>6—8=0</b>	<b>6—8=1</b>
<b>6—8=17</b>	<b>6—8=6</b>	<b>8—10=1</b>	<b>8—10=0</b>
<b>8—10=42</b>	<b>8—10=5</b>	<b>10—12=9</b>	<b>10—12=4</b>
<b>10—12=44</b>	<b>10—12=17</b>	<b>12—14=6</b>	<b>12—14=11</b>
<b>12—14=24</b>	<b>12—14=20</b>	<b>14—16=3</b>	<b>14—16=15</b>
<b>14—16=40</b>	<b>14—16=47</b>		
<b>16+.=2</b>	<b>16+.=20</b>		
<hr/> 170	<hr/> 117	<hr/> 19	<hr/> 31

Աղիւսակը ցոյց է տալիս, որ 14—16 ու աւելի հասակ ունեցողների համար վերջերս աւելի զրբեր են հրատարակուլ։ Իսկապէս տասած՝ մեր դպրոցների ֆակումբը յետոյ անսիջապէս զգալի եղաւ յատկապէս ժողովրդական զրբեր հրատարակելու տեսնդեմքեան, և ահա մեծ մասով այդ շարքից է, որ «առ ի չկոյէ» որոշ չափով նիւթեր եմ ընտրել աւելի հասունացածների համար։ Պէտք է ասել, որ ժողովրդի համար յատկապէս հրատարակուած զրբերից որոշ ահամկէաներով մի այդպիսի ընտրութիւն անելը մեր պայմաններում այնքան էլ անպատճ չուէտք է համարել։ Իսկապէս որ ընտիր մանկական գիրքը հասակաւորին էլ հաճոյք կարող է պատճառել, այնպէս էլ հասակաւորի նմանօրինակ գիրքը՝ գեռահասին։ Մանուկները շատ էլ չեն սիրում այնպիսի գրքեր, որոնց մէջ գործող անձերը միայն իրանց հասակակիցներն են։ Նրանց համար առանձին հրապոյր ունին նոյն գրուածքները, որոնց մէջ մեծ ու փոքր իրար հետ յարարելութեան մէջ են մտնում։ Ոչ մանուկը և ոչ էլ ժողովրդի շրջանին պատկանող ընթերցողները սիրում չեն միտումաւոր յատկապէս նրանց համար որոշ «մաներներով» թխած գրքերը, հէնց որ նրանք վերահսուն են լինում այդ բանագրու-

սիկ տեհաղենցիային, նրանց սիրտը պաղում է այդ գրքից <sup>1)</sup>:

Այս աղիւսակը՝ մեր թարգմանիչներին ցոյց է տալիս, թէ որ հասակի ընթերցողների համար և ինչպիսի գրքերի աւելի զգալի ովականութիւն է զգացում: Մի կէտի վրայ էլ կ'ուղէի նրանց ուշադրութիւնը դարձնել: 3—6 տարեկանների համար կենդանական կեանքից վեր առաջ առահներ չունենք, չունենք հեքիաթներ, պատկերագրքեր, որպէսզի մայրերը նրանց համար կարդային, բացատրէին այդ նիւթերը:

Ես դիտաւորութիւն ունիմ այսուհետեւ գէթ տարէնը մէկ անգամ թերթիկներով գրացուցակներ հրատարակել առանց գրախօսական մասի և տարածել օրաթերթերի միջոցով ընտանիքներում Նոր Տարուայ նուիրատուութեանց առթիւ: Ցանկալի էր, որ մեզանում շատմնային պատկերագարդ, փառակազմ ընտիր գրքեր և աւելի հաստատուն սովորութիւններունը փոխանակ այլ բանների այսպիսի գրքեր նուիրելը մանուկներին:

Այս ասիթով կ'առաջարկէի մեր հեղինակներին, թարգմանիչներին ու փոխագրիչներին, որ եթէ կը ցանկային իրանց գրքերն էլ իմ ցուցակներում մացրած տեսնել, կամ մի օրինակ ուղարկէին նրանցից կամ թէ չէ, հաղորդէին ինձ իրանց մանկական գրքերի անունները:

## I

ԳԼՈՒԽԻԱՐԱԳԻՍ ԲԵԼԵՑՐԻՍՑԱՑԱՆ ՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՐԱ  
ԴՐՈՒՅԾՈՒՅԵՐ

Ա. 3-6 տարեկան փորբիկների համար:

1. Կարմիր զտակ: Մանկական զբաղարան №1. Հրատիշանուճի Մ. Թումանեանցի: Թիֆլիս 1896. 8 մհծագիր եր. պատկերագարդ: Գինը 20 կոպ:

Գրիմ եղբայրների յայտնի հեքիաթի շատ համառօտածն է: Յարմար է անգրագէտ փորբիկներին կարգութ համար: Կարող է նորատակի ծառայել:

2. Երեք կատուի սկատմութիւն: Մանկական գրադարան:

<sup>1)</sup> «Ժողովրդի ընթերցանութիւնը» դրուածքիու բ. տպագրութեան համար նոյնպէս ձեռնարկել եմ մատենախօսական դրացուցակ պատրաստելու: Այն զբում կը վերադառնամ այս ինդիրին:

Հրատ. նոյնի: Թիֆլիս, 1896, 8 մհջ եր, պատկերազարդ: Գին  
20 կուգ:

Երեք ձագուկներին մայրը պատժում է նուիրուած ձեռա-  
նոցները կորցնելու և ապա գոներուց յետոյ կեղաստելու հա-  
մար: Այս զբոքյիլի նիւթն ու ոճը այնքան արժեք չունի:

3. «Մանկութիւն» հայ մոյրեր՝ ու իրանց մանուկների  
համար: Զաքարէ Գրիգորեանցի: Թիֆլիս 1895, 28 միջակ եր:  
Գին 40 կուգ.

Սա մեր միակ մանկական պատկերազիրքն է հայ մանկա-  
կան աշխարհից վեր առած: Բացատրական ձեռնարկը 51 իր  
գին 10 կուգ: Բաւականին զուարձալի է 3-4 տարեկանների  
համար:

### Բ. 6—8 տարեկանների նամար:

4. Վնիվախ ղերձակի: Գրիմմի գունատիպ պատկերազարդ  
հէքիաթներից: Թիֆլիսի Հ. Հ. Բ. 1897, գինը 40 կուգ.

Ընտիր հէքիաթէ, ղերձակի զլիսից անցած բաները հետա-  
քրքրութեամբ կը կարգացուին:

5. Աստղէ ղրաւճ: Գրիմմի հէքիաթներից: Թարգ. Տ. Կոս-  
տանիսանց: Թիֆլիս, 1897: Գինը այլ հասակի վերաբերեալ 2 հե-  
րեաթների հետ 7 կուգ.:

Գթասիրս մանկան կեանքից է: Նա իր մինչև վերջին  
շապիկը աղքատաներին է տալիս, յետոյ երկնքից աստղերը թափ-  
ւում ու նրա համար փող են դառնում: Ընտիր է:

6. Գայլն ու մարդը: Գրիմմի հէքիաթ: Թարգմ. նոյնի: 2<sup>1/4</sup> գո-  
րբագ. եր, 2 այլ հէքիաթների հետ զինը 10 կ.

Գայլը պարծենում է, թէ մարգուն կը յաղթէ: Ազուէսը  
տանում է ու նրան հանդիպեցնում է որսորդին ու ինքը թաղ-  
նում է: Որսորդը զայլին լաւ ջարդում է, վերջինս զալիս  
պատմում է, թէ ինչ ահօսակ լաներով հարուածներ կերաւ: Մի  
անրովանդակ բան:

7. Դերմանական ազգային սուակներ (հէքիաթներ) հղ-  
բարց Գրիմմայ աշխատութեամբ հաւաքուած: Թարգ. Ֆրանս:  
Եւայի Տիր Գրիգորեանց: Պար, 1864, 52 փորբագ. եր, գին (?):

Պարունակում է հեքիաթները որ այստեղ դա-  
սուորում եմ ըստ արժէքի: 1. «Մեծ հայր և թոռն»՝ ապերախ-  
տութեան օրինակ. 2. «Պատրիկների պարգիլ»՝ անգթութեան  
օրինակ. 3. «Կրեելի կախարդ»՝ զող՝ սիրտը զող տուածի իմաս-  
տով. 4. «Երկացակեցութիւն» կենդանիների ու մարգու հասա-  
կի մասին է խօսքը. 5. «Վեց հողի կը հասնենք մի բանի»: Թա-

գաժառանողը պատժւում է անարդարութեան համար: 6. «Նապաստակ և Ոզնի»—վերջինիս խարդաւանքին հնթարկուած միամիտ նապաստակի պատմութիւնն է տես №18: 7. «Արջ» վիշտաւարանը համար պատելազմ: և 8. «Փորձանը»: անբովանագակ բան է:

8. Գուլիվէրը թգուկների աշխարհում: Թ. Հ. Հ. Բ. 1897 պատկերագարգ գունատիպ, գինը 40.

9. Գուլիվէրը նկաների աշխարհում: Նոյն տեղեկութիւնները: Այս երկու գրքոյնքը մի տեսակ պարողիս ևն Սւիֆթի յայտնի վէտի, գուարձալի կարող են լինել, բայց տանձին արժէք չունին:

10. Եօթն ազուա: Հերիաթ փոխազր. Լ. Մելիք-Ազամեանցի. Թ. Հ. Հ. Բ. 1899. 22 մեծ եր. գին 40 կոպ. գունատիպ պատկերագարգ:

Մի երջանիկ ընտանիք, որ 7 արու զաւակ ունէր, մի գուարիկ էլ է ունինում: Մկրասութեան օրը 7 էլ գնում են ջրհորից ջուր բերելու, դոյլը ջուրն է ընկնում, ուշանում են, հայրը անիծում է նրանց, որ ագռաներ գառնան: Անէծը կատարւում է, նրանք թռչում կորչում են, վերջը իրանց քրոջը գրտնում, կախարզանքից ազատում են, ազատում է նաև նրանց քրոջ Անոյշի փեսացուն: Բոլորն էլ երջանկանում են իրանց ծնողների հետ: Փոխազրութիւն է, բաւականին ընտիր, թէն տեղ տեղ ոչ մանկական լեզուով:

11. Թոմիվիկը: Հէնրիկտա Վիահոֆի, Նուէր Մանուկներին Թարգմ. Շ. Տունիկեանցի: Թֆլս. 1902. 23 մեծգ. եր. գին 12 կոպ:

Պատկերագարգ պատմուածք է մի չար երեխի ու նրա վորքիկ եղբօր կեանքից: Փորբիկը մեծի պատիժները ինքն է յանձն առնում: Այլ հասակին ոչ յատուկ մտածմունքներ ողպացմունքներ: Պատկերները միջակ:

12. Կարմիր զիկնարկ: Տեղեկութիւններ տես №1: Մամի մօտ անտասի միջով գնացող փոքրիկ աղջկայ և խարդախ գայլի համարիալումը, մամի կլանուելը գայլից, առաջինի և թունիկի ազատուելը գայլից—ահա այս երեք զիտուածներն են պատմում: Գրիմմի առաջնակարգ հէքիաթներից չէ: Այս սարսափելի պատմութիւնը շատ զգայուն-մանուկների վըրայ կարող է վատ պղփցութիւն ունենալ:

13. Կարէնն ու Մանէնի հէքիաթ, փոխգ. Լ. Մելիք-Ազամեանի. Թ. Հ. Հ. Բ. 1899. 24 մեծ եր. պատկերագարգ, գունատիպ, գին 40 կոպ.

Մօրից զրկուելուց յետոյ խորի մօր (կախարդ) ձեռքը

մնալով փոքրիկ քոյր ու եզրայրը փախչում են անտառուն: Կարէնը հղնիկ է դառնում, Մանէնը թագուհի: Բոլորը վերջը երջանակնում են, իսկ պառաւը իր պէս չար աղջկայ հետ պատճեռում: Լաւն է, գրաւիչ, բայց խորթ մօր պատճութիւն լինելով՝ շատ էլ յանձնաբարեկի չը պիտի լին:

14. Մ'անկաւկան զրադարան Ա. Զիլինկարհանի: Գերմ. թարգմ. Ալէքսանդրապոլ, 1904, 17 մեծադ. եր, զին (?).

4 Փոքրիկ պատճուածքներ են: Թէև նշանակուած են 8—10 տարեկանների համար (աւելի փոքրերին էլ պատճելու համար), սակայն ըստ իսկ 6—8 տարեկան մանուկների զարգացմանը համապատասխան նիւթեր են: Աւելի լաւ է «Թոչնիկը»:

15. Մ'անկաւկան զրադարան Մեծադ. 16 եր, զին 5 կ. Միւս տեղեկութիւնները տես նախընթաց համարում:

6 Փոքրիկ պատճուածքներ են, որոնցից մի քանիսը՝ աշաւկերտական ձեռնարկների մէջ հղուժներից: Առաջին անգամ ըսող կամ կարգացող մանուկներին կը հետաքրքրեն այս պարզ պատճուածքները:

16. Մ'անկաւկան երգեր Գամառ-Քաթիպայի: Դին 15 կոպ: Շատ անհաւասար արժէքի երգեր են:

17. Մ'ոլորատիտիկի:

Խորթ մօր պատճուածքիւն լինելով առաջնակարդ մանկաւկան հէքիաթ չէ կարող համարուել:

18. Նապաստակը եւ ողնին: Թարգմ. տ. Կոռուանեանի, 1997. Թիֆլիս: Գինը համար 6 ու 25 հէքիաթների հետ 10 կոպ:

Թէև շատ զուարձալի հէքիաթէ է, բայց ողնիի նենգութեամբ միամիտ նապաստակի կրած տանջանքն ու մահը շատ անգութ է: Ուրիշի վիշտը չպէտք է մանկան հաճոյքի պատճառ լինի: Տես № 7, և 19.

19. Նապաստակը եւ ողնու զրազը: Պատկերազարդ: Հ. Թ. Հ. Լ.: Գինը 40 կոպ.

Տես նախընթաց համարը:

20. Ոսկի ձկնիկ Պուշկինի, թարգմ. Գամառ-Քաթիպայի: 1884 թ. զինը 10 կոպ:

Հնաիր է:

21. Ոսկի ձկնիկ: Ազատ թարգմ. Դ. Աղայեանցի: 1884: Թիվլիս: Գինը 30 կոպ:

Հնաիր է:

22. Զորս սոսակ մանուկների համար: Հրատ. Հ. Ա. Գ. Բ. 1.

1. Մըմսան կատու. 2. Կապոյտ կրակ. 3. Կախարդ կա-

նայք և գիհնաչի (ժողովրդական հեքիաթ)՝ բոլորն էլ զուարձաւը են ու բարոյական արժեք ունին, բացի առաջինից:

23. Պատիկու նստիլի հեքիաթ, փոխադր. Լ. Մ.-Աղամբանցի, Թ. Հ. Հ. Բ. 1899. պատկերագարդ: գին 40 կոպ.:

Թշուառ փայտհատը իր գաւակներին քաղցից մեռնելիս չուզելով տեսնել նրանց անտառն է տանում անտեր, անտիրական, թողնում: Մանուկները շնորհիւ պատիկ ու ճատիկի նախազգուշութեան՝ առաջին անգամ հետքը գտնում ու վերազանում են տուն, իսկ երկրորդ անգամ՝ ոչ: Ապա ընկնում են դեի ձեռքը, որից ազատում են դարձեալ պատիկի շնորհիւ, որ դեի հարստութիւնն էլ գրաւում է ու վերջն էլ թագաւորին լուծառայութիւն մատուցանելով՝ արժանանում է նրա շնորհին: Բնադիր փոխադրութիւն է:

24. Սըինգ նովուական Դ. Աղայեանցի:

Գնահատելի մանկական բանաստեղծութիւններ:

25. Ռնած զեղեցկուիի: Տեղեկութիւններ տես №10. ընտիր հեքիաթ է:

26. Օկիկն ու Մարգարիտը: Տեղեկութիւններ տես №5. ըիչ արժեք ունի:

Գ. Տ—10 տարեկանների նամար:

27. Մնանգիստ զիշեր: Օստրօգորովի ժողովածուից: Թֆլու. 1894. 32 եր. գին 5 կոպ: Թարգմ. Տ. Կոստանեանց.

Պատմում է թէ ինչպէս մի տան մէջ երեխաներն ու սպասուհիները զիշերը մի սենեկակից ձայներ լսելով, վախենում են կարծելով թէ ուրուական է, բայց յետոյ նրանցից մէկը սիրա արաւ տեսու որ բուեր են: Ի՞նչ իմաստ ունի:

28. Դըջի պլասմիթիմիր Լ. Շելցունովայի և Գայլ Զառապիմուկու: Նուէր մանուկներին. Թարգմ. Թիֆլ. 1901. 43 եր. 15 կոպ:

Երկուսն էլ արջի ու զայլի կեանրից պարզ նկարագրուած արկածներ են: Զգիտես ինչո՞ւ երկրորդի հեղինակն իր զրուածքը՝ հեքիաթ է անուանում: Երկուսի մէջ էլ կենդանիների բերանից է պատմուած: Մանաւանդ անտանելի է ոչխարի ու դայլի երկար ու բարակ անրնական սակարկութիւնը, վերջինիս փիլիսոփայութիւնը: Պատկերները անյաջող են, մանսւանդ դայլի կեանքից վեր առածները: Անյաջող «Մանուկներին նուշ» է:

29. Արեգնազան կամ՝ կախարդուած աշխարհը:

Հեքիաթ Դ. Աղայեանցի. 1888 96 միջ. եր. գինը?

Մասիսի ստորոտներից թագաւորի մօտ ծառայութեան ևկած Արան իշխանի Արէգ որդին, որ իրքն աղջիկ էր յայտնի և աղի զգեստ հագած մնում էր պալատում: Թագաւորի աղջիկը, Նունուֆարը, նրա սիրուց տոչուրում է և նրա կողմից սառնութիւն աեսնելով հիւանդանում: Արէգը հարկադրում է նրա համար անմահական ջուր բերելու նսլատակով հետաւոր երկրներ երթալ, մեծ վտանգների ենթարկուիլ, մի քարացած քաղաք կենդանացնել և անմահական ջուրն առած Նունուֆարի մօտ վերադառնալ արգէն՝ իրքն երիտասարդ: Ն. իր սիրածի տեսքից ու ըերած ջրից փրկում է: Այս «վեպիկի» սիրուն ներդաշնակութը խանգարուումէ մի տեղ միայն, երբ խօսր է լինում արշունքի հասած Արէգի ներքին ֆիզիկական փոփոխութեան մասսին: Աւելի ցանկալի կը լինէր ո՞ւ հեղինակը այսեղի վրայով էլ այնպես թեթև անցնէր, ինչպէս միւս էջերում: Մասուկների շատ սիրած գրուածքներից մէկն է և արժանի է:

30. Անտառապահը Ա. Սմիւնովայի, թարգմ.՝ Թ.Փլո.

1896. գին 12 կոպ.

Մեծահոգութիւնը ընկճում և ուղղում է կամակոր ու շարամիտ մանկանը Տպաւորիչ է:

31. Աշխատութեամենանուղը, վէպիկ երեխաների համար. թրգմ. է. Տէր-Գրիգորեանցի, Երևան, 1882, 51 փորբազիր, գինը 25 կոպ.

Փոքր աղջիկը ծոյլ է, անշնորհը, դասերը փչացնում է: Մի անգամ երեկոյեան պարտէզում նրան երեսում է լուսաւոր թղուկը, որ նրան խարում առանում է ճանիճների տակ: Այստեղ աղջիկը աեսնում է իր պէսների հիւծուած կեանքը ծուլութիւնից: Ապա նրա աչքերին ներկայանում է մի լուսաւոր կոյս, որ ցոյց է տալիս աշխատասէր աղջիկների շքեղ տունը, բացարում է որ աշխատասիրութեամբ նա էլ կը կարողանար արժանանալ այդ տանը իր աշխատանքից հետքհետէ սանդուղը շինելով վեր բարձրանալու համար: Մի քանի տարի յիշառոյ այս աղջիկը վերջացնում է աշխատութեան սանդուղը և երջանկանում: Առաջնակարգ գրուածքը չէ:

32. Անահիտ, հին զրոյց, Դ. Աղայեանցի. Թ.Փլո. 1891.

56 միջակ եր, գինը 20 կոպ.

Վաշագան թագաժառանգը սիրահարուում է նախըչու աղջկան, Անահիտին: Ծնողները շատ չեն ընդդիմանում, բայց Ա. խնամախօսների առաջարկը չի ընդունում, քանի Վ. արհեստ չգիտէ: Սա հարկադրում է ընտիր դիպակ գործել սովորիլ և այսպէս, արժանանում է Ա. ձեռքին: Մի անգամ, երբ Վ. ծըպտած ման էր գալիս իր երկրում, քուրմերը նրան խարելով

տարան իրանց սասորերկրեայ բանտը և կենդանի մնաց միայն նրա համար որ արհեստ գիտէր, կարող էի օգտատ տալ բոնապետներին: Վ. կերպասի վրայ ծաղկատառերով իր դրութիւնը պարզեց և խորհուրդ տուեց թագուհու մօտ տանել, քանի որ միայն նա կարող էր այդ հրաշագործ կերպասի դինը տալ, որ ամեն տիսրութիւն փարատում էր: Ա. կարդաց գաղտնիքը, թափաւորի հետ գերիներին աղատեցին, քուրմերին պատժեցին: Բնափիր բանահիւսութիւնն է: Մեր ժողովրդի ոգու արտայայտութիւնն է «Անահիտը», արհեստի ոգեշունչ գովասանութիւնը: Շատ ցանկալի էր մի շքեղ պատկերագարդ «Անահիտ» ունենալ վերջապէս:

33. Երրորդ ոսկի Լաբուէի, 1893.

Երաղի ձեռվ պատմում է ագահութիւնից առաջացած

հիասթափութիւնն ու պատիժը: Լաւ առակ է:

34. Երիխաների առ իրանց ծնողը պարտատրութիւնները:

Հ. Բարբոյի, թրգմ. Գրանս. Ս. Պ. Տէր Գրիգորեանցի, Թֆլս. 1878, գին 40 կոպ.

Անարուեստ փոքրիկ պատմուածքներ են, չարժէ կարդալ:

35. Զուարճալի ժամեր: Ա. Սարդարեանի: Մաս ա. Թֆլս. 1890, գին 50 կոպ.

Մի զուարճալի ժողովածու է հանելուկների, բառախաղերի, խաղերի, խնդիրների, սերուաների, ֆոկուսների, կատակների և անհկլուտների: Բանալին առանձին է: Իր բազմակողմանի բովանդակութեամբ կարող է այս գիրը լաւ զրադեցնել փոքրիկներին:

36. Երախայրիք, պատկերագարդ հատուածներ մանուկների համար, 4 հատոր, Արշ Մեհրաբեանի (Մրինգ), 1882—67 թֆլս. իւրաքանչիւր հատորը 41—55 եր. գինը 50-ական կոպ. Արձակ ու չափածոյ մանր նիւթերի ժողովածուներ են, թէ լեզուի, ոճի և թէ բովանդակութեան տեսակէտներով տրժեք ունեցող բաներ քիչ կան մէջենին:

37. Երկու տօնածառ Ն. Գ. Վուչէտիչի, թարգմ. Պ. Նազարեանցի, Թֆլս. 1882. գինը 20 կոպ.

Նկարագրում է մի հարուստ ընտանիքի ցանկալի վերաբերունքը աղքատ մանկան: Տպաւորութիւն զործում է:

38 Ինկերասէր Վահանիը տիկ. Ա. Ցակորջանեանցի: Թ. Հ. Հ. Լ. 1896. գինը 10 կոպ.

Գեղարուեստական զրուածք չէ: Որոշ չափով տպաւորութիւն զուցէ զործէ միայն որդեկորոյս ծնողների վրայ:

39. Թովմաս եղբար տնակլլ: Թարգմ. Ն. Տեր Մարկոս սհանցի, Թ. Հ. Հ. Բ. 1880, գի՞ն 45 կոպ.

Թշուառ ստրուկների կեանքից զրուած՝ մանուկներին սիրելի յայտնի զրբի թիշ արժէք ունեցող փոխագրութիւնն է: Տպաւորութիւնը անշան է:

40. Ժան Բաբտիստ Լիլլիի մանկութիւնը: Հեղ? փոխադր. Տ. Յովհաննեսուանց, Թֆլ. 1884, փոքրդ. 32 եր.

Տաղանդաւոր երաժիշտ մանուկի կենսագրութիւնն է, որ ջութակահարութեամբ հիացնում է գուքս Գիզին: Սա մի ոսկի է տալիս ժամանելով թէ սխալմունքով է, ուզում է վերադարձնել, բայց չի յաջողւում: Ապա կառք է նստում, զաղտուկ քաղաք է զնում նրան տեսնելու համար: Այստեղ չնորհիւ իր կեանքի լաւ ընթացքին ու տաղանդին՝ կարճ ժամանակում նշանաւոր զիբք է բռնում: Արժէ կարգալ:

41. Ելատ Գ. Կրաքրի, թարգ. Տ. Կոստաննեանցի, 5 եր. 1894թ. «Տիրուցի աղջիկ» գրքոյի հետ զի՞նը 5. կոպ.

Մի ծերունի մարդ շատ ժլատ է երեսում ազրատի ցնցուտիներով ման գալով, չոր ու ցամաք հաց ուտելով, բայց զաղտուկ նա օգնելիս է լինում թշուառներին: Վերջ էլ նա մի հորակատ անկելանոց է շինում ու յանձնում ծերուներին կառավարելու: Իմաստը լաւ, բայց ափառ որ զրուածքը վայրի վերոյ է, տպաւորիչ ոյժ չունի:

42 Խնչո՞վ են ապրում մարդիկ, փոխադր, կոճո և. Տուսոյից, հրատ Մ. Հ Ա. Գ. Բ. 1885, Մոոկուա. 42 միջակ եր. դի՞ն?

Սա մի ժողովրդական հէքեաթանման զրուածք է: Հրեշտակը «մուժիկի» կերպարանքով հիւր է գալիս: Տանտէրը նրան ցրտից պաշտպանելու համար իր հապինը հանում հիւրին է հազցնում, բայց կինը նախ չի ուզում նրան հիւրասիրել, իսկ յետոյ մեղմանում է: Այս հրեշտակը լաւ դերձակ է գառնում, հիւրասիրող վարպետին լաւ բաղզաւորցնում է իր հրաշալի ձեռագործով: Վերջը բանից դուրս է գալիս, որ ոա հրեշտակ էր եղել Աստուածանից երկիր ուղարկուած՝ մարդկանցից երկք բան սովորելու համար:

Այս զիբքը մի ընտիր ու աղատ փոխագրութիւնն է, բնագրի կօշկակարի տեղը զերձակն է բանել: Դարձուածները իսկ և իսկ հայկական ողի են կրում: Թէև թիֆլիսի բարբառից շատ բառեր ու ոճեր կան, սակայն բացատրութիւններ տըրուած են:

43. Լուսերեսիկ Գրիմմի հէքեաթներից, Հրատ. Թ. Հ. Հ.

Ի. Գրիմմի հեքիաթներից, 1897 թիւ: Գունատիպ պատկերազարդ գինը 40 կոպ.:

Լաւ հեքիաթի է, բայց խորթ մօր պատմութիւն է:

44. Խնձորենիների երկրում: Ոյզի գրուածքներից: Թ. Հ. Հ. Ը. 1805: Գինը 10 կոպ.:

Բաւականին լու գրքոյի է, բայց թարգմանական լեզուն և անհամապատասխան հատուածները ծանրացնում են բովանդակութիւնը:

45. Խորամնենկ աղուէսը Ա. Մ. Սլիւիցկու, վորխադ. Պոչեանցի: Թ. Հ. Հ. Ը. 1898, գին 40 կոպ.

Չուարճալի բաներ են աղուէսների կեանրից:

Փոխազրութիւնն այսքան ընտիր է, որ կտրծես թէ այս գրուածքը Պոչեանկ սեպհական երկը լինէր: Միայն թէ պէտք էր գաւառական զարծուածները տեղն ու տեղը բացատրիլ:

46. Ծննդեան պատմութիւնը Թ. Հ. Հ. Ը. հեղ? 1882, գինը 10 կոպ. Աղքատ մանուկը նամակ է գրում ծննդեան պապին (Նուիրաբաշխ ծիր պապին ըստ գերմանական տւանդութեան) ու նուէրներ խնդրում: Այս նամակն ընկնում է մի հարուստ մարդու ձեռքը, որ միամիտ մանկան բաղձանքը կատարելու համար՝ նրան շատ նուէրներ է ուղարկում իրը ծեր պապի կողմից: Գեղեցիկ տպաւորութիւն է զործում:

Այս գրոյկին կցուած է մի ուրիշը թռչունների հովանաւորութեան համար Ֆինլանդիայում կազմուած մանկական ընկերութեան մասին: Այս գրուածքը կցկառուր է, որոշ տպաւորութիւն չի գործում, թէ և մի շատ հետաքրքրական երևոյթի նկարագրութիւն է:

47. Ժիծենակի րունի: Հեղ? թարգմ. Եղիսաբ. Ալեքսանհան-Սըրծուրունու: Երևան 1881, 41 միջակ եր. գինը

Ժիծենակի կեանրի արկածները պատմւում են բաւականին գրաւիչ կերպով:

Թարգմանական լեզուն անմշակ է:

48. Կարմիր լաւզուր Վուչէտիչի. թարգմ. Օր. Ն. Տէր Մարկոսեանցի: թ. Հ. Հ. Ը. 1879, գին 30 կոպ.

Երկաթուղու պահապանը շանթահար է լինում, տնակն այրում է, բայց և այնպէս նա անձնուիրութեամբ վերջին ուժերը հաւաքում է, կարմիր շապիկը պատառոտում լապտերի վրայ է զնում. գնացքը կանգնեցնելու, ճամբորզների կեանը սպանացող փոանգից աղատելու համար: Բաւականին տպաւորիչ է:

49. Հարուստը և աղքատը Օստրոգորսկու ժողովածուից:

Թարգմ. Տ. Կոստանիանցի. Թֆլու. 1894. գինը այլ չ դրբոյկների հետ չ կոպ.

Քրիստոս հիւրասէր չքաւորին վարձատրում է, իսկ անհիւրասէրին, որ իրան չէր ընդունել, պատժում է:

Ընտիր զբուածք է:

50. Շանապարհորդ գորտը: Հեղ? Թ. Հ. Հ. Բ. 1895.  
գինը 3 կոպ:

Գորտը բաղերին առաջարկում է իրան հերթով շիւզի վրայ նոտեցնել ու գէպի հարաւ տանել: Նրանք համաձայնում են: Գորտը ճամբի կիուն ակսում է կոկուալ իր զբուխը գովիլով և անմիսա վայր է ընկնում:

Խմաստը լաւ չէ հասկացւում: Միջակ զբուածք է:

51. Շշմարտոթինը միշտ յաղթում՝ է: Գրիմի հէքիտթներից: Թ. Հ. Հ. Բ. 1897. պատկերազարդ գունատիպ: Գինը 40լ.

Տպաւորիչ է:

52. Մ'անկական զրայլայան Ա. Զիլինգարեացի: Գիրդ. թարգմ. 8—12 տարեկանների համար: Ալբունդրութ. 1904. 16 եր. գինը 5 կոպ.

Փոքրիկ պատմուածքներ են դասագրերի նիւթերի ոլէս: Աւելի սիրուն են «Ենձ չըմուանաս» և ապա «Եթեք թիթեռնիլը»: Միւս պատմուածքներն են. «Հաւատարիմ ձկնիկ», «Եոր պատկերը», «Ես չեմ կարող սուտ տանել» և «Գերին ու առիւծը»:

Առաջարկում է նաև անդրագէտ փոքրիկներին իբրև պատմելու նիւթ: Բայց միթէ միւնոյն նիւթերը կարող են 5—12 տարեկաններին անխտիր զբաղեցնել:

53. Մ'արդ ասիւծ Գ. Շերեթելի, փոխազր. Դ. Տէր Դաւթեանցի, պատկերազարդ 61 մեծ եր. գինը 20 կոպ. Թֆլու. 1895.

Մի խեղճուկ մարդու երեք որովհները լսում են, որ իրանց շատ անբաղդութեանց պատճառը իրանց հայրն է, ուստի ցանկութեանում են, որ նրա կեսանքի վերջը կայ: Հայրն առում է որ այն ժամանակ ինքը կը մեսնի, երբ որ որդիները զանազան երկրներ երթան ու զան, իրան չը չսուտծ հրաշալի բան պատճեն: Երկուսը փորձում են, բան գուրս չէ պալիս: Ապա զնում է Մարգ-Ասիւծ որդին, որ վտանգաւոր դիերին սպանելով մի թագաւորութիւն աղաւում է անվերջ պատուհան ներից: Վերջը ժամանգում է այս թագաւորութիւնը, իր երկու եղբայրներն էլ արժանանում են նրա թագաւորազուն քենիների ձեռքին:

Ժողովրդական հէքիտթէ, բայց ինչպէս երեսում է արուեստական տարրերով՝ հրաշալիքներով խճողուած է:

54. Մ'եղի զղջումն Կր. Տողի. թարգմ. Ես քահ. Խանդականցի, Էջմիածին, 1994. զին 5 կոպ.

Զանազան շինծու, անարտաս օրինակներ են, աւելի կրօնի դասանիւթերի պէս բաներ՝ բան թէ ազատ ընթերցանութեան նիւթեր:

55. Մ'եր սկսվի զաւազանը թարգմ. Տ. Կոստանեանցի: 90 եր. գին 5 կոպ. Թֆլս, 1894.:

Ծեր սկսվի, նախկին նաւազեախի, զաւազանը լեզու է ելնում ու պատմում նրա թառներին հարիւրաւոր տարիների անցըեր և այն թէ ինքն ինչպէս էր աղբում անտառում, ինչպէս յետոյ կայմ դարձաւ, վերջն էլ՝ զաւազան:

Միջակ արժէքի գրուածք է:

56. Մուփլու, Ռւիլայի: Թարգմ. սուս, Յովհ. Օհանջանեանի: Թ. Հ. Հ. Ք. 1896. Ժողովրդական գրադաշան. 44 միջակ եր. գինը 10 կոպ.

Մի սրաշարժ պատմութիւն է. կազմիկ Բամոլոյի և նրա Մուփլու շան հիւանալի սիրոյ մասին: Ի. մայրը միւս որդուն դիսուրագրութիւնից աղատելու համար 1000 ֆր. ծախում է շնորհալի Մուփլուին մեծատունի հիւանդ որդուն զուարձացնելու համար: Ի. մերձ ի մահ հիւանդանում է վշտից, իսկ հաւատաբիմ շունը փախչելով նոր տէրերից, կմաղք դարձած համնում գրկում է իր սիրելիին: Մեծատունը այս տեսնելով գութը շարժում է, իր հիւանդ զաւակին զրկելով զուարձալիքից շունն էլ փողն էլ թողնում է այս աղբատ ընտանիքին: Վերջը մեծատունի հիւանդու որդին ու Ռուոլօն իրար խաղողից են գառնում ու երկուսն էլ զուարձանում:

Խորը տպաւորութիւն է գործում:

57. Մըսուաննի Շմիդի. թարգմ. Ան. Քալանթարի: Թ. Հ. Հ. Ք. 1892, գինը 20 կոպ.

Մինչև վերջին երեսը կատուի և տղջկայ մասին սովորական դէպքեր է պատմում, ի միջի այլոց ցոյց է տալիս թէինչպէս այս փոքրիկը իր սիրած կատուին զիջանում է մի հիւանդ աղջկան:

Այսպիսի փոքրիկները այդքան զթասիրա չեն լինում իրական կեանքում: Առանձին արժէք չունի այս գրքոյկը:

58. Մի դէպք Բերանմէի կեանրից Մ. Զիստեակովի: Հրատ. «Արշալոյի» №1. Մուկուա. 1893.

Բերանմէն զնում է գինետուն և երր ժողովուրգը իմանում է, որ իր սիրելին այգաեղ մօտ նստած է, գեղեցիկ ցոյց են անում նրան: Խոր տպաւորութիւն է գործում:

Այս գրքոյկին կից է «Կեցցէ Ֆրանսիան» գրքոյկը, միասին 59 եր: Վերջինս վրէժինդը տպաւութեան միտում է ցոյց տալիս:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քուօնուկի նորամականութիւն եւ զինուած սպասութրաւթիւն. — Պէտանունը սոցիալ-դեմոկրատների սակտիվի մասին. — Ազուտամբութիւնը Մուկուտում. — Ամբարդակ քէ հուն. — Զախարկովմանների բոլկ. — Պետական Գումայում մասնակցելու հուցը. — Աւգնամ ափառներ. — Պ. Գ. լին. Կոմի.:

«Սահմանադրական աղառութիւններ» շնորհող մանիքեւալից յիսոյ անցել են երեք ու կէս արխմանեղ, աշխարհակործան ու փոթորկալի ամիսներ, սակայն Վիտակչութուրնովոյի կառավարութիւնը ապիկար գտնուեց տաճանց քաջրշուկի աղառավարկան բևֆորմներ մացնելու և, ժողովրդական ներկայացացուցութիւն հաստատելով, լայն հուն բաց անել յեկավոխութիւն կառապի ալիքների առջի: Խուսաստանը այսօր ևս զուրս չի եղել անարխիկ դրութիւնից: Յանցանքը ի հարկէ միայն և միայն կառավարութեանն է, որ գարեր շարունակ ի չար զործ գրեց իր անսահման կամայականութիւնը և ոչ մի միջոց չառուու ժողովրդին՝ աստիճանաբար զարգացնելու թէ իր տնտեսական գրութիւնը և թէ իր զիատակցութիւնը: Բիւրօկրատիսն սիրում է իր գայրագ գործողութիւնները արդարացնել «ծայրայիկ» կուսակցութիւնների բանած ընթացրով. բայց նա զիաէ արդեօք թէ երբ են «ծայրայիդները» այդ աստիճան կառապի և անհաջա գտանում. միայն այն ժամանակ երբ ժանկուած րեժիմի տնարդարութիւնը և կամայականութիւնը մարդկանց հաւցնում է յուսահատ խելազարութեան: Դարերով ոռու հպատակները զրկուած են եղել մարդկային տմանատարրական իրաւունքներից, բիւրօկրատիսն չար և զառամեալ ներքինի նըման օր ու զիշեր հսկել է Ռուս ժողովրդակի համար ստեղծած հարեմ-բանուի վրայ, որպէսզի ոչ մի աղառութիւն զբուից չըրեզմնաւորի նրան. և երբ, չնայած այդ բոլոր խստութիւններին, Ռուսաստանը սուկալի երկունքներով ծնից մի թոյլ աղառութիւն այդներքինին զարազած վրայ տուաւ անպաշտպան մասուկի վրայ և մահացու հարուածներ հաւցրեց նրա գլխին... «Ծայրայիդների» ընթացքի վրայ հիմնել այդ ոճիրը նշանակում է Յունուարը, 1906.

ոլրովոկացիայով պարագել... Ի՞նչն էր խամսդարում հէնց հոկտեմբեր ամսում ընդունելու աւելի չտփառոր կուսակցութիւնների պահանջները։ Սարուվէ, Կովալենկովի, Միլլիւկովի և առհասարավ ուահմանագրական-ժողովրդավարական ամբողջ կուսակցութիւնն պահանջները, հոկտեմբերի 17-ից յետոյ, յամենայն դէմո յեղափոխական չէին, այլ Եվոլիւցիօնիստական։ Եւ բաւական էր անկիզի կերպով կեանքի մէջ իրազործել այդ սկզբոնքները որ զբանով խոլուի հողը «ծայրայիշների» ուստիրի տալից, ինչ վերաբերում է զբանց խիզախն և առք գլուխ առակտիկային։ Սակայն Վիտաէ-Դուրնովօն կառավարութիւնը, մոռացած թէ միւս աղջերի յեղափոխական շարժումների առուծ զատերը, թէ այնքան սոսաջ գնացած սոցիալական դիտութեան պարզած ճշշմարտութիւնները, կարծես զիտամմր այնպիսի ըէակցիօն քայլեր էր անում, որ համբերութիւնից հանի գժկո՞ն տարբերը։ Վիտաէ-Դուրնովօն չէին կարող շիմանուլ, որ հասարակութեան հասուն խամերը, եւ չենք սոսում բուրժուազիան, չեն կարող համակըել «ծայրայիշների» հոդածեղ տակտիկային։ Նա պէտք է խմանար որ այդ կուսակցութիւնների հեղինակաւոր ներկայացույիշներն ևս դատապարտում են ջահիշների վայրի վերոյ ընթացքը։ «Ժամանակակից զիտական սոցիալիզմի տեսակէտից, — զրում էր իր «ՃԵՎԻԿԵ»-ում յայտնի Պէխսանցվը, — սոցիալիստական յեղաշբջման՝ իրքն Ռուսաստանի յեղափոխական շարժման անհնամերձաւոր նպատակի մասին զրոյցները՝ ինձ թւում են միանդամայն ու անպայման անհիմն։ Յեղափոխական շարժման ամենամերձաւոր նպատակն է արսովիւթիզմի կործանումը, որ ապահովելով սոսու բանուորտկանութեան համար քաշզարական իրաւունքներ և քաղաքական ապատութիւնն՝ կը տայ նրան լայն հնարաւորութիւն աճել և հասունանալ, զորպահանալ և կազմակերպուել սոցիալիստական յեղափոխութեան համար։ Սոցիալիզմի յազմանտեկը չի կարող կատարուել արատլիւտիզմի կործանման հետ միաժամանակ։ Այդ երկու մոմենտները (արսովիւթիզմի կործանումը և սոցիալիզմի յաղթանակը) անհրաժեշտարէն իրարից բաժանուած են լինելու երկար ժամանակակամիջոցով։ Եւ հէնց այդ պատճառով որ այդ մոմենտները իրարից բաժանուած են ժամանակով, սոցիալ-գեմոկրատսերը իրանց անհաշտ կռւում արսովիւթիզմի դէմա կարող են լիսկատար իրաւունքով և ընտա չհականելով իրանց՝ բոլորին ցոյց տալ, ուժ հարկ կայ զիտենալու և հատկանալու այդ, թէ իրանց սոցիշերի շահները ներկայումս միանում են մեր հասարակութեան ազատամիտ մասի շահերի հետ։ Այդ խօսքերի և զանազան Մինակիների։

Кто не съ нами— тотъ нашъ врагъ, тотъ долженъ пасть!<sup>11)</sup>  
ալարենի կոչերի մէջ սարեր ու ձորեր կան ընկած...

Պլեխանովի նման մարզիկ չէին կարող համակըել նաև այս խակ մտածուած տակտիկաին, որին որոշել էին հետեւ «Ճարայեղները»:

«Զինուած ապստամբութիւնը կատակ բան չէ, —զրում է Պէտականովը, բանակուաելով ջանիբների հետ, —զրանից է կախուած շարժման բոլոր ապագան, ուստի մենքեամիու բարբառ ջանքը զինուած ապստամբութեան մասին ուղղակի յանցանք է յեղափոխական պրոլետարիատի տառջ: Մինչեւ մեր մի քանի ընկերները այդ կողմից երևան են հանում անհաւատալի թիւթեամութիւն: Նրանց գլուխները գտնել են մի տեսակ երաժշտական գործիքներ («օրգանիկ»), որոնք ածում են մի եղանակ—զինուած ապստամբութեան երգը: Այդ ապստամբութեան մէջ է նրանց տակարգային իմաստութեան այլն ու ֆէն: Սակայն հէնց այդ պատճառով նրանց տակարգական իմաստութիւնը գտնում է, տակարգական խնդիրներն... Իզուր են յենում Մարքսի վրայ, որ տակ է երրեք մի խաղացէք ապրատամիտթեան հետ, մինչեւ որ դոր չ'էր նախապատրաստուել այն շափ, որ կարդանար ծեր սարքած խաղի րոլը հետամբրի առաջն առնելի»...

կլ չենք խօսում, ի հարկէ, օտար ողիութեաների կարծիքների մասին, որոնցից մէկը (ի, Բերնշտայնինը) ընթերցողը կը դժնի այս համարում:

Եթէ Վիստակ-Դուլնովօի կառավարութիւնը անկեղծօրէնց ցանկար միանգամայն հրաժարուել հին բիրովկրատիւական կարգերից—նա ինարկէ շատ միջոցներ ունէր չզպաքցնելու տաք զլուխների ծայրահեղութիւնները, առանց զիմելու այն արտակարգ բարբարոս միջոցներին, որոնք յիշեցնում էին Պետքանը թիժիւ:

Նոյեմբերի վերջինից արդէն նկատելի եղաւ կառավարութեան միասնական մէջ խեղզելու յեղափոխութիւնը. զօրքի մէջ տեղի ունեցած խլսութիւնը ճնշուած էին և այլևս ոչ մի կամքած չէր մնում թէ միանգամայն անհիմն է եղել «Ճայրացեղների» զբած յոյսերը զօրքի աջակցութեան վրայ. Ռուս գիւղացիութեան հոգեբանութիւնն ևս աւելի էր ծանօթ բիւրօկրատիային, քանի «Ճայրացեղներին». գիւղացիս հոգ էր ուզում և բոլորովին անմաս էր քաղաքական այն ծրապըներին, որոն-

1) «Ով մեզ հետ չէ—նա մելք թշնամին է և պէտք է ընկնի»:

ցով ոգեսրուած էին ուշրաները. «Հողից» զուրս գիւղացին չեր էլ հետաքրքրում «զանազան ազատութիւններով»: Սպասել որ զարելով խաւարի և ճնշման տակ մեծացած սուս մուժիկը յանեկարծ տանուի սոցիալիստական գաղափարներով—միամտութիւն էր. նրա գժգոհութիւնը իր սոսկալի կացութիւնից միմեայն կարող էր տարերային խառնակ ձեւեր ստանալ, «ողուզաջովշչինայի» վերածուել: Եթէ աւելի զգացուած բանուորականութիւնը այնքան դեռ խակ էր որ հաւատացած էր թէ կարելի է շարաթը մի անգամ գործազուր սարքելով սոցիալիստական յեղափոխութիւն առաջացնել, էլ ի՞նչ առել աւելի ևս խաւար, ազգատ և չկազմակերպուած գիւղացիութեան մասսին: Բանուորականութեան ու գիւղացիութեան տարերային ու երկրի ամրող անտեսական կեանքը քայլայով շարժումները, բնականարար, կառավարութեան աւելի մերձեցրին կալուածաւտէրներին և ըուրժուաներին: Նոյեմբերի 22-ին զեւստային և քաղաքային գործիչների համաժողովների բիւրօի կողմից Պետրոսկիվիչ, Մուրոմցեվ և Կոկոչկին Պետերբուրգում ներկայացան կոմունիստէրին և, տալով համաժողովի որոշումը, ցանկութիւն յայտնեցին որ «կառավարութիւնը համարձակ և հնակողական կերպով իրազործի լայն պետական ծրագիր, որ միայն կարող է վերականգնել Ռուսաստանի կեանքի նորմու ընթացքը և կը բաց անի երկրի համար ճանապարհ դէպի խոր օրգանական րեֆորմներ պետական և ժողովրդական կեանքի ըուրի կողմերում»: Վիտաէի պատասխանէ: մէջ այն միտքն է յայտնուած թէ յեղափոխականների յարուցած խառնակութիւններն են արգելում բեֆորմների իրազործան և թէ կառավարութիւնը չովէտք է կանգ առնի նոյն իսկ արիւնհեղութեան առաջ—խողութիւնը վերականգնելու համար: Եւ կառավարութիւնը ուզեց օգտուել նախատաւոր գրութիւնից ու ձեռք առաւ երկիրը խաղաղնելու ամենախիստ միջոցներ, նախ և առաջ «ժամանակաւոր օրէնքներով» վերացնելով բոլոր խոստացած ազատութիւնները՝ նոյեմբերի 29-ի ուկազով ամեն մի նահանգատիւ և քաղաքապետ ինքն իր հայեցողութեամբ կարող էր մացնել իրան յանձնած տեղերում «խստացրած հսկում», «զինուորական դրութիւն»: Վիտաէ-Դուրսովօի կառավարութիւնը իրան պատրաստ էր ըգգում բացարձակ կոիւ յայտարարել յեղափոխութեան, նա իր ապագայ քայլերը արդարացնելու նպատակով էր որ տպեց գեկտեմբերի 6-ին կառավարական հետեւալ հաղորդագրութիւնը.

Վերջերում երեան եկած քաղաքական կուսակցութիւնների և հաստրակական կազմակերպութիւնների մէջ սկսել են խիստ աչքի ընկնել խրացութիւններ, որոնք իրանց նապատակն են դրէլ հոկտեմբերի 17-ի մա-

Նիփեստով յայտաբարած սկզբունքներին ընդլիմադրումը և երկրի տրնատեսական, հասարակական և քաղաքական կազմի լիակատար քայլայտումը: Այդ անձինք զեկավար մասնակցութիւն են ցոյց տալիս յեղափոխական շարժման մէջ և կործանիչ գաղափարների լայն քարոզութիւն են անում, օգտուելով պարբերական մամուլի օրգաններով և ազգաբնակութեան մէջ զբուիչ բավանդակութեան կոչեր և ըրոշիւրներ տարածելով: Իրանց ապրումաքան դործողութիւնների մէջ յեղափոխականները յարձակողական դիրք են բռնել կառագարանեան հաստատուած իշխանութիւնների և իրանց հայացքները չըածանող երթի ազդաբնակչութեան ու հասարակութեան անգին մեծամասնութեան զէմ: Մահուան պատիքը վերացնել պահանջող յեղափոխականները բացարձակօրէն հաւանութիւն են տալիս քաղաքական տրանսութիւններին ու թալանին, անդադար բռնի միջացների հրաւիրելով: Զբաւականանալով իրանց զաղափարների տարածումով ժողովրդական մասսայի զանազան խաւերուն, յեղափոխականները փորձում են շփոթութիւն մոցնել զօրքերի մէջ, յանդկնորէն զաւաճանութեան և ապստամբութեան հրաւիրելով: Յեղափոխականների յանցաւոր զործողութիւնների զէմ կառագարանութեան իւրաքանչիւր քայլ նրանք բացարձում են իրք իսխատում բընակչութեան չնորջուած ազատութիւնների, որոնցով կ'ուզենային օգտուել իրանց յանցաւոր զործերի համար ոչ մի պատասխանաւութիւն չկրելով: Իրանց ծրագրներով յարելով սոցիալ-բնիվութեաններ և սոցիալ-գեմովաստ կուսակցութիւններին, այդ անձինքից շատերը իրանց տակաթիկայով մօտենում են անարխիստներին: Նոյնքան յանցաւոր են դրանց զործողութիւնները հատորակութեան նկատմամբ, վերացական վարդապետութեամբ ու մեծամութեամբ կուրացած, նրանք յանդկնորէն իրանց են վերապահում իրաւունք խօսել ու զործելու երկրի բնակչութեան անունից, ծայրայել անհամբուղութիւն և կատաղի քէն ցոյց տալով իրանց հակառակորդների զէմ, որոնց նկատմամբ նրանք արդարացնուած են ամեն տեսակ բանութիւնների նոյնիսկ արին թափելու: Ռանակոխ անելով արդարութիւնը նրանք սառտիկ հալածում են անունը իրանց չհամակրող կուսակցութիւններին և կատաղի քէն ապատմացուցակներ, իրանց չհամակրող կուսակցութիւններին և հասարակական խմբերին յատկացնում են վիրաւրական մականուններ: Ծայրայել կուսակցութիւնների այզօրինակ զործանէութիւնը, անարիկելով հասարակութիւնը, նշանաւոր ասաւիճանով սահմանափակում է բնակչութեան՝ ինկապելու ազատութեան համար են իրանք իրեւ թէ զուրու եկել: Արեան գնով հաշիւներ տեսնել քարոզելով, յեղափոխականները բացարձակօրէն զինուած ապստամբութեան են հրաւիրում, հարկադրելով կառագարութեան ընդգիրմապել օգտուելու բոլոր ազատութիւններով, այսինքն այն բարիքներով, որոնց պաշտպանութեան համար են իրանք իրեւ թէ զուրու եկել: Արեան գնով հաշիւներ տեսնել քարոզելով, յեղափոխականները բացարձակօրէն զինուած ապստամբութեան են հրաւիրում, հարկադրելով կառագարութեան ընդգիրմապել այդպիսի յանցաւոր փորձերին: Ազգաբնակութեան հաւատացնելով՝ ժողովրդին իշխանութիւն տալու իրանց յանկութեան մէջ, յեղափոխականները ձգուում են բռնութեամբ իրանց ձեռքը զցել ժողովրդի վրայ իշխումը: Նրանք կանգ չեն առնում այնալիսի զործողութիւնների առաջին դուռը առնել, որոնք երկրին անազին իմաստներ են պատճառում: Նրանք կանգնեցրէն պասաւ, հեռազիրն և երկամթազիները այդ երեսոյթները ծագել են և իրագործուել ծայրայել կուսակցութիւնների ջանքերով, մորքերի յուղուած զրութեան և մի շարք բռնի միջոցների չնորհիւ, որոնց նկատմական է եղել՝ ստիպելու անհատներին յարել զործազութիւն: Այժմ նրանք աշխատում են վարկաբեկ անել զանձարանի վճարման կարողութիւնը և զբանավ պետութեան մէջ լուրջ քինուական գժուարութիւններ ստեղծել: Առանձին աշշաղրութիւն կենդրուացնելով բանուորական դասի վրայ աշաղային

կուսակցութիւնները արդիւնագործութիւնը տանում են ֆարբիկների, գործարանների փակման վակ բանուորհներին զրկում են ապրուստի միջոցներից: Եաւ բնական է որ այդ կուսակցութիւնների տակտիկան հասարակութեան և ժողովրդի մէջ սաստիկ զարյոյթ է յարուցանում, որ վերջին ժամանակներում արտայատուել է յեղափոխական կուսակցութիւնների մի քանիներկայացների նկատմամբ արեան զնով հաշիւներ մարքելու ըազմաթիւ զետքերով: Կառավարութեան վրայ պարտ է գրուած ձեսք առնել ժողովրդական ինքնազլուխ գատառտանի այդ աստիճան ցաւալի երեսքիների առաջն առնելու միջոցներ, բայց կառավարութիւնը պարտաւոր է նմանապէս կտրուկ միջոցներ զործ զնել այն անձանց վերաբերմամբ, որոնք յոնդընօրին առնակուի են անում երկրի շահերը և յարատե են գարձնում չփոխ: Կառավարութիւնը իր նպատակն է համարում պետական կեանքը հոկտեմբերի 17-ի մանիքեսու սկզբունքների վրայ հաստատելու: Բարձրոգոյն կամքի իրագործումը և այդ պատճառով կարծում է թէ յեղափոխական պրոպագանիք յանցաւոր արտայայտութիւնների վկամ կռուելու ամենաուղիղ եղանակն և օրէնքով այդ նպատակով թոյլատրած միջոցն են՝ մամուլի ժամանակաւոր կանոնները, որոնք սահմանում են նրա ազտառութիւնը և միաժամանակ կռուելու հնարաւորութիւններ են առլիս ապազրական իրոքի իշար զործածումի դէմ: Առանձին օրէնքի հրատարակութեամբ յայնի աստիճանով պէտք է երկրի համար ապահովուի ճանապարհների հաղորդակացնութիւնների և յարաբերութիւնների այլ միջոցների անլուղհատ դործունեութիւնը: Բայցի այդ, անհրաժեշտ է ճանաչուած ուժեղացնել գատառտանական հիմնարկութիւնների գործունեութիւնը, որպէսզի նոր հրատարակուած կանոնները և գատառտանական վճուով գրուած պատիժները հնարաւոր վենի իսկապէս զործադրել: Իսկ եթէ այնուամենայնիւ բանից երեաց որ ցոյց տուած միջոցները անկարող են խափանել հայրենիքին անուզգելի վատահացնող յիշած անձերի գործունեութիւնը, անկասկած անհրաժեշտ կը մնի բոլորովին բացառիկ միջոցներ ձեսք առնել այն անձանց դէմ, որոնք չեն հրաժարուու իրանց յանցաւոր մտազրութիւններից ժողովրդական կեանքի ներկայ ձանը մամենաներում:

Կառավարութեան այդ մարտահրաւելը ընդունեցին յեղափոխականները և բաց թողեցին մի մասիքեսու, որ դիմուած առպատամբութեան կոչ էր անում ներկայ կառավարութիւնը տապալելու և ժողովրդական հոնրապետութիւն հաստատելու: Աըպատակով: Դեկտեմբերի 7-ին, ցերեկ ժամի 12-ից յետոյ, յարաբարուած էր ընդհանուուր քաղաքական գործադրութիւնը: Մի քանի օր անց Ռուսաստանի սիրու՝ Մոսկուայի փողոցներում պատնէների վրայ արինահեղ մարտի էին բանուած զօրքերը յեղափոխական սազմիկների հետ: Թնդանօթների բոորիւնը, գընդակացիրների ճարճատիւնը և հրացանների տրաբոցները տամաօր շաբունակ լուսում էին վիթխարի քաղաքի գանապան մտաբում: Այդ անհաւասար կռուի մէջ առաջին անգամն էր ուուրանուրականներութիւնը կազմակերպուած ու վինուած ընդդիմութիւն ցոյց տալիս իր ձեռքով շինած պատնէշների վրայ: Հոկտեմբերի 17-ից յիշայ կառավարութիւնը հին բեժիմի սիստեմին

հաւատարիմ՝ անվերջ բաշքուկներով այդ զրութիւնն հասցրեց իւրանց խարուած համարող ծայրայիշներին։ Նախօրօք պարզ էր իւհարկէ որ այդ բուռն լմբաստները պէտք է պարտութիւն կրէին թուով և սուլմական տեխնիկայով գերազանց հակառակորպից։ Երբէք ազգաբնական թիւն այս կամ այն չնչին մասի զինուած ապատամութիւնը զրական աշջողութեամբ չի պատկուիլ, մինչև որ զօրքը հաւատարիմ է մնացել զայտովին ունեցող բեժիմին։ Բողոքի այդ ձեր պէտք է սակայն հասկացնի պետական դեկը սուանձնածներին, եթէ զրանք խելք ու խիզճ ունին, որ զինուած ապատամութիւնը պետական կազմի չոփազանց վատնդասոր հիւանդութեան չարագուշակ սիմպատին է և կիսատապուատ ու պալիսատիւ միջոցներով անկարելի է բուժել խոր արժատների հետեանք չարիքը։ Ի հարկէ, մասսային սպանութիւններով, բանարկութիւններով, աքսորով և այլ ձնից միջոցներով կարելի է պահ մի գերեզմանային հանդըստութիւն տարածել շուրջը, անաբեկել հասարակութեան առանց այն էլ խաղաղ տրամադրուած ժամը, սակայն այդպիսով արժատախիլ չեն անուի այն բուն պատճանները, որոնց հետեանքների հետ են միայն կառում չին բեժիմի գոնքիշուանները։ Զինուորական ու վարչական ահարեկութիւնն ու վրիժառութիւնները չերելք չեն կարող նպաստել կրքերի խաղաղացման կամ իսպաս ընկճել ըմբուանների խիզախ ոգին։

Որ հոկտեմբերի 17-ից յետոյ ուռւ բիւրոկրատները ոչինչ չմոռացան ձնից և ոչինչ չսովորեցին նորից՝ այդ ապացուցում է Պետական Դումայի ընտրողական իրաւունքի մասին հրատարակած դեկանութիւնը 11-ի օրէնքը բնաւ թագուն չեր արտայայտում բոլոր սահմանադրական կուսակցութիւնների կողմից ընտրողական չորս անդամեան բանածերը, բայց այնուամենայնիւ Վիտակ-Դուբրովոյի կասավարութիւնը գտաւ որ պէտք է պահպանել ընտրողական իրաւունքի մէջ զասա՝ արգային անարդար սկզբունքը և գիւղացիների ու բանուարներինը կատամամբ բացառիկ կանոններ ներմուծել։ Մոռացում է որ ամեն մի անարդար ակտ մարդկային ողու մէջ զարթեցնում է բողոքի, զգոնութեան սուր ճիչ, ուզում էր հանգստացել, խաղաղացնել կրքերը և միաժամանակ իւղ էր ածում զես առկայծող կրակի վրայ։ Զգիտեն զրանք միթէ որ, ինչ ժողովուրդ էլ լինում է լինի, նա կը գերազանի խաղաղ ապահով կացութիւնը արիւսահեղ կոիւներից և խամնակութիւններից։ Ռուս գիւղացիութիւնը պահանջում է հող, ուռւ բանուարականութիւնը՝ հարստահարութիւն ազատ պաշտպանել իր շահերը գործառէրերի հարստահարութիւններից։ Եթէ բիւրոկրատիւն

չուզենար անսպատճառ կալուածատէրերի և կապիտալիստների շահերի պաշտպան հանդիսանալ, ինչու պէտք է նա զանազան արգելքներ դնէր գիւղացիութեան և բանուորականութեան կամքի արտայայտութեան առջեւ: Ոչ մի երկուու պարլամենտական կարգով յանկարծակի, կատասարոփային յեղափոխութիւններ առաջ չեն եկել, որովհեան պարլամենտականութիւնը հչնց այն հռննէ, որ կանոնաւոր ընթացու է տալիս մասսայի կեանքին, որը նուան է մի հոկայտական գետի հոսանքին: Հզօր Վալվան խաղաղ վեհաւթեամբ թաւալում է իր կոհակները, զուրս չզալով իր հունից և շնուցնում իրան սահմանափակող ամիերը: Թող խելագարները վարձեն ամբարտակներ և թումբեր կառուցանել նրա առաջնաշաղաց վազքի զիմաց, և զիդուուծ ալիքները արգելքներից կատաղած զորս կը գան հունից և աւեր ու կործանում կը ատարածեն շուրջը...»

Զպէտք է բէակցիան չափազանցնի իր տարած յաղթութեան նշանակութիւնը, մակընթացութիւնը և տեղատառութիւնը ընութեան մէջ իրար յաջորդում են անսասան կանոնաւորութեամբ, զաղարից յետոյ յաջորդում է աւելի ուժգին զործունէութիւն: Հետևաբար, խելացի քաղաքականութիւնը պահանջում է օգտուել ժամանակաւոր խաղաղութիւնից, կրթերի յոզնածութիւնից և խոլոյն՝ սահմանադրութիւնը անկեղծօրէն կիանքի մէջ մացնելու նրաշխիքներ տալ: Թէ որ աստիճան իսքը հասարակութիւնը կողմանակից է խաղաղ էվոլյուցիայի հնարաւորութիւն ստեղծելուն՝ այդ երեսում է այն հանգամանքից որ, չնայած ուսպանեմբերի 11-ի օրէնքների պակասութեան, այնուամենայնիւ նոյն իսկ ձախակողմեան կուսակցութիւնները ուզում են մասնակցել ընտրութիւններին, ուզարկել Պետական Դուման իրանց ներկայացուցիչներին և Պետական Դումայի միջոցով արգէն ուղղել ընտրողական օրէնքի անարդար հիմքերը: Եւ խսկապէս, զինուած ապատամբութեան և քաղաքական գործադուների փորձերը ցայց տուին այդ միջոցների գրականութեան ամբողջ ութուպիզմը: Այս լրամ այն խմբի, այս կամ այն զասակարգի յեղակի ջանքերով մզած յեղափոխութիւնները միշտ անաջող վախճան են ստանում: Եւ այդ գալիս է կրկին ապացուցանելու մեր այն տեսակէտը որ մննը պաշտպանել էինք անցեալ համարում զիս Մոսկուայի զէպքերից առաջ<sup>1)</sup>: «Մէնք հաւատում ենք որ միայն սահմանադրական կեանքում, այն էլ աստիճանաբար կատարուած բեֆորմներով, կարող է հասունանալ սոցիալական յեղաշլշումը, որ պէտք է հետևանք լինի հասարակութեան

1) Տես «Մուխճ» №11—12:

անտեսական կաղմուածքի վոփոխութեան և մասսայի գիտակից ինքնորոշման։ Ամենօրեայ զիտոգութիւնը և առաջագէմ երկըբնիքի անցեալի ուսումնասիրութիւնը ցոյց են տալիս որ հաստրակական կեաներում դասակարգերի անտագոնիզմի (հակամարտ) հետ դեր են կատարում նաև դասակարգերի զրոժակցութիւնը, պայքարող հակասակ ոյժերի խաղաղ կոմպլոնիսր»։

Սահմանապրական լեժիմի լիակատար հաստատում կեանը մէջ—ահա ասածին նպատակը, որին պէտք է ձգտեն զեմոկրատիական բոլոր կուսակցութիւնները, չըլատելով, չպառակտելով իրանց ոյժերը բիւղանդական ազանդաւորների նուան, որոնք գողմատիկ նրբութիւնների վէճերով էին զբաղուած այս ժամանակ, երբ Պոլսի պարապների գրսում օսմաննեան բանակն էր կանգնած... Պլոգրեսիւ բոլոր ոյժերի գաշնակցութիւն՝ սահմանագրական կարգերը միուսաստանում հաստատելու նպատակով—ահա միաշած ոյժերի ընդհանութ զբօշակը։ Եւ մեզ թըւում է թէ այդ հարցում նախաձենութիւնը պէտք է իր վրայ վերցնի սահմանագրական-ժողովրդավարական կամ ինչպէս այժմ աւելացնաւում է «ժողովրդի աղասութեան» կուսակցութիւնը, որ իր ծրագրով միացնաւում է ինտելիգենցիայի, գիւղացիութեան և բանուորականութեան շահերը և տարրերում է ձախակողմեան ծայրայեղներից աւելի իր տակտիկայով, բաննուատակների էական տարբերութիւններով։ Եթէ կամիք այդ կուսակցութիւնը աւելի ճիշտ կը լինէր ընորոշել «սոցիալ-էվոլիցիօնիստական» անունով... Միացած ոյժերով այդ ձախակողմեան միութիւնը (բլոկը) կարող է ժողովրդի մէջ եսանդուն պրոպագանիգա անել ընտրողական պայքարի ժամանակ և ուզարկել Պետական Դուման ժողովրդի շահերին նուիրուած այնպիսի հեղինակաւոր ներկայացուցիչներ, որոնցով այնքան հարուստ է սուսական ինտելիգենցիան։ Մի կողմ թողնենք վիրաւորական «բուրժուա» ածականը Սարուվէների, Միլիւկովների նման անձանց նկատմամբ, մի կողմ թողնենք նեղ կուսակցամոլութիւնը և դոկտրիներութիւնը այս պատմական լուրջ մոմենտում։ Պէտք է հասկանալ կեանքի բիբու լոգիկան և հասուն ու առողջամիա հայեցքով չափել ըէալ գժուարութիւնների։ Զայրոյթից ատամներ կրծտել կամ խոռվկան վերաբերմունք ցոյց տալ «ոչ ծայրայեղների» տակտիկային և փրկութիւնը սպասել միայն ապստամբական բռնկումից—նշանակում է լրջութբամբ չկշուել իրական պայմանների գրած խոչնվուանների համակումաբը։ Մենք հաւատում ենք որ ձախակողմեան բոլոր միացած ոյժերը, եթէ նըսպատակ դնենք բոլոր հուանդովնուիրուելու ընտրողական պայքարին, կարող են աջողութիւն ունենալ, որովհետեւ նըանց ոսի-

տակ է այնպիսի ամուր հող, ինչպիսին է աշխատող մասսայի շահերը և առնասարակ արգարութիւնը:

— Եռուսով լրանում է մի տարի և թուրքերի ոկտոծ յարձակումները հայերի վրայ զեսու չեն զապուռծ. հայը, տևոնելով փթած և ապիկար բիւրօկրատիայի յանցաւոր և միտումաւոր թուլութիւնը թուրքերին զապիւռ գործում, սափառուած եղաւ գիմելու ինքնապաշտպանութեան: Զափազանց տարօրինակ որ այժմ Պոլոշչապով գեներալը և զնդապետ Վէվերն հայոց գիւղերն են թնդանօթներով ոմքակոծում «թալան և զէնք» պահանջելով հայերից: Զարմանալի է որ մարդասպան թուրք բէգերն և պրիստաները չեն ձերբակալուում, այլ բժիշկ Ք. Յանձրիկանի և Գ. Մ. Շահնապարեանի նման անպայման խաղաղատէր և ամենից յարդուած անճնառութիւններ: Այս ըոլորից յիտոյ Երգենի, Մինքենզի, Զահրիի և այլ տեղերի հայերի գըլխին բարբարոսութիւններ գործող թուրքերը կարող են իրախուսուել իրանց քաջապործութիւնների մէջ, միանգամայն հաւատացած որ այդպիսով իշխանութեան սրտից ջուր են խմում և հովացնում են հայակեր չիսովիկների վրիժասու ատելութիւնը հայից: Արդէն տաղակալի է զառնում կրկնել զանազան խաղաղաբարական փորձերի մասին, երբ դիմացիկ տեսնում են կանգնած գոլիցինեան բեմիմի մարդկանց, իրանց կարճամիտ և տըսմարդի «քաղաքականութեամբ»...

Գոլիցինի ստեղծած Աւգեան ախոռները մաքրելու համար, ինչպէս երեսում է, Հերկուլեսիան ջանքեր են հարկաւոր և ոչ սպալեատիւններ, և ժամանակ է որ այդ ճշմարտութիւնը հասկանար բարձր իշխանութիւնը, ինչպէս նա ըմբանեց այդ՝ հայոց կալուածների և դպրոցների խողը ու...

լ. Ս.

31 Յունուարի

Պիտական Դումայի ընտրութիւնների կանոնադրութեան գործադրութիւնը Կոմիկատում:

Կովկասիան նահանգները և շրջանները Պիտական Դումայի անդամների ընտրութիւնները կատարում են այն ընդհանուր հիմունքներով, որ մասնացոյց են արուած 1905 թուի օգոստոսի 6-ի Բարձրագոյն հաստատուած Պիտական Դումայի ընտրութիւնների կանոնադրութեան մէջ, նոյնողէս և զեկում-

բերի 11-ի Բարձրագոյն տուած ուկազի մէջ, որով այդ կանոնագրութեան մէջ փոփոխութիւն է մացրուած, հետեւեալ շնուռմակրով.

1) Ընտրութիւնները կատարելիս Զարաֆշալի շրջանակը (օքրցր) միացնուում է Թաղստանի շրջանի<sup>9</sup> հետ, վերջինիս հետ կազմելով մի ընտրողական շրջանակ: Մի ընարողական շրջանակ հն դառնուու նոյնպէս Զերնօմօրեան նահանգը, Սուխումի շրջանակը և Բաթումի շրջանը:

2) Տերերի և Կուրանի շրջաններում կազմւում են երկու շրջանային ընտրողական ժողովներ ամեն մէկում. մէկը՝ դինուորական կազմակարգի ընտրողներից, իսկմիւսը՝ շրջանի մնացեալ ազգաբնակութիւննից: Այդ ժողովներից իւրաքանչիւրը իր կողմից ընտրում է Պատական Դումայի համար այնքան թիւ անդամներ, որքան որ յիշուած է կցուած ցուցակում:

3) Ամեն մի դաւասուում, շրջանակում կամ շրջանաբաժանմունքում, ի բաց առեալ ներքեում յիշածները, կազմւում են երեք ընտրողական ժողովներ. ա) հողատէրերի ժողով, բ) քաղաքային ընտրողների ժողով և գ) դաւասումանների (участков.) դիւղական ժողովների ընտրած լիազօրների ժողով:

Կուրանի շրջանաբաժիններում (ՕՏՃԵԼ), նոյնպէս և Տերերի շրջանի այն բաժիններում, ուր կան կազմակների ստանիցաներ, կազմւում է բացի կրանից և ստանիցաների լիազօրների ընտրողական ժողով:

4) Բանուարներից ընտրողները, — ընտրուում են ընդհանուր հիմունքներով, կովկասեան երկրի հետեւեալ նահանգներում և քաղաքներում այս քանակութեամբ. Բազու (նահանգուում և քաղաքուում, — 4, Բաթումի շրջանում — 1, Թիֆլիսի (Թիֆլիս քաղաքում և նահանգում) — 2 և Զերնօմօրեան — 1:

5) Բարուի և Թիֆլիսի նահանգներում բանուարական ընտրողների ընդհանուր թիւը բաշխուում է այդ երկու նահանգների և նախորդ պրակուում յիշուած քաղաքների մէջ, համաձայն թէ քաղաքի սահմանների մէջ, թէ դուրսը՝ նահանգի կամ շրջանի սահմաններում գտնուող գործարանական, հանքային և հանքագործական արդիւնաբերութիւնների ու երկաթուղային արհեստանոցների մէջ եղած բանուորների ընդհանուր թուին:

6) Բաթումի շրջանի Արգուինի շրջանակում և Կարսի շրջանի բոլոր շրջանակներում մասնաւոր հողատէրերի ժողովներ չեն կազմակերպւում, իսկ այն անձինք, որոնք այս կանոնագրութեան 12 յօդ, հիման վրայ ընտրութիւններին մասնակցելու իրաւունք

ո՞նեն, մասնակցում են այդ շրջանակներում քաղաքային ընտրովների ժողովին:

7) Քաղաքային բնարողական ժողովներ չեն կազմում:— Բօրչալուի և Թիօնէթի—Թիֆլիսի նահանգում, Լեչխումի, Ռտչի և Շօլուպանի—Քութայիսի նահանգի մէջ, Արէշի, Կարեազինի, Զիվանշիրի և Դաշտավանի—Գանձակի նահանգում, Գեօկչայի—Բագուի նահանգի մէջ, Սուրբալուի, Շարուրո-Գարալազի և Էջմիածնի Երևանի նահանգի մէջ, Քիւրինի—Դաղստանի շրջանում, Բաստլաշինի, Կովկազի և Լարինսկի—Կուբանի նահանգում—Տերեփի շրջանի մէջ: Քաղաքային բնարողական ժողովների մասնակցությունը ունեցող ահճինք այդ գուշաներում, քաժանուններում և շրջանակներում (բացի Քիւրինի) մասնակցում են հոգաաէրերի ժողովներում:

8) Դաղստանի շրջանի Աւարեան, Անդեակի, Գունիբի, Գարգինի, Ղաղիղումուխի և Սամուրեան շրջանակներում մասնաւոր հոգաաէրերի և քարաքային ընտրովների ժողովներ չեն կազմում, այլ այդ երկու կառէղօրեաների եղած ընտրովները մասնակցում են Թէմիրխանչուրայի շրջանակի համապատասխան ժողովներում:

9) Դաղստանի շրջանի Քիւրինի մտոի քաղաքային ընտրովները մասնակցում են կայտագօ-Թարասարանի վիճակի քաղաքային ընտրովների ժողովում (Քերենգ քաղաքում):

10) Նորին Կայուներական Մեծութեան Կովկասի Փոխարքայից է կախուած, երբ նու անհրաժեշտ համարի, ընտրութիւններ կատարելու համար միացնել մի և նոյն նահանգի կամ շրջանի սահմաններում գտնուող առանձին գաւառները (շրջանակները) ու կազմել նրանց համար միացեալ ընտրովական ժողովներ:

11) Այն գաւառներում, որոնց վարչութիւնները զունեում են զաւառական բարաքում, ընտրովների ժողովները դումարելու աեղք որոշում է նահանգապետը:

12) Գաւառական հոգաաէրերի ընտրովական ժողովներում անմիջական կերպով մասնակցում են, 1) Անդրկովկասի նահանգներում և շրջաններում՝ այն անձինք, որոնք վճարում են իրանց պատկանող հոգային կամ ուրիշ կայքի համար (որոնք չեն մտնում Պետ. Դուռ. կանոն. 16 յօդ. 1 կէտում յիշուած առևարաւարդիւնաբերական հիմնարկութիւնների շարքը) զեմստվային հարկ, տարեկան ոչ պակաս 15 ըուբլուց: 2) Տերեփի և Կուբանի շրջաններում այն անձինք, որոնք իրանց պատկանող հոգային կայքերի համար կը-

ճարում են պետական հողային հարկ տարեկան 3 ր. 50 կ. և 3) այն անձինք, որոնք կտուավարում են, Անդրկովկասի նահանգներում կամ շրջաններում հարկատու կալուածքներ սույնանագրի կամ հաւատարմաթղթի հիման վրայ մի տարուց առելի և վճարում են դեմուվային հարկ տարեկան ոչ պակաս 15 բուրլուց, իսկ Կուրանի և Տերերի շրջաններում՝ պետական հողային հարկ տարեկան 3 ր. 30 կոպէկից ոչ պակաս, կամ ը կապալով են վերցրել մի և նոյն հիմունքներով հողի համապատասխան քանակութիւն:

13) Այն անձինք, որոնք իբրև սեպահականատէր կամ ցման տիրապետող, մի ամբողջ ասարի վճարում են կալուածքի համար զեմուսվային տուրքեր կամ պետական հողային հարկեր նախառորդ յօղուածի մէջ յիշած քանակից պակաս՝ մասնակցում են ընտրութիւններին լիազօ՞նների միջոցով:

14) Այն անձինք, որոնք, 1905 թւի դեկտեմբերի 11-ի Բարձրագոյն հրովարտակի Ա բաժնում յիշած իրաւունքները ունեն, հետեւալ գիւղաղաղաքներում՝ Բաթումի շրջանում՝ Արգուինը, Քութայիսի նահանգում. Զուգգիզը և Ռեզուզ-Կալէն, Բագարի նահանգում՝ Սալեանը, Ղարսի շրջանում՝ Կաղզուանը, Արգահանը և Օլթին, — մասնակցում են ընտրութիւններին քաղաքային ընտրապների ժողովներում:

15) Գիւղական դաւառամասերի ժողովներից լիազօ՞նները ընտրելու համար, կողկասեան նահանգների ու շրջանների, գիւղերը, առւները և գաղութները (բացի Բաթումի և Ղարսի շրջաններից) մի քանի մասերի են վերածում, առանձին ցուցակներով, որ կազմում են նահանգական իշխանութիւնները և վաւերացնում է Փոխարքան. Այդ տեսակ մասերի կարող են վերածուել, Փոխարքայի հայացողութեամբ նաև կազակների սոկաւամարդ ստանիցաները:

Ժաննօթութիւն: Գանձակի և Երեանի նահանգներում առաջին ընտրութիւնների համար Փոխարքան իրաւունք ունի միացնել գիւղերը և գաղութները ու կազմել առանձին մասեր, թէկուզ այդ գիւղերը միմեանցից բաժանուած լինեն միջանկալ հողերով:

16) Գաւառամասի ժողովը հրաւիրում է նահանգական իշխանութիւնն ցուցմունքով, զաւառամասի մի որ և է գիւղում, առւլում կամ գաղութում տեղական տանուտէրի նախագահութեամբ և կազմում է զաւառամասի մէջ մտնող գիւղերի, առւլների և գաղութների ընտրուածներից: Ընտրուածները ընտրուում են ժողովներում իւրաքանչիւր տասը տան կողմից

մէկը, իսկ առաջ անից պակաս ունեցող զիւզերը ընտրում են մի ընտրող միայն:

17) Գաւառամասերի գիւղական ժողովները, նոյնպէս և կաղակների ստանիցաների ժողովները և մասերը (յօդ. 12) ընտրում են երկու երկու լիազօրներ իւրաքանչիւրը:

18) Բաթումի և Դարսի շրջաններում լիազօրներին ընտրում են զիւղական շրջանակների ժողովները, առեն մի ժողովից երկուսը:

19) Գաւառական հողատէրերի ընտրողական ժողովներին մասնակցելու իրաւունք ունեցող անձանյ ցուցակը Անդրկովկասում կազմում են գաւառապետները կամ շրջանային կառավարիչները, իսկ Տերերի և Կուբանի շրջաններում՝ տեղական ատամանները: Քաղաքային ընտրողների ցուցակը կազմում են քաղաքային վարչութիւնները, իսկ այն քաղաքներում ու զիւղաբազում, ուր քաղաքային տնտեսական կառավարութիւնը կազմուած է Կողկանեան երկրի կառավագ: Հասու. 133 յօդ. հիման վրայ՝ սոտիկանական հաստաթութիւնները:

20) Այն գաւառներում, ուր չը կան ագնուակնութեան գաւառական պարագլուխներ, մասնաւոր հողատէրերի թէ ընտրողական և թէ նախընտրական ժողովներում նախագահում է տեղական հաշտարար գաւառուրը հաշտարար ժողովի (Կուբանի և Տերերի շրջաններում) կամ նահանգական գաւառամի կարգադրութեամբ: Հաշտարար գաւառուրները նախագահում են նոյնպէս և այն գաւառների քաղաքային ընտրողների ժողովում, որոնց վարչական կենտրօնը գտնվում է սոտիկանական հաստատութիւնների միջոցով կառավարուող գիւղաբազներում:

21) Նահանգական ընտրողական զործերի համար մասնաժողովներ են կազմում՝ Բագուի, Գանձակի, Թիֆլիսի և անգամ գներում, նոյնպէս և Կուբանի ու Տերերի շրջաններում: Բագուի մասնաժողովին են հնմարկում, յիշեալ նահանգից բացի, նոյնպէս Դաշտանի ու Զարաթալայի շրջանները, Բութայիսի մասնաժողովին՝ Բաթումի շրջանը, Սևուղիեան ու Սուխումի շրջանը: Երեսնի մասնաժողովին՝ Կարսի շրջանը:

22) Նահանգական ընտրողական զործերի համար մասնաժողովները կազմուում են նահանգական գաւառամի նախագահի նախագահութեամբ, իսկ անդամները լինում են՝ արքունական պալատի կառավարիչը, նահանգական քաղաքի և գաւառի աղնուականութեան պարագլուխը, նահանգական դատարանից նշանակած անդամներից մէկը, նահանգական քաղաքի քաղաքագլուխը և նահանգական գիւղացիական (կամ շինական)

գործերի առեանի մի անդամը, որին նշանակում է նահանգապատկեալ: Մտաւրօպոլի արքունական պալատի կառավարիչը կարող է իր փոխարէն նշանակել Տերերի մասնաժողովի ընտրուզական գործերի մասնակցիուն համար նոյն պալատի տեղական բաժանմունքի:

Ծանօթ. Տերերի և Կուրանի ընտրուզական գործերի մասնաժողովներում նահանգական գիւղացիական գործերի առեանի անդամի փոխարէն մասնակցում է շրջանային վարչութեան խորհրդականներից մէկը, շրջանի կառավարչի նշանակելով:

23) Գաւառական (շրջանակային) ընտրուզական գործերի մասնաժողովները կազմում են՝ նահանգական գաւառանի նըշշանակած անդամի նախագահութեամբ, իսկ անդամները լինում են՝ գտառական ազնուականութեան պարագլուխը, հաշտարար ժողովների (Կուրանի և Տերերի շրջաններում) և կամ տեղական նահանգական գաւառանի կողմից, գաւառական քաղաքի քաղաքագլուխը, հարկային տեսուչը և նահանգական իշխանութեան նշանակած հաշտարար միջնորդը:

Ծանօթ. 1) Այն գաւառներում են շրջանակներում, ուր գաւառական ազնուականութեան պարագլուխներ չը կան, նրանց փոխարէն մասնաժողովում մասնակցում է Փոխարքայի հրաւերով անդամ չեն կարող նշանակուել նրանք, ովքեր օրէնքով պարտաւոր են ընտրողական ցուցակները կազմել նաև տեղական ոստիկանական պաշտօննեանները:

Ծանօթ. 2) Այն անդերում, ուր գիւղացիական հաստատութիւններ չեն մոցրուած, նահանգական իշխանութիւններին է վերապահնութեամբ իրանց հայեցողութեամբ փոխարինել հաշտարար միջնորդներին ուրիշ պաշտօննեաններով. սակայն մասնաժողովի անդամ չեն կարող նշանակուել նրանք, ովքեր օրէնքով պարտաւոր են ընտրողական ցուցակները կազմել նաև տեղական ոստիկանական պաշտօննեանները:

24) Սկզբուն նահանգի, Բաթումի ու Սուխումի շրջանների ընտրողական ժողովի, որը ընդհանուր է, ընտրութիւնների հսկողութիւնը վերապահնութեամբ է Բաթումի շրջանի զինուորական նահանգապետին, և շրջանային ընտրողական ժողովը տեղի է ունենութեամբ Բաթումի քաղաքում: Սուխումի և Զաքաթալի շրջանի ընտրութիւնների հսկողութիւնը (յօդ. 23 օգոստ. 6-ի կանոնադր.) այլ և շրջանային ընտրողական ժողովին մասնակցող տեղական ընտրողների ցուցակի յայտարարելը յանձնուում է տեղական շրջանային կառավարիչներին Փոխարքայի բարձրագույն հսկողութիւն ներբոյ: (48. օգոստ. 6-ի կանոն):

25) Պետական Դումայի անդամների ընտրութիւնները  
կատարվում են նահանգական ընտրողական ժողովներում, օր-  
էնքների համաձայն, բոլոր ընտրողների հետ միասին:

Ժամանակի և երկանուան նահանգներում Նորին  
Կայսերական Մածութեան կովկասի Փոխորդան իրաւունք ու-  
նի առաջին ընտրութիւնների համար բաժանել նահանգական  
ժողովները երկու մասի և որոշել իւրաքանչիւր մասից Պետա-  
կան Դումայի համար ընտրելի անդամների թիւը:

## ԱՐՏԱՎԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անոելի դրամա. — Արձագաններ. — Պարսկական եւ օմանեան ռասհմանակըութիւններ. — Դեմքերատիւն եւ արեւելեան նարց. — Դեմքերատիւնական նոսանեի յաղբանակը Անզիայում. — Համերափ գործունելու թիւն ազատական ուղղութեան տարեր կուսակցութիւնների մէջ. — Թանախական կառ. տակտիկան եկեղ. կալերը ցուցակագրելու. — Համերայ. նոր նախագահի կնուրութիւնը. — Բուգիելին տուած հայուսպատ բոււղը.

Մի տարի առաջ ոռուս-ճապոնական պատերազմն էր դարձրել իր վրայ ամրող աշխարհի լարուած ուշադրութիւնը, իսկ այսօր՝ ոռուսական մեծ յեղափոխութեան և լեռներն ին բոլորի հետաքրքրութեան կենտրոնը: Տիեզերական կայսրութեան լայնածաւալ բեմի վրայ արար արարի ետևից անցնուած ին ողբերգութեան սարսափելի տեսարանները, որոնց մէջ գարերով շղթայուած մի հոկայ ժողովուրդ տիտանական ջանքեր է գործ գոնում՝ թօթափելու վերջապէս իր շինքից կամայականութեան, խաւարի և թշուառութեան անարգ լուծը, որ այնքան ձեռնուուէ և քաղցր լրբացած բիւրոկրատիայի համար:

Եւ այդ ահանգի դրաման, ինչպէս անցեալ անգամ ցոյց տուինը, խոր կերպով ազգել է արդէն այլ երկների աշխատող գառակարգերի տրամադրութիւնների, ինչպէս նաև միջազգային յարաբերութիւնների վրայ: Ռուսաստանի ներքին ալէկոծութիւնը շարժում է առաջացրել երկրագունդը ծածկող մարզկային կեանքերի ովկիանոսում, իսկ առանց հետևանքների չի անցնում մասսայական և ոչ մի ցնցում: Ռուսական յեղափոխութեան արձագանքները մենք տեսանք Աւոտրօ-Ռւնգարիայի, Խտալիայի, Անգլիայի և Ֆրանսիայի ընտրողական պահանջների և պայքարումների մէջ. բանուորականութիւնը այդ հարցերում իր ձայնը բարձրացրեց նաև Պրուսիայում և Գերմանիայի այլ երկրներում:

Միջազգային յարաբերութիւնների հարցում մենք տեսանք թէ ճապոնական պատերազմի և ներքին յեղափոխութեան շնորհիւ Ռուսաստանի թուլացումից ի՞նչպէս իսկոյն օգտուեց Վիլհելմ Ա-րդը, Ռուսաստանի գաշնակից ու Գերմանիայի ոսոխ Ֆրանսիային նեղը զցելով Մարոկոի հարցում և յետոյ նոյնիսկ յոխորտանքով կանչելով նրան սպանական Ալժիսիրասի համաժողովին—միասին կարգադրելու համար այն հարցերը, որ մի Յունուար, 1906,

տարի առաջ Ֆրանսիան լոկ իր գիտնալու բանն էր համարում...

Ռուսական ազատամարտը, ինչպէս երևում է, խոր տպաւորութիւն է թողել նաև Իրանի շահնշահերի օրհնուած երկրում, որի մոլլաները, վաճառականները և կալուածատէրերը պահանջ են գրել որ շահը ուսհմանափակի իր ինքնիշխանութիւնը, ստեղծելով «Արգարութեան տունը»...

Թէ ի՞նչ կը լինի ողարսիկ ժողովրդի տեսակէտից այդ մոլլանների և ֆէօգանների «արգարութեան տունը»—դա գժուար չէ գուշակել, ոսկայն միիթարական է հէնց ինքը արսոլիտիզմի զէմ՝ քաղաքական բողոքի այդ սկզբնաւորութիւնն անգամ։ Պարսկաստանում, ինչպէս է Թիւրքիայում, հասարակական կառուցուածքը և մասսայի մտաւորականութիւնը գեռ չեն հասունացել քաղաքական յեղափոխութեան համար։ Մի Միդհադ փաշա իհարկէ կարող էր սահմանադրութիւն էլ գրել, նոյնիսկ սուլթանին ստորագրել էլ տալ, ինչպէս այդ եղաւ 1876 թուականի գեկտեմբերի 23-ին Պոլում, սակայն այդպիսի շինծու, արուեստական ու թրով կպցըրած սահմանադրութիւնները ի կատար չածելու համար Համբիլին հարկաւոր էր միայն տաել թէ՝ «քէփո չի ուզում», և ոչ ոք էլ չէր զարմանալ, ինչպէս և եղաւ, ուութանը «օսմանեան պարլամենտը» բաց անելուց մի քանի օր առաջ վանդեց և բանատարկել տուից Միդհատին, տպա, մի քանի անգամ էֆէնդինների ու փաշանների ժողով զումարելուց յետոյ, այլիս չանհանգատացրեց թիւրք «պատգամաւորներին»։ Եւ կարծնում էք թէ այդ վարմունքը որիէ յուղում սաւածացրեց թուրք ժողովրդի մէջ։ Սուլթանը շատ լաւ դիտէ թէ ովքերն են զըգդոնները, «օսմաներ», որոնց կարելի է կոտորել և մի քանի «ինտելիգենց» էֆէնդիններ, որոնց բաւուկան է լու պաշտօններ առաջարկել որ գագարեն հակասակութիւն ցոյց տալու փաղիշահի խօսքին։ Անշուշտ, թիւրքերի մէջ կան անկեղծ յեղափոխական անհատներ էլ, սակայն 14 միլիոն տգէտ և Փանատիկոս օսմանցիններերի մէջ թնչ նշանակութիւն ունին այդ անհատները, քանի որ բոլոր եղած «մտաւորականութիւնը»՝ իրեն օսմաննեան բիւրօկրատիա շահագրգսուած է նիերկայ րեժիմի պահպանութեամբ։ Մնում են իրեկ բողոքող տարրեր քրիստոնեայ հպատակները, որոնցից նրանք, որոնք նպաստաւոր պայմաններ ունին՝ անջատուեցան, իսկ որոնք զուրկ էին այդ պայմաններից՝ յուսահատական ջանքերի մէջ բնաջին լինելու վրայ են։ Թիւրքիան, ինքն իր ոյժերին թողած, անկարող է վերանորոգուել, կապիտալիստական պետութիւնները շահ չունին նրա արժատական բեֆորների մէջ—մնում է բոլոր յոյսը գնել եւ բոսլայում դեմոկրատիական հոսանքների ուժի-

ուանալու վրայ: Խսկ այդ յոյսն ութոպիա չէ: Այդ ճանապարհով է արագօրէն ընթանում մարտկային առաջադիմութիւնը: Խոշոր կապիտալի և կալուածատիրութեան կլասիկ երկիր Անգլիայում մենք այսօր տեսնում ենք պահպանողականութեան մի շտեմնուած պարտութիւն: Մենք տեսնում ենք որ անգլիական ազատականութիւնը քայլում է գէպի ձախակողմեանների կողմը, արմատականանում է, և ձեռք տուած անգլիական բանուորականութեան՝ սոցիալական արդարութեան հարցն է դընում իր բէալ գործունէութեան ծրագրուն: Հաստատ է որ եթէ լիբերալների աջակցութիւնը չլիներ, վերջին ընարութիւնների ժամանակ և ոչ մէկը այդ բանուոր պատգամաւորներից չէր անցնիլ, ինչպէս չանցան զուտ սոցիալիստական ոլլատֆորմ ռանեցող կուսակցութիւնից և ոչ մի ներկայացուցիչ: Աւհասարակական անգլիական տրէգիւնիօնները և բանուորական այլ պլոտինունէլ միութիւնները, հաւատարիմ անգլիական ովուրէալականութեան ու գործնականութեան, միշտ համերաշխ հն գործում անգլիական լիբերալների հետ: Կրուկս, Կէյր Գարգի, Զոն Բերնս, Թոմաս Բերտ և այլն, բանուորականութեան շահների հաւատարիմ պաշտպաններ լինելով հանգերծ, հետու են այն նեղ կուսակցական զոդմատիզմից և գոկտրինիօրութիւնից, որ յատուկ է զեռ բազարական ազատ կեանքով չապրած սուսական իրականութեան: Հարեւանցօրէն նկատենք որ ացգպիսի դործակցութիւն կարելի է գտնել և շատ ուրիշ երկրներում. վերցնենք, օրինակի համար, հէնց Դանեմարկը, որ յիշեցի նրա ալեգարդ արքայի—բազմաթիւ թագաւորների այդ հայր և պապի—մահուան առիթով: Փոքրիկ Դանեմարկի փոլիկունիգում պատգամաւորների ահապին մեծամասնութիւնը կազմում են զիւղացիականն կուսակցութեան ներկայացուցիչները կամ արմատականները և բանուորականութեան ներկայացուցիչները կամ սոցիալ-դեմոկրատները. այդ երկու կուսակցութիւններն ել միացած են զործում պահպանուականների և յետադարձների դէմ:

Եւրոպական հաստրակութեան զեմոկրատիզացիայի նշանաւոր բայլերից մէկն էլ՝ պետութիւնից եկեղեցու կատարեալ անջատումն էր, որ այժմ իրողութիւն է դարձել ֆրանսիայում: Բէ ո՞ր աստիճան ֆրանսիական ժողովուրդը հասունացած է այն խաղաղ ելքից, որ սատար եկեղեցական գոյքերի ցուցակադրումը: Մի քանի կղերականների և նացիօնալիստների կողմից անկարգութիւններ առաջացնելու փորձերը ոչ մի արձականք չըդառն ժողովրդի մէջ: Պէտք է այն էլ տակ որ հանրապետա-

կան պաշտօնեաները մեծ տակո ցոյց տուին այդ վրափոկ հարացում, և կառավարութիւնը խելացի հեռատեսութեամբ այնպիսի միջոցներ ձեռք առաւ, որ այդ պատմական փոփոխութիւնից նիւթական զաւաներ չկրեն եկեղեցու արդի պաշտօնեաները նաև նշանակեց զաւամեալների համար կինսաթոշակներ, աւելի երիտասուարդների համար զանազան չափերով օժանդակութիւններ. Մի խօսքով կաթոլիկներին արուած էին այնպիսի ժամանակառութիւններ որ փոփոխութեան պրոցեսով պէտք է ընթանալ հարթ և աւանց սուր ու խիստ ընդհարութիւնների. Այդ քաղաքաւ կամ տակտը ցոյց տուին հանրապետականները նաև նոր նուխագահի ընտրութեան ժամանակ. Վերսալում կայացած համագումարում ֆրանսիական սենատորները և պատգամաւորները կանգ առան հարաւային ֆրանսիայի գիւղերից մէկում 1841 թուին ծն.Արժան Ֆալիերի վրայ, որ մի խաղաղասէր, շիտակ և մեղմ մարդ է և երրէք չի ուղենալ իր հոր հնչեցնել կառավարական գործերում. նա կը լինի Ֆրանսիայի պատկառելի Ներկայացուցիչ միայն և երրէք գեկտվար. այլապէս զեմովկատիայի գերիշխանութեան հետ զժուար կը լինէր հաշտեցնել նախագահի անհատական ցայտուն ընաւորութիւնը. Եթէ ի նկատի ունենանք այն որ յենուիլով Փր. 1875 թ. Մահմանազրութեան վրայ, նախագահ էլ հանրաւորութիւն ունի յայտնի չափով անձնական ազգեցութիւններ գործ զնել մանաւանդ արտաքին քաղաքականութեան յարաբերութիւնների մէջ—պէտք է, ինչպէս ճանաչողներն են վկայում, Ֆալիերի արամազրութիւնների վրայ այնքան էլ յոյսեր չգնեն հին ուսւական բեժիմի կողմնակիցները. Դեմոկրատիական Ֆրանսիայի ամրող համակրանքը նոր Խուսաստակատիական կողմն է, և այդ խնդրում, ուրեմն, տիրում է կատարեալ ներդաշնակութիւն Ֆր. պատգամական ներկայացուցչի՝ իսկական դեկարտավարների մէջ: Ժողովրդի գիւղաց կառավարութեան լէկակցիօն հակութիւնները աչքի ընկնող են միայն Գերմանիայում և մանաւանդ Աւստրօ-Ռւմակարիայում: Այս վերջինը, միացած հին ուսւական բեժիմի հետ, ինչպէս գիտենք, Միւլցշտեղեան համաձայնութեան զօրութեամբ պէտք է ինչ-որ կիսատպուատ ծրագրներով խաղաղացնէին Մակեդոնիան... Եւ զետ խաղաղացնում են մտածելով միայն եւրոպական կապիտալիստների ֆինանսական գէշէ փառնութիւնը: Օտտոմանեան բանկի հասոյթների հաւաքումը ապահովել... ծապանական պատերազմը և այժմ սերբին յեղափոխութիւնը ինարկէ թոյլ չեն տալիս Խուսաստանին խառնուել այդ գործերում, և Բալկանեան սլավոնները իրանց յոյսերը կտրած միծեղբօք աջակցութիւնից արդէն մտածում են իրանց սեփական

ոյժերով իրանց գլխի ճարն տեսնել. սերբ-ըռւղարական մաք-  
սային և երկաթուղային դաշնը առաջին քայլն է այդ ուղղու-  
թեամբ: Եւ, գուցէ, երկար չենք սպասիլ իրականացած տեսնե-  
լու հարաւային սլատօնների սերտ միութիւնը: Եւ պանսլաւօնիզմը  
կարող է իրագործուել Բալկաննեան թերակղզու վրայ, ուր սլա-  
տօնները սղմուած են Աւստրօ-Ռւսկարական և Թիւրքական տարա-  
մերժ ձգտումների արանքում: Այս, հարաւային սլատօնները ձեռ-  
քի տակ ունեն բոլոր նիւթերը մի հզօր միութիւն ստեղծելու  
համար. Սերբիան, Բուլղարիան և Չեռնոգորիան արդէն կազ-  
մակերպուած մեծութիւններ են, իսկ Բոսնան, Հերցոգովինան,  
Խորվատիան և այն շատ հասունացած տարրեր: Այդ ուստօն-  
ների թիւն էլ Բալկաննեան թերակղզու վրայ բաւականին պատ-  
կառելի է—մօտ 12 միլիոն:

Իոկ Թիւրքիան... այդ «հիւանդ մարդը» իլ սեփական վի-  
ճակին թողած ոչ կը մեռնի ոչ էլ կ'առողջանայ. պէտք է եւրո-  
պական զեմոկրատիան վերացնի նրան միջից և ինքը տայ  
Թիւրքիայի բոլոր ժողովուրդներին, բոլոր գաւաններին արդար  
օրինակարգ, իր, եւրոպական զեմոկրատիայի, անմիջական կա-  
ռավարութեան ներքոյ պահելով երկիրը տասնեակ տարիներ,  
մինչև որ զերիշխող մուսուլման տարրը սովորի տպեր այդ նոր  
կեանքով: Լաւառեաները մեծ յոյս ունին մեծ ֆրանկլինի<sup>1)</sup>  
հայրենիքի նախագահ Ռուգվելտի միջամտութեան վրայ: Եթէ  
իրագործուի լաւագոյն մարդկանց այդ տեսչը այն ժամանակ  
հայ ժողովրդի հետ և համայն մարդկութիւնը կարող կը լի-  
նէին Շուղվելտին դասել մարդկութեան ամենամհծ բարերանե-  
րի շարքում...

Լ. Մ.

Յ 1 Յունուարի

## ՆԱԽ. ՌՈՒԶՎԵԼԹ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Յունուար 18-ին նախ. Ռուզվելթին իր տեսակին մէջ ե-  
ղական խնդրագիր մը ներկայացուց նիւե-նօրք քաղաքացի յա-  
տու B. Reynolds. ինգրագիրը ստորոգրուած է տիեզերահռչակ  
եւրոպացիներու կողմէ (պետական մարդեր, դաստիարակիչներ,  
հրապարակիրներ և քաղաքացիներ), կոչ կ'ընէ նախագահին

1) Այս տարի յունուարի 4-ին լրացաւ նրա ծննդեան 200 ամեակը:

Կրօպական պետութիւնները համաձայնեցնելու, որպէսզի ձեռնարկեն խաղաղութիւն ու կարգ հաստատելու օսմ. Պետութիւն մէջ, և մասնաւորապէս հայերուն համար երաշխաւորելու կեանքի, ինչքի ու պատուի ապահովութիւն.

Խնդրագիրը ստորագրած էն ֆրանսային՝ երեսունըմէկ ծերակուտական և քասանըմէկ երեսփոխան, Ռուայիային՝ երկու ծերակուտական և տասնըմէկ երեսփոխան, Պէնիքային՝ եկած ծերակուտական և քառասունըմէկ երեսփոխան, Շվեյցին՝ մէկ երեսփոխան, Տանիւնարքին՝ ութը երեսփոխան, տասնըչորս անգլիացի եպիսկոպոսներ, Ս'եծ Բրիտանիոյ և Կրօպական Յամաքի յիսունըմէկ համալսարանական ուսուցիչներ, տասնըմէ զատ Նորվէկիոյ, Շվեյչի, Տանիւնարքի, Հոլանտայի Ֆրանսայի, Գերմանիոյ, Աւստրիոյ, Իտալիոյ, Անգլիոյ, Ակովախոյ և Իրանացի բազմաթիւ նըշանաւոր քաղաքացիներ:

Անհատապէս ստորագրողներուն մէջն են՝ E. Nansen, Bjornstjerne Bjornsen (Նորվէկիա), General Booth, of the Salvation Army, Professor Vundt (Լայփցիկ), Professor Ernest Lavisse, Jules Garetie, Leon Bourgeoie, Ludovic Halevy, Anatole Leroy Beaulieu և Louis Blane (Ֆրանսա):

Խնդրագիրը պատրաստողն է աշխարհահաչակ Փրանսացի քիմիկոս Berthelot, երբեմն նախարար արտ. գործերու ֆրանսայի:

Նախագահը պատասխան տուած չէ Պն. Ռեյնոլտսին, քայց խոստացեր է ամէնախնամու նկատառութեան առնել. որոնդագայան յայտնած է թէ ինք կը գնահատէ այդ խնդրագրին ներկայացումով եղած պատիւը իրեն, իրրե նախագահի, և Մ. Նահնգներուն:

Յունուոր 19-ին հրատարակուեցաւ այդ խնդրագրին պատճէնն ալ, որ հետեւալի է.

### ՄԻԱՅՅԵԱ, ՆԱՀԱՅԴԻՆԵՐՈՒ ՆԱԽՈՒՅՈՒՆԻՒ

«Տէր—համարձակութիւն կ'առնենք գիմելու ձեզի, և ինը պաստ վեհ գտաի մը հայցելու այն բարձրապէս բարոյական և քաղաքական ազգեցութեանը, որ գուք ունիք իրեւ պետը Մ. Նահնանգնելու մեծ հանրապետութեան, և անձնական հեղինակութիւնը որ գուք ձեռք բերած էք շնորհիւ ձեր յարատե ֆանքերուն ազգերու միջն խաղաղութիւնը պահպանելու կամ վերահաստատելու համար:

«Զենք տարակուսիր, որ գուք ալ մեզի պէս խորապէս պղացուած էք եղերական վիճակովը հայ ժողովրդին, որուն ծագումը նոյնն է ինչ որ մերը, և որ խաղած է կարեւոր գերա

մը քաղաքակրթութեան զարգացման համար հին ժամանակներէ ի վեր: Այդ ժողովուրդը հիմա հասցուած է յուսահատութեան և բնաջնջումի սպառնալիքի տակ է չնորհիւ ողիտութեան և բնութեան որ անոնց վրայ կը ծանրացնեն անպատիծ կերպով անոնք շրջապատող բարբարոս միւսիւլման ցեղերը, որոնք աւելի քան տասը տարի է որ հետաձուած են անոնց բնաջնջումին: Այդ գժրախտ գուասները բնակող կամ այնտեղէն անցնող եւրոպացիներու և ամերիկացիներու վկայութիւնը, և անոնց քով պաշտօնավարող զիւանազիտական գործակալներու պաշտօնական տեղեկաբերը միարան են այդ նիւթին վրայ, և վկայութիւն կուտան ամէնէն ճշգրիտ և որտաճմիկ մանրաւանութիւններու: Այս պահուս հայ ժողովրդին համար չկայ ապահովութիւն դոյրի, կեանքի, մարդու, կործ ու երիխայի պատուի, քանի որ մշտապէս սպասնալիքի տակըն են կողոպուտի, առեանգումի և ջարգի՝ Ասիան աւերող կազմակերպուած ստաղակներու երեսչն:

«Եւրոպայի համար ամօթ մըն է, կընալինք աւելցնել, Ամերիկայի համար ալ, թոյլ տալ որ շաբունակուի ոճիրի և անիշխանութեան այսպիսի վիճակ մը, որ, թոյ նորէն յիշենք, մեր սիկական քաղաքացիներուն ալ կը զաշի: Մէկէ աւելի եւրոպացի և ամերիկացի կողմառւած, խոշտանգուած կամ սպաննուած է համբարիէ, քիւրտ կամ թաթար խմբերու ձեռքով: Այդ աւտակախումբերու գաղանացին վայրագութեան թողուած այդ գտաւանիրուն մէջ, քրնիկ վտանգ կը սպասնայ նուև առետուրի, ճարտարաբուհստի և մարդկային կեանքի շահերուն, որ ազգութեան այլ պատկանին բնակիչները:

«Ասոնք են, տէր, պատճանները ձեզի դիմելնուս, թախանձելով որ դուք ձեզի պատշաճ երեցած միջոցներով ու չափավ, և իրեւ հեղինակաւոր արտայայտիչը քաղաքակիրթ ազգերու կարծիքին, ձեռք առնէնք խնդիրը այն կառավարութիւններու քով, որոնց երկիրներուն մէջ վայրենութեան այս տեսարանները տեղի կ'ունենան: Մենք կը համարձակինք յուսաւ, որ ձեր համակրանքին արտայայտութիւնը յօժարութեամբ պիտի ընդունի Ռուսիոյ ցարին կողմէ, որ այնքան բուռն կերպով հոչակեց իր մարդկայնական մատադրութիւնները և բաղձանք արտայայտեց որ անոնք նուիսարգործուին միջազգային հաւանութիւնով: Մենք կոչ կ'ընենք ձեզի միջոցներ ձեռք առնել եւրոպակիոյ պիտութիւններու ներդաշնակութիւն մը առաջ բերելու, ձեռք բեռելու նպատակով Օսմաննեան Կայսրութեան հպատակներուն համար հանրային խաղաղութեան և կարգի այն վիճակը, որուն չզոյութիւնը այդ կայսրութեան գլուխն բերած է, այն-

քան ուղէտներ, սպառնալով անոր կատարեալ չնշումի վտանգը։  
Մենք խաղաղութեան մարդիկ ենք, և համոզուած ենք որ ի-  
զուր կոչ չենք ըներ ձեզ՝ նախատուած մարդկութեան անունով։  
Այդպիսի միջոցներով՝ մեր ընդհանուր մարդկութիւնը նոր  
պարտք մը ևս ովտի ունենայ ձեզի՝ երախտագիտութեան և  
հիացումիւ»

(Բոստընի «Հայուհնիք»)

### ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

— Մեր նոր բաժանորդներից նրանք որոնք կը ցան-  
կանան ձեռք բերել «Հաջի Բարս» վեպի այն մասը, որ  
տպուել է 1905 թ. ընթացքում—պէտք է ուղարկեն ճա-  
նապարհածախք 50 կոպ.։ Այդպիսի բաժանորդների հա-  
մար «Հաջի Բարս» Ա. հատորի(որ տպուել է 1904 թ.-  
ին) զինն է 1 ր. 50 կ. ճանապարհածախքով և 1 ր. ա-  
ռանց ճանապարհածախքի։ Նոր բաժանորդներից նրանք,  
որոնք թիւրիմացութեամբ սուացած չեն լինի 1905 թ.  
նոյեմբեր—դեկտեմբեր ամիսների համարը (ձրիաբար)  
—թող հաճեն բաց նամակով իմաց տալ մեզ այդ մասին։

— Հատով «Մուրճ» կարելի է գնել.

Թիֆլիսում—խմբոգրատանը և «Գուտենբերգ» զրախ.  
Բազում—Բունիաթեանի դրախանութում։

— Բազուից բժիշկ Գ. Սարգսեանի մի բաժանորդա-  
գնով 1906 թ. «Մուրճ» ուղարկուելու է Թիֆլիսի է-  
ժանագին զբաղարսնին։

— Մեծ պ. Ս.Վանեանի ձեռքով սուացանք Սուլանի  
(Աֆրիկա) հայ գաղթականների մէջ հանգանակած 137  
ր. 75 կոպ.։ «ի նպաստ Կովկասի հայ արկածեալ եղայր-  
ներու»։

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Եթէ հայերէն չիմացող և մեր իբառ-կանութիւը շճանաշող մէկին իւուէք աշխարհիս զանտագան կաղմերում լոյս տեսնող մեր լիերմերի և հանդէների լոկ անուանացացակը՝ նա հիացած պլոտք է բացադանչէ. «Փոքրաթիւ հայերիդ նման ընթիրցասէր և դրա-կանասէր ժողովուրդ չկայ աշխար-հումք. — Ինքնիրդ դատէք. չԱրա-րասու», «Ազատ թէմ» «Անահիւ», «Ազ- գագառական հանդէս», «Արաքս», «Ա- րեկեան Մամուլ», «Արմէնիա», «Ա- րելք», «Արշալյոս», «Արծիւ», «Աշ- խատանք», «Արտե ՚իս», «Աղրիւր», «Արգասիր», «Առողջապահիկ», «Բագ- մազէպ», «Բանասէր», «Բարի ՚իոյ» «Բիլազանլիիօն», «Բամբեր», «Գու- թան», «Գիղունի» «Գրօշակ», «Գի- տուն», «Երիտասարդ Հայաստան», «Ընկիր», «Երաւունիք», «Լոյս», «Լու- մայ», «Լուսաբեր», «Արարեր ՚ն. Զ.», «Ծաղիկ», «Կոռունկ», «Կոչնակ», «Հո- վիւ», «Հանդէ Ամսօրեայ», «Հասկիր», «Հայրենիք», «Հորիլոնն», «Զայն Հայ- րենեաց», «Մասիս», «Մշակ» «Մուրճ», «Մանզումէ». «Կոյս», «Յառաջ», «Նոր-Գալո», «Շարժում», «Շիրակ», «Նազմիկ», «Սուրբ հանդակ», «Սոցիա- լիստ», «Վեպաթերթ», «Տարագ», «Քա- ղաքացիք»... և գետ հի է կարող ասել թէ այս ցուցակը լրիւ է և զանազան ծակ ու ծուկերում չեն մնացել չյիշատա- կուած մի քանի անուններ. այդ չյիշա- տակուած «թիրթերի» ու «հանդէսնե- րի» մեծապատիւ խմբազիրներից և անօրէններից կանխօն՝ ներսողու- թիւն ենք խնդում. Մամուլի տա- կից թափուող թղթի այդ կոյտի մէջ եամբարուած հայի ամբողջ մտաւոր

ստեղծագործութիւնն, որ իթէ քըն- նելու լինենք որակի կողմից հո- գիւ թէ այդ համապատասխանելիու լինի քանակին... Չափազանց սակա- տաթիւ բնթերցազների պահանջնե- րով չէ, ի հարկէ, բացատրւում այդ ա- ռատութիւնը, ոչ էլ գրական ոյժերի բազմութեամբ, այլ մեր ազգի ցիրու- ցան, վտարանդի գրութեան և կուլ- տութական գարդացման համար աննը- պատապայմաններով, ինչովէն և լուրջ՝ գիտակից հասարակութեան բացակա- յութեամբ. Եթէ մեր իրականութիւնն մէջ իմկանքս զոյութիւ նունենար մի գիտակցող ընթիրցասէրների ստու- ար հաստրակութիւն—այն ժամանակ այդ, մեծ մասամբ գտիտ, անբովան- դակ, չարքաշութեամբ իրանց կեան- քը պահպանուող մրուտած թիրթերի գոյաբակութիւններ աւելի սա- կաւաթիւ, բայց հիւթալի, կենսու- նակ, բովանդակութեամբ հարուստ և համախմբուած ոյժերով տանուով հրատարակութիւններ. Ներկայ պայ- մաններում մեր «ընթերցող հասարա- կութիւն» վրայ զրած յուսով շատ գտւար և զուլիս բերել որեւէ լուրջ հրատարակութիւններ, առանց մեծամեծ նիթական ու բարովական զոհաբե- րութիւնների:

«Ենիունի», ողատկերազմրդ հայ- աթելրթ: — Վեհափառի այլ հրաշագեղ հրա սարակութիւնը չորրորդ տա- րինի է որ լոյս է տեսնում: 1905 թ. հատորը զերազանցում բոլոր նա- խորդները իր տեխնիկական ուս ուրա կատարելութեամբ: Դժուար է երեկայել աւելի փառայեղ հրատա-

բարեւթիւն, քան այս հասարաւութիւնը մարդկան տպարանը կարող է այս հրատարակութեամբ պարծենալ ոչ միայն հայերիս, այլ և օտարժների առջև: Կեցցե՛ մոնիթարիանների գեղարուեստական արդպարանը: Ինչ գերաբերում է բարգանդակութեամբ—ինքը խմբագրութիւնը խոստովանում է և բացարում նրա թերութիւնը՝ «Գիշուն», ին ունի երկու պահանջ,—առում է, Հ. Ս. Երեմեան, —գեղարուեստին կատարեալը և զբականութեան հաճելին: Առաջնոյն համար մենք ամեն զոհողութիւն յանձ առած և մեծդի պատրաստականութեամբ ապահով կը սկսենք այս բազմածախոս հրատարակութիւնը. իսկ երկրորդը—զբականութեան հաճելին, անձանօթ զիմակաւոր սկի մըն է կարծես, որ չենք գիտեք թէ իր զիմակը վարաննելուն, աշխատութիւննիս վարձատրող չոր ժայթումը, թէ անազնիւ ժաղը մը ցոյց պիտի տայ»... «Քանի որ մեր պատկերազարդ թերթը՝ գեղեցիկ պատկերներուն համապատասխան զեղեցկագիտական մըտարականին պըրանքն իը պահանջել, բնականարար մեր շրջանէն զուրս ելած, պիտի զիմենք ոչ վանական զբագէտներուն. հրաւիրեցինք ծանօթ զիպատանիներ, գեղեցիկին սիրահար զրիշներ, խոստացանք վարձատրել նաև զբամակ և խոստացանք արժանաւոր վարձատրութիւն, սակայն այս պահանջուս, իբր մեր հրաւիրեցին զբայ անցեր է ութ ամիս, տակաւին զոհացուցիչ պատասխան մը չենք առներ: Ուրեմն՝ «Գեղունիք»-ի մէջ տպաւած են հետեւայ յօդուածները. Սէյլան՝ «Յովիան Վարպագի կամ Թազմազ-շահի արշաւանքն ի Վասպուրական 1537—1537».—Տէր. Սահակեան՝ «Հայ կայսերաց զբամինը», «Հայ կայսրուհիները», «Համարուեստագէտ մը Օհաննէս Միւհէնտիսները».—Մաքս կը «վարպի հոսանքն ի Սարսուաները»—բարականաստեղութիւնը».

Ճամփեներ Դանիկէ Վարսուամնիք, —\*\*\* «Քրական յուշքեր», —Հ. Ս. Եփրիկեան՝ «Բնաշխարհի նշմարներ», —Ապրուշան՝ «Խոսվք», —Հ. Ս. Երեմեան՝ «Պատկերներու լեզուն»:

Ըստաշ, Թիֆլիս, օրաթիրթ: — «Արշալոյ»-ից յիսոյ սա երկրորդ փորձն է հրատարակել էժանաղին հոյ լրազիր (տարեկան 7 թ.), տարբերութիւնը այն է որ «Արշալոյը» նոյն գնով տալիս է և պատկերազարդ յաւելուած: «Յառաջից զիփաւոր գրական-հրատարակախօսական ոյժեկն են պ. պ. Ա. Ահարոնիան, Թոփչիան, Խաժակ, Դավթիան, Լազարեան և Օհանջանեան: Իր նպատակը հետեւալ կերպով է բնորոշում «Յառաջի» խմբագրութիւնը. «Հայ ժողովրդի գոյութեան ապահովութեան խնդրում «Յառաջը» համարձակութիւն ունի պաշտպան հանդիպութեան, իսկ քաղաքական և անոնասական խնդիրներում՝ պաշտպան և բերան ժողովրդը զիփաւոր մասսայից: Զիփաւոր մը հայ թերթը հակառակ նպատակն ունի: Մեզ թւում է թէ նոր թերթի ինքնուրոյնութիւնը աւելի են բնորոշում Նշ 15-ում տպուտծ հետեւալ խօսքերը. «Առողջ ու կենցանի խօսքով ցնցել երկուս մարերը, չեղոյլ տալ որ պատութեան թշնամիների սպառնալիքները կամ խարուսիկ խոստումները մամռապատեն հասարակական զդայնութիւնը, միշտ վառ պահել լուսաւոր հեռունիկարների կիզիչ կարօտը, պայքարել յուստրեկութիւնների և հիւանդուն հիշապես պատմակութիւնների դէմ, բաց ու թարմ պահել արի զաղարական ժողովութեան»:

Հարիզոն, շաբաթաթերթ, Գաղհիկը, (Եղիստոս):—Դահիրէի ազգային կալուածների տարածութիւնը, արժէքը և տարեկան հասոյթն է առաջ բերուած թ. 44-ում: Միայն Գահիրէի աղդ, քաղաքական ժողովութիւնների մէջ, բաց ու թարմ պահել արի զաղարական ժողովութեան»:

զի իրաւասութեան տակ լուսւում են 7 ագարակներ 170,000 հզիալ. ոսկու արժողութեամբ և 7,751 եզ. ոսկի տարեկան հասոյթով։ Տներ, խանութեալ և գետիներ 14,300 եզ. առաքեցով և 672 եզ. ոսկի հասոյթով։ Տարեկան բնդհանուուր հասոյթը 8,424 եզ. ոսկի է. — մի պատկանելի զումար։ Պէտք է՞ թիրթեցալլ իմանայ որ Ալեքսանդրիայի քաղ. ժող. իրաւասութեան տակ գանուած աղդ. կալուածներն էլ բաւական խոշոր են։ Սակայն ինչ գործադրութիւն են գոտնում այդ հասոյթները հայ ժողովրդի օգուտի տեսակէտից, ուսումնարանները՝ խաղալիք այս կամ նայն վաշշային և բէյին քամահանոյքներուն. երկու քաղաքներուն, մէջ ևս մեր աղդ. երկսես զոլոցները կը կառագարուին կրթական գործին բացարձակագէս անտեղեակ հոգաբարձուներով որոնց ձեռքին մէջ՝ թուլամորթ ոսուցիչներ գործիք եղած բութ դանակներով կը խողխողին ազգին մատաղ սերունդը պարտասաւելով զանոնիք զաշմանդամ ու խեղա-

միու ապագայ հայութեան անդամներ» \*),

Ահա ձեզ և նիւթական առատ միշտացներ և անգլիական կառավարութեան տուած ամենաազատ կարգեր, բայց... զարաւոր սարուկութեան մէջ այլասերուած հայը չէ կարուզանում խելացի հիմքերի վրայ զնել այդ զարութում սեփական զործերը։ Այս պէտք է լուրջ կերպով մտածել մեր ժողովրդի քաղաքական զանտիքականդիւնը ժամանակակից զիտութեան վրայ գրած վարժարանները լուրջ մտաւոր-բարոյական պաշար տուող մամուլ և մանր-մունքներ ու անմիտ կուսակցամոլ խծրծանքներից, ինտրիգներից, քախտախընդուրութիւնից և պուստահօսութիւնից բարձր կանգնած երիտասարդութիւն, որ ըստունակ լինէր այդ սասպարիդներում զործելու և զեկավար զեր ստանձնելու ժողովրդի տպիտութիւնը ու միամտութիւնը ներբեք է որ քանակութեցին զանազան մութոյժիր.,

### Պ Ո Ս Յ Բ Կ Ղ .

**ՊԱՐԻԶ. Հայ Աշխա. Միութեան Վարչութեան.** — Զավարանց ցաւահէ որ Պարիզի ամբողջ հայ զաղութը իր հայ տինավաճաններով եւ այլ քարեկիցների անդամներով չի կարողանում համակաների եւ ներթերի քաժանորդակին անշամ հայթայթել։ Աղորմէլի՛ ինքնաշանազութիւն ժամանակակից թարելանի հայերիդ մէջ՝ տարօրինակ չէ որ յատ ընկած Զանդիզուրի մի գիւղ էլ, Պարիզն էլ իրանց յօյը զնեն ծրի կամ նուիթուած հրատարակութիւններ ստանալու վրայ... Դէմ պոստի ծախքի համար նոր տանէք...

**1905 թ. ԲԱԺԱՆՈՒՐԴՆԵՐԻՆ.** — Քաղաքական խառնակութիւնների եւ պուտի զործադուլի պատճառով, երեւի, շատ' բր չեն տուացել «Մուրճի» անցեալ տարուայ վերջին մի քանի համարները. խմբադիւնն խնդրում է այդպիսիներից՝ բաց նամակու և տեղեկացնել թէ, ո՞ր համարներն են կորե, որպէսզի նորից ուղարկուին:

—\*) Տես «Մուրճ», 1904 թ. № 6, 7 Ալօի «Եղիպատահոյք»:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑԿԱԴ է ԲԱԺԿՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# “ՄՇԱԿ”

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԲ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(34-րդ տարի)

Ա.Ա.ԶԻԿԱՅ

**1906**

ԹԻԱԿԱՆԻՆ

«Մշակ» կը հրատարակուի նոյն պլողամեմով և նոյն  
ուղղութեամբ

Ամեն օք սացի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագիրը «Մշակ»։ տարեկան գինը 10  
ռուբլի է, տասնեմէկ ամսանը նոյնագիշ 10 ռ., տասն  
ամսանը՝ 9 ռ., ինչ և ութ ամսանը՝ 8 ռ., եօթն  
ամսանը՝ 7 ռ., վեց ամսանը՝ 6 ռ., հինգ ամսանը՝  
5 ռ., չորս ամսանը՝ 4 ռ., երեք ամսանը՝ 3  
ռ., երկու ամսանը՝ 2 ռ. և մի ամսանը 1 ռուբլ։

Արտասահմանեան բաժանորդութիւնը. Ամ ե-  
րիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան  
6 դոլար. Եւ բոլոյի բաժանորդները՝ 30 ֆրանկ.  
Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակ» զրուել կարելի է Խորագրատանը (Բա-  
զարնայտ և Բարոնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գր-  
ռուելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ  
ուղարկելիս պէտք է գիմել հետեւեալ հասցեով. ՏԱՓ-  
ԼԻԾԵ, Ռեդակցիա „ՄՇԱԿԵ“, իսկ արտասահմանից՝  
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարութիւնները ընդունում են բոլոր լե-  
զուներով:  
Ապառիկ ըստանորդագրութիւնները ընդունում: 1—3

ԲԱՑՈՒԾԾ է 1906 Թ. ԲԱԺՄՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

## ԱՐԴԱԼՈՅՑ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱՎԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՕՐԱԹԵՐԹԻ

**24** պատկերագարդ յաւելուածներով որ կանոնաւորա-  
պէս լոյս կը տեսնէն ամիսը երկու անգամ.

Թերթի ձգտումն է արևոտկան ստհմանադրական կազմ,  
կովկասեան ներքին լայն ինքնատիպութիւն, տեղական զեմաս-  
վո, զեմստվոյական մասը միութիւններ և աղատ կապակցում  
այդ մասը միութիւնների:

Հողի բաւարար բաժիններ սակաւահող գիւղացուն՝ պետա-  
կան և կալուածական հողերից, և օղէնսպրական բաւարարու-  
թիւն բանուորի կենսական սպահանջներին:

Հնարական սկզբունքի լայն գործադրումը ընդհանրապէս,  
և մասնաւորապէս մեր գործոցական գործի կազմակերպութեան,  
հեղացական կալուածների անահետութեան և հասարակական  
հիմնարկութիւնների դեկամերութեան մէջ:

Թերթի գլխաւոր ուժը ուղղուած կը լինի հայ կեանքի  
սպահանջներն առաջ մզելու և աշխատելու նրանց իրականաց-  
մանը գետոկրատ ոգով:

ԲԱԺՄՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐՏԱՎԱՀՄԱՆՈՒՄ

Տարեկան . . . 7 ա. — —	32 ֆր. 28 մարկ. 28 շիլ 7 դոլ.
Վեց ամիսը . . . 4 » — —	20 » 16 » 16 » 4 »
Երեք ամիսը . . . 2 » 25 կ.	12 » 10 » 10 » 2 »
Մի ամիսը . . . — - 75 »	4 » 3 » 3 » 1 »
Տարեկան բաժանորդները կարող են վճարել մաս-մաս. Յունու- ար. 4 ա. և յունիս. 3 ա.	

Ապահով բաժանորդագրութիւն յի ըն-  
դունում.

Կարելի է գրուել խմբագրատանը (Թիֆլիս, Գանովսկայա  
№ 11) կամ գործականների մօտ. Ուրիշ տեղերից գիւմել՝ Բեդա-  
կցիա գազետ «Արշալույս». Կամ Tiflis, Rédition du journal «Ար-  
շալուս».

Խմբագիր. հրատարակիչ՝ Գ. Մելիք-Կարսկե Զենքանը  
փ. (3)

1837

Ի. ՏԱՐԻ

1906

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ“

ՈՒՍՈՒՄՆԱԳԵՐԹԸ

Կը մնուէ իւր գոյութեան քաններու տարեշընը, եւ կը շարունակուի իւր ծանօթ սպազմթեամբն և ծրագրով:— «Հանդէս Ամսօրեայ» իրքիւ Հապիտութեան հանգէս՝ պիտի բովանդակէ հայ կրականութեան, մատենագրութեան, քանասիրութեան, լեզուարանութեան, հնախօսութեան, աշխարհագրութեան, պատմութեան լեզրաբերեալ ըննադասական ուսումնասիրութիւններ—ինքնազիր եւ թարգմանածոյ: Զանց պիտի չառնուին հայ ականաւոր ու զրագէտ անձնասորութեանց կենսագրութիւնները: Նոյնպէս ըննադասական տեղեկութիւն պիտի տրուի ազգային կարեւոր լրերու, նոր հրատարակութեանց են:—Ճարիկան բաժնէզինն է 10 ֆր.—4 ըրլ.—Կանխիկ:

ԽՄԲԱԴՐՈՒԹԵԼԻ ՀԱՍՑԵՆ

A la Rédaction de la Revue „Handess“, Vienne  
(Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1906 ՏԱՐՈՒԱՅ

# “ԲԱՋՄԱՎԵՊ“Ի

Կանխիկ բաժանորդագինն է ֆր. 10:

Դիմել հետեւեալ հասցէին.

Rédaction de le Revue «Bazmavep» Venecie (Italie)

# “ԳԵՂՈՒՍԻ”

1901—1905 տարիներու ամբողջական հաւաքածոյն գիղջեալ գնուլ 12 ըռւըլի: Imprimerie Arménienne Lazare Venice (Italie)

Լոյս տեսաւ Առանձար ՇՄՑՑ ծիծը ԱՌ զ. 1 ր.  
Դիմել գրավաճառանոցներին և «Մուրճ»-ի խմբ.

**ОТКРЫТА ПОДПИСКА НА 1906 ГОДЪ  
НА ГАЗЕТУ**

**Тифлисскій Листокъ.**

*XXIX годъ издания.*

**ПОДЪ НОВОЙ РЕДАКЦІЕЙ**

*и при усиленномъ и обновленномъ составѣ постоянныхъ сотрудниковъ*

Выступая на защиту общенародныхъ идеаловъ гражданской свободы, новая редакція будетъ проводить на страницахъ «Тифлисского Листка» идею наиболѣе широкаго осуществления въ политico-государственной жизни всей Россіи демократического, представительного образа правлениія. Но своей близкайшей задачей новая редакція ставить служеніе интересамъ Закавказья и всѣхъ его народностей. Признавая за каждой изъ нихъ неотъемлемое право на всестороннее культурно-національное самоопредѣленіе, „Т. Л.“ будетъ настаивать на организаціи общенавказскаго самоуправленія съ представительнымъ всенароднымъ сеймомъ въ составѣ выборныхъ делегатовъ отъ разноплеменного населенія края, неразрывно связанныго съ Россіей общегосударственными установлениями и законами.

**ПОДПИСНАЯ ЦѢНА.**

Съ доставкою въ  
Тифлисъ:

На 12 м.—5 р., на 11 м.—4 р. 75 к., на 10 м.—4 р. 50 к., на 9 м.—4 р. 25 к., на 8 м.—4 р., на 7 м.—3 р. 50 к., на 6 м.—3 р., на 5 м.—2 р. 50 к., на 4 м.—2 р. 25 к., на 3 м.—1 р. 75 к., на 2 м.—1 р. 50 к., на 1 м.—75 к.

Съ перес. въ другіе  
города:

На 12 м.—7 р., на 11 м.—6 р. 50 к., на 10 м.—6 р., на 9 м.—5 р. 50 к., на 8 м.—5 р., на 7 м.—4 р. 50 к., на 6 м.—4 р., на 5 м.—3 р. 50 к., на 4 м.—3 р., на 3 м.—2 р. 50 к., на 2 м.—2 р., на 1 м.—1 р.

Съ пересылкой за  
границу:

На 12 м.—12 р., на 11 м.—11 р., на 10 м.—10 р., на 9 м.—9 р., на 8 м.—8 р., на 7 м.—7 р., на 6 м.—6 р., на 5 м.—5 р., на 4 м.—4 р., на 3 м.—3 руб. 50 коп., на 2 м.—2 р. 50 к., на 1 м.—1 р. 50 коп.

**ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ** на любой срокъ, но только съ 1 числа каждого мѣсяца, исключительно въ конторѣ изданія, Головинскій проспектъ, № 15.

**ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНИЯ:** Для Закавказья за мѣсто, записанное строкой петиты, передъ текстомъ—10 коп. и послѣ текста—5 коп. Изъображеніе о зреющаxъ печатаются на первой страницѣ по 20 коп. за строку и на 4—по 1) коп. За объявленія въ справочномъ отдѣлѣ взимается по 8 коп. за строку. Объявленія въ предѣловъ Закавказья принимаютъся исключительно въ центральной конторѣ торгового дома Л. и Э. Метцль и К° въ Москвѣ, Миеницкая, д. Ситова и въ отдѣленіяхъ его—въ С.-Петербургѣ, Большая-Морская, № 11; въ Варшавѣ, Краковское предмѣстье, № 53, по 24 к.—передъ текстомъ и

12 коп. послѣ текста.

1—3

Открыта подписка на 1906 годъ  
на газету

**“КАВКАЗЪ”**

подъ редакціей

**П. А. ОПОЧИНИНА**

Газата «Кавказъ» будетъ выходить въ 1906 году ежедневно  
кромъ понедѣльн. и послѣпразднич. дней.

**ПОДПИСНАЯ ЦѢНА:**

	Для городскихъ	Для внегороднихъ
На 12 мѣсяцевъ . . . . .	7 руб. — к.	8 р. 50 к.
„ 11 „ . . . . .	6 „ 50 „	8 „ — „
„ 10 „ . . . . .	6 „ — „	7 „ 50 „
„ 9 „ . . . . .	5 „ 50 „	7 „ — „
„ 8 „ . . . . .	5 „ — „	6 „ 50 „
„ 7 „ . . . . .	4 „ 50 „	6 „ — „
„ 6 „ . . . . .	4 „ — „	5 „ 50 „
„ 5 „ . . . . .	3 „ 50 „	5 „ — „
„ 4 „ . . . . .	3 „ — „	4 „ — „
„ 3 „ . . . . .	2 „ 25 „	3 „ — „
„ 2 „ . . . . .	1 „ 50 „	2 „ — „
„ 1 „ . . . . .	— „ 75 „	1 „ — „

ПОДПИСКА И ОБЪЯВЛЕНИЯ ПРИНИМАЮТСЯ въ конторѣ газеты  
„Кавказъ“ (Эриванская площасть, домъ Харазовой, телефонъ № 182).

Лица и учрежденія, находящіяся въ г. Тифлисе, плату за подписку  
и объявленія благоволятъ присыпать въ контору газеты „Кавказъ“ пол-  
ностью, безъ вычета за пересылку и съ точнымъ указаниемъ, на какой  
предметъ (за подписку или объявленія) высланы деньги.

Правительственные мѣста и должностные лица, находящіяся въ Ти-  
флисѣ, деньги за газету „Кавказъ“ и за объявленія въ ней имѣютъ на-  
правлять непосредственно въ контору газеты „Кавказъ“. 1—1

# ОТКРЫТА ПОДПИСКА

на 1906 годъ

на ежедневную политическую газету

## „ВѢКЪ“

«ВѢКЪ»—независимый органъ печати. Деянье газеты—прогрессивное развитие сильь общественныхъ на основѣ конституціонной свободы.

условія подписки съ доставкой и пересылкой:

на 1 годъ	на $\frac{1}{2}$ года	на 3 мѣсяца	на 1 мѣсяцъ
10 р.	5 р.	2 р. 50 к.	1 р.

Для преподавателей всѣхъ учебныхъ заведеній и студентовъ:

на 1 годъ	на $\frac{1}{2}$ года	на 1 мѣсяцъ
7 р.	3 р. 50 к.	60 к.

### редакція и контора:

Москвы, столешниковъ переулокъ, д. 0-ва „Якорь“

Контора открыта въ будни съ 10 до 5 ч., въ праздники отъ 12 до 2 ч.

Редакторъ-издатель С. Мамионянъ.

### ОТКРЫТА ПОДПИСКА НА 1906 Г.

На ежедневную большую общественно-политическую газету

## „Бакинские Отголоски“

Подписная цѣна съ доставкой въ 10 р., 6 мѣсяцевъ 4 руб.,  
3 м.—2 р., 1 м.—1 руб. съ пересылкой въ 10 р. 8 р. 50 коп., 6  
мѣс.—4 р. 50 к. 3 м.—2 р. 85 к. 1 м.—1 р. 90 к. За границу  
14 р.

Для рабочихъ 50 коп. въ мѣсяцъ.

Адресъ редакціи: Баку, Пассажъ Тагіева.

Ф. (3—1)

I. Унірд  
**У НАСТЬ ОРУГВАЛІИ ԵՒ ՍԻՒՆԻՔՈՒՄ**  
 Դրին է 20 կուտ:

## ПОСЛЕДНЯЯ НОВОСТЬ! Часы „ПОЛИФОНЪ“.



Вы доставите много удовольствия себѣ, семейству и гостямъ, если приобрѣтете самонграющіе музикальные столовые часы „Полифонъ“, играющіе красивыя вальсы, польки, для танцевъ), марши или народн. пѣсни „Передлікский маршъ“, „Преображенскій маршъ“, вальсъ „Ожиданіе“, „Невозвратное время“, „За Душой“, вальсъ, „Камаринскую“, „Боже, Цара храни“, „Трешакъ“, „Возлѣ рѣчки“ и т. д. громко, долго звучнымъ и пріятнѣмъ тономъ; кроме того, эти часы показываютъ очень вѣрное время. Ручательство за вѣрность хода часовъ и за непортируемую музыку на 6 лѣтъ. Цена изъящномъ фантастическомъ бронзокомъ циферблать, вмѣсто 12 р., только на короткое время 6 р. 25 к. и 7 р.

Заказы высыпаются безъ задатка по полученіи заказа налож. платеж. Адресовать просимъ: Торгов. Домъ „Т-во Континентъ“. Варшава. 1—12

## ПОСЛЕДНЯЯ НОВОСТЬ!



Туалетные часы съ зеркаломъ въ музикой. Вы доставите много удовольствія себѣ, семейству и гостямъ, приобрѣтая самонграющіе туалетн. часы съ хорошей музыкой „Симфонія“, играющіе очень громко и долго разныя красивыя и веселыя пѣсни (вальсы, марши, польки, оперы, народныя пѣсни, какъ-то: „Преображенскій маршъ“, вальсъ „Ожиданіе“, „Невозвратное время“, „За Душой“, „Боже Цара Храні“, „Коль славенъ“, „Камаринскую“, „Трешакъ“, „Возлѣ рѣчки“ и т. д., со шпиономъ зеркалъ парижской выдѣлки въ изящн. полиривъ, заграницн. корпусъ. Часы эти кроме того отличаются вѣрною ходомъ и служить изящн. украшн. для письменн. и туалетн. стола. Высып. часы вырегулированные до минуты съ ручательствомъ за вѣрность хода и за непортируемую музыку на 6 лѣтъ за нал. плат. безъ задатка. Цена вмѣсто 20 руб. только 6 р. 50 к. и 7 р. 50 к. (1—12)

Адресовать: „Тор. домъ Т-во Континентъ“ Варшава М-ъ.



## !!ПОСЛЕДНЯЯ НОВОСТЬ!!

Изъ НАСТОЯЩАГО АФРИКАНСКАГО золота

## © НЕ ПОЗОЛОЧЕННЫЕ ©

Новоизобрѣтенные карманн. мужскіе или дамскіе часы изъ настоящаго африканскаго золота, ничѣмъ не отличающиеся даже специалистами отъ настоящихъ золотыхъ часовъ, стоящихъ 100 р.; глухіе съ тремя маассими крышками, заводъ безъ ключа ходъ на камняхъ, ручательство за прочн. металла и вѣрность хода до 6 лѣтъ. Часы

изъ настоящаго африканскаго золота награждены за свою добровольческость и прочность многими медалями и знаками отличия. Цѣна мужск. или дамск. только на короткое время вмѣсто 28 руб. только 7 руб. 50 к.; 2 шт. 14 р. 50 к.; 3 шт. 21 р. Такие же открытые мужскіе изъ настоящаго африк. зол. не позолоченные съ нынѣ предохранит. стекломъ вмѣсто 16 р. только 4 р. 25 к., 2 шт. 8 р., 3 шт. 12 р. Высылаемъ вывѣренные часы до минуты по полученіи зак. нал. пл. безъ задатка. Адрессъ: Въ центр. депо африк. часовъ Т-во Континентъ Варшава М.-ъ. купоны всѣхъ

фирмъ принимаемъ въ счетъ по 50 коп., на каждые часы 1 купонъ.

БЕЗПЛАТНО примагается къ часамъ изящная щѣщочка съ брелокомъ „Бинокль“ съ видами или компасомъ того же металла и замшевый кошелекъ для пре-  
дохр. часовъ отъ порчи.

### —ПОЛЬЗУЙТЕСЬ РѢДКИМЪ СЛУЧАЕМЪ.—

12. акадѣмій 5 штуки часовъ сразу прилагаются бесплатно 1 изящный музикальный ящики съ зеркаломъ и музыкой „Симфонія“ играющій разныя пьесы лучшихъ композиторовъ.

### !!! ДОЛОЙ БРИЛЛАНТЫ !!!

Массивное золотое кольцо 56 пробы послѣдняго новѣйшаго парижскаго фасона съ настоящ. франц. бриллант. „Bengal“ничѣмъ не отличаемыи даже специалистами отъ настоящ. дорогихъ бриллантовъ, стоящ. 200 р., весьма богатой выработкой, изъ изящн. плюшевомъ футлярѣ, цѣна только 5 р. 25 к., 2 шт. 10 р. Пара крупныхъ серегъ съ такими же бриллантами 5 р. 75 к., 2 пары 11 р. Высылаю безъ задатка налож. платеж.

Адр. Гл. скл. франц. брил. Т-во Континентъ Варшава, М-ъ

Р. S. Камни „Bengal“ имѣютъ превосходную игру, т. е. безъ фольги. Громадное количество благородственныхъ писемъ.

### Рѣдкій случай! НОВОСТЬ! Кабинетные часы «МОЛНІЯ»

Всякому необходимо иметь у себя на дому по дешевой цѣнѣ, слегактие кабинетные столовые часы съ будильникомъ и съ самосвѣтящимся въ темнотѣ циферблатомъ, дающіе возможность ночью узнать, который часъ. Ручательство за прочность издающагося свѣта и вѣрность хода на 5 лѣтъ. Цѣна въ изящн. кориусѣ 1 сорта вмѣсто 7 р. 50 коп. только на короткое время 2 р. 50 к., 2 шт. 4 р. 50 к., 3 шт. 6 р. 25 к. Высылаемъ вывѣренные часы до минуты, съ налож. плат. безъ задатка.

Адресовать просимъ: Тор. „Дм. „, Т-во Континентъ“ Варшава Мъ. Р. S. При заказѣ 6-ти экзем. прилагаются 1 часы бесплатно.

Հ. Առաքելեանի  
„ՄԻԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՎՈՒՄ“  
Ուղևոր ակնարկներ, գ. 40 կող..

Կովկասի Աւտոմենական Շքանի հոգաբարձական Խորհրդի որոշմանը, որ հաստատուած է Կովկասի բաղաբացիական պատվաշտապեսի պահօնակատարի կողմից

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

## ՄԱՅՐԵՆԻ ԽՕՄ

ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿԸ

(ԵՐՐՊՐՊ և ՀՐԱՐԴ ՄԱՐԲԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԵՐԵՆ-ՌԱՍՏԵՐԵՆ ԲԱՆԳՐՅՈՎ  
ԳԻՆՆ Է 70 Կ.

(246 ԵՐԿԱ)

ՀԱՅԱՍՏԱՆ Է ԱՓՈԱՆԻ ԱԿԳՐԸՆԱԿԱՆ ՂԱՎՐՈՂՆԵՐԻ ՀԱՅՆԱՐ:  
ԴԻԹԵԼ ԹԻՖԼԻՍ «ԳՈԼՍՏԱՑՆԵՐԵՐՎ» և «ԿԵՆԱՐՈՆԱԿԱՆ», ԽԱԼ ԲԱ-  
ԳՈՒ «ՍՈՒՐԴՆԻԿ» ԳՐԱՎԱՅԱԿԱՆՈՂՆԵՐԻՒ:

## LA REVUE

(Ancienne «Revue des Revues»)

Ա Յ Ո Ն Ն Ե Մ Ե Ն Տ

Etranger (Union postale) par an: 28 fr.

» » » par semestre 16 fr.

Directeur-Rédacteur en chef

JEAN FINOT

Administration et Rédaction:

12 Avenue de l'Opéra

Paris

Խմբագիր՝ Լ. Սարգսեան  
Հրատարակիչներ՝ Ա. Քանանեան  
Լ. Սարգսեան

բաշխ գործունեութիւն ազատական ուղղութեան տար-	
թիր կուռակցութիւնների մէջ.—Ֆրանսիական կառ.	
տակտիկան ելիոյ, կայքերը ցուցակադրելիս,—Հանրապ.	
նոր նախագահի ընտրութիւնը: Լ. Ս. ի . . . . .	182
<b>16. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .</b>	<b>189</b>
<b>17. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ . . . . .</b>	
<b>18. ՊՈՍՏԱՐԿԴ . . . . .</b>	
<b>19. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .</b>	<b>276</b>
<b>20. ՅԱԻՆՈՒԱԾ. ՖԷյմն Մորիէլը «ՀԱԶԻ ԲԱԲԱՆ ԱՆԴ-</b>	
<b>ԼԻԱՅՈՒՄ»), վէպ պարսկ. կեանքից, թարգմ.</b>	
<b>անգլ. Մ. կարապետեան . . . . .</b>	<b>159—174</b>

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարզ, մանաւանդ թուերը, յատուկ անուննեն ու օսար բառերը, եւ թերի միայն մի երեսի վրայ, առանձնապէս ու ու կարձնելի կեսարութեան, ուղղագրութեան եւ նոր պարբեռութիւնները ուսումնի վիճելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև ընդգիրը:

2. Չընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուում են: Զեռագիրը յիտ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքը յօդուածներն ու ստանաւորները չեն փերադարձնուում:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարուում են անվճարելի:

4. Խմբագրութիւնս իւսան է վերառահուած ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրի» համարը չստացուելու դէսքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լրյու տեսնելը:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրում կամ պոստային բլանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկի Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է այտնել նաև հին հասցէն:

ԲԵՋՈՒԾՔ Ե-ԲՐԺԸՆՈՐԴԵԿՐԱԿՑԻՒԹԻՒՆ

1906 A.

# "Utah's"

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

## История о любви

(*Sup. p. 176 v. 1. mappi*)

•  $\text{Hg}^{+2}$  -  $\text{HgCl}_2$  -  $10 \mu\text{l}$  - The remaining  $12 \mu\text{l}$  - (32 g.)

20. *Thlaspi arvense* L. *Arvensis*, 62, 72, (18. ♀.)

www.industryusa.com [www.industryusa.com](http://www.industryusa.com)

Հայով համար 1 ռուբի, բամաւրդագինը տեսական՝ 1 ռուբի:

მასივია ეს ც. მათ ანირეაფენიც ხარების ქ ქადაგი სამ მას. გუ-  
კედების 5 წ., მასში 1-წნ 3 წ. և იანგის 1 წ. 2 წ.-ს კონი იქცების  
5 წ. ს კარის 1-წნ 3 წ. რეალური საუკეთესო და დამატებული ხ ისახებული ხ ისახებული  
ეს ც. მათ ანირეაფენიც ხარების ქ ქადაგი სამ მას. აუგის კედების ხ ისახებული ხ ისახებული  
ეს ც. მათ ანირეაფენიც ხ ქ ქადაგი სამ მას. მათ ანირეაფენიც ხ ისახებული ხ ისახებული  
ეს ც. მათ ანირეაფენიც ხ ქ ქადაგი სამ მას. მათ ანირეაფენიც ხ ისახებული ხ ისახებული

ԲԱԺԿԱՆՈՐԴԱԳՐԱՒԹԻՒՆԸ ՀՆԴՈՒՆԻՈՒՄ է

Թիֆլիսում ինքաղբառանը (ճամփանական փողոց, տ. № 12) հայութիւնն այլ տեղերից պէտք է զիմել Արքայ, Յա բարձրագույն աշխարհում:

*Übersetzung aus dem Engl. Redaktion in der Zeitschrift MOURCHI.*

ԱՐԱՐԱՏԻ ՊԵՐԵԿԱՂԲԵՐԸ

குறுமை—ந. ப. உயர்வைகள்:

Симон - *адъ.* *Р.* *Варդанян* *д.к.* *Март* *1*

Բարեկարգությունը — աղ. Ֆ. Տ. Տառապահանց

**БЕЗАДІ — СВЯТОВИЙ ДІЯЧ УСІХ НАУК**

Կուրտ - պ. Հայոց պատմություն Տ. Ա. Պատմ.

Раньше — в. дн. в. п. и в. в.:

Ապշեցիւն - արքան Եղիշեական հայութեան առաջարկութեան կողմէ

U. ffectuosa; — a. 3. L. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9.

Phi 1:1 - Επιστολὴ πρὸς Φίλιππους 1:1 Ἐν οὐδὲν προσένα μή με γράψεις

1. *Uma pampu*. — 6. *Uma pampu*.

Թաւորդ—Բժ. պ. Յ. Տէր-Յանիկանս

Եշապտաւ—դոկտոր Տ. Փալյաշինսկի և այլ օճախածովութեանը

**સત્તે કરીએ હોય, તો આપણાની જીવનિઃસ્વાર્ગીકરણ**

1996-97 學年

ՕԱ.ՕՏՍ.ՌՈ.ԲՐԱՅՆԻՆ ընդունած է ամեն ընդունված Յայտարարութիւնների համար վճարում են.—Ե կը ի բանու յայտարարութիւն համար 15 ր., 12 կր., թ. 3 կր.—Ե բ., սպառագի կորպ.՝ 40 կր.

## Թարագիր Հեղինակ ԱՐՄԵՆԻԱՆ